ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ 2016Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԵԼՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

9(47·925)
Հ-94
հշ·

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ 2016Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԵԼՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

5768

Անտարես

ԵՐԵՎԱՆ
ԱՆՏԱՐԵՍ
2017

THE NAGORNO KARABAKH CONFLICT
REACTIONS ON 2016 DECEMBER 17 SPEECH BY LEVON TER-PETROSSIAN

Erevan 2017

Արցախյան Հիմնահարց. Արձագանքներ Լեւոն Տեր-Պետրոսյանի 2016թ. դեկտեմբերի 17-ի ելույթի վերաբերյալ; Խմբ.՝ Աշոտ Սարգսյան; Կազմողներ՝ Ավետիս Ավագյան, Արման Մուսինյան. – Եր.: Անտարես, 2017. – 344 էջ:

ISBN 978-9939-76-038-4

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայ Ազգային Կոնգրեսի՝ 2016 թ. դեկտեմբերի 17-ին տեղի ունեցած 2-րդ (20-րդ) համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը, Ղարաբաղյան կարգավորմանը վերաբերող նրա կարեւորագույն հոդվածների հետ միասին, հրապարակվեց առանձին գրքով (**Լեւոն Տեր-Պետրոսյան**, Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն, Երեւան, Անտարես, 2016): Ելույթը, հրապարակված նաեւ բազմաթիվ լրատվամիջոցներով եւ տեսացանցով (youtube), ամենալայն հասարակական քննարկման առարկա դարձավ՝ ինչպես մամուլում, այնպես էլ սոցիալական ցանցերում: Արձագանքել են հասարակության ամենատարբեր շերտերի, մասնագիտությունների, զբաղմունքի տեր մարդիկ՝ գիտնականներ, քաղաքական գործիչներ, քաղաքագետներ, լրագրողներ, գործարարներ, արվեստագետներ եւ այլն:

Ինչպիսի՞ն էր հասարակական եւ քաղաքական արձագանքն այն ժամանակ, երբ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի առջեւ ծառացած հարցի լուծողն ինքը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանն էր, եւ ինչպիսին է հիմա, երբ հարցի պատասխանատուն այսօրվա իշխանությունն է, եւ ինքն ընդամենը հիշեցնում է խնդրի առաջնային կարեւորության եւ լուծման համար ստեղծված միջազգային հերթական պատեհությունն օգտագործելու մասին:

Նկատի ունենալով հարցի հասարակական հնչեղությունը, հայկական պետականության ճակատագրի առումով դրա գերկարեւորությունը, որպես հասարակական վերաբերմունքի եւ ընկալման արտահայտություն, առանձին գրքով հրապարակում ենք Լեւոն Տեր-Պետրոսյանի վերոհիշյալ ելույթի հասարակական արձագանքների մի փունջ: Սա միայն հասարակական կարծիքի եւ դրական վերաբերմունքի արձանագրման ու ցուցադրման նպատակ չի հետապնդում: Հրապարակվող նյութերում բազմաթիվ են դրանց հեղինակների արժեքավոր դիտարկումներ ու փաստարկներ, մեկնաբանություններ, որոնք լրացնում են, մանրամասնում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի առարկա հիմնահարցի դրույթները, զարգացնում, լրացուցիչ հիմնավորում նրա առաջ քաշած թեզերը:

Ընթերցողի հարմարության՝ քննարկման առարկայի հետ կապը պահելու համար, հրապարակվող արձագանքների սույն հատորի սկզբում զետեղված են Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի տեքստը եւ մի քանի օր հետո՝ դեկտեմբերի 28-ին հրապարակված «**Որոշ պարզաբանումներ ս.թ. դեկտեմբերի 17-ի իմ ելույթի արձագանքների վերաբերյալ**» վերնագրով հոդվածը:

Ժողովածուի նյութերը դասավորված են ըստ նպատակահարմարության, իսկ «Հակիրճ կարծիքներ» բաժնում՝ դրանց հեղինակների ազգանունների այբբենական կարգով:

Աշոտ Սարգսյան
Պատմական գիտությունների թեկնածու

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(17 դեկտեմբերի, 2016թ.)*

Իմ վերջին հոդվածներից մեկում ես նշել էի, որ «Հայաստանի բոլոր չարիքների՝ սոցիալական ծանրագույն վիճակի, բնակչության աղքատության, զանգվածային արտագաղթի, բանակի թերզինվածության, ապօրինի ընտրությունների, արդարադատության չգոյության, ժողովրդավարության եւ մարդու իրավունքների ոտնահարման արմատը կոռուպցիան է՝ պետական պաշտոնյաների կողմից ազգային հարստության համատարած ու անհագ թալանը» (iLur.am. 19.10.2016; «Չորրորդ իշխանություն». 20.10.2016): Սակայն սա այսբերգի միայն տեսանելի մասն է: Անտեսանելին 1998 թվականից ի վեր Հայոց պետականաշինության հիմքում դրված քաղաքական փիլիսոփայությունն է, այլ կերպ ասած՝ Ղարաբաղյան ստատուս-քվոն պահպանելու եւ հարյուր տարի էլ շրջափակումների պայմաններում զարգանալու ռազմավարությունը: Թե ժամանակին կանխատեսված ինչպիսի կործանարար հետեւանքների է հասցրել այս փիլիսոփայությունը, կարծում եմ, ավելորդ է պարզա-

* *Լեւոն Տեր-Պետրոսյան, Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն, Երեւան, 2016, էջ 7–30; Չորրորդ իշխանություն, 20.12.2016թ.: Հրապարակվել է նաեւ հանրապետության գրեթե բոլոր կայքերում:*

բանել: Փաստն այն է, որ ժողովրդագրական, տնտեսական եւ ռազմական առումներով 1998 թվականին մենք ունեինք մի երկիր, իսկ այսօր ապրում ենք բոլորովին մի այլ երկրում: Դա նշանակում է, որ այն կարեւորագույն խնդիրը, որը շատ ավելի ուժեղ վիճակում կարող էինք լուծել 18 տարի առաջ, այժմ հարկադրված ենք լուծել անհամեմատ թուլացած վիճակում: Իսկ մի քիչ էլ հապաղելու պարագայում անխուսափելիորեն կհայտնվենք սրանից վատթար դրության մեջ, կրկնելով 1920 թվականի արկածախնդրությունը, երբ, ձգտելով առավելագույն տարածքային ընդարձակման, կորցրինք Հայաստանի Հանրապետության ունեցած տարածքի մոտավորապես կեսը:

Թվում էր, թե 2008 թվականի տնտեսական ճգնաժամի դեռեւս չհաղթահարված հետեւանքները, արտագաղթի ահագնացող տեմպերը, վտանգավոր չափերի հասած պետական պարտքը, դրա հետ կապված դեֆոլտի սպառնալիքը եւ մանավանդ ապրիլյան պատերազմի առաջացրած ցնցումը սթափեցնող ազդեցություն կունենան Հայաստանի իշխանությունների վրա՝ նրանց ստիպելով արմատապես վերանայել Ղարաբաղի հարցում իրենց որդեգրած ապակառուցողական, աղետաբեր քաղաքականությունը, եւ նշված մարտահրավերները դիմագրավելու բոլորովին այլ ռազմավարություն մշակել: Սակայն դատելով վարչախմբի արձագանքից, կարծես թե, այս հարցում էլ մեզ հիասթափություն է սպասում, քանի որ ակնկալված ռացիոնալ քայլերի փոխարեն, նա հրապարակ է նետել մի նոր անհեթեթ գաղափարախոսություն, որը կրկին մեզ դեպի փակուղի է առաջնորդում, դրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով: Խոսքը վերաբերում է «ազգ-բանակ» ձեւավորելու մտահղացմանը, որը ցավալիորեն տեղ է գտել անգամ նոր կառավարության ծրագրում: Մի կողմ դնելով հարցի բարոյական կողմը, որը վերաբերում է որպես «ազգ-բանակի» կառուցման առաջին քայլը դիտվող նոր հարկա-

տեսակի կիրառմանը, ես կանդրադառնամ միայն այդ հասկացության քաղաքական բովանդակությանը:

* * *

Դրա համար, սակայն, նախեւառաջ անհրաժեշտ է պարզել, թե իրականում ինչ է թաքնված տվյալ հասկացության տակ: Ամազոնուհիներին չհաշված, պատմությանը հայտնի է «ազգ-բանակի» ստեղծման երեք հաջողված դեպք՝ առաջին երկուսը միջնադարյան Մոնղոլիայում եւ Շվեյցարիայում, իսկ երրորդը՝ ժամանակակից Իսրայելում, նկատի առնելով, անշուշտ, որ միջնադարի պարագայում «ազգ» բառն օգտագործվում է պայմանականորեն: Երեւույթի մասին տարրական պատկերացում կազմելու համար, կարծում եմ, արժե թեկուզ համառոտակի անդրադառնալ նշված դեպքերից յուրաքանչյուրին:

XIII դարի սկզբին Չինգիզխանը, զենքի ուժով միավորելով միմյանց դեմ դարերով մարտնչած մոնղոլական տասնյակ ցեղերին, միջցեղային հարաբերությունների ավանդական համակարգը փոխարինեց բանակային կուռ կառուցվածքով: Բոլոր տղամարդիկ զորակոչվեցին բանակ՝ հերթագայությամբ ծառայելով տասնյակներից, հարյուրյակներից, հազարյակներից ու տասհազարյակներից (թուման) կազմված նրա ստորաբաժանումներում: Դա մի կողմից արթնացրեց մոնղոլների «ազգային» ընդհանրության գիտակցությունը, մյուս կողմից՝ հնարավորություն ընձեռեց ստեղծելու մի այնպիսի ահեղ զինական ուժ, որի շնորհիվ այդ փոքրաթիվ ժողովուրդը կարճ ժամանակի ընթացքում կերտեց աշխարհի ամենաընդարձակ ցամաքային կայսրությունը, տիրելով Խաղաղ օվկիանոսից մինչեւ Լեհաստան ու Անատոլիա ընկած եւ իրենից գրեթե 200 անգամ ավելի բնակչություն ունեցող տարածքին: Այդ հսկայածավալ կայսրությունը, սակայն, գոյատեւեց ընդամենը

հինգ-վեց տասնամյակ, Կուբիլայ Մեծ խանի մահվան տարում (1294թ.) բաժանվելով չորս մասի՝ նվաճումների դադարումից հետո մոնղոլների ռազմական էներգիայի սպառման, կայսրությունը միավորող գաղափարախոսություն ձեւավորելու անկարողության եւ գլխավորապես մոնղոլ ժողովրդի փոքրաքանակության պատճառով:

Ինչպես նշվեց, «ազգ-բանակի» ձեւավորման հաջորդ հաջողված փորձը շվեյցարականն է, որի դրդապատճառներն ու հետապնդած նպատակները, սակայն, տարբերվում են մոնղոլականից: Եթե մոնղոլների պարագայում դա ուղղված էր իրենց նվաճողական նկրտումներին հագուրդ տալուն, ապա շվեյցարացիների մոտ թելադրված էր թշնամական միջավայրում սեփական երկրի գոյատեւումն ապահովելու պահանջից: Գերմանա-ֆրանսա-իտալական խառը բնակչություն ունեցող ալպյան հովիտների ավատատիրական իշխանությունները շվեյցարական դաշնության ձեւավորման ավելի քան հինգհարյուր տարիների ընթացքում (1291–1815 թթ.), հարկադրված լինելով դիմագրավելու ահեղ հարեւանների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Ավստրիայի շարունակական հարձակումները, ապավինել են բացառապես սեփական ուժերին եւ մարտունակ բանակի կերտումը դիտել որպես ազգային գերխնդիր: Ու թեեւ վերջին 200 տարիներին Շվեյցարիան, օժտված լինելով չեզոք երկրի կարգավիճակով, արտաքին վտանգների չի ենթարկվել, եւ Եւրոպական մայրցամաքում տեղի ունեցած բոլոր, այդ թվում, առաջին եւ երկրորդ համաշխարհային պատերազմները շրջանցել են նրան, ավանդույթի ուժով, այսօր էլ բանակը մնում է շվեյցարացիների համազգային հոգածության առարկան, որում զորակոչվածի, պայմանագրային ծառայողի, կամավորի եւ պահեստազորայինի հանգամանքով ներգրավված են 18-ից 50 տարեկան բոլոր առողջ տղամարդիկ: Պատահական չէ, որ ոմանց կողմից Շվեյցարիան,

մեկ շնչին ընկնող զինվորականների թվով, համարվում է աշխարհի ամենառազմականացված պետությունը, որն ի վիճակի է, փայլուն պատրաստված պահեստազորի մոբիլիզացիայի շնորհիվ, մեկ-երկու օրում տասնապատկել իր զինված ուժերի թվաքանակը:

Քանի որ «ազգ-բանակ» գաղափարի հայ ջատագովներն ընդօրինակման առարկա են համարում իսրայելյան փորձը, հարկ է առաջանում դրան անդրադառնալ մի փոքր ավելի մանրամասնորեն: «Ազգ-բանակի» իսրայելյան ծրագրի իրականացման դրդապատճառն, ըստ էության, չի տարբերվում շվեյցարականից, թելադրված լինելով թշնամական միջավայրում ժողովրդի անվտանգությունն ու պետության գոյատեւումն ապահովելու միեւնույն պարտադրանքից: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1947թ. նոյեմբերի 29-ի բանաձեւի հիման վրա Պաղեստինը բաժանվեց երկու հավասար մասի՝ տասնչորսհազարական քառակուսի կիլոմետր տարածքներով: Իսրայելը ճանաչեց այդ բանաձեւը եւ Պաղեստինում բրիտանական մանդատի ժամկետի սպառման օրը, 1948թ. մայիսի 14-ին, հռչակեց իր անկախությունը: Պաղեստինցի արաբներն ու արաբական երկրները հրաժարվեցին ենթարկվել ՄԱԿ-ի բանաձեւին եւ հաջորդ օրն իսկ պատերազմ հայտարարեցին Իսրայելին, սակայն ջախջախիչ պարտություն կրելով, հարկադրված զինադադար կնքեցին: Այսպիսով, անխտիր բոլոր հարեւան արաբական պետություններից համակեցության մերժում ստանալով, Իսրայելն, իր գոյությունը պահպանելու համար, ստիպված եղավ բացառապես ապավինել սեփական ռազմական ուժին եւ հնարավորինս հզորացնել իր բանակը, ինչի շնորհիվ կարողացավ հաղթանակներ տանել նաեւ հետագա պատերազմներում: Արաբա-իսրայելյան հակամարտության մթնոլորտն արմատապես բարելավվեց 1978–1979 թթ. Քեմփ-Դեվիդյան համաձայնագրերի ստորագրումից եւ Եգիպտոսի ու Հորդա-

նանի հետ Իսրայելի կնքած հաշտության պայմանագրերի վավերացումից հետո: Իսկ 1993 թվականին Իսրայելի պետությունը ճանաչվեց նաեւ Պաղեստինի Ազատագրության կազմակերպության (PLO) կողմից, ինչը սկիզբ դրեց Իսրայելա-Պաղեստինյան հաշտության գործընթացին, որը մինչ օրս դեռ չի ավարտվել: Հարկ է ավելացնել, որ գոյապահպանության եւ երկրի անվտանգության ապահովման գլխավոր առաքելության իրականացումից բացի, իսրայելական բանակաշինության ծրագիրը կողմնակիորեն նպաստել է նաեւ ազգային մի քանի այլ խնդիրների լուծմանը, մասնավորապես, բազմաթիվ երկրներից ներգաղթած տարալեզու ու տարամշակույթ քաղաքացիների խայտաբղետ զանգվածից ընդհանուր լեզվով ու մշակույթով միասնացած ժամանակակից ազգի ձեւավորման, գիտության եւ տեխնիկական մտքի սրընթաց զարգացման, ինչպես նաեւ ռազմա-արդյունաբերական համալիրում ներդրվող նոր տեխնոլոգիաները տնտեսության զանազան ոլորտներում կիրառելու առումներով: Իսրայելական զինված ուժերի առանձնահատուկ դերի արտահայտությունն է նաեւ այն, որ զինապարտությունը տարածվում է ոչ միայն տղամարդկանց, այլեւ կանանց վրա եւ, որ այդ երկրի վերջին վաթսուն տարիների ութ վարչապետերից երեքը (Ռաբին, Շարոն, Բարաք) եղել են գեներալներ, իսկ երկուսը (Բեգին, Շամիր)՝ երկրապահական «Իրգուն» կազմակերպության լեգենդար հրամանատարներ:

Ժամանակի սղությունը թույլ չի տալիս ավելի հիմնավորապես լուսաբանել «ազգ-բանակի» ստեղծման պատմական այս նախադեպերը եւ խորանալ դրանցից յուրաքանչյուրի բովանդակության առանձնահատկությունների, տնտեսական, ժողովրդագրական եւ հասարակական զարգացումների վրա նրանց ունեցած ազդեցության եւ այլ հարցերի մեջ: Կարծում եմ, սակայն, որ այս թռուցիկ ակնարկն անգամ հստակ պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպիսի դրդապատճառներ

ու գործոններ են ազդել նման գաղափարի հղացման վրա, եւ որքան ռեսուրսներ են պահանջվել դրա իրականացման համար, նկատի ունենալով, անշուշտ, թե՛ մարդկային, եւ թե՛ նյութա-տնտեսական ռեսուրսները: Դրդապատճառների վերաբերյալ, ինչ որ պետք էր, արդեն ասվեց: Իսկ ռեսուրսների մասին ավելորդ է խոսել, որովհետեւ քանի խոսքը վերաբերում է հաջողված փորձերին, նշանակում է, դրա համար անհրաժեշտ ռեսուրսները լիուլի բավարարել են:

* * *

Ներածական այս հիմնադրույթներից բնականաբար բխում է, որ «ազգ-բանակի» կառուցման հայկական տարբերակի ճարտարապետները պարտավոր են, առաջին հերթին, պատասխանել հետեւյալ երեք հարցերին. ինչպիսի՞ պարտադրանքից է թելադրված այդ ծրագիրը, ի՞նչ խնդրի լուծմանն է կոչված այն, եւ որքա՞ն ռեսուրսներ են պահանջվելու նրա իրականացման համար: Խախտելով հարցերի հաջորդականությունը, նախ անդրադառնանք ռեսուրսներին: Ի տարբերություն, որպես օրինակ բերվող, Իսրայելի, որի հրեա բնակչության թվաքանակը անկախությունից ի վեր անշեղորեն աճել եւ 600 հազարից այսօր հասել է շուրջ 7 միլիոնի, Հայաստանի բնակչությունը 1988թ. երկրաշարժից ու խորհրդային փակ սահմանների փլուզումից հետո անընդհատ նվազել է՝ մի գործընթաց, որն այս պահին էլ դադարելու կամ թեկուզ դանդաղելու որեւէ միտում չի դրսեւորում: Մարդկային ռեսուրսների առումով Հայաստանի իշխանությունները մեծ հույսեր են կապում Սփյուռքի հետ: Ինքս սփյուռքահայ լինելով, ինձ իրավունք եմ վերապահում ամենայն պատասխանատվությամբ հայտարարել, որ այդ ակնկալիքը բացարձակ ցնորք է եւ ինքնախաբեություն: Բավական է հիշեցնել, որ 1990-ականների եռամյա պատերազմին մասնակցել է ընդամենը 12 սփյուռքահայ: Այդ թիվը ժամանա-

կին ցավով հրապարակել է ոչ այլ ոք, քան պատերազմի բոլոր մանրամասներին տիրապետող Վազգեն Սարգսյանը:

Ինչ վերաբերում է նյութական ռեսուրսներին, ապա այստեղ էլ պատկերը նույնքան տխուր է, որքան մարդկային ռեսուրսների պարագայում: Հայաստանի տնտեսությունը, 1994–2008 թվականների որոշ վերելքից հետո սոսկալի անկում է ապրում, ընդ որում, ցավոք, առանց առողջացման որեւէ հեռանկարի: Ինչպես ասում են՝ թունելի վերջում լույս չի երեւում: Դա ամենեւին չի նշանակում, թե Հայաստանում ազգային հարստություն չի ստեղծվում: Անշուշտ ստեղծվում է, բայց 2001 թվականից ի վեր, բարձրաստիճան պաշտոնյաների կողմից դրա անխնա թալանի պատճառով ծախսվում է սեփական բիզնեսների զարգացման, շքեղ ապարանքների կառուցման եւ Աֆրիկայում առյուծի որսով զբաղվելու վրա, իսկ մնացյալ գումարը կուտակվում է արտասահմանյան բանկերում: Որպեսզի պատկերացնեք, թե ինչ ծավալի թալանի մասին է խոսքը, նշեմ, որ այն միանգամայն բավարար էր այսօր 300000 բնակչությամբ Ղարաբաղ եւ գերժամանակակից զինատեսակներով հագեցած բանակ ունենալու համար: Եթե Հայաստանի տնտեսության ներկայիս վիճակը ողբալի չլիներ, ապա իշխանությունները, զոհված ու հաշմանդամ զինծառայողների ընտանիքների կարիքները հոգալու համար, ոչ մի այլ պարագայում չէին ընդունի ժողովրդից 1000-ական դրամ մուրալու խայտառակ օրենքը, ինչը, առաջին իսկ քայլով «ազգ-բանակ» գաղափարը վարկաբեկելուց բացի, ծանր հարված հասցրեց պետության արժանապատվությանը, մեզ ծաղրի առարկա դարձնելով աշխարհի առջեւ: Նյութական ռեսուրսների առումով եւս առանձնապես հույս չպետք է դնել Սփյուռքի էական աջակցության վրա: Նախ՝ Սփյուռքն ինչո՞ւ պիտի օգնի Հայաստանին, որի հարստությունը թալանվում է սեփական իշխանավորների կողմից, եւ երկրորդ՝ երախտագիտությամբ գնահատելով հանդերձ սփյուռքահայ բարերարների եւ հասարակ ժողովրդի կողմից անկախության շրջանում Հայաստանին ցուցաբերված մարդասիրական օգնությունը, չպետք է մոռանալ, որ այն երբեք չի գերազանցել մեր երկրի տարեկան բյուջեի երկու-երեք տոկոսը: Իսկ սա, եկեք համաձայնենք, չնչին նպաստ է մի այնպիսի ծախսատար ծրագրի իրականացման գործին, ինչպիսին «ազգ-բանակի» կառուցումն է: Անգամ եթե Հայաստանի ողջ տարեկան բյուջեն տրամադրվեր այդ ծրագրի իրականացմանը, դա նույնպես անբավարար կլիներ:

* * *

Այժմ անցնենք այն հարցին, թե ինչպիսի՞ պարտադրանքից է թելադրված «ազգ-բանակի» կառուցման հայկական ծրագիրը կամ, թե ո՞րն է դրա հղացման դրդապատճառը: Ինչպես տեսանք, մոնղոլների պարագայում դրդապատճառը այլ երկրներ նվաճելու նրանց ձգտումն էր, իսկ միջնադարյան Շվեյցարիայի եւ ժամանակակից Իսրայելի դեպքերում՝ թշնամական միջավայրում սեփական ժողովուրդների անվտանգությունն ու պետականության գոյատեւումն ապահովելու խնդիրը: Հայ ժողովրդի նվաճողական նկրտումների մասին ծիծաղելի է խոսել, եթե, իհարկե, նկատի չունենանք Բաքուն գրավելու, Արեւմտյան Հայաստանն ազատագրելու եւ ծովից-ծով Հայաստան ստեղծելու ցնորամիտ անուրջները: Ինչ վերաբերում է «ազգ-բանակի» ստեղծման հարցում անվտանգության ու գոյատեւման անհրաժեշտությունից բխող պարտադրանքին, ապա շվեյցարական փորձը պետք է լիովին զանց առնել, որովհետեւ միջնադարն ավարտվել է, եւ պետությունների հարաբերություններն այսօր կարգավորվում են միջազգային իրավունքի բոլորովին այլ սկզբունքներով: Թվում է, թե այս տեսակետից Հայաստանի խնդիրները համեմատելի են Իսրայելի խնդիր-

ների հետ: Իրոք համեմատելի են, սակայն լուրջ վերապահումներով:

Նշվեց արդեն, որ արաբա-իսրայելյան տեւական առճակատման հիմքը միջազգային իրավունքին հակասող այն իրողությունն է, որ արաբական երկրները հրաժարվեցին ենթարկվել Պաղեստինի բաժանման վերաբերյալ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1947թ. նոյեմբերի 29-ի ընդունած բանաձեւին եւ Իսրայելի անկախության հռչակման հաջորդ օրը պատերազմ հայտարարեցին վերջինիս: Իսրայելին, հետեւաբար, այլ բան չէր մնում, քան ապավինել սեփական ուժերին եւ ձեռնամուխ լինել «ազգ-բանակի» կառուցման գործին: Այսինքն Իսրայելը ոչ թե կամովին է հանգել այդ մտքին, այլ իսկզբանե պարտադրված է եղել դիմելու նման բացառիկ քայլի: Ի դեպ, Եգիպտոսի ու Հորդանանի հետ հաշտության պայմանագրերի կնքումից եւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո անգամ այդ պարտադրանքը չի վերացել, քանի որ 21 արաբական եւ իսլամական պետություններ, ՄԱԿ-ի կանոնադրության ոգուն հակառակ, այդպես էլ մինչ օրս Իսրայելի հանրապետությունը չեն ճանաչել, ինչը լրջագույն մտահոգության առարկա է շարունակում մնալ վերջինիս համար:

Իսկ այժմ տեսնենք, թե, անգամ բավարար ռեսուրսների առկայության պարագայում, ինչն է Հայաստանին ստիպում ընթանալ Իսրայելի որդեգրած ճանապարհով: Ի տարբերություն Իսրայելի, Հայաստանը ճանաչված է ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների կողմից, բացառությամբ Պակիստանի: Սահմանակից հարեւաններից միայն երկուսի՝ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ է, որ Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ չունի: Մյուս երկու հարեւանների՝ Վրաստանի ու Իրանի հետ իսկզբանե հաստատված են ջերմ բարեկամական հարաբերություններ, որոնք փոխշահավետության եւ աշխարհաքաղաքական նկատառումներով, ոչ միայն բնավ

խաթարելի չեն, այլեւ խորացման ու ավելի արդյունավետ համագործակցության հեռանկար են ցուցանում: Անկախությունից ի վեր Իսրայելը վեց լայնածավալ պատերազմներ է մղել իր չորս հարեւանների՝ Եգիպտոսի, Սիրիայի, Հորդանանի ու Լիբանանի դեմ (1948, 1956, 1967, 1973, 1982, 2006 թթ.), չհաշված Իրաքի միջուկային կենտրոնին հասցված օդային հուժկու հարվածը (1981թ.): Մինչդեռ Հայաստանը սահմանային ռազմական առճակատման մեջ է գտնվել միայն հարեւաններից մեկի՝ Ադրբեջանի հետ: Այս առումով, իմիջիայլոց, տեղին է նշել, որ ներկայիս Հայաստանի վիճակը տարբերվում է ոչ միայն Իսրայելի, այլեւ Հայաստանի առաջին հանրապետության վիճակից, որն իր գոյության երկուսուկես տարիների ընթացքում պատերազմել է իր չորս հարեւաններից երեքի՝ Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի հետ:

5762

Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հակասությունների վերացումն ու բարիդրացիական հարաբերությունների հաստատումը կախված են ընդամենը մեկ հարցի՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորումից, որին մանրամասն կանդրադառնամ քիչ հետո: Չպետք է անկարեւոր համարել այն իրողությունը, որ հակառակ այդ հարցում Ադրբեջանի հանդեպ Թուրքիայի ցուցաբերած անվերապահ քաղաքական աջակցությանը, վերջինս, շրջափակումից բացի, Հայաստանի դեմ որեւէ այլ թշնամական գործողություն չի ձեռնարկել եւ ոչնչով չի կարողացել խանգարել Ղարաբաղի տարածքային ընդարձակմանը: Ավելին, գուցե պարադոքսալ ինչի, ցուցադրական աջակցությամբ մեծ հույսեր ներշնչելով ու դրանով անզիջողականության մղելով Ադրբեջանին, Թուրքիան որոշ առումով նույնիսկ նպաստել է արցախյան բանակի արձանագրած հաջողություններին: Եթե, հակամարտության հարցում կողմերից մեկին աջակցելու փոխարեն, նա չեզոքություն պահպաներ ու դրանով Ադրբեջանին անզիջողականության չդրդեր, ապա Քելբա-

ջարից հետո վերջինս չէր կորցնի իր տարածքի հավելյալ հինգ շրջանները: Թուրքիայի ապակառուցողական միջամտությունն, այսպիսով, ոչ թե թուլացրել, այլ ավելի եւս սրել է Ղարաբաղյան հակամարտության շուրջ ստեղծված լարվածությունը:

Ինչեւիցե, վերոշարադրյալից ակնհայտորեն հետեւում է, որ Հայաստանը զերծ է իր գոյությանն սպառնացող գրեթե բոլոր այն արտաքին վտանգներից, որոնք անկախության ավելի քան քառասուն տարիներին սպառնացել են Իսրայելին եւ այսօր էլ դեռ շարունակում են սպառնալիք մնալ: Հետեւաբար, մեր երկիրը, անշուշտ ուշադրության կենտրոնում պահելով ազգային բանակի հզորացման անհրաժեշտությունը, ամենեւին պարտադրված չէ հետեւելու «ազգ-բանակի» կառուցման իսրայելյան օրինակին: Արաբական եւ իսլամական աշխարհի հետ Իսրայելի ունեցած խնդիրների համեմատությամբ, Հայաստանի ու Ղարաբաղի խնդիրները շատ ավելի լոկալ ու լուծելի են: Այդ պատճառով է, մասնավորապես, որ միջազգային հանրությունը դրանք առայժմ առաջնահերթություն չի դիտում: Այս ամենից բացի, Իսրայելյան փորձի ընդօրինակումը խոցելի է նաեւ մի այլ՝ մեթոդաբանական առումով: Ամենեւին պարտադիր չէ, որ որեւէ երկրում կիրառված արդյունավետ համակարգը կիրառելի լինի նաեւ ուրիշ երկրներում: Չինական տնտեսական բարեփոխումների հրաշքն, օրինակ, կարող էր տեղի ունենալ միայն Չինաստանում:

Մի խոսքով, մեր պարագայում «ազգ-բանակի» կառուցման ծրագիրը ձախորդ, չմտածված, վտանգավոր ծրագիր է, որի միակ արդյունքը լինելու է արտագաղթի խթանումը եւ Հայաստանի ու Ղարաբաղի վերջնական հայաթափումը: Տպավորություն է ստեղծվում, որ վարչախումբը մտադիր է «ազգ-բանակ» ծրագիրն իրականացնել նրա բաղադրիչներից մեկի՝ ազգի վերացման գնով: Այսինքն՝ որոշ ժամանակ անց մենք

գուցե հզոր բանակ ունենանք, բայց հարց է՝ ազգ մնացած կլինի, թե՞ ոչ:

* * *

Բնականաբար հարց է առաջանում. եթե, ինչպես տեսանք, Հայաստանն իր անվտանգ գոյությունը պահպանելու համար պարտադրված չէ դիմելու «ազգ-բանակի» ստեղծման ծայրահեղ քայլին, ապա այդ խնդիրն իր առջեւ դնելով, ի՞նչ նպատակ է հետապնդում մեր երկրի իշխանությունը: Կարելի է, իհարկե, մտածել, եւ այդպես մտածողներ կան, որ «ազգ-բանակ» գաղափարի առաջքաշումը իշխող կուսակցության հերթական հայրենասիրախաղերից կամ նախընտրական փուչ կարգախոսներից մեկն է՝ «ազգովի դառնանք ֆիդայի», «համաշխարհային ազգ», «ազգ-կազմակերպություն», «ծովից-ծով Հայաստան», «Քուռ-Արաքսյան հանրապետություն», «ոչ մի թիզ հող», «համահայկական բանկ», «Գյումրին՝ տեխնոպարկ», «Դիլիջանը՝ ֆինանսական կենտրոն», «Ստամբուլը՝ արյան ծով» հեքիաթների շարքից: Եթե այդպես է, ուրեմն «ազգ-բանակի» գաղափարն այնքան էլ վտանգավոր չէ, որովհետեւ նախորդ փուչիկների պես շուտով կպայթի:

Իսկ եթե վարչախմբի մտադրությունն այս անգամ լուրջ է, ապա անհրաժեշտ է հարցին անդրադառնալ նույնքան լրջորեն: Շատ խելք պետք չէ հասկանալու համար, որ այդ գաղափարը ստատուս-քվոյի պահպանման միեւնույն ռազմավարությունն է՝ մատուցված ուրիշ փաթեթավորումով: Այսինքն, մեր իշխանությանը հոգեհարազատ մարկետինգի տրամաբանությամբ՝ իր սնանկությունն ապացուցած, բարոյապես մաշված եւ սպառողին ձանձրացրած բրենդը փոխարինվել է մի այլ, ավելի գրավիչ ու բարեհունչ բրենդով: Այլ կերպ ասած, դաս չքաղելով անցած 18 տարիների դառը փորձից, վարչախումբը որոշել է շարունակել Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հավերժ

առճակատման տխրահռչակ քաղաքականությունը, որն այս կարճ ժամանակամիջոցում արդեն իսկ տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական ու բարոյահոգեբանական բազում ավերներ է գործել Հայաստանում եւ Ղարաբաղում: Դա նշանակում է առնվազն եւս 18 տարի ենթարկվել այդ ավերներին, մինչեւ Հայաստանից ու Ղարաբաղից բան չմնա, եւ խնդիրն ինքնըստինքյան կորցնի իր ակտուալությունը:

Բազմիցս է ասվել, որ Հայաստանի ու Ղարաբաղի անվտանգության, տնտեսական զարգացման եւ ժողովրդագրական վիճակի բարելավման գլխավոր երաշխիքը Ղարաբաղյան հակամարտության եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն է: Պարզվում է, սակայն, որ այս տարրական ճշմարտությունն ըմբռնելու համար 18 տարին էլ չի բավականացրել մեր իշխանություններին: Իրականում խնդիրը մեկն է՝ Ղարաբաղի հարցի լուծումը, որից հետո հայ-թուրքական հարաբերությունները կկարգավորվեն ինքնաբերաբար: Իսկ Ղարաբաղի հարցի լուծման այլ տարբերակ, քան փուլայինը, գոյություն չունի: Այսօր բանակցությունների սեղանին, ըստ էության դրված է կարգավորման փոխզիջումային նույն առաջարկը, ինչ 1997 թվականին, այն է՝ որոշ տարածքների զիջման դիմաց Ղարաբաղին միջազգայնորեն ճանաչված միջանկյալ կարգավիճակ շնորհելու, իսկ վերջնական կարգավիճակի հարցը ապագային թողնելու տարբերակը՝ երաշխավորված ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում խաղաղապահ ուժերի տեղակայմամբ:

Արդի աշխարհում նվաճողի միջնադարյան իրավունքն ու ջունգլիների օրենքն այլեւս չեն գործում, եւ հակամարտությունների կարգավորման այլ տարբերակ, քան փոխզիջումը, գոյություն չունի: Բանկոստոմանյան կամ ոչմիթիզական մտածողություն ունեցող մեր անզիջողականների կողմից շատ սիրված Իսրայելի օրինակը նույնպես դա է ապացուցում: Քեմփ-

Դեվիդյան հաշտությունը կայացնելու համար վերջինս Եգիպտոսին վերադարձրեց շուրջ 60 հազար քառակուսի կիլոմետր զբաղեցնող Սինայի թերակղզին, իսկ Պաղեստինի Ազատագրության կազմակերպության կողմից իր պետությունը ճանաչելու դիմաց լիակատար ինքնավարություն շնորհեց արաբական Պաղեստինին, պատրաստ լինելով, որոշ խնդիրների լուծումից հետո, ճանաչել նաեւ նրա անկախությունը: Դրանք դժվարին, ցավոտ փոխզիջումներ էին, հանուն որոնց կայացման Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթը եւ Իսրայելի վարչապետ Իցխակ Ռաբինը նույնիսկ կյանքով հատուցեցին: Այնպես որ, եթե անհրաժեշտություն կա անպայման օրինակ վերցնելու Իսրայելից, ապա պետք է վերցնել ոչ թե «ազգ-բանակի», այլ «խաղաղություն այժմ (Peace now)» շարժման օրինակը: Հակամարտությունների փոխզիջումային կարգավորման կանոնը «թույլատրված է» խախտել միայն գերտերություններին: Այդ բանը չգիտակցող Սադդամ Հուսեյնը, զավթելով Քուվեյթը, կործանեց թե՛ իրեն, թե՛ իր երկիրը:

«Փոխզիջման այլընտրանքը պատերազմն է» պնդումը, ապացուցված պատմական անթիվ օրինակներով, վիճարկելի չէ: Կարիք չկա նաեւ բացատրելու, թե ինչպիսի ողբերգական հետեւանքներ են ունենում պատերազմները: Ոչ իսկ բուն պատերազմը, այլեւ նրա սպառնալիքն անգամ հղի է այդպիսի հետեւանքներով, որոնցից ամենացցունը զանգվածային արտագաղթն է: Հայաստանը բնակչությունից դատարկվում է ոչ այնքան սոցիալական ծանր պայմանների, աղքատության, արդարության բացակայության եւ կոռուպցիայի, որքան պատերազմի վերսկսման տեւական վտանգի պատճառով: Սա միայն մեզ հատուկ երեւույթ չէ, եւ այդ առթիվ ամենեւին չպետք է բարդույթավորվել: Մեր աչքի առջեւ, վերջին մի քանի տասնյակ տարիների ընթացքում, պատերազմի կամ դրա սպառնալիքի պատճառով միլիոնավոր մարդիկ են արտագաղթել նաեւ

Վրաստանից, Ադրբեջանից, Իրաքից, Լիբանանից, Սիրիայից, Աֆղանստանից, Սուդանից, Ուկրաինայից եւ մի շարք այլ երկրներից:

* * *

Ղարաբաղյան հակամարտության այն հանգուցալուծմանը, որին Հայաստանը առավելագույն ջանքերի գնով կարող է հասնել ներկայումս, շատ ավելի շահեկան պայմաններով մենք կարող էինք հասնել դեռեւս 1998 թվականին: Եթե դա տեղի ունեցած լիներ, ապա ոչ միայն կխուսափեինք անցած տասնութ տարիների անտեղի տառապանքներից ու կորուստներից, այլեւ այսօր կունենայինք բոլորովին մի այլ՝ ծաղկուն, մարդաշատ, զարգացող երկիր եւ ապահով Ղարաբաղ: Ցավում եմ, որ այս պարզ ճշմարտությունները ժամանակին չհասկացվեցին իմ որոշ գործընկերների կողմից, եւ մենք կորցրեցինք հարցի լուծման հարմարագույն պահը: Հուսով եմ, որ այս պնդումը կընկալեք ոչ թե որպես ոմանց ուղղված կշտամբանք, այլ որպես զգուշացում առ այն, որ եթե նորից ժամանակ կորցնենք, հետագայում ստիպված ենք լինելու հարցը լուծել ավելի վատ պայմաններով ու շատ ավելի թույլ վիճակում: 1998 թվականի իշխանափոխության կործանարար հետեւանքների պատճառը պետք է փնտրել ոչ թե գործող անձանց փոփոխության, այլ քաղաքականության շարունակականության խաթարման մեջ:

Անցյալը մի կողմ դրած, ակնհայտ է, որ այսօր մենք կրկին կանգնած ենք Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հերթական պահը բաց չթողնելու հրամայականի առջեւ, ինչի վկայությունն են, մասնավորապես, վերջին շրջանում այդ ուղղությամբ Ռուսաստանի գործադրած լուրջ ջանքերը: Մի առիթով ես ասել եմ, որ Ղարաբաղի հարցի լուծման բանալին գտնվում է Ռուսաստանի ձեռքում, եւ նրա այդ ջան-

քերն, արդ, գալիս են ապացուցելու տվյալ պնդման ճշմարտացիությունը: Ընդ որում, Արեւմուտքը եւս, որի առաջնահերթությունների շարքում, ինչպես նշվեց, Ղարաբաղյան կարգավորումը տեղ չի գրավում, վստահաբար, ոչ միայն գիտակցում, այլեւ գնահատում է Ռուսաստանի առանձնահատուկ դերակատարությունն այդ հարցում:

Հայ Ազգային Կոնգրեսը, իր նախորդի՝ Հայոց Համազգային Շարժման պես, Հայաստանի միակ կուսակցությունն է, որը ոչ միայն երբեք չի թաքցրել, այլեւ բազմիցս հրապարակավ հայտարարել է փոխզիջման եւ խաղաղության կողմնակցի իր դավանանքը: Հետեւաբար, ոչ միայն սկզբունքի տեսակետից, այլեւ իրավիճակի թելադրանքով Կոնգրեսն առաջիկա խորհրդարանական ընտրություններին պետք է մասնակցի սպառազինությունների մրցավազքի դադարեցման, նոր պատերազմի վտանգի բացառման, Ղարաբաղի հարցի լուծման, Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման կառուցողական ծրագրով, որը բխում է ոչ թե մեր կուսակցության, այլ բացառապես Հայաստանի ու Ղարաբաղի ժողովրդի կենսական շահերից: Այդ ծրագիրը, բնականաբար, հնարավոր է իրականացնել միայն ընտրություններում Կոնգրեսի հաղթանակի կամ Ազգային Ժողովում պատկառելի ներկայություն ունենալու պարագայում:

Սակայն, քանի որ ընտրությունները դեռ հեռու են ու դրանից հետո էլ, մինչեւ 2018թ. ապրիլը, Հայաստանում պահպանվելու է նախագահական համակարգը, անհրաժեշտ է հաշվի նստել այն հանգամանքի հետ, որ Ղարաբաղի հարցի լուծման պատասխանատվությունը եւս մեկուկես տարի դրված է լինելու Սերժ Սարգսյանի վարչակազմի եւ նրա հենարանը հանդիսացող կուսակցությունների վրա: Մյուս քաղաքական ուժերը, այդ թվում Հայ Ազգային Կոնգրեսը, առայժմ, կարծիք արտահայտելուց բացի, գործընթացի վրա ազդեցության որեւէ

այլ լծակ չունեն: Դա չի նշանակում, անշուշտ, որ նրանք, եթե ոչ իրավական, ապա առնվազն բարոյական պատասխանատվություն չպետք է ստանձնեն եւ, ձեռքերը լվանալով, մի կողմ քաշվեն: Մի այնպիսի համազգային խնդրի լուծման հարցում, ինչպիսին Ղարաբաղյան հակամարտությունն է, խաղաղության եւ հաշտության կողմնակից բոլոր կուսակցությունները, քաղաքացիական կազմակերպությունները եւ մտավորական խավերը պարտավոր են զորավիգ կանգնել օրվա իշխանություններին, անկախ նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Արտաքին սպառնալիքի կամ ներքին կայունության խախտման վտանգի պարագայում մենք միշտ առաջնորդվել ենք այս սկզբունքով, ինչի վկայությունն է, մասնավորապես, հոկտեմբերի 27-ին, ապրիլյան պատերազմի ժամանակ եւ Սասնա ծռերի հետ կապված դեպքերի օրերին մեր դրսեւորած դիրքորոշումը:

Մյուս քաղաքական ուժերը կա՛մ անզիջողականներ ու ոչ-միթիզիոողականներ են, կա՛մ էլ, այդպիսին չլինելով, ազգադավ կոչվելու վախից, չեն համարձակվում Ղարաբաղի հարցում դիրքորոշում արտահայտել: Հակառակ այն հանգամանքին, որ ոչմիթիզիոողականներից շատերը հողերի ձեռքբերման հետ որեւէ կապ չեն ունեցել, իսկ որոշ մասը, Վարուժան Ավետիսյանի դիպուկ արտահայտությամբ, պարզապես զինվորի ու ազատամարտիկի արյան վրա ձեռք տաքացնողներ են, նրանց գոյությունն ամենեւին արտառոց չպետք է համարել: Այդպիսի ծայրահեղական ուժեր կան անգամ զարգացած ժողովրդավարական երկրներում, այդ թվում, սույն ելույթում բազմիցս հիշատակված Իսրայելում: Արտառոցն ու ապշեցուցիչը Հանրապետական կուսակցության եւ կոալիցիոն կառավարության ներկայացուցիչների պահվածքն է: Այդ կուսակցության ոչ մի անդամ եւ պետական ոչ մի պաշտոնյա, լղոզված ու կցկտուր խոսքերից բացի, երբեւէ փոխզիջման վերաբերյալ հրապարակային հստակ հայտարարությամբ հանդես չեն եկել:

Հասարակությանը խաղաղության նախապատրաստելու եւ դրա ընդդիմախոսներին հակադարձելու գործում նրանք փաստորեն լքել, մենակ են թողել իրենց նախագահին: Այնինչ դա պետք է լիներ ոչ թե Հայ Ազգային Կոնգրեսի, այլ առաջին հերթին, հենց իրենց գործը: Պահն է, վերջապես, գիտակցելու, որ Ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացում հաջողության հասնելու համար Սերժ Սարգսյանին անհրաժեշտ է հանդես գալ ժողովրդի մեծամասնության, քաղաքական ուժերի եւ հասարակական կազմակերպությունների աջակցությունը վայելող առաջնորդի, եւ ոչ թե սեփական երկրի ներսում լուրջ խնդիրներ ունեցող թույլ ղեկավարի հանգամանքով: Իսկ դրա համար ոչ թե պետք է էժանագին «հայրենասիրական» հոխորտանքներով թեւաթափ անել նրան, այլ, ընդհակառակը, խրախուսել կատարելու Ղարաբաղյան կարգավորման վճռական քայլը: Այլապես, բանակցությունների ընթացքում նրա փաստարկների հետ ոչ ոք հաշվի չի նստի:

Ժողովուրդները, որպես կանոն, երախտագիտություն են հայտնում այն առաջնորդներին, ովքեր իրենց ոչ թե նույնիսկ հաղթական պատերազմ, այլ խաղաղություն են պարգեւում: Այս իրողությունը հատուկ է ոչ միայն ժամանակակից աշխարհին, այլեւ խորապես գիտակցվել է անգամ միջնադարում: Որքան էլ միջնադարյան հեղինակները գովերգեին իրենց թագավորների կամ սուլթանների զինական առաքինություններն ու քաջագործությունները, նրանց կողմից, այդուհանդերձ, ավելի բարձր էին դասվում այն պետական այրերը, որոնք խաղաղություն եւ բարօրություն էին պարգեւում իրենց ժողովուրդներին, թեկուզ դրանք նվաճված լինեին փոխզիջումների գնով: Հայ իրականության մեջ այդ գաղափարը հստակորեն ձեւակերպել են մանավանդ XI–XIII դարերի հռչակավոր մատենագիրներ Արիստակես Լաստիվերտցին եւ Հովհաննես Երզնկացին: «Թագաւորաց օրէն է աշխարհի խաղաղութիւն եւ շինու-

թիւն հոգալ»,– գրում է Լաստիվերտցին: Ի դեպ, միջին պարսկերենից փոխառված հայերեն «շէն» եւ ասորերեն «šaynā» արմատներից ածանցյալ «շինութիւն» եւ «mšaynūta» բառերն ունեն երկու իմաստ՝ «խաղաղություն» եւ «բարօրություն», ինչը նշանակում է, որ ժողովրդական լեզվամտածողության մեջ այդ երկու գաղափարները բացարձակապես նույնացվել են, արտացոլելով այն ըմբռնումը, որ եթե չկա խաղաղություն, բարօրություն լինել չի կարող (մանրամասն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. Բ, Երեւան, 2007, էջ 28–29): Սերժ Սարգսյանին, արդ, մնում է հետեւել մեր նախահայրերի իմաստությանը եւ անսալ ռացիոնալ քաղաքականության թելադրանքին, ինչը չի կարող ըստ արժանվույն չգնահատվել ժողովրդի կողմից:

* * *

Ելույթիս կապակցությամբ հնարավոր, ավելի ճիշտ, անխուսափելի չարախոսությունները կանխելու նպատակով, հարկադրված եմ նաեւ կատարել հետեւյալ երկու զգուշացումները.

Առաջին. Արտաքին սպառնալիքների դիմակայման եւ ներքին կայունության ապահովման հարցերում իշխանություններին զորավիգ կանգնելու մեր սկզբունքային դիրքորոշումն ամենեւին վարչախմբի հետ համագործակցություն չի նշանակում: Մենք եղել ենք վերջինիս ամենախիստ, սկզբունքային ու հետեւողական քննադատն ու այսուհետեւ էլ չենք դադարելու այդպիսին լինել, կտրականապես բացառելով մաս կազմել հայ ժողովրդի գլխին անհամար աղետներ բերած Հանրապետական կուսակցության ձեւավորած որեւէ կոալիցիայի: Գաղափարական, քաղաքական եւ բարոյական սկզբունքներով մենք միմյանցից բոլորովին տարբեր, հակոտնյա կուսակցություններ ենք, որոնց հարաբերությունները իշխանություն-ընդդիմություն ձեւաչափից այն կողմ չեն կարող անցնել:

Եւ երկրորդ. Ադրբեջանի ղեկավարությունը չարաչար սխալված կլինի, եթե այս ելույթի հաշտարար ոգին եւ հայ ժողովրդի խաղաղության ձգտումը թուլության նշան համարի ու ավելի եւս կոշտացնի իր դիրքորոշումը Ղարաբաղի հարցում: Ապրիլյան պատերազմը, կարծում եմ, նրան ապացուցած պետք է լինի վտանգի պահին հայ ժողովրդի միավորվելու ու ցանկացած ոտնձգության հուժկու հակահարված հասցնելու կարողությունը: Սեփական նախաձեռնությամբ սանձազերծված հաջորդ պատերազմում, երբ էլ այն պատահի, Ադրբեջանը, հաստատաբար, դառը պարտություն կկրի ու եւս մի քանի շրջան կկորցնի: Իսկ թե դրանից հետո ինչ տեղի կունենա, միայն Աստծուն է հայտնի: Հակառակ իր ռազմաշունչ հռետորաբանությանը, Իլհամ Ալիեւին ես համարում եմ ռացիոնալ մտածող պետական գործիչ, որն ընդունակ է համաչափ քայլ կատարել խաղաղության հաստատման նաեւ սեփական ժողովրդին խիստ անհրաժեշտ ուղղությամբ, ինչպես ժամանակին իմ «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հոդվածին ընդարձակ ելույթով ողջախոհաբար արձագանքեց իր հայրը՝ հանգուցյալ Հեյդար Ալիեւը:

Պատկերացնում եմ, թե այս ելույթից հետո ինչպիսի վայնասուն է բարձրանալու Հայաստանի քաղաքական ու տեղեկատվական դաշտում: Մեզ բախտ է վիճակվելու կրկին ականատես լինել տգիտության, կարճատեսության, պոռոտախոսության շքեղ մի տոնահանդեսի: Մենք արժանանալու ենք բազմազան մաշված պիտակների, եւ արդեն որերորդ անգամ մեզ գամելու են անարգանքի սյունին, ի հաստատումն հայ քաղաքական մտքի օրիգինալությունը բնորոշող հետեւյալ պարադոքսալ սիլլոգիզմի.

a. Զիջում ես մասը, մյուս մասը կարողանում ես պահպանել.

b. Ոչինչ չես զիջում, կորցնում ես ամեն ինչ.

c. Մասը պահողները հռչակվում են դավաճաններ. Ամեն ինչ կորցնողները կոչվում են հայրենասերներ:

Ինչո՞ւ ենք, ուրեմն, մեր անցավ գլուխը փորձանքի տակ դնում: — Որովհետեւ Հայաստանում ճշմարտության երեսին ուղիղ նայող ուրիշ ուժ չկա: Եթե մենք էլ մյուսների պես լռենք, ողջախոհության ճրագը մեր երկրում վերջնականապես կմարի: Ուստի, անկախ այն բանից, թե մեզ ինչ պիտակներ կփակցնեն, ես Կոնգրեսին առաջարկում եմ խիզախաբար ընտրությունների գնալ «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» նշանաբանով: Դա չի կարող հասկացողություն չգտնել ժողովրդի ճնշող մեծամասնության մոտ, որովհետեւ Հայաստանի ու Ղարաբաղի փրկության, ապահովության ու զարգացման այլ ճանապարհ գոյություն չունի: Հեղինակավոր քաղաքագետների ու տնտեսագետների, այդ թվում, մեր հայրենակից Տարոն Աճեմյանի կողմից Հայաստանն արդեն իսկ դասվում է ձախողված պետությունների, այսինքն՝ Աֆղանստանի, Սոմալիի, Լիբիայի, Եմենի, Հարավային Սուդանի, Իրաքի եւ նմանատիպ այլ երկրների շարքին: «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» նշանաբանի իրագործումը պատեհություն է ընձեռում կարճ ժամանակի ընթացքում դուրս գալու այդ դժբախտ ընկերակցությունից: Հետեւաբար, Հայաստանի ու Ղարաբաղի հանրապետություններն իրավունք չունեն բաց թողնելու այդ պատեհությունը: Իսկ ինչ վերաբերում է Հայ Ազգային Կոնգրեսի տվյալ պահի մարտավարությանը, ապա, իմ կարծիքով, ցանկալի կլիներ, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններին մենք մասնակցեինք այս նշանաբանի կամ քաղաքական պլատֆորմի շուրջ ձեւավորված դաշինքով: Այդպիսի դաշինք կազմելու ցանկություն հայտնող կուսակցությունների առջեւ մեր դռները պետք է բաց լինեն:

Ավարտելով խոսքս, Ղարաբաղյան կարգավորման հարցում Կոնգրեսի դիրքորոշումն ավելի հստակեցնելու համար, չխուսափելով որոշ կրկնություններից, հարկ եմ համարում շեշտել, որ այդ դիրքորոշումը հիմնված է հետեւյալ առարկայական (օբյեկտիվ) ելակետերի վրա.

ա. Առանց այդ խնդրի լուծման Հայաստանը եւ Ղարաբաղը զրկված են ապահովության, զարգացման ու բարգավաճման որեւէ հեռանկարից. տասնութ տարին քիչ ժամանակ չէր, այդ բանն ըմբռնելու համար:

բ. Այլ լուծում, քան այն, ինչ դրված է բանակցությունների սեղանին, գոյություն չունի: Պահը բաց թողնելու դեպքում հաջորդ լուծումը մեզ համար ավելի վատն է լինելու:

գ. Կարգավորման արդյունքում կողմերն իրենց հաղթող կամ պարտվող չպետք է զգան, այլապես երկարաժամկետ կտրվածքով նրանց հարաբերությունները հղի կլինեն հակամարտության վերականգնման մշտական վտանգով:

դ. Հայ Ազգային Կոնգրեսը, ինչպես արդեն նշվեց, կարծիք արտահայտելուց բացի, կարգավորման գործընթացի վրա ազդեցության այլ լծակ չունի:

ե. Հարցի լուծման պատասխանատվությունն ամբողջապես ընկած է իշխող վարչախմբի եւ նրա հենարանը հանդիսացող քաղաքական ուժերի վրա: Ուզո՞ւմ են ականջալուր լինել մեր կարծիքին՝ շատ լավ, չե՞ն ուզում՝ մեղքը իրենց վիզը:

զ. Եթե մեր իշխանությունն ի զորու լինի հասնելու ավելի շահեկան, հաղթողական լուծման, մենք միայն կողջունենք դա եւ ներողություն կխնդրենք նրանցից:

է. Մենք հավասարապես ցավում ենք հակամարտության պատճառով ոչ միայն հայերի, այլեւ ադրբեջանցիների կրած անհամար տառապանքների համար եւ անկեղծորեն հավատում երկու ժողովուրդների խաղաղ համակեցությանն ու բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը:

Ելույթս գուցե դառը ստացվեց, բայց իմ նպատակը ոչ թե մարդկանց վիատեցնելն էր, այլ, ընդհակառակը, ազգին ներկայիս հեղձուկ իրավիճակից հուսադրիչ ու արժանապատիվ ելք ցույց տալը՝ ազգ, որի ուրախության ու հպարտության միակ առարկան այսօր Հենրիկ Մխիթարյանն է:

* * *

Լեւոն Տեր-Պետրոսյանի լրացուցիչ պարզաբանումներն իր ելույթի արձագանքների վերաբերյալ*

Բացասական, զգացական, խեղաթյուրիչ, մեղադրական, սպառնալից, հիստերիկ արձագանքներն ինձ համար ամենեւին անսպասելի չէին, եւ դա հստակորեն կանխատեսված էր իմ ելույթում: Անակնկալը դրական արձագանքների առատությունն էր, ինչը նշանակում է, որ ուղեղների լվացմանն ուղղված տասնութամյա պետական քարոզչությանն այնուամենայնիվ չի հաջողվել ողջախոհությունն արմատախիլ անել մեր իրականությունից: Եւ, ըստ երեւույթին, հենց այս հանգամանքն է, որ առանձնապես հունից հանել է ուրիշների արյան վրա ձեռքեր տաքացնող խղճուկ «պոլիտիկաններին»:

Բոլորովին մտադիր չլինելով պատասխանել բացասական արձագանքներին, հարկ եմ համարում միայն ցավակցաբար արձանագրել, որ Ղարաբաղյան կարգավորման իմ «տեսակետը» կամ «հայեցակարգը» պարտվողական կամ դավաճանական հայտարարող ու դատափետող հարգարժան ընդդիմախոսներս հայտնվել են ծիծաղելի, եթե չասենք, ողորմելի վիճակում: Պարզվում է, որ այդ մարդիկ ընդհանրապես անտեղյակ, կամ իրենց սազող բառով, բեխաբար են Ղարաբաղ-

* *iLur.am, 28.12.2016թ.:*

յան կարգավորման գործընթացից: Բացատրեմ, թե ինչ նկատի ունեմ:

Դեկտեմբերի 17-ին ես ոչ թե ներկայացրել եմ Ղարաբաղի հարցի լուծման իմ տեսակետը կամ հայեցակարգը, այլ խոսել եմ այս պահին բանակցությունների սեղանին դրված եւ Հայաստանի իշխանությունների կողմից սկզբունքորեն ընդունված կարգավորման մի կոնկրետ ծրագրի մասին, որի հետ անձամբ ես եւ Հայ Ազգային Կոնգրեսը որեւէ կապ չունենք: Դա կարգավորման «մադրիդյան-կազանյան-լավրովյան» կոչված տարբերակն է, որն, ըստ էության, ոչնչով չի տարբերվում 1997թ. փուլային տարբերակից՝ ընդգրկելով հետեւյալ իրարահաջորդ քայլերը.

1-ին փուլ. Հայկական կողմը Ադրբեջանին է վերադարձնում Ղարաբաղի հսկողության տակ գտնվող յոթ շրջաններից հինգը, բացառությամբ Քելբաջարի եւ Լաչինի.

2-րդ փուլ. Ղարաբաղա-ադրբեջանական նոր շփման գծում տեղակայվում են խաղաղարար ուժեր.

3-րդ փուլ. Հռչակվում է Լեռնային Ղարաբաղի հանրապետության միջազգայնորեն ճանաչված միջանկյալ կարգավիճակը.

4-րդ փուլ. Վերացվում է Ղարաբաղի եւ Հայաստանի շրջափակումն ու վերականգնվում են Ադրբեջանը, Ղարաբաղը, Հայաստանը (հավանաբար նաեւ Թուրքիան) կապող հաղորդակցության բոլոր ճանապարհները.

5-րդ փուլ. Սահմանվում է Լեռնային Ղարաբաղի հանրապետության վերջնական կարգավիճակը.

6-րդ փուլ. Ադրբեջանին են վերադարձվում մնացյալ երկու շրջանները, բացի Լաչինի միջանցքից:

2007 թվականից ի վեր, իսկ առավել ինտենսիվորեն վերջին մեկ տարում, Հայաստանի իշխանությունները, Մինսկի խմբի համանախագահ երկրների եւ մասնավորապես Ռուսաստանի

հետ, բանակցում են կարգավորման կոնկրետ այս ծրագրի շուրջ: Այսինքն, ներկա պահին սա՛ է Ղարաբաղյան կարգավորման հարցում Հայաստանի իշխանության որդեգրած պաշտոնական տեսակետը, որի համար լիակատար պատասխանատվություն են կրում, առաջին հերթին, այդ իշխանության մաս կազմող Հանրապետական կուսակցությունն ու Դաշնակցությունը, իսկ ավելի պակաս՝ Ազգային Ժողովում նրանց հետ համերաշխորեն քվեարկող խմբակցություններն ու անհատ պատգամավորները: Ստիպված եմ կրկնել, որ ես եւ Կոնգրեսը ոչ միայն այս ծրագրի հետ որեւէ կապ չունենք, այլեւ ընդհանրապես, կարծիք արտահայտելուց բացի, նրա գործադրման վրա ազդեցության այլ լծակի չենք տիրապետում: Հետեւաբար ստացվում է, որ փոխզիջումը եւ տարածքների հանձնումը պարտվողականություն ու դավաճանություն համարողները բանավիճում են ոչ թե մեզ, այլ իրենք իրենց հետ եւ դատափետում են ոչ թե մեր տեսակետն ու հայեցակարգը, այլ իրենց իսկ ծրագիրը: Ահա, թե ինչ է նշանակում՝ հայտնվել ծիծաղելի, եթե չասենք, ողորմելի վիճակում:

Ինչ վերաբերում է կարգավորման նշված ծրագրի նկատմամբ մեր կուսակցության դիրքորոշմանը, ապա հակառակ այն իրողությանը, որ նա չի արդարացնում հայ ժողովրդի բոլոր սպասելիքները, մենք կողմ ենք նրա անհապաղ գործադրմանը, որովհետեւ՝ ա. ուշացնելու պարագայում Հայաստանն ու Ղարաբաղն ավելի են թուլանալու, եւ **բ.** հաջորդ լուծումն ավելի վատն է լինելու, քան այս մեկը: Ըստ էության չհակաճառելով տվյալ դիրքորոշմանը, իշխանական շրջանակներից ոմանք տարակուսանք են արտահայտել, թե արդյոք ժամանա՞կն էր հրապարակայնացնել այն: Դա մենք կատարել ենք երկու նկատառումով. նախ՝ հասարակությանը քաղաքական պատգամ փոխանցելու ավելի հարմար պահ, քան նախընտրական շրջանը, գոյություն չունի, եւ երկրորդ՝ որպեսզի Ղարաբաղյան հանգուցալուծումը, 2013թ. սեպտեմբերի 3-ի իրադարձության պես, շշմեցնող անակնկալ չլինի ու ներքաղաքական ցնցումներ չառաջացնի: Ինչպես նշել եմ իմ ելույթում, հասարակությանը փոխզիջման ու խաղաղության նախապատրաստելը, առաջին հերթին, պետք է լիներ հենց իրենց, եւ ոչ թե Կոնգրեսի գործը: Իրենց պարտականությունը մենք ենք կատարել, ու մի բան էլ մեզանից դժգոհում են:

* * *

Ետհամագումարյան բանավեճում բուռն քննարկման առարկա է դարձել նաեւ իմ «Ղարաբաղի հարցի լուծման բանալին գտնվում է Ռուսաստանի ձեռքում» արտահայտությունը: Ռուսաստանի նկատմամբ համակրանքի կամ հակակրանքի տարր չպարունակող եւ արտաքին քաղաքական կողմնորոշման հետ կապ չունեցող այս ակնհայտ ճշմարտությունը տեղիք է տվել աշխարհաքաղաքական բնույթի այնպիսի բռնազբոսիկ ու անհեթեթ մեկնաբանությունների, որոնց անդրադառնալը պարզապես անլրջություն կնշանակեր: Ղարաբաղի հարցի լուծման բանալու վերաբերյալ իմ արտահայտած պնդման հիմքում ընկած են հետեւյալ անժխտելի իրողությունները: Ի տարբերություն Ռուսաստանի, Ղարաբաղի հարցը երբեք Արեւմուտքի համար առաջնահերթություն չի եղել, ինչի վկայությունն է այն, որ վերջինս, պաշտոնական հայտարարություններից ու դիվանագիտական նախաձեռնություններից բացի, այդ ուղղությամբ որեւէ գործնական քայլ չի կատարել: Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջեւ թե՛ 1994, թե՛ 2016 թվականի զինադադարները կնքվել են բացառապես Ռուսաստանի ջանքերով: Վերսկսված սառը պատերազմի ներկա հանգրվանում ակտիվորեն ներգրավված լինելով Մերձավորարեւելյան իրադարձությունների հորձանուտում, Ռուսաստանը չի կարող իր սահմանների անմիջական հարեւանությամբ մի այնպիսի պայ-

թյունավտանգ օջախ հանդուրժել, ինչպիսին Ղարաբաղյան հակամարտությունն է: Դա է պատճառը, որ վերջին շրջանում այդ հակամարտության կարգավորման նախաձեռնությունն անցել է Ռուսաստանի ձեռքը, ինչն ըմբռնումով է ընկալվում նաեւ Արեւմուտքի կողմից: Կրկին, ի տարբերություն Արեւմուտքի, Ռուսաստանն է, որ Ադրբեջանի եւ Հայաստանի իշխանությունների վրա ազդեցություն գործելու ու նրանց միջեւ համաձայնություն կայացնելու արդյունավետ լծակների է տիրապետում՝ իրողություն, որ նույնպես բազմիցս շեշտվել է արեւմտյան քաղաքագետների կողմից: Ինչպես դեռեւս մեկ տարի առաջ նշել եմ իմ հոդվածներից մեկում, «խոսքն ամենեւին չի վերաբերում Ռուսաստանի կողմից Ղարաբաղի հարցի լուծման ինչ-որ նոր ծրագիր պարտադրելուն, այլ ընդամենը Մինսկի խմբի եռանախագահության ջանքերով Մադրիդյան սկզբունքների հիման վրա կազմված ծրագրին նոր ավյուն հաղորդելուն» (iLur.am, 26.11.2015):

* * *

Շատերին զայրացրել է նաեւ այն բանը, որ ես Իլհամ Ալիեւին ռացիոնալ մտածողություն ունեցող պետական գործիչ եմ համարել: Դա վկայում է այն մասին, որ նրանք գաղափար անգամ չունեն, թե ինչ է նշանակում ռացիոնալ մտածողությունը: Ռացիոնալ մտածողությամբ օժտվածությունը ո՛չ արտակարգ արժանիք է, ո՛չ էլ բացառիկության արտահայտություն: Քանի որ մարդը բանական կենդանի է, մտածողության այդ եղանակը հատուկ է մարդկության մեծամասնությանը: Այսինքն, ռացիոնալ մտածողությունը նորմ է, իռացիոնալը՝ բացառություն: Այդ հասկացությունը, վերջին հաշվով, հանգում է իրականությունը ճիշտ գնահատելու եւ երեւույթների պատճառա-հետեւանքային կապն ընկալելու ունակությանը: Տվյալ ունակությունն ամենեւին կախված չէ մարդկանց դաստիարակությունից, կրթական մակարդակից կամ արժեհամակարգից: Հասարակ, անգրագետ մարդիկ հաճախ շատ ավելի ռացիոնալ մտածողներ են, քան համալսարանավարտները: Ցանկացած գյուղացի գիտի, որ եթե արտը ժամանակին չջրի, այն կչորանա: Ցանկացած անտառահատ գիտի, որ եթե ծառի թեքությունը հաշվի չառնի, այն կընկնի իր գլխին: Ցանկացած գործարար գիտի, որ եթե իր ապրանքը որակյալ չլինի, այն չի վաճառվի: Այնպես որ, ռացիոնալ մտածողությունը ո՛չ գերբնական հատկություն է, ո՛չ էլ ինչ-որ մեկի մոտ դրա առկայության արձանագրումը՝ գովասանք կամ հաճոյախոսություն: Ռացիոնալ մտածողությունից զուրկ են միայն այն անձնավորությունները, որոնց հավակնությունները գերակշռում են իրենց կարողությունները, եւ որոնց ինքնագնահատականը չի համապատասխանում սեփական արժանիքներին:

Սահմանափակվեմ այսքանով, որովհետեւ ելույթիս կապակցությամբ արտահայտված մյուս ցնդաբանություններին մամուլում եւ «ֆեյսբուքում» ինձնից լավ անդրադարձել են ռացիոնալ մտածողություն ունեցող հազարավոր ակտիվ քաղաքացիներ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍԵՒԱԿ ԱՐԱՄԱԶԴ
(Գրող, հրապարակախոս, Գերմանիա)

ՅԱՂԹԱՆԱԿ ԵՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Այն հազարաբերան խժալուր աղմուկը (ճիչ, հառաչանք, իրարանցում, ողբ ու կական, անէծք, հայհոյանք, սպառնալիք ու հոնդիւն), որ հետեւեց Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթին, անկախ դրա զգայական կամ բանական, անձնական թէ հանրային շարժառիթներից, ցոյց տուեց, որ հայ հանրութիւնը ցաւագնօրէն բախուել է մի մերկ ճշմարտութեան, որն անողոքաբար խռովեց նրա յարմարաւէտ հանգիստը: Նա բնազդօրէն որսաց, որ ինքն իրականում շարունակաբար ապրում է մի կեղեքիչ կեղծիքի մէջ՝ դա ինքնախաբէօրէն կոչելով «հայրենասիրութիւն», ուստի սկսեց վրդովուած աղմկել՝ փորձելով խլացնել ճշմարտութեան ձայնը: Եւ քանի որ հեղինակն իր ելոյթում չէր ասել ոչինչ, որ չէր ասել նախկինում, ուստի մնում է միայն հաստատել, որ այն, ինչ ասում է Լեւոն Տէր-Պետրոսեանը, ճշմարտութիւնն ինքն է, որն ընտրել է իր յայտնութեան աներկբայ ժամանակը:

Վերջին հաշուով, դա արթնացման մի բնական ընթացք է՝ ուղեկցուած բացուող օրուայ անխուսափելի աղմուկներով:

Այդ յախուռն արձագանգի անօրինակ ուժգնութիւնը պայմանաւորուած է այն բանով, որ արձագանգողները ներկայացուցիչներն են մի ժողովրդի, որը ոչ հեռու անցեալում կորցրել է իր կենսատարածքի եւ մարդկային կենսազանգուածի համարեա 90 տոկոսը, ուստի սարսափահար կառչել է «վերջին կուում» ձեռք բերած իր մի կտոր հողից՝ որպէս փրկութեան խարսխից: Այդ կառչանքի ամրութեան ուժը համազօր է նրա կրած կորուստների անթուելի մեծութեանը, եւ այս հանգամանքը գրեթէ մթագնել է նրա բանականութիւնը. ջրում խեղ-

դուողի նման նա չգիտի այլեւս, թէ ինչի՛ց է կառչել եւ ինչո՛ւ: Ուստի, չի գիտակցում կամ չի ուզում գիտակցել, որ ինքը, խարսխով հանդերձ, հետզհետէ սուզւում է ծովի ամենակուլ անդունդը, որտեղից այլեւս վերադարձ չկայ:

Այդ երեւոյթի պատճառը հայ մարդու՝ Յաղթանակի եւ Պարտութեան քարացած ընկալումն է՝ ներշնչուած Բարու բացարձակ յաղթանակի եւ Չարի բացարձակ պարտութեան կրօնական պատկերացումներից:

Բնութեան օրէնքներն ու պատմութեան փորձը յուշում են, որ այն, ինչ մարդիկ կոչում են Յաղթանակ եւ այն, ինչ մարդիկ կոչում են Պարտութիւն, ընդամենը երկու պայմանական իրողութիւններ են, որոնք հեշտօրէն փոխանցւում են մէկը միւսին, եւ կեանքում չկայ որեւէ Յաղթանակ, որ ներգործութեան մէկ այլ տիրոյթում չվերածուի Պարտութեան եւ չկայ որեւէ Պարտութիւն, որ մէկ այլ հատոյթում չվերածուի Յաղթանակի:

Երկրորդ աշխարհամարտում, օրինակ, Գերմանիան՝ իբրեւ երկիր ու պետութիւն, թէեւ պարտուեց չարաչար, սակայն յաղթեց գերմանացին՝ իբրեւ ազգ՝ կերտելով թերեւս ամենակայուն ու ամենազարգացած հանրութիւններից մէկն աշխարհում: Իսկ այդ նոյն պատերազմում թէեւ յաղթեց Խորհրդային Միութիւնը՝ իբրեւ երկիր ու պետութիւն, սակայն պարտուեց իբրեւ ազգ ու հանրութիւն՝ յաղթանակից կոփելով մի երկաթէ վարագոյր:

Լինում է եւ հակառակը. Առաջին աշխարհամարտում թէեւ հայերը պարտուեցին՝ իբրեւ ազգ՝ հասնելով գրեթէ իսպառ ոչնչացման եզրին, սակայն յաղթեցին՝ իբրեւ երկիր ու պետութիւն՝ վերականգնելով իրենց անկախութիւնը: Նոյնը եւ հրեաները. Երկրորդ աշխարհամարտում նրանք նոյնպէս պարտուեցին՝ իբրեւ ազգ՝ ենթարկուելով բնաջնջման, սակայն յաղթեցին՝ իբրեւ երկիր ու պետութիւն՝ վերագտնելով իրենց պետականութիւնը:

Կամ՝ Արցախեան պատերազմում թէեւ յաղթեցին հայերը՝ իբրեւ ազգ, սակայն պարտուեցին իբրեւ երկիր ու պետութիւն՝ հետզհետէ թուլանալով ու մաս առ մաս կորցնելով իրենց ազատութիւնն ու անկախութիւնը:

Պատահական չէ, որ յաղթական պատերազմից յետոյ հայոց երկրի գլուխ անցան երկու այնպիսի մարդիկ, որոնք կարծես լինէին պարտուած կողմի հայելային արտացոլանքը յաղթող կողմում: Եւ նրանք հետեւողականօրէն կատարեցին այն առաջադրանքը, որ կկատարէր պարտուած կողմից «գործուղուած» մէկը, եթէ իրերի բերումով յանկարծ դառնար Հայաստանի ղեկավարը. յանուն սեփական իշխանութեան, նա «ոչ մի թիզ հող» կարգախօսի հայրենախորով ճոռոմաբանութեամբ անզիջում կեցուածք կընդունէր Արցախեան խնդրում՝ փորձելով կտրել Հայաստանի շնչերակը եւ խեղդամահ անել նրան. արիւնալի ահաբեկչութեամբ կձեւախեղէր հայոց նորահաստատ պետութիւնն ու պետականութիւնը. հայոց յաղթական բանակը կհանէր հայ ժողովրդի դէմ եւ կցեղասպանէր սեփական քաղաքացիներին. երկիրը մաս առ մաս կվաճառէր օտարներին. կզրկէր հայ մարդուն արժանապատիւ գոյութեան վերջին հնարաւորութիւնից. կդատարկէր Հայաստանը հայերից. կոչնչացնէր օրէնք ու արդարադատութիւն. անխնայ կճզմէր իր հակառակորդներին եւ կմակաբուծէր հարստահարողների պաշտօնական ու անպաշտօն հրոսակախմբեր. կայլասերէր ամենայն բարոյական ընկալում ու հասկացութիւն. կսերմանէր վախ ու յուսահատութիւն. կգնէր մամուլ ու մտաւորականութիւն. կվաճառէր փառք ու պատիւ. Հայաստանը կվերածէր ամենաթող ամբարտաւանութեան զուարճավայրի ու կամայացնէր տնտեսութիւնը. ամեն անգամ կկեղծէր ընտրութիւնները եւ հետեւողականօրէն ստորացնելով բանակի ոգին ու թուլացնելով նրա հարուածող բազուկը՝ լուր կուղարկէր ռազմադաշտում

պարտուած իւրայիններին՝ աւետելով. «Հասել է ժամը. յարձակուէ՛ք...»:

Ցաւօք, սա ոչ թէ ենթադրական պնդում է, այլ փաստախեղդ իրականութիւն:

Վերն ասուածից հետեւում է, որ Յաղթանակն ու Պարտութիւնը սկզբունքօրէն չեն կարող լինել «բացարձակ ու յաւիտենական», քանզի կեանքն՝ իբրեւ ինքնակարգաւորուող համակարգ, անվերջ ձգտում է համապարփակ հաւասարակշռութեան, որի միակողմանի խախտումը կյանգեցնէր մարդկութեան վերջնական կործանմանը: Այլ կերպ ասած, փոխզիջման կամ իրար փոխադարձ համակշռուելու սկզբունքն ընկած է իրերի բուն յարաբերութեան հիմքում, որով կեանքը հաշտեցնում է իր բնական ընթացքին սպառնացող բոլոր հակասութիւնները:

Հայաստան պետութեան նմանօրինակ անկման գլխաւոր պատճառը երկրի վարիչների սահմռկելի, քարանձաւային տգիտութիւնն է՝ գիշատչային ագահութեամբ յղփացած: Իրենց դնելով բարոյական ու հանրային օրէնքներից դուրս՝ նրանք չեն էլ ենթադրում, որ իրենք նոյնպէս ենթակայ են բնութեան օրէնքներին, որոնք գործում են անխափան:

Արցախեան խնդրի չլուծուածութեան պատճառով Հայաստանը յայտնուել է շրջափակման մէջ եւ դարձել փակ համակարգ: Բնագիտութեան գլխաւոր օրէնքներից մէկը (ջերմային շարժման երկրորդ օրէնքը) ասում է, որ իւրաքանչիւր փակ համակարգում քայքայման (էնթրոպիա) գործընթացը տասնապատիկ արագ է ընթանում, քան բաց համակարգում: Պատկերաւոր ասած՝ փակ սենեակում դրուած հասուն պտուղը, որքան էլ լինի խոշոր ու շողշողուն, արագօրէն քայքայւում է ու փչանում՝ բաժին դառնալով զանազան ճեղք ու անկիւններից դուրս սողոսկած տարատեսակ ընդոծին ու օտար միջատների անյագուրդ խրախճանքին:

Սա էլ հէնց այն է, ինչ ճշգրտօրէն տեղի է ունենում Արցախեան յաղթանակի եւ Հայաստան պետութեան հետ: Երկու բարալիկ ելքեր ունեցող Հայաստանը կարող է միայն որոշ ժամանակ «գոյութիւն քարշ տալ»՝ առանց ծաղկելու ու բարգաւաճելու որեւէ հնարաւորութեան, մինչեւ բնական քայքայման գործընթացը կհասնի իր գագաթնակէտին, եւ վրայ կհասնի Հայաստան աշխարհի եւ հայ ժողովրդի անխուսափելի կործանումը:

Նոյն հաւկուրութեամբ է տառապում նաեւ գրեթէ ամբողջ հայ մտաւորականութիւնը՝ «ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի»: Հայ մտաւորականը՝ գիտնականը, գրողը, նկարիչը, ապրում եւ ստեղծագործում է՝ «հայրենասիրութիւնից մղուած»: «Հայրենասիրութիւնը» դարձել է գիտական-գեղարուեստական մտածողութեան չափ ու չափանիշ: Մարդկային քաղաքակրթութիւնը ծնուել է ոչ թէ «հայրենասիրութիւնից», այլ ճշմարտութեան պահանջից: Ինչպէս նիւթական սննդի հայթայթման պարագային, ճշմարտութեան որոնումը նոյնպէս մարդկային բնական պահանջ է, որը վերջին երկհազարամեակում, որոշ վերապահումներով հանդերձ, սաստիկ խամրել է հայոց մէջ: Ազգերը գոյատեւում են այդ պահանջի շնորհիւ եւ անհետանում դրա բացակայութեամբ: Այն ազգերը, որոնք դադարում են որոնել ճշմարտութիւնը, ուծանում են եւ մեռնում:

Հայրենիքը կանգուն է ճշմարտութեամբ:

Արդէն չորս հազարամեակ ի վեր Արեւելքը (Հնդկաստան, Չինաստան) ձեւակերպել է գոյութեան ճշմարտութիւնը եւ «ամեն ծնուողի հետ» նորից ու նորից անթիւ-անհամար ձեւերով որոնում-գտնում-վերանորոգում է այդ ճշմարտութիւնը՝ մնալով յարատեւօրէն կենդանի:

Նոյն կերպ՝ արդէն կէս հազարամեակ է ինչ երիտասարդ Արեւմուտքը տենդագին փնտրում է նոյն այդ ճշմարտութիւնը՝ նիւթական գիտակցութեան միջոցներով ստեղծելով արդի արեւ-

մտեան քաղաքակրթութիւնը: Նա անդադրում ստեղծում-քանդում-վերստեղծում է իր աշխարհն ամեն անգամ նորովի՝ չխորշելով ու չերկնչելով ոչնչից: Այդպէս նա քայլ առ քայլ ուղղորդում է այդ քաղաքակրթութիւնը դէպի ճշմարտութիւն եւ անընդհատ հզօրանում:

Հայերն՝ իբրեւ երբեմնի արարող ազգ, ունակ են յաղթահարելու օր օրի խորացող այն խզուածքը, որ գոյութիւն ունի քաղաքակիրթ աշխարհի եւ մնացեալ ազգերի միջեւ: Միակ պայմանն այն է, որ նրանք թօթափեն պատմութեամբ պարտադրուած իրենց կարծրամտութիւնը եւ հետամուտ լինեն ճշմարտութեանը:

Դրան հասնելու համար հարկաւոր են ազատ ձեռք ու ոտք, ազատ միտք ու հոգի: Այսինքն՝ խաղաղութիւն, այնպիսի մի դրութիւն, որը թոյլ կտար հային լիովին դրսեւորել իր բնատուր էութիւնը:

Քանզի մարդը, որ մշտապէս ենթակայ է սպանելու-սպանուելու սարսափին, չի կարող արարել եւ զգալ ճշմարտութեան կենսանորոգ բերկրանքը:

Նա կարող է զգալ միայն իր սարսափը:

Իսկ սարսափը ծնում է հրէշ, որն անընդհատ մեծանալով, վերջիվերջոյ, խժռում է իր ծնողին:

Ահա թէ ինչու, ճշմարտութեան անդառնալի հրամայականն այն է, որ հայ ժողովուրդն արժանապատուօրէն իր ձեռքը վերցնի Արցախեան խնդրի լուծումը եւ բուժի իր թռիչքը խափանող այդ արիւնածոր վէրքը:

Քանզի շահում է միայն նա, ով սեփական կամքով որոշում եւ սեփական ձեռքով գծում է իր Յաղթանակի եւ Պարտութեան սահմանը:

***iLur.am**, 09.01.2017թ.:*

ՏԻԳՐԱՆ ՊԱՍԿԵՒԻՉՅԱՆ
(Գրող, հրապարակախոս)

ԵՐԿԸՆՏՐԱՆՔ. ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

Ինչ-որ ժամանակ պատերազմի եւ խաղաղության այլընտրանքը ստատուս-քվոն էր: Ասել, թե դա որպես երրորդ տարբերակ՝ կենսունակ չէր, սխալ կլինի: Ժամանակ շահելը միշտ էլ օգտակար է, եթե այն օգտագործվում է ի շահ լուծվելիք խնդրի: Հակառակ դեպքում՝ լինում է ժամանակի կորուստ: Չեմ ուզում դնել «անիմաստ» ածականը, որովհետեւ հայերենում «կորուստ»-ն ինքնին բացասական է եւ հոմանիշն է «վնաս», «կործանում», «նվազում» բառերի:

2016 թվականի ապրիլից հետո պատերազմն ու խաղաղությունը մնացել են դեմ-դիմաց: Երկընտրանքը դարձել է առավել առարկայական, քան էր 90-ականների սկզբին՝ ռազմական գործողությունների ընթացքում:

Երբ որոտում են հրանոթները, հռնդում հրասայլերը, ճարճատում հրացաններն ու գնդացիրները, պատերազմը խաղաղության այլընտրանքն է, եւ չընդունել դա որպես մարտահրավեր՝ հավասարազոր է ինքնասպանության:

Պատերազմն այլեւս խաղաղության այլընտրանք չէ, կամ պատերազմն ու խաղաղությունը երկընտրանք են, երբ ռազմական գործողությունները դադարում են:

«Ինչո՞ւ եւ ինչպես են դադարում» հարցը պետք է թողնել պատմաբաններին: Մի օր, երբ ցրված կլինի ռազմահայրենասիրական պաթոսի թանձր ամպը, նրանք գնահատական կտան՝ զերծ մնալով ազգահաճո որակումներից, եւ եթե հանգամանքների բերումով զերծ էլ չմնան, չեն կարող չպատասխանել մի պարզ հարցի. «Ո՞նց եղավ, որ դադարը տեւեց մոտ քառորդ

դար՝ ավելի քան վեց անգամ գերազանցելով պատերազմի տարիներին»:

Դադարի տեւողությունն ու նոր պատերազմ հրահրելու՝ կողմերից յուրաքանչյուրի երկարամյա զսպվածությունն արդեն վկայում են, որ երկընտրանքում պատերազմը թույլ, ոչ լիարժեք մասնակից է, իսկ խաղաղության հակոտնյան դադարի տեւողությունն է, ոչ թե ռազմական ճանապարհով հարց լուծելը:

Ի՞նչ է տալիս «դադարի տեւողությունը» կողմերից յուրաքանչյուրին: Առաջին հերթին՝ հույս, խնդիրն իր եւ միայն իր օգտին լուծելու հեռանկար: Ադրբեջանի համար դա իր տարածքային ամբողջականության վերականգնումն է (Ղարաբաղը՝ ներառյալ): Մեզ համար Արցախի ինքնորոշումն է եւ անվտանգության ապահովումը (յոթ շրջանները՝ ներառյալ):

Երազանքներ, որոնց իրականացմանը կարելի է հասնել միայն պատերազմով:

Բայց պատերազմի վերսկսման հնարավորություն ոչ մենք ունենք, ոչ Ադրբեջանը: Պատերազմի վերսկսումը կարող է լինել գերտերությունների փոխադարձ համաձայնությամբ՝ կողմերից մեկին զոհաբերելու արդեն կայացված վճռով:

(Աստված հեռու պահի այս տարբերակից, քանզի չգիտենք, թե այդ վճիռն ո՞ւմ մահն է գուժելու:)

Դադարի տեւողությունը պայմանավորված էր ու մինչ այժմ էլ պայմանավորված է հավասարակշռությամբ: Ապրիլյան քառօրյա պատերազմը ցույց տվեց, որ այդ հավասարակշռությունն առանց վերը հիշատակված «վճռի» խախտելն այնքան էլ հեշտ չէ: Եւ պետք է գնահատել, որ հայկական կողմը չտրվեց հեկտարներ հետ բերելու գայթակղությանը, ինչը սանձազերծվելիք փորձը կարող էր փորձանքի վերածել:

Հավասարակշռությունը չխախտվեց, մինչդեռ դադարը դարձավ վտանգավոր:

Ադրբեջանն ուղերձ հղեց աշխարհին. «Դուք իմ փոխարեն ի՞նչ կանեիք»: Հայաստանը պատասխան ուղերձը հղեց. «Իսկ իմ փոխարեն ի՞նչ կանեիք»:

...քանի դեռ լուծված չէ հակամարտությունը:

Երկու ուղերձներն էլ, ըստ էության, ընկալելի էին: Չի ընկալվում միայն ոսկե հավասարակշռության պայմաններում հարցը խաղաղ ճանապարհով լուծելու՝ կողմերի անկամությունը: Սա սոսկ կեղեւն է՝ երկու երկրներում տարիներ շարունակ (դադարի տեւողությանը համընթաց) վերասերված ռազմահայրենասիրություն:

Երբ այս կեղեւը հանում ես, տակից դուրս են գալիս խոհեմությունն ու իրապաշտությունը: Ադրբեջանում այլեւս ոչ ոք համոզված չէ, որ Ղարաբաղը հնարավոր է հետ բերել: Հայաստանում այլեւս ոչ ոք չի հավատում, որ ադրբեջանական շրջանները կարելի է հավիտյանս պահել:

Երկու երկրում էլ տաքգլուխներ կան, ովքեր ձգտում են ամբողջական եւ լիակատար կապիտուլյացիայի՝ Բաքվում չայ խմելու, Սեւանում ոտքերը լվանալու գրքային ռոմանտիզմով: Բայց նույնիսկ տաքգլուխներն են հասկանում, որ ամբողջական, լիակատար կապիտուլյացիայի պահը մնացել է հեռավոր 94-ում, երբ նահանջողները նահանջի ուժ չունեին, հարձակվողներն՝ առաջխաղացման:

«Պատերազմ-խաղաղություն» երկընտրանքն արհամարհելով՝ երրորդ տարբերակ որոնելը ժամանակի վատնում է, հնարավորությունների մսխում: Հուսալ, թե մի առավոտ հավասարակշռությունը փոխված կլինի կողմերից մեկի օգտին, առնվազն միամտություն է:

Հավասարակշռությունը պետք է փոխվի՝ որակապես: Սրա մասին հիմա շատերն են խոսում, ցավոք՝ ոչ ըստ էության: Դրա համար էլ որակականը հաճախ շփոթվում է տեխնիկականի, տեխնոլոգիականի կամ բարձր տեխնոլոգիականի հետ:

Պատերազմը քայլ է, որի դեմ Ադրբեջանն ունի հակաքայլ, որքան էլ մենք իրավացիորեն հիացած ենք մեր ՏՂԵՐՔԻ խիզախությամբ:

Խաղաղությունը քայլ է, որի դեմ մեր հարեւանը հակաքայլ չունի: Երեք-չորս-ութ-տասը դիվերսիա ձեռնարկելուց եւ անհաջողության մատնվելուց հետո նա պիտի բարձրացնի ռազմահայրենասիրության կեղեւն ու նայի՝ տակն ի՞նչ կա օգտակար:

***iLur.am**, 13.02.2017թ.:*

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
(Բժիշկ, հրապարակախոս)

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ՝ ԱՅՍՕՐ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ՝ ԱՄԵՆՈՒՐ

Եւս մեկ անգամ փաստենք. ժողովրդի հետ մշտապես ամենաանկեղծորեն հաղորդակցվող գործիչը եղել եւ մնում է ՀՀ հիմնադիր նախագահը: Քաղաքական միտք ու գաղափար հնչում է միայն իր կողմից, լսվում, ընթերցվում եւ քննարկվում է միայն իր խոսքը:

Ով իր ուսերին կրում է երկիր պահելու ու պաշտպանելու բեռը, ում համար Հայաստանը ոչ թե զբոսավայր է, այլ ապրելու, տառապելու եւ արարելու հայրենիք, հրաշալի ընկալում է իր համար սպասված եւ ընդունելի այս գաղափարները: Դրանով եմ բացատրում դրական, անսպասելիորեն մեծ արձագանքը: Այդ մասին է վկայում հասարակության հետ ամենօրյա շփումներիս եւ հաղորդակցությանս ծավալը:

Իսկ մնացա՞ծը՝ ուղղակի դատարկախոսություն, վայրահաչություն (բացառությամբ կողմ եւ դեմ արտահայտված չորս-հինգ հոդվածների), «քաղաքագետների», կուսակցական առաջնորդների ողորմելի որակ, որոնց բարբաջանքները ոչ միայն ցածր ինտելեկտի վկայություն են, այլեւ ուղղակի ցուցում՝ հոգեբանական բուժօգնության: Այսպես, օրինակ. «Տեր-Պետրոսյանը կոչ է անում հանձնել հողերը, դեռ այն ժամանակ նա դեմ էր բանակ ունենալուն», «Տեր-Պետրոսյանը Ղարաբաղյան հարցի լուծման բանալին հանձնեց Ռուսաստանին», «Հիմա վիճակ է փոխվել ապրիլյան պատերազմից հետո, պետք է պահել ստատուս-քվոն», «Լավրովյան պլանը նույն տերպետրոսյանական պլանն է», «Տեր-Պետրոսյանը Ռուսաստանին

մեսիջ է ուղարկում, որ առաջինն իրենք են պատրաստ հողերը հանձնելու», «Հանուն մի քանի մանդատների առեւտուր», «Արդյո՞ք ժամանակն էր այսպիսի ելույթի, արդյո՞ք հարցի լուծման պահն է այսօր» եւ այլն:

Ի՞նչն են հերքում, փոխարենը՝ ինչ առաջարկում: Խաղաղությա՞նն են դեմ, թե՞ հաշտությանն ու բարիդրացիությանը: Միգուցե Ղարաբաղյան հարցի լուծմա՞նն են առհասարակ դեմ, կամ էլ՝ փոխզիջմանն ու փուլային տարբերակին: «Այսօր հարցի լուծման պա՞հն է»: Իսկ ե՞րբ է պահը: Հարցի լուծման ձգձգումը մինչեւ հիմա, մեղմ ասած, որեւէ դրական արդյունքի չի հանգեցրել, սրանից հետո ի՞նչ առավելություն ու օգուտ է բերելու, տնտեսական աճի ու ներգաղթի հուսադրող տվյալնե՞ր են գրանցվել:

«Ադրբեջանի փոխզիջումը ո՞րն է», իսկ վաղը կամ մյուս օրը Ղարաբաղյան հարցի լուծման ավելի հայանպաստ պա՞հ է լինելու, թե՞ Ադրբեջանն է փոխզիջմանն ավելի պատրաստակամ դառնալու:

Եթե կարգավիճակի հարցը ձգձգվում է, մնում անորոշ, ապա միայն փոխզիջում՝ խաղաղության դիմաց՝ բխո՞ւմ է մեր շահերից: Իմ կարծիքով՝ այո՛, խաղաղության հաստատումը սկիզբն է կարգավիճակի, անկախության ու զարգացման: **Խաղաղությունն ավելին է, քան ամբողջը միասին, խաղաղությունը կյա՛նք է, կենսունակություն եւ հնարավորություն՝ ամեն ինչ ստեղծելու, վերականգնելու:**

Եկեք անկեղծ լինենք, վերջնական խաղաղության ու հաշտության պահը այսօր է, մի օր պե՛տք է սկսել քայլ անել:

Իշխանափոխություն իրականացնել դեռեւս մեզ չի հաջողվել, դժբախտաբար՝ այս որակի իշխանությունն է այսօր լուծելու Ղարաբաղյան հարցը: Հնարավորինս հայանպաստ լուծման հասնելու համար՝ հանուն խաղաղության, հանուն Արցախի, հանուն պետականության, մեր կողմից ամենախիստ որակումներին արժանացած իշխանությանն անգամ պետք է չխանգարել, անգամ օգնել բանակցային գործընթացում վստահ ու գրագետ հանդես գալու: **Եթե կարող է, թող խաղաղությո՛ւնն էլ այս իշխանությունը բերի, եւ մնացած ձախողումներն ու տառապանքները գուցե ներվեն ու մոռացվեն:**

Եթե առկա է պատերազմի մշտական վտանգ, ուրեմն չկա դեռ վերջնական հաղթանակ: Իրական հաղթանակը կայուն խաղաղությունն է: Հաղթողն է միշտ ձգտում խաղաղության, պարտվողը հայհոյում ու սուր է ճոճում: **Պետությանն ու ժողովրդին պատերազմից ու կործանումից կանխելու պատասխանատվության բացակայությունը արկածախնդրություն է ու դավաճանություն: Այս է լինելու մեր խստագույն պահանջը իշխանությանը: Եթե մնացածը պոպուլիստական խոստումներով, կեղծ հայրենասիրական կոչերով սիրաշահելու ու բթացնելու են ժողովրդի զգոնությունը, ապա մենք ամենակարեւոր, կենսական ու դժվարին՝ խաղաղության կերտման գործին ենք լծված:**

Այս հարցի կարեւորությունն այժմ թեւածում է մեր հասարակության մեծամասնության մտքերում:

Պատերա՞զմ, թե՝ խաղաղություն դիլեմայի հնարավորինս շուտ լուծման անհրաժեշտությունը մարդիկ ավելի ու ավելի շատ են հասկանում:

Ես չեմ ուզում ապրել հավերժ պատերազմի վտանգով: Ինձ համար ամենամեծ արժեքը ՄԱՐԴՆ է, մարդկային կյանքն անգնահատելի է: Կարող եմ վկայել, թե ինչ սխրանք է մարդ արարելն ու քաղաքացի դաստիարակելը, մարդ վերացնելը մեկ քայլ է: Բացարձակ մխիթարություն չէ հակառակորդի ավելի մեծաթիվ զոհերի փաստը, միայն ցավ է ու ցավ:

Շատ ավելի լայն իմաստ եմ տեսնում խաղաղության մեջ: Խաղաղություն՝ նախ մեր ներսում, մեր հոգիներում, եթե մեր հոգին խաղաղ չէ, խռովված է, կամ չենք կրում այդ արժեհա-

մակարգը, ուրեմն ի վիճակի չենք խաղաղություն հաստատել մեր շրջապատում, մեր երկրում, առավել եւս՝ մեր երկրի սահմաններից դուրս:

«Իսկ ո՞վ է դեմ խաղաղությանը, դա ի՞նչ հարցադրում է»՝ հակադարձում են, չհասկանալով, որ **եթե քայլ չես անում հանուն խաղաղության, շեղվում ես խաղաղություն տանող ճանապարհից, քո համաձայնությունն ու համակրանքը վախենում ես հայտնել հնչած ելույթի հանդեպ, էլ չեմ ասում՝ խաղաղություն ու հաշտություն բերող գիծը դավաճանություն ես անվանում, ուրեմն կողմ ես պատերազմին:** Այս վիճակի ձգձգումը նպաստում է երկրի հայաթափմանն ու տնտեսական կոլապսին, պատերազմի վերսկսմանն ու կորուստներին: Եթե համարում ես, որ այսօր չէ պահը խաղաղության ու հաշտության, դու կո՛ղմ ես պատերազմին:

Եթե պահի հրամայականը չես զգում, նպաստում ես պատերազմին: **Եթե քողարկվում ես կեղծ հայրենասիրական կոչերով, խաղաղության ու հաշտության հասնելու փոխզիջումային տարբերակը համարում ես դավաճանություն, պատերազմի ու կորուստների վտանգ ես բերում քո ընտանիքի ու ժողովրդի գլխին:**

Խաղաղություն՝ այսօր, խաղաղություն՝ ամենուր՝ ներսում, դրսում, մեր հոգիներում:

---

iLur.am, 26.12.2016թ.:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
(ՀՀ ԳԽ պատգամավոր (1990–1995 թթ.), Ստեփանակերտ)

ԱԲՍՈՒՐԴ ՉԷ՞

Ահա եւ ապրեցինք այնքան, որ Արցախի անկախությունը հռչակվի ծանրագույն պետական հանցագործություն, որի համար մեղավորները պետք է ենթարկվեն ամենախիստ պատասխանատվության: Արա Պապյանն է ասում՝ «Մոդուս վիվենդի» կենտրոնի ղեկավարը, որ ունի արտակարգ եւ լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան: Պատկերացնո՞ւմ եք, բանավիճում է առաջին նախագահ Տեր-Պետրոսյանի հետ, առիթը նրա դեկտեմբերի 17-ի ելույթի թեզերն են ու հանկարծ... Մտքի ինչպիսի՜ ճառագում... Ի՜նչ պայծառատեսություն. «Իսկ ո՞վ է ասել, որ Արցախն անկախ է, չէ՞ որ...»: Հանրայինի եթերում բանավիճում են դաշնակցական Արմեն Ռուստամյանը եւ ՀԱԿ անդամ Արամ Մանուկյանը: Որպես վերջին հզոր փաստարկ՝ Ռուստամյանը վկայակոչում է Արցախի սահմանադրության՝ տարածքներին վերաբերող հոդվածը: Որպես խնդրի կարգավորման համաարցախյան պատկերացում, որի վրա էլ հենվում է ՀՅԴ-ն: Երկուսով՝ Պապյանը եւ Ռուստամյանը, դեմ են կարգավորման Տեր-Պետրոսյանի առաջարկած տարբերակին: Մերժում են, ուղղակի բզկտում: Բայց մեկի համար Արցախի անկախությունը «պետական հանցագործություն է», մյուսն, այնինչ, հենց այդ մեկնակետից է հակադարձում. «Ահա Արցախը, նրա ժողովուրդը, որ սահմանադրություն է ընդունել, դեմ է որեւէ տարածք զիջելուն, եւ մենք կանգնում ենք նրա կողքին»: Այդ ոչինչ, որ Արցախի սահմանադրության պրեամբուլայում հղում է արվում 1991թ. սեպտեմբերի 2-ի ԼՂՀ հռչակմանը, 1992թ. հունվարի 6-ի «ԼՂՀ պետական անկա-

խության հիմունքների մասին» սահմանադրական օրենքին: Ոչինչ, որ Ռուստամյանի վկայակոչած հոդվածում տառացիորեն գրված է, որ մինչեւ ԼՂՀ տարածքային ամբողջականության վերականգնումը եւ սահմանների ճշգրտումը հանրային իշխանությունն իրականացվում է փաստացի տարածքում, մի ձեւակերպում, որ իմպերատիվ չէ եւ ըստ նպատակահարմարության՝ կարելի է եւ այսպես մեկնաբանել, եւ՝ այնպես...

Սրանք «մանրուքներ» են: Կարեւորը՝ որ քաղաքական ուժը, խումբը, անհատ մարդիկ նախընտրական շրջանում իրենց լավ զգան, խոսելիք ունենան, որը երբեմն հասնում է աբսուրդի. «Քարտեզի վրա կամ մենք պիտի մնանք, կամ իրենք»: Եւ՝ «կամ մենք կստեղծենք Քուռ-Արաքսյան հանրապետություն, կամ՝ կվերանանք»: Իսկ ի՞նչ երաշխիք, որ մենք «քարտեզի վրա» կմնանք, իսկ նրանք կվերանան: Ի՞նչ երաշխիք, որ կստեղծվի Քուռ-Արաքսյան հանրապետություն: Եւ՝ ո՞ւմ համար պիտի ստեղծվի: Թալիշների՞... Իսկ թալիշներն ինչո՞ւ իրենց հանրապետությունը չեն հռչակում... Իսկ կա՞ երաշխիք, որ թալիշները մեր նկատմամբ ավելի բարյացակամ են լինելու, քան՝ ադրբեջանցիները... Իսկ ո՞վ է ասել, որ եթե հայկական ուժերը գրավեն Կուր-Արաքսի «միջագետքը», Բաքուն ծնկաչոք կապիտուլյացիայի է ենթարկվելու եւ մեզ է հանձնելու այսրկուրյան ողջ տարածքները... Իսկ ի՞նչ է լինելու այդ տարածքներում ներկայումս ապրող բնակչության հետ... Նրանք «թափվելու են» Կասպից ծո՞վը... Թե՞ 150000 արցախահայությունը պետական իշխանություն է իրականացնելու 2-3 մլն. ադրբեջանցիների վրա, եւ դա կոչվելու է պատմական արդարության վերականգնո՞ւմ... Աբսուրդ չէ՞, երբ քաղաքագետը, որ նաեւ փիլիսոփայության դոկտոր է եւ պրոֆեսոր, հայտարարում է, որ «եթե մենք անգամ ցանկանանք վերադարձնել տարածքները, մեզ հնարավոր է թույլ չտան»: Ո՞վ, ինչո՞ւ...

Ստացվում է, որ մենք խաղաղության եւ պատերազմի միջեւ ընտրություն կատարելիս կախված ենք ուրիշ(ներ)ի ուզենալ-չուզենալո՞ւց: Իսկ եթե վաղն այդ ուրիշները որոշեն, որ ոչ միայն այդ, այլեւ բուն ԼՂ տարածքն էլ պիտի հանձնե՞նք՝ Սյունիքն էլ հե՞տը... Այդժամ ի՞նչ ենք անելու, ենթարկվելո՞ւ ենք... Որպեսզի արդեն Արարատյան հանրապետություն կոչվող երկրի պատմաբանը գրի. «Ցավոք, հայ ժողովրդի թիկունքում X-ը, Y -ը եւ Z-ը եկան պայմանավորվածության եւ...»: Եթե, իհարկե, Արարատյան հանրապետության պատմաբանին թույլ տան ասի... Ինչպես որ ՀԽՍՀ-ում էր արգելված խոսել անցյալ դարասկզբի ողբերգություններից... Աբսուրդ չէ՞, երբ իրանագետն ասում է, որ Իրանին ձեռնտու է ԼՂ ներկայիս ստատուս-քվոն: Իհարկե, ձեռնտու է: Բայց դա ի՞նչ հայացք է՝ գնահատել այլ պետության, ոչ թե սեփական հայրենիքի շահը: Իսկ ո՞վ է ասել, որ այն, ինչ ձեռնտու է Իրանին, ձեռնտու է նաեւ Հայաստանին: Կա՞ այդպիսի մի կոնստանտ... Չէ՞ որ ստատուս-քվոն վաղը կարող է Իրանին ձեռնտու չլինել... Եւ ի՞նչ, հայ-իրանական հարաբերությունները մթագնելո՞ւ են դրանից... Ի վերջո, տատուս-քվոն ամենից առաջ ձեռնտու է... Ադրբեջանին՝ բազմաթիվ պատճառներով: Ո՞վ ունի կայուն եւ փաստարկված երաշխիքներ, որ ստատուս-քվոյի հնարավորինս երկար պահպանմամբ շահագրգռված արտաքին ուժերը (եթե այդպիսիք կան) սեփականի հետ չեն սպասարկում նաեւ Ադրբեջանի շահերը... Որ դա թուրք-ադրբեջանական դիվանագիտության դավադրություն չէ Հայաստանի դեմ՝ որքան հնարավոր է՝ երկարաձգել բանակցությունները, խստացնել շրջափակումը, տնտեսական եւ կոմունիկացիոն մեկուսացումը, ներքաշել սպառազինությունների խելացնոր մրցավազքի մեջ եւ արդյունքում... Ո՞րն է այս երկրի խնդիրը: Ամրապնդել ինքնիշխանությունը, կարգավորել հարեւանների հետ խնդիրները եւ զարգանա՞լ, թե մտնել հայության պատմական տառապանք-

ների ողջ ծանրության տա՞կ: Եթե 1920թ.-ին կորցրել ենք Կարսը, ի՞նչ մեղք ունի դրանում այսօրվա սերունդը:

Պատերազմի իր ժամին նա հերոսություն է արել, ոչ միայն Հայաստանն է պահել-պահպանել գրեթե անխաթար, այլեւ անհամեմատ նվազագույն կորուստներով Արցախն է ազատագրել: Նա պատմական իր առաքելությունը կատարել է փայլուն: Եւ պետք է ոչ թե շարունակական տառապանքների դատապարտված մնա, այլ ստանա հերոսության պտուղները վայելելու իրավունք եւ հնարավորություն: Մենք մեր զավակներին ինչի՞ ենք պատրաստում: Պերմանենտ պատերազմական իրավիճակի՞... Մենք ունե՞նք այդ իրավունքը: Սերունդներին խաղաղությունից զրկելու իրավունքն ո՞վ է տվել մեզ:

***hraparak.am**, 26.12.2016թ.:*

* * *

Վասն «խաղաղության».— Հակառակորդը Տավուշում դիվերսիա է իրականացրել: Ունենք զոհեր, եւ մամուլն արձագանքում է. «Ալիեւը համաձայնեց Տեր-Պետրոսյանին»: Ինչպիսի՜ «դիտողունակություն»... Թեեւ պահն այն չէ, բայց մի պատմություն հիշեցի. երբ Բերիային ձերբակալում են, խորհրդային թերթերն սկսում են գրել նրա չարագործություններից, մեր գյուղում մեկը կատակում է՝ վայ թե Խաչատուր Աբովյանին էլ է Բերիան սպանել... Հիմա 1in.am-ն է, այնպես է խորապատկերում, ասես Ալիեւը Տեր-Պետրոսյանին էր սպասում, եթե ՀԱԿ համագումարում ԼՂ հարցից չխոսեր, Ադրբեջանը դիվերսիա չէր անելու: Կամ եթե օրը երեք անգամ բոլորով Տեր-Պետրոսյանին անիծենք, հակառակորդի պահվածքում փոփոխություն է լինելու: «Ադրբեջանը չի տալիս խաղաղության այլ տարբերակի հնարավորություն, քան մշտապես պատերազմի պատրաստվելը»,– ամփոփում է մեկնաբանը:

Սա հենց Ալիեւի ցանկությունն է՝ Հայաստանին ներքաշել սպառազինությունների հյուծիչ մրցավազքի մեջ, մաշել մեր բոլոր ռեսուրսները, որից հետո խնդրի «կարգավորումը» կգա ինքնին: Ինչպես եղավ 1920թ. դեկտեմբերի 2-ին: Կա՞ իրավիճակի այլ ընկալում: Ահա. «Այս իրավիճակում Հայաստանում լավագույն, արդյունավետ պաշտպանության դիսկուրսը պետք է ներառի նաեւ իրական, ոչ թե թղթերի, այլ շահերի վրա հիմնված դաշնակիցների հարցը, որոնց համար Հայաստանի շահերը լոկ մանրադրամ չեն, իսկ Հայաստանն էլ՝ լոկ ֆորպոստ»: Սա արդեն, թող թույլ տրվի ասել, բացահայտ սադրանք է կամ կատարյալ անմեղսունակություն:

Աշխարհում չկա երկիր, պետությունների դաշինք կամ ուժի կենտրոն, որը ԼՂ ստատուս-քվոն պահպանելու, առավել եւս՝ լեգիտիմացնելու շահ եւ նպատակ ունի: Ինչքա՞ն կարելի է նույն կեղծիքը տարբեր փաթեթավորումներով կրկնել: Կա հնարավորություն՝ հասնել Արցախի ինքնորոշման ճանաչմանը: Կա հնարավորություն՝ հասնել նրան, որ Ադրբեջանն Արցախը անկախ կամ Հայաստանի մաս ճանաչի: Բայց ոչ՝ ներկայիս փաստացի սահմաններով: Ստատուս-քվոն հնարավոր է պարտադրել Ադրբեջանին: Դա պատերազմն է: Այլ տարբերակ իրականության մեջ գոյություն չունի: Ստատուս-քվոն ձեռնտու է Ադրբեջանին: Բոլոր առումներով...

***hraparak.am**, 29.12.2016թ.:*

* * *

Աբսուրդից անդին.— «Երկիր» թերթի մեկնաբանը գրում է, որ առնվազն տարօրինակ է, երբ միջազգային հանրությունը հայկական կողմի՝ «բանակցություններից հրաժարվելն արդարացնող կեցվածք է ընդունել, Տեր-Պետրոսյանը հանդես է գալիս տարածքները անհապաղ հանձնելու եւ ԼՂ-ին միջանկյալ կարգավիճակ շնորհելու շուրջ Ադրբեջանի հետ համաձայնու-

թյան հասնելու խուճապահարույց հայտարարություններով»,– ապա խտացնում, որ դա «օժանդակություն է բացառապես Ադրբեջանին, որի նպատակը հիմա... Վիեննայի գագաթնաժողովում իր վրա դրված պարտականությունների վիժեցնելն է... իսկ դրանք այնպիսի պարտավորություններ են, որոնց կատարումը օրակարգից հանում է պատերազմի հեռանկարը, դրանով իսկ՝ այն պատճառը, որի հիման վրա Տեր-Պետրոսյանը կառուցում է իր «խաղաղության կոնցեպցիան»: Հարցն, այսպիսով, հանգեցվում է «պարտավորությունների կատարմանը»: Ընդ որում, հայտնի չէ՝ Վիեննայում Ադրբեջանը պարտադիր իրավական ուժ ունեցող փաստաթուղթ ստորագրել է, իսկ հետո հրաժարվե՞լ, թե՞... Եթե ստորագրել է, ինչո՞ւ հայկական կողմի կեցվածքն արդարացնող միջազգային հանրությունը չի պարտադրում, որ Ալիեւը կատարի ստանձնած պարտավորությունները: Իսկ եթե նման փաստաթուղթ չի ստորագրվել, ինչի՞ մասին է խոսքը: Բանավոր ստանձնած պարտավորությա՞ն... Բայց աբսուրդն ուրիշ տեղ է: Տեր-Պետրոսյանի բոլոր ընդդիմախոսներն ասում են, որ չկա երաշխիք, թե տարածքները վերադարձնելուց հետո Ադրբեջանը կհարգի պայմանագիրը, չի վերսկսի պատերազմը, բայց ահա, պարզվում է, նույն շրջանակները հնարավոր են տեսնում, որ Ադրբեջանը կստորագրի շփման գծում մոնիտորինգի ընդլայնման եւ հետաքննությունների մեխանիզմների ներդրման մասին համաձայնագիր, որով օրակարգից կհանվի պատերազմի հեռանկարը... Եթե Ադրբեջանի վերջնական նպատակը «Երեւանում նստելն է», ինչո՞ւ պիտի ստորագրի փաստացի իրավիճակը «հավերժացնող» փաստաթուղթ: Կամ ի՞նչ երաշխիք, որ կստորագրի եւ կհարգի ստանձնած պարտավորությունները... Եթե պայմանագիրը միայն թուղթ է, չի՞ ստացվում, որ Ադրբեջանի հետ առհասարակ իմաստ չունի որեւէ բանակցություն վարել: Միեւնույն է, արդյունքում Ալիեւը չի կատարելու պարտավորությունները: Ինչպես որ չի կատարում այս-օր... Ահա եւ՝ աբսուրդից անդին վիճակ՝ 2003թ.-ից ի վեր Հայաստանը նախագահի մակարդակով բանակցում է Իլհամ Ալիեւի հետ: Բայց երբ Տեր-Պետրոսյանը նրան անվանում է «ռացիոնալ մտածող պետական գործիչ», ընդդիմախոսները չարախոսում են...

***hraparak.am**, 29.12.2016թ.:*

ՆԱՐԵԿ ԱԴԱՄՅԱՆ
(Քաղաքագետ)

ՀԱԿԸՆԴԴԵՄ ԱՐԳՈՒՄԵՆՏ ԱՅԴՊԵՍ ԷԼ ՉԲԵՐՎԵՑ

Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը շատ ավելի կարեւոր դրույթներ ու շեշտադրումներ էր պարունակում իր մեջ, պարզապես հայ հանրությունը խասյաթի համաձայն տիրաժավորեց Ղարաբաղի թեման, ասել է թե՝ հող հանձնողին հողին հանձնեն եւ այլն: Ես անկեղծորեն սպասում էի, թե հատկապես տարածաշրջանային քաղաքականության մասնագետները ինչպես են արձագանքելու ազգ-բանակ կոնցեպցիայի տիրույթում առաջին նախագահի պատմաքաղաքական համեմատականին ու գնահատականին: Տեր-Պետրոսյանը, ըստ էության հիմնավորում էր, որ կարիք չկա ազգովի ֆիդայի դառնալ, նամանավանդ որ Հայաստանը կոնֆլիկտ ունի իր հարեւաններից երկուսի հետ, որից հատկապես Ադրբեջանին, եթե մարտական դաշտում չի էլ գերազանցում, ապա հավասարը հավասարին կարողանում է թե կռվել, թե ապահովել սեփական քաղաքացիների անվտանգությունը: Անհիմն, թե հիմնավոր, այլ հարց է: Խնդիրը այս տեսակետին հակընդդեմ արգումենտն է, որն այդպես էլ չբերվեց իշխանության կողմից: Երբ ասում ենք հանրային լայն քննարկում, ահա հենց սա նկատի ունենք, այդպիսի քննարկումները, բանավեճերը, նույնիսկ դանդալոշ ու 3 տարեկան երեխու բլբլոցներ հիշեցնող գրառումները: Այսինքն երկրի անհիմն ռազմականացումը կարող է շատ ծանր հետեւանքներ ունենալ Հայաստանի համար: Սա մի հարց էր, որին պետք է մանրամասն անդրադառնար Վիգեն Սարգսյանը, սակայն նրան այդպես էլ հիմնավոր չհաջողվեց, գուցե միայն նրա համար, որ այդ ամբողջ պատասխանատվությունը դրված

էր միայն նրա ուսերին ու ՀՀԿ-ից եւ ոչ մեկը լայաղ չարեց իր նախարարին թեւթիկունք ըլնի:

Ղարաբաղի թեման: Այնպիսի տպավորություն էր, որ առաջին նախագահը հենց նոր հնչեցրեց իր թեզերն ու դրան հետեւեցին նրան խաչին գամելու ծանրագույն գործընթացները: Բոլոր նրանց համար, ովքեր շտապում են հողին հանձնել Լեւոն Տեր-Պետրոսյանին, առաջարկում եմ հողին հանձնել Հայաստանի քաղաքական էլիտայի՝ այդ թվում եւ ընդդիմության 90 տոկոսին: Կրկնում եմ, համարյա բոլորին: Որովհետեւ թե՛ ընդդիմության եւ թե՛ իշխանության մեջ մարդիկ, բոլորը բանակցել են փոխզիջումային տարբերակի հիման վրա: Ինչպես Տեր-Պետրոսյանը նշեց, խնդիրը 1998 թվականին ոչ թե անձերի, այլ քաղաքականության մեթոդաբանության փոփոխության մեջ էր: Ե՛ւ երկրապահ, ե՛ւ կուսակցություններ, բոլորին պետք է վառել ըստ էս մարդկանց տրամաբանության: Բայց արի ու տես Հայաստանի եւ ոչ մի իշխանություն այդպես էլ բանական ռեալ փոխզիջումից բացի, այլ տարբերակ չգտավ ԼՂՀ հարցում բանակցությունների համար:

Ավելի շատ հասկանալի էր մի քանի իբր թե արեւմտամետ ու լղլղացող վտանգավոր տարրերի մեկնաբանությունները, որոնց հիմնական մտահոգության առարկան Տեր-Պետրոսյանի խոսքի հետեւյալ դրույթն էր՝ «Մոսկվայի ձեռքերում է գտնվում ԼՂՀ հարցի լուծման բանալին»: Եթե մի քանի ամիս առաջ հետ գնանք, ապա ապշեցուցիչ կերպով եւ աստղաբաշխական ճշգրտությամբ կնկատենք, որ դեռեւս ապրիլյան քառօրյայից հետո նման հայտարարություններով աչքի ընկան թե Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը եւ Թե ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերին, ովքեր հայտարարեցին, որ հակամարտության խաղաղ կարգավորման տվյալ փուլում Ռուսաստանը դոմինանտ դեր ունի: Ուզենք թե չուզենք: Հետեւաբար

ինչն է կաշկանդել այս մարդկանց նման կերպ վարվել, մնում է միայն գուշակել, թեպետ շատերը արդեն հասկացան:

Հ.Գ. Եւ վերջապես Տեր-Պետրոսյանի մասին: Առաջին նախագահին թոշակի ուղարկողներն ու մի ոտ շուտ քաղաքական գերեզման իջեցնողները, ինչ խոսք, անակնկալի եկան, սակայն նրանք պետք է հաշվի առնեն մի բան, որ Տեր-Պետրոսյանը տառապում է հազվագյուտ Էմի Ուայնհաուզյան եզակի բարդույթով, որը հետեւյալն է՝ Я непростой человек. Хотя бы потому, что мне, по большей части, на все насрать.

***iLur.am**, 19.12.2016թ.:*

ՎԱՀՐԱՄ ԹՈՔՄԱՋՅԱՆ
(Պատմաբան)

ՊԱԹՈԼՈԳԻԿ ՀԻՍՏԵՐԻԱ

Ինչպես եւ սպասվում էր, ՀՀ առաջին նախագահ Տեր-Պետրոսյանի ելույթը մի ալեկոծ ալիք առաջացրեց հայկական տեղեկատվական դաշտում: Եթե Այվազովսկին ապրեր մեր օրերում, ապա պետք է ստիպված լիներ իր «Իններորդ ալիք» հայտնի կտավը պատկերել ավելի աբստրակտ ժանրում, մոտիվացիոն հիմք ունենալով այն դրսեւորումները, որոնք տեղի են ունենում եւ կշարունակեն ընթանալ այդ ելույթից հետո:

Սույն ակնարկում չենք սպառնա համապարփակ վերլուծել Տեր-Պետրոսյանի առաջադրածն ու դրա նկատմամբ վերաբերմունքը: Փորձել դա անել վիրտուալ տիրույթում, ինչ-որ ստատուսների տեսքով, կամ փոքրիկ՝ այսպես ասած վերլուծականներով, որոնք ավելի շուտ հիշեցնում են ֆասթ ֆուդային արժեքներ, նույնն է ինչ թաղի «բեսեդկայում» նստած քննարկել Ռուսաստան-Չինաստան աշխարհաքաղաքական զարգացման հնարավոր բոլոր հեռանկարները: Ասել կուզե՝ անբովանդակ եւ պարապ գործ: Ընդսմին, ելույթը հնարավոր չէ նաեւ քննության առնել ծավալուն ու ամբողջական հոդվածով: Դրա յուրաքանչյուրի բաղադրիչն արժանի է առանձին դիտարկման եւ համապարփակ մոտեցման: Երբ խնդիրը խիզախումի մեջ է, ապա վերջին երկուս ու կես տասնամյակների փորձը ցույց է տվել, որ միայն Տեր-Պետրոսյանն է ի վիճակի կուտակած համառությամբ հասարակությանը ներկայացնել այն, ինչ անում էր մանկան շուրթերով հեքիաթի հերոսը՝ մերկ թագավորի մասին: Բավականին հեշտ է, համակարգչի կապույտ

էկրանի առաջ խիզախ ձեւանալ ու հուզառատ գրառումներ անել հողերի ու հայրենապաշտության մասին:

Բայց այլ է իրականությունը: Առ ոչինչ է այն պետությունը կամ այդ պետության հավակնություններով զբաղված քաղաքացին, որը կամ ով, մինչեւ վերջ կասի, թե ինչ է ուզում: Բնականաբար, մեզանից յուրաքանչյուրը կուզենար ապրել ավելի մեծ եւ ուժեղ Հայաստանում: Սակայն խաբկանքին պետք չէ տրվել: Իտալական քաղաքականությունն ունի հետեւյալ սկզբունքը՝ սահմանել մաքսիմում նպատակ, նվազագույն արդյունքի համար: Բնավ պետք չէ ունենալ Իտալիա, այս պարզագույն քաղաքագիտական աքսիոման կիրառելու համար: Սակայն այդ մաքսիմումը չի նշանակում Բաքուն գրավել կամ Ստամբուլն արյան ծով դարձնել: Դա նշանակում է, անել այն, ինչ համաշխարհային հասարակությունը վաղուց կարգավորել է միջազգային իրավունքի նորմերով: Երբեմն, բանեցնելով դիվանագիտություն, այդ ամենը կիրառել ի շահ պետականության:

Հետաքրքիր է նաեւ մի շարք օգտատերերի եւ լրատվականների վերաբերմունքը, երբ նույն Սերժ Սարգսյանը կամ Ռոբերտ Քոչարյանն են հայտարարում տարածքներ զիջելու կամ այդ միջոցով հարցին վերջնական լուծում տալու համար: Նրանց վերաբերմունքն է՝ «а я иду на север»: Բավականին զավեշտալի է այդ հիվանդագին եւ ընտրական մոտեցումը: Խնդիրն այստեղ խիզախումի կամ ողջախոհության մեջ չէ: Խնդիրը՝ վտանգի գիտակցումի, սեփական մորթին պահելու կամ ականավոր ինչ-որ մեկի հաշվին ինքնահաստատվելն է: Սա ուղեկցել է մարդկային հասարակությանն իր ողջ պատմության ընթացքում: Ամփոփելով սույն ակնարկը, պետք է բերեմ հայտնի հոգեբանների եւ մարդաբանների կողմից առաջ քաշված մի վարկած, համաձայն որի, անգամ ռազմի դաշտում, սպանելու ընդունակ է, կամ գիտակցված գնում է սպանության

մասնակիցների միայն 2 տոկոսը: Ցանկացած ռազմական օդաչուի, երբ հրահանգում են բնակելի կետ ռմբակոծել, նա գիտակցված, մի քանի աստիճանի շեղում է տալիս: Իսկ այդ վերոհիշյալ երկու տոկոսը, խաղաղ ժամանակ պետք է լինեին կալանավայրերում կամ հատուկ հաստատություններում: Հասարակության մի խմբի որոշակի վերաբերմունքից կարող ենք փաստել, որ մենք անցել ենք երկու տոկոսի կրիտիկական գիծը:

***past.am**, 19.12.2016թ.:*

* * *

Դեժավյու.— Օրերիս մեծագույն աղմուկը թերեւս կապված է Լեւոն Տեր-Պետրոսյանի, ՀԱԿ համագումարում ունեցած ծավալուն ելույթի հետ: Սույն ելույթը կարելի է դիտարկել մի քանի անկյուններից՝ քաղաքագիտական, պատմագիտական, աշխարհաքաղաքական, ակադեմիական: Բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեկ հոդվածը չի բավականացնի այս-օրինակ դիտարկումների համար, ուստի մենք կանդրադառնանք ելույթի միայն ներքաղաքական ասպեկտին, որն ուղղված էր որոշակի ընտրազանգվածի:

Գաղտնիք չէ, որ բոլոր քաղաքական ուժերը, որոնք մտնելու են ապրիլյան պայքարի մեջ, անում են վերջին սրբագրումները: Յուրաքանչյուրն առաջարկում է իր հայեցակարգը: Այս առումով բացառիկ չէ նաեւ ՀԱԿ-ը եւ կառույցի առաջնորդ Տեր-Պետրոսյանը: Իր ելույթում ամրագրելով ընդդիմադիր լինելու հանգամանքը, ավելին, ի սկզբանե բացառելով որեւէ համագործակցային կառավարության մաս կազմելը (նմանատիպ միտք հնչեցրել էր Սերժ Սարգսյանը), Տեր-Պետրոսյանը փաստացի ամրագրեց այն, ինչ կար նախկինում: Անակնկալ էր թերեւս ընտրարշավի նախասկիզբ համարվող անկյունաքարը՝ Արցախյան հակամարտությունը եւ դրա խաղաղ կարգավորումը: 1988-ին, երբ քանդվում էր ԽՍՀՄ-ը, այս հարցն այդ գործ-

ընթացներում ունեցավ առանցքային նշանակություն: 2007-ի վերադարձի ժամանակ եւս առաջին նախագահն անդրադարձ կատարեց այս խնդրին՝ հիմքում ունենալով պատմահամեմատական մեթոդը: Սակայն որքանո՞վ է արդյունավետ նույնանման, եթե կուզեք՝ խնդրի ակնարկումը եւ գործընթացում հաջողության հասնելը տարիներ անց: Կարծում եմ, հաշվարկը շատ պարզ է, եւ դա ունի իր մի քանի պատճառները: Այս մտքերը ընկալելի չէին 1997 թվականին, որովհետեւ դեռ տիրապետող էր կույր հաղթողի հոգեբանությունը: Այսօր դրանք կիրառելի են, քանզի հաղթանակի արդյունքում հասարակությունը չունի այլեւս ընկալումների այն դաշտը, որն ուներ շուրջ 20 տարի առաջ: Ավելին՝ հասարակության ակնկալիքներն այդ մասով չարդարացան եւ հաղթանակը կամ հաղթական արդյունքի վերջնական ամրագրումը մի տեսակ բեռ է դարձել հասարակության բոլոր շերտերի համար, որը ներառում է կյանքի բոլոր ոլորտները: Այդ նույն հասարակությունը, որը մեր պարագայում հանդես է գալիս նաեւ որպես ընտրազանգված, այսօր հստակ կարող ենք ասել, որ պատերազմ չի ուզում: Ավելին, հոգնել է պատերազմի սպառնալիքի տակ զրկանքներ կրելուց: Սա մեծ ի մասամբ: Իհարկե, կա հասարակական որոշակի խումբ, որն իր ինքնարտահայտումը տեսնում է միայն պատերազմի միջոցով: Սա բնական է, եւ բոլոր հասարակություններում էլ կան նմանատիպ խմբեր: Բարեբախտաբար, այդ բոլոր մարդիկ միասին վերցրած, հասարակության մեջ շատ քիչ տոկոս են կազմում: Այժմ եկել է իրականությունը կեղծիքից տարբերելու ժամանակը: Բոլոր խաղաղասերները կամ նման կոչ անողները, պետք է հստակ մոտեցում ցույց տան հռչակված սկզբունքներին՝ Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն: Մոտեցում ցույց տալը կարող է լինել քվեի, գործողության կամ մեկ այլ տեսքով: Հակառակ պարագան ընկալելի չէ: Իհարկե, կարող է էական գործոն հանդիսանալ

Տեր-Պետրոսյանի անձի ընկալումը այդ նույն խմբերի կամ անհատների կողմից:

Մեծ հաշվով, Տեր-Պետրոսյանի անձի ընկալումը որքան էլ դրական է, նույնքան եւ բացասական: Էական է քաղաքացիական մոտիվացիան: Շեշտադրում անելով խաղաղության եւ հաշտության խնդրի վրա, Տեր-Պետրոսյանը իշխանությանը փորձում է ներքաշել մի խաղի մեջ, որի դեպքում հանդես կգան միմյանցից տարբեր երկու հակադիր բեւեռներ՝ պատերազմի եւ խաղաղության: Այս հակակշիռների մեխանիզմը կիրառելի է բոլոր զարգացած պետություններում, եւ ընկած է կայացած քաղաքական համակարգերի հիմքում: Այն թույլ է տալիս օգտագործել քաղաքական ճոճանակի էֆեկտը ոչ միայն ներքին գործընթացներում, այլ նաեւ առավելապես՝ արտաքին աշխարհի հետ շփումներում: Այս անգամ ընդունելի կլինի՞ այս թեզը՝ ցույց կտա ժամանակը, առավել եւս, որ իշխանական թեւը, դեռ ամբողջական չի պատասխանել այս թեզին:

***past.am**, 20.12.2016թ.:*

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
(Ծրագրավորող)

ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ – ՄՏԱԳԱ՞Ր, ԹԵ՞ ԽՈՒՃԱՊԱՐԱՐ-ԴԱՎԱՃԱՆ

Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի հազարավոր արձագանքներից մեկը «ֆեյսբուք» սոցիալական ցանցում շատ համառոտ էր. «Դեկտեմբեր 17-ին Լեւոն Տեր-Պետրոսյանը խառնեց գարշահոտ ճահիճը»: Առաջին նախագահի հարյուրավոր ելույթների մեջ հնարավոր չէ գտնել որեւէ մեկը, որ այս կամ այն չափով «խառնած չլինի ճահիճը» ու մնացած լինի առանց բացասական արձագանքների: Դա կլիներ այն դեպքում, երբ ելույթում... ասելիք չլիներ, նշանակետ չլիներ, երբ ելույթը (ինչպես շատ-շատերի դեպքում) լիներ դատարկ կրակոց:

Դեկտեմբերի 17-ի ելույթը միայն «գարշահոտ ճահիճը» չխառնեց:

Այն դարձավ նաեւ յուրատեսակ դիագնոստիկ միջավայր՝ բացահայտելու համար, ասենք, մտագարության, հոգեկան շեղումների երեւույթներ: Օրինակ՝ իր անվան կողքին «քաղաքագիտության դոկտոր» ստորագրող Հայկ Մարտիրոսյանի համար (հարցազրույցը՝ 1in.am, 28.12.2016): Ահա սույն ախտորոշումը հաստատող մի քանի փաստ-ախտանիշ.

1. *«Ասեմ նաեւ, որ ես չեմ ընդունում «Ղարաբաղյան հարցի կարգավորում» ձեւակերպումը... Խնդիրը կլուծվի, երբ երկու հակամարտող կողմերից մեկը կապիտուլյացիայի ենթարկվի»:*

Մոտ 120 տարի առաջ («Դրոշակ», 1895թ. հոկտեմբեր) նույն այս միտքը Արեւմտյան Հայաստանի համար ձեւակերպվել է հետեւյալ կերպ.

«Արդեն կտրված են հարաբերությունները, եւ այժմ միայն շարունակվում է կռիվը, որ վաղուց հայտարարված էր: Խնդի-

ը կվճռվի միայն երկուսից մեկի ընկճվելով, մահով. կա՛մ պետք է ընկնի, մեռնի, փակն ու վրա լինի, ոչնչանա սուլթանական պոռնիկ կառավարությունը, կա՛մ պետք է ընկնի, մեռնի հայ ժողովուրդը: Խնդրի միակ լուծումը մահն է... Հայ ժողովուրդը զենքը վայր կդնի կա՛մ հաղթությունը բոլորովին փարած, կա՛մ անշնչացած...»:

Չէ, սա գրագողություն չէ «քաղաքագիտության դոկտորի» կողմից: Երկուսն էլ քաղաքականության մեջ «գերհայրենասիրության» տեսքով ագրեսիվ շիզոֆրենիայի դրսեւորումներ են, որոնք չեն կարող իրար նման չլինել: Կենցաղային մակարդակում այս հիվանդությունն անձնապես իր կրողին է կործանում, քաղաքականության մեջ դրսեւորվելով՝ կարող է կործանել մի ամբողջ ազգի: Փորձն ունենք. հիշյալ՝ 1895 թվականից հետո «կա՛մ-կա՛մ»-ի այս ճանապարհով **ընդամենը երկու տասնամյակ պահանջվեց, որպեսզի... վերջնականապես անշնչանա Արեւմտյան Հայաստանը:** Կասեք՝ լավ, 120 տարի առաջ ենթադրենք... բայց հիմա՞, 21-րդ դարո՞ւմ, «քաղաքագիտության դոկտո՞րը»: Անշուշտ, շատ բան է փոխվել: Բայց կա մի բան, որ կապ չունի ո՛չ ժամանակի, ո՛չ գիտական աստիճանի հետ, որը չի փոխվել ու չէր կարող փոխվել. դա ուղեղային վերոհիշյալ հիվանդությունն է իր դրսեւորման ձեւերով: Այսօր էլ, սրանից հարյուր տարի առաջ էլ, սրանից հարյուր տարի հետո էլ, այն պետք է նույն կերպ դրսեւորվի: Հայկ Մարտիրոսյանի օրինակը դա է հաստատում:

2. *«Թյուրքական փարրը պատերազմ, միեւնույն է, անելու է, հայերին հայկական հողերից փորձելու է քշել, փորձելու է գրավել Զանգեզուրը եւ ապա՝ Երեւանը... Կարեւոր չէ՝ պատրաստ ենք, թե անպատրաստ: Պետք է դիմադրել այնքան, որքան կարող ենք, պայքարել այնքան, որքան կարող ենք... Որքան կարող ենք՝ կդիմադրենք, եւ թող այս երկիրը լինի նրանը, ով կհաղթի այդ մարտում»:*

Եւ սա գրում է մի մարդ, որն, իհարկե, Ղարաբաղյան պատերազմին չի մասնակցել. լավ ենթադրենք՝ այն ժամանակ դեռ փամփերս էր հագնում: Բա հիմա ապրիլյան պատերազմի՞ն ինչո՞ւ չի մասնակցել: Բա որ հող ուզող էիր՝ էլ ե՞րբ պիտի էդ հողի համար կռիվ տայիր: Ա՛յ, դա աններելի սրիկայություն է. եթե «գերհայրենասիրական» նման զգացումներով եւ հակառակորդի դեմ զենքով պայքարի անհուն տենչով բռնկված ես՝ պատերազմի լուրը լսելուց մի քանի ժամ հետո պետք է դիրքերում հայտնվեիր, զենքը ձեռքիդ «դիմադրեիր այնքան, որքան կարող էիր, պայքարեիր այնքան, որքան կարող էիր», մնայիր այնտեղ՝ մինչեւ կլուծեիր «այս երկրի՝ մերը լինելու» հարցը: Ումի՞ց ես ավելի կամ ումի՞ց ես պակաս: Ա՛յ, այնտեղից՝ դիրքերից իրավունք կունենայիր նման բաներ ասելու: Թե չէ՝ այսպես, տաքուկ մի անկյունում, ուրիշների արյան վրա ձեռքեր տաքացնելը զազրելի է, գերանբարոյականություն է:

3. Իր մտագարության եւ Տեր-Պետրոսյանի դեմ հիվանդագին ատելության մեջ «քաղաքագիտության դոկտոր» կոչվածն այնքան է խորացած, որ կասկածի տակ է դնում անգամ գիտնականի նրա համբավը:

Մի կողմ թողնենք Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ որպես գիտնականի մասին համաշխարհային մեծության մասնագետների տված բարձրագույն գնահատականները: Ասենք միայն, որ դեռ Մատենադարանում աշխատած տարիներին՝ նրան, որպես գիտնականի, 1986 թ. մայիսի 8-ով թվագրված փաստաթղթով, նույնպիսի գնահատական է տվել նաեւ սույն «քաղաքագետիկի» հայրը՝ բանասիրության դոկտոր (հանգուցյալ) Արտաշես Մարտիրոսյանը.

«Լեւոն Տեր-Պետրոսյանի «Հայ-ասորական գրական կապերը 4-5-րդ դարերում» դիսերտացիան գրված է բարձր գիտական մակարդակով, համապատասխանում է արդի բանասիրական գիտության բոլոր պահանջներին, եւ նրա հեղինա-

կը լիովին արժանի է բանասիրական գիտությունների դոկտորի հայցված աստիճանին: – Մաշտոցի անվան Մատենադարանի հայ հին մատենագրության ուսումնասիրության եւ հրապարակման բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր՝ Ա. Մարտիրոսյան» (տե՛ս Левон Тер-Петросян, Сиро-армянские литературные связи в 5-6 вв; Материалы защиты докторрскй диссертации, Санкт-Петербург - Ереван, 2015, էջ 71):

Այսինքն՝ այս դեպքում **որդին, մեղմ ասած, պարզապես թքում է հարազատ հոր գերեզմանի վրա**: Եւ վերոհիշյալ ուղեղային ախտորոշման կոնտեքստում է միայն, որ այսօրինակ դեպքերում բարոյականության մասին հարցեր չեն կարող առաջանալ:

4. Պսեւդոքաղաքագետի տգիտության կամ ինչ-որ ուղղությամբ «շեղվածության» ցայտուն մի արտահայտություն է նրա հետեւյալ միտքը.

«Վազգեն Սարգսյանն այլեւս սպանված է, եւ Հայաստանում չկա այն մարդը, որից Առաջին նախագահը կսարսափեր այլեւս դավաճանական ելույթներ ունենալ»:

Երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը 1997-ի նոյեմբերին գրել է հայտնի «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հոդվածը, դրանից առաջ՝ սեպտեմբերին ընդարձակ մամուլի ասուլիսում հրապարակել է ղարաբաղյան կարգավորման իր ծրագիրը, երբ 1998 թվականի հունվարի 8-ին նույն ծրագիրը պաշտպանելով շատ ավելի խիստ ելույթ է ունեցել Անվտանգության խորհրդի նիստում, նույն Վազգեն Սարգսյանը երեք դեպքում էլ «այլեւս» կենդանի էր, ավելին՝ անձամբ մասնակցում էր ԱԽ հիշյալ նիստին: Եթե «քաղաքագիտության դոկտորը» այս ամենը չգիտի, ուրեմն՝ անհույս տգետ է, եթե գիտի ու զանց է առնում, ուրեմն՝ անհույս «շեղված»:

* * *

Բայց վերադառնանք բերված 2-րդ քաղվածքին՝ «թյուրքական վտանգի» առջեւ Հայաստանի անհույս դատապարտվածության մասին: Խոսքը միայն Ադրբեջանի մասին չէ որպես հակառակորդի, այլ «թյուրքական տարրի», որ նշանակում է՝ Ադրբեջանի հետ նկատի պետք է ունենալ, առնվազն, նաեւ Թուրքիան:

Եթե սույն «քաղաքագետին» առողջ մարդ համարենք, ապա նրա արածն այլ բան չէ, քան կիսապատերազմական երկրում **խուճապարարություն՝ դավաճանական արարքների մեջ ամենազազրելին, իր հետեւանքներով ամենածանրը**: Եւ այս դեպքում նրանով անհապաղ պետք է զբաղվեն ազգային անվտանգության մարմինները: Եթե ընդունենք, որ սա ընդամենը վերոհիշյալ ուղեղային հիվանդությունը հաստատող հերթական մի դրսեւորում է, ուրեմն, նկատի ունենալով դրա հասարակական վտանգավորությունը, նրանով անհապաղ պետք է զբաղվեն բժիշկները՝ **շտապ տեղափոխելով համապատասխան հիվանդանոցի համապատասխան բաժին՝ պարտադիր բուժման**:

***iLur.am**, 10.01.2017թ.:*

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Լեզվաբան, թարգմանիչ)

ԱԶԳ-ԲԱՆԱ՞Կ, ԹԵ՞ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՆԱԿ

«Ազգ-բանակի» ջերմեռանդ երկրպագուները չեն կարողանում հանդուրժել այդ մտքի կամ գաղափարի նկատմամբ որեւէ կասկած ու ոտնձգություն: Փորձում եմ հասկանալ, թե ինչո՞վ պետական բանակը չի բավարարում մարդկանց փառասիրական կամ հայրենասիրական կամ այլ կարգի ամբիցիաները: Ոչինչ չեմ գտնում՝ նրանից բացի, որ «ազգ» բառի ներգրավմամբ կազմված որեւէ բառակապակցություն գործածելիս այդ մարդիկ իրենց զգում են մոտավորապես մի-մի Անդրանիկ փաշա: Մինչդեռ, մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ մեր խրոխտ «ազգընտիրները» ազգ-բանակ ասելիս առանձնապես ոչինչ էլ կարծես նկատի չունեն՝ բացի այն, որ ազգ, մենք պիտի խաղանք քեզ համար նվիրական հնարավոր ամեն ինչի վրա՝ ամեն կերպ ջանալով քեզ դարձնել կառավարելի եւ հեշտ պլոկվող, իսկ դու անտրտունջ պիտի դրա համար մատաղ անես ոչ միայն 1000-ական դրամ, այլեւ այն ամենը, ինչ կանցնի մեր մտքով՝ ընդհուպ մինչեւ քո եւ զավակներիդ կյանքն ու ապագան:

Իհարկե, կարող է եւ սխալվում եմ, եւ իրենք գուցեեւ ուրիշ բան նկատի ունեն, որ չեմ հասկանում: Ամեն դեպքում, կարծում եմ, անկախ նրանից, թե իրենք ինչ նկատի ունեն, մարդիկ հասկանում են, որ ուզում են հզոր բանակ ունենալ: Երբ բարձրաստիճան ոչ մի պաշտոնյայի որդի, իսկ երիտասարդ պաշտոնյաներից էլ գրեթե ոչ ոք ոչ մի օր բանակում չի ծառայել եւ չի ծառայելու, էլ էդ «ազգ-բանակը» վերջացավ, արդեն զավեշտ է: Մի պետության համար, որում բնակվող քաղաքացիների իրական թիվը 2-2,5 միլիոն է, որտեղ գրեթե

անխտիր բոլորը պատրաստ են ամեն բանի դիմելու՝ բանակում չծառայելու համար, իսկ փոքրիշատե դրամական միջոց կամ պաշտոն ու ուժ ունեցողները նաեւ դիմում են, որտեղ խաղաղ պայմաններում մահացած զինվորների թիվը ողբերգական չափերի է հասնում, իսկ ստորացումների ու մարդկանց ողնաշարը ջարդելու մասին էլ չեմ խոսում, ավելի նպատակահարմար ու ավելի հրատապ, ավելի նորմալ, ավելի հասկանալի եւ անհամեմատ ավելի հիանալի չէ՞ր լինի «օրինակելի բանակի» գաղափարը: Բանակ, որտեղ զինվորները մարզվում են՝ դառնալով առողջ կամ ավելի առողջ՝ մարմնով ու հոգով, որտեղ կոփվում է զինվորի ոչ միայն մարմինը, այլեւ ոգին, նրանից պատրաստվում լավ քաղաքացի եւ լավ ընկեր, որտեղ զինվորը ոչ միայն ենթարկվում է հրամանատարին, այլեւ ենթարկվում է հիացմունքով ու վստահությամբ, չի կասկածում հրամանատարի շարժառիթներին ու արդարամտությանը, որտեղ հրամանատարը հարգանքով է վերաբերվում իր ենթակայության տակ եղած զինվորներին եւ նրանց ընկալում իբրեւ արժեք, բանակ, որտեղ իշխում են մաքրությունն ու նվիրումը:

Հասկանո՞ւմ եք. այս իրադրության մեջ, եթե զինվորին ու հրամանատարին միեւնույն հագուստով կամ մորեմերկ կանգնեցնեն մեր աչքի առջեւ, կասկածո՞ւմ եք, որ առանց մի վայրկյան տատանվելու բոլորիս համար ակնհայտ է լինելու, թե ո՛ր մեկն է շարքային զինվորը, որ մեկը՝ հրամանատարը: Եւ դա՝ բոլորովին էլ չի լինելու մեկի վճիտ, իսկ մյուսի խրոխտ բազեական հայացքի շնորհիվ, այլ մարմնի քաշի, կշտության ու ճարպակալության շնորհիվ: Եթե մարդն առողջ չէ, եթե բանակն առողջ չէ, եթե հասարակությունն առողջ չէ, նրանց կերակրում են դատարկ բառակապակցություններով. իրական զրկանքները կոմպենսացնելու համար մատուցում են դատարկ

բանաձեւեր: Հիշո՞ւմ եք Աղվան Հովսեփյանի «նեյրոլինգվիստիկան». ա՛յ, դա է կատարվածը:

Եթե քաղաքացու մեջ չի խրախուսվում, այլ պատժվում է լավ քաղաքացի լինելու ձգտումը, եթե չի խրախուսվում, այլ պատժվում է ուժեղ ու բարգավաճ պետություն ու ժողովուրդ ունենալու ձգտումը, նրա առջեւ նետում են դատարկ բառակապակցություններ՝ դրանք անվանելով «հայեցակարգ», «ազգային գաղափարախոսություն»: Ինչպե՞ս կարող է որեւէ պետություն ունենալ որեւէ այլ գաղափարախոսություն, քան բարգավաճ պետություն ու հասարակություն ունենալու եւ իր ու իր սերունդների համար խաղաղության մեջ բարգավաճելու ձգտումը: Թե դրանից ավելի մեծ «ազգային գաղափարախոսություն» կա, ասեք՝ սովորենք: «Ազգ» բառի ներդրումն ամեն նախադասության մեջ քեզ ազգային չի դարձնում, այլ պարզապես մեծացնում է տվյալ բառի կիրառությունը քո կողմից: Լսած կլինեք «պարազիտ բառերի» մասին: Դրանք այն բառերն են, որ իմաստ չունեն, պարզապես անդադար կրկնում ես, քանի որ ասելիքդ ձեւակերպել չես կարողանում (վարժ խոսող չես եւ փորձում ես ժամանակ շահել՝ մտքերդ ի մի բերելու համար) եւ անդադար գործածում ես, ասենք, «ուրեմն» բառը, կամ, ինչպես հիմա տարածված է, ամեն բառից առաջ ու հետո «հա՞» բառը (մոտավորապես՝ «ուրեմն, հա՞, մենք գնում ենք, հա՞, ըըըըը, որպեսզի, հա՞...»): Որեւէ բառ ինքնին «պարազիտ բառ չէ». այն այդպիսին է դառնում անհարկի հաճախ գործածումների պատճառով: Ահա այդպիսի բառի են վերածել «ազգ» բառը: Ի թիվս մի շարք այլ՝ դարձյալ շատ վեհաշունչ ու գեղեցիկ բառերի:

***iLur.am**, 23.12.2016թ.:*

ԼԻԶԱ ՃԱՂԱՐՅԱՆ
(Գրող, հրապարակախոս)

ԻՍԿ ԵՍ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՄ

Հենց Հայաստանում եւ Սփյուռքում հայերը կրկին հայտնվում են «դավաճան» հայտնաբերելու ու նրան դատափետելու միջոցով Հայրենիքի հանդեպ իրենց անսահման սերն արտահայտելու իններորդ ալիքի վրա, եւ մեր բառագանձարանից գլուխները հանում են մոռացված, ճռճռան ու պլպլան բառեր ու դաժանորեն շահագործվում պաշտելի հայրենիքի համայնապատկերին, ահա այս կարգի «ազգային-ազատագրական զարթոնքի» փառավոր պահերին հաճախ եմ հիշում (Առաքել Սեմիրջյանի ականջը կանչի) կինոռեժիսոր Լարիսա Շեպիտկոյի «Հառնում» (գուցե «Վերելք» կամ նույնիսկ «Համբարձում»... չգիտեմ, որն ուզում եք՝ ընտրեք կամ ավելի լավ տարբերակ առաջարկեք. ռուսերեն վերնագիրը «Восхождение» է) ֆիլմը, որն իմ սիրելիների ցանկում էր եւ է:

Պատերազմ է, պարտիզաններից մեկը նախկին կադրային զինվորական է, մյուսը՝ նախկին ուսուցիչ: Նախկին զինվորականը Հայրենիքի հարցում, այսպես ասած՝ միշտ իններորդ ալիքի վրա է մեր դավաճան պեղող ու հայրենասիրական բուռն ջղակծկումների ամբիոնից չիջնողների նման, իսկ ուսուցիչը լռակյաց ու ջուրը տարածի մեկն է: Կասկած կա՞, որ թշնամու ձեռքն ընկնելու դեպքում մեր այս քաջարի ու կոշտկոպիտ զինվորականը բացելու է կուրծքն ու ասի՝ ստրելյայ, գա՛դ: Ոչ մի կասկած: Իսկ այս դալկադեմ ու նրբիկ ինտելիգենտը հաստատ տեսնելու է ֆաշիստական հրացանի փողը, ու վերջ՝ դավաճանը պատրաստ է, քարկոծեք:

Չէ, մի շտապեք: Համբերեք՝ գերի ընկնեն, տեսնենք՝ ինչ է լինելու, դեռ կհասցնենք բառարանից պեղել պլպլան ու ճռճռան

բառերն ու դրանց տակ թաղել այս ճլորած վարժապետին:

Կյանքը քաղցր բան է: Մեր բոցաշունչ զինվորականը սա գիտակցեց գերի ընկնելուց հետո: Տաղանդավոր ռեժիսորի հետ գործ ունենք, ու մեր այս հերոսը պարզունակ դավաճան չէ՝ տառապում է, ո՞նց է տառապում, նաեւ տեսնում է, որ տառապանքը մեկ երես չունի, իր աչքի առաջ «ջուրը տարած» ուսուցիչը Հիսուսի տանջանքներ է կրում, բայց դիմանում է, ընտրել է իր ճամփան, ու այդ ճամփան սրբի պես նահատակվելն է: Տեսնում է կյանքի քաղցրությունը «մինչեւ հիմքերը եւ հետո» գիտակցած զինվորականը եւ ավելի ու ավելի անկեղծորեն է ատում ինքն իրեն, նույնիսկ փորձում է ինքնասպանություն գործել: Դե՛, չի հաջողվում: Եւ քանի որ չի հաջողվում, ծնկի է գալիս թշնամու առաջ, աղաչում, որ չկախեն իրեն, ու հենց ինքն էլ աթոռը քաշում հանում է խոշտանգված ու արդեն մի ոտքով երկնքում, պարանը վզին իր երկրային կյանքի վերջակետին սպասող ուսուցչի ոտքերի տակից: Մնացածը կարեւոր չէ. լուռումունջ կծառայի՞ գերմանացիներին բոցաշունչ զինվորականը, թե՞ էլի ու էլի կփորձի վերջ տալ իր կյանքին: Կարեւորը՝ հասկացել էր, որ կյանքը շատ թանկ բան է, եւ հատկապես՝ ի՛ր սեփական կյանքը: Այնքա՛ն թանկ է, որ ապրելու համար պատրաստ է իր զինակցին «օգնել», որ շունչը շուտ փչի:

Նախապես գիտե՞ր այս նախկին քաջարի զինվորականը, որ մի օր սողալու է թշնամու առաջ՝ իր կյանքը պահպանելու աղաչանքով: Վստահ եմ՝ չգիտեր, մտքի ծայրով անգամ նման բան չէր անցնում:

Այսօր՝ մեր հասարակությանը դավաճանների ու հայրենասերների բաժանողները, եւ բնականաբար՝ իրենք իրենց սիրասուն անուն-ազգանունները հայրենասերների ցուցակի պատվավոր տեղերում դնողները, օրական մի քանի անգամ՝ իրենց տներում նստած «Բաքուն գրավողները» գիտե՞ն, թե ինչի են ընդունակ իրենք, եթե հայտնվեն այս պարտիզանների վիճակում: Չգիտեմ՝ ինչ կանեին: Իրե՛նք էլ չգիտեն: Ոչ մեկս չգիտենք: Ու Աստված տա՝ երբեք էլ չիմանանք:

Մեծամասնությունը, բարեբախտաբար, երբեք չի էլ իմանա, որովհետեւ արտասահմաններում կամ հայաստանյան իրենց բնակարաններում համակարգչի առջեւ նստելն ու մի քանի մատի շարժումով Բաքուն ու Նախիջեւանը գրավելը «շարիկ գլորելու» նման մի բան է, եւ այն ծանր փորձությունը, որին ենթարկվեցին նշածս ֆիլմի հերոսները, կախված է սահմանին կանգնած զինվորների գլխին, ոչ թե՝ մեծ ու փոքր պոռոտախոսների:

«Մարտիկ» տխրահռչակ տոնական հաղորդմանը տրված բացասական արձագանքներին ահա այս պոռոտախոսներից ոմանք հակադարձեցին հերոսական հռհռոցներով, մոտավորապես այս մակարդակի՝ արա տո՛, վախենո՞ւմ եք:

Այո, շա՜տ հայրենասեր իմ հայրենակիցներ, ես վախենում եմ: Ամեն առավոտ՝ հենց աչքս բացում եմ, առաջին զգացումը, որ ապրում եմ՝ վախն է՝ հո սահմանին զոհ չունե՞նք: Այո, երբ բացում եմ հենց առաջին կայքը, որ կարդամ սահմանի մասին օրվա լուրը, ձեռքերս դողում են, սիրտս էլ այնպես է թպրտում, որ ինձ թվում է՝ ուր որ է կկանգնի: Եւ այս վախս կրկնակի ու եռակի է դարձել ապրիլյան օրերից հետո, երբ ե՛ւ հարյուրից ավելի զոհ տվեցինք, ե՛ւ տարածք կորցրինք, որը, եթե հիշողությունս չի դավաճանում, ո՛չ ետ վերցրինք, ոչ էլ մտադրություն ունենք ետ վերցնելու:

Ես վախենում եմ, որովհետեւ ոչ ոք պատասխան չտվեց այդքան զոհերի համար, չնայած բազմաթիվ հիմնավորված ահազանգեր հնչեցին, որ կարող էինք նաեւ խուսափել այդքան զոհ տալուց, եթե մեր տարածաշրջանի ամենամարտունակ բանակում թալանն այսպես չծաղկեր, բարձրաստիճան զինվորականների մեծ մասի որովայններն այդքան կասկածելիորեն կլորիկ չլինեին, եւ հակառակորդի ներխուժումների

դեմ մեր զինվոր երեխաների «տագնապի կոչնակներն» էլ «կանսեռվի» տուփերը չլինեին:

Ես վախենում եմ մեր զոհված պատանիներին հետմահու փուչ ներբողներ ձոնելու մեր այս անտրամաբանական ու անմարդկային մոլուցքից:

Ես վախենում եմ մեր զոհված պատանիների համար արցունք թափողներին քմծիծաղով նայողներից՝ դե, թույլիկ-մույլիկ եք, էլի, բա հանուն հայրենիքի պետք է նաեւ զոհվեն, բա ոոոոնց:

Ես վախենում եմ ձեր չվախենալուց ու մի կաթիլ անգամ չեմ վախենում, որ ես ձեր կազմած դավաճանների ցուցակում կհայտնվեմ:

Ես խաղաղություն եմ ուզում՝ թեկուզեւ փոխզիջումների գնով, որ մեր զինվոր երեխաները շարունակեն ապրել, իսկ դուք ինձ նման «դավաճանների» քթի տակ «պե՛տք է»-ների ու «պիտի»-ների դատարկ ու ճռճռան բառակույտեր եք թափահարում:

Ես վախենում եմ, որ ղարաբաղցի Վահրամ Աթանեսյանի «Արցախյան ընկալումներ» գերազդեցիկ խորագրի տակ հիվանդ ուղեղների զառանցանքներ են օդ արտանետվում, եւ այդ նույն Ղարաբաղում կամ «անտեղյակ» են դրա մասին, կամ անտեղյակ են ձեւանում: Գլո՛ւխը քարը, թե ինչ ապուշություններ էին դուրս տալիս երախտամոռության այս «նմուշները» Հայաստանի առաջին նախագահի մասին, իսկ ահա Բաքուն Հայաստանի մի մաս հայտարարող էս քաջնազարներին ոչ մի ղարաբաղցի չի՞ ուզում հարց տալ՝ էդ ո՞ւմ կյանքերի գնով եք պատրաստվում Բաքվում «չայ» խմել, ա՛յ...

Կյանքը քաղցր բան է, պարոնայք ու տիկնայք շատ թունդ հայրենասերներ, պահանջատերեր ու բազկաթոռներին փռված Բաքվում չայ խմողներ: Բայց այդ ո՞ր «խելոքն» է լցրել ձեր հայրենասեր գանգատուփերը, որ հենց ձե՛ր կյանքն է քաղցր, իսկ սահմանին կանգնած պատանու մազից կախված կյանքը

հենց ձե՛ր կյանքի քաղցրությունը պահպանելու համար է նախասահմանված:

Ես վախենում եմ «հանուն հայրենիքի զոհվելու» պարտադիրությունը թմբկահարող եւ իրենց դերն այդ գործում միայն վարպետորեն ճամարտակելը համարողներից: Դրանք ինձ համար Շեպիտկոյի ֆիլմի այն հերոսին են նման, որն իր կյանքը պահպանելու համար աթոռը հանեց պարանը վզին իր մահին սպասող ընկերոջ տակից:

***iLur.am**, 12.01.2017թ.:*

ԱՂԱՍԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ
(Լրագրող)

«ՈՉ ՄԻ ԹԻՋ ՀՈՂԻՑ» ԴԵՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Մարտի 5-ից տրվում է խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի պաշտոնական մեկնարկը, որը կավարտվի մարտի 31-ին: Սակայն ըստ էության պետք է փաստել, որ ոչ պաշտոնական քարոզարշավի մեկնարկը վաղուց արդեն տրված է, ընդ որում՝ այդ քարոզարշավը ներկայում գտնվում է ամենաակտիվ ու միաժամանակ ստվերային փուլում, որի մասին վկայում են ներկայում ներքաղաքական դաշտում ընթացող գործընթացները:

Բնականաբար մինչ քարոզարշավի պաշտոնական մեկնարկը եւ մեկնարկից հետո էլ, հայաստանյան հասարակաքաղաքական դաշտը լցված է լինելու քաղաքական քարոզչության հնարավոր ու անհնար տարատեսակ ձեւերով ու մեխանիզմներով, ինչպես եւ, ըստ էության, եղել է մինչ օրս: Բնականաբար այդ քարոզչությունը առավել ինտենսիվ բնույթ է կրելու՝ կապված խորհրդարանական կառավարման մոդելին անցնելու եւ համամասնական ընտրակարգի հետ: Այս բոլոր գործընթացներում, սակայն, կցանկանայինք առանձնացնել մի կարեւոր խնդիր, որն առկա է գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունների մոտ: Խոսքը վերաբերում է ղարաբաղյան հիմնախնդրի լուծման հարցում քաղաքական ուժերի հստակ վերաբերմունքի պակասին: Ըստ էության, արցախյան հիմնահարցը ոչ միայն իշխանության, այլեւ ընդհանրապես Հայաստան պետության առաջնային հիմնախնդիրներից է, որի նկատմամբ, կարծես թե, պետք է ցանկացած քաղաքական ուժ, կուսակցություն կամ միավորում ունենա հստակ մոտեցում,

սկզբունքներ եւ, այսպես ասած, ճանապարհային քարտեզ: Սակայն, ինչպես կարող ենք ներկայում էլ տեսնել, այս խնդիրը մեծապես փորձ են անում շրջանցել գրեթե բոլոր ուժերը:

Այս տեսանկյունից պատահական չէր, որ «Հայ ազգային կոնգրես» կուսակցության համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտնի ելույթը ենթարկվեց տարատեսակ քննադատությունների, սակայն այդպես էլ ղարաբաղյան հիմնահարցի լուծմանը Տեր-Պետրոսյանի ներկայացրած մոդելին հակակշիռ կամ համարժեք հայեցակարգ ասպարեզում չհայտնվեց: Այստեղ հստակ պետք է շեշտել, որ խնդիրը առաջին նախագահի ներկայացրած սկզբունքների ընդունելի կամ չընդունելի, իրատեսական կամ ոչ իրատեսական լինելը չէ, այլ այն, որ, ըստ էության, Տեր-Պետրոսյանը սկսեց խոսել մի խնդրի մասին, որը փորձ է արվում մշտապես շրջանցել:

Ղարաբաղյան հիմնահարցը ինքնին չափազանց նուրբ թեմա է, որի շուրջ քաղաքական հստակ մոտեցում ունենալը ցանկացած քաղաքական կուսակցության համար միաժամանակ ե՛ւ լուրջ դիվիդենտ է, ե՛ւ լուրջ սպառնալիք, սակայն սա այն հարցն է, որի շուրջ հայաստանյան քաղաքական կուսակցությունների մոտեցումները պետք է առավելագույնս թափանցիկ լինեն հանրության համար:

Սակայն այս խնդիրը քաղաքական կուսակցությունների կողմից փորձ է արվում շրջանցել, եւ քաղաքական հայեցակարգի փոխարեն պարփակվում է պաթոսային եւ ռազմահայրենասիրական ձեւակերպումների մեջ, որը, բնականաբար, չի կարող կառուցողական լինել: Այս տեսանկյունից պարզ չի դառնում, թե «ոչ մի թիզ հող» կարգախոսով շարժվող քաղաքական ուժը իշխանություն կամ իշխանության ազդեցիկ մաս դառնալու պարագայում ինչ քայլերով է շարժվելու, ինչ է անելու բանակցային գործընթացում, ինչպիսի սկզբունքներ է որդեգրելու: Վերջիվերջո ակնհայտ է, որ բանակցային ցան-

կացած գործընթաց հիմնված է որեւէ տիպի փոխզիջումային տարբերակի քննարկման կամ առկայության վրա: Վերջիվերջո, գործող իշխանությունը, Սերժ Սարգսյանը, արտաքին քաղաքական գերատեսչությունը, ԵԱՀԿ Մինսկի խումբը եւ մնացած բոլոր միջնորդ երկրներն ու կազմակերպությունները լծված են փոխզիջումային տարբերակների որոնման գործին: Նման պայմաններում առավել քան հրատապ է դառնում հայաստանյան քաղաքական կուսակցությունների քաղաքական կամքն ու ազնվությունը, որը պետք է հստակ ներկայացնի ինչպիսի սկզբունքներ է որդեգրել այս հիմնախնդրում, ինչպիսի զիջումների է պատրաստ գնալ եւ ինչպիսի զիջումներն են կտրականապես մերժելի:

Այս խնդիրների շրջանցում ցանկացած քաղաքական կուսակցության կողմից ինքնին ենթադրում է հասարակության մանիպուլյացիա, որը պարզապես անթույլատրելի է՝ հաշվի առնելով խնդրի լրջությունը, բացի այս հենց նման հայեցակարգային մոտեցումների առկայությունը պետք է բերի հիմնախնդրի շուրջ լայն հասարակական ու քաղաքական դիսկուսիայի եւ դիսկուրսի, որն իր հերթին պետք է ձեւավորի հանրային գիտակցված, զգացմունքային տարրերից ազատ հասարակական վերաբերմունքի եւ մոտեցումների կայացումը:

Ամփոփելով, պետք է նշել, որ այս խնդիրը բավական լայն ընդգրկում ունի եւ մեկ դիտարկմամբ հնարավոր չէ վեր հանել խնդրի բոլոր նրբերանգները, սակայն առաջիկայում մենք պարբերաբար կանդրադառնանք խնդրին եւ դրա շուրջ տեղի ունեցող զարգացումներին:

«Փաստ» օրաթերթ, 18.01.2017թ.:

ԱՐՄԱՆ ՄՈՒՍԻՆՅԱՆ
(Արեւելագետ, հրապարակախոս)

ԵՒՍ ՄԵԿ ԱՍՔ ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Օրեր առաջ Մեդիամաքս լրատվական գործակալության կայքում հրապարակվել է Ավետիք Չալաբյանի «Ինչպես ավարտել այս պատերազմը» հոդվածը, որը ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ դիրքորոշման ձեւակերպման փորձ է, հետեւաբար՝ արժանի է արձագանքի:

Հոդվածում առաջ քաշված դիրքորոշումն, ըստ էության, հետեւյալն է. մենք պետք է մոբիլիզացնենք մեր ուժերը, լուծենք ներքին խնդիրները, Հայաստանը դարձնենք քաղաքականապես, տնտեսապես եւ ռազմական առումով հզոր երկիր, որի արդյունքում Ադրբեջանը ա) կհրաժարվի ռեւանշի գաղափարից, բ) եթե չհրաժարվի, դա նրա համար կունենա աղետաբեր հետեւանքներ, այն է՝ հայկական բանակն, օգտվելով հարմար առիթից, ծնկի կբերի նրան:

Առաջին իսկ հայացքից աչքի է զարնում այս դիրքորոշման հիմքում ընկած հիմնավորումների ապշեցուցիչ նմանությունը այն հիմնավորումներին, որ բերվում էին 1997–98 թթ. նույնպիսի դիրքորոշում ունեցողների կողմից:

Մասնավորապես.

1997–98 թթ.

«Ղարաբաղյան հակամարտությունը խոչընդոտ չէ արտասահմանյան ներդրումների համար: Ներդրումների հոսքի ապահովումը կախված է ակտիվ ու լայնամասշտաբ մարկետինգային քաղաքականությունից, մասնավորապես ինտերնետի հնարավորությունների մաքսիմալ օգտագործումից»:

«Շրջափակումները չեն ազդում Հայաստանի տնտեսական զարգացման վրա: Ամեն ինչ կախված է կառավարության աշխատանքի ճիշտ կազմակերպումից եւ ուժերի մոբիլիզացիայից»:

«Հայաստանի բյուջեն կարելի է երկու-երեք անգամ մեծացնել՝ պայքարելով ստվերային տնտեսության դեմ եւ խստացնելով հարկերի հավաքման պրոցեսը»:

«Սփյուռք-Հայաստան հարաբերությունների սերտացման դեպքում Սփյուռքից կարելի է ստանալ տարեկան 400–500 միլիոն դոլարի օգնություն»:

«Արտագաղթն այլեւս չի սպառնում Հայաստանին, եւ ընդհակառակը՝ արդեն դիտվում են ներգաղթի միտումներ: Դրա ապացույցն է այն, որ եթե անցյալ տարի դպրոցներում երեքչորս առաջին դասարաններ էին բացվում, ապա այս տարի բացվել են վեց-յոթ դասարաններ» (ավելի մանրամասն տես՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը Անվտանգության Խորհրդի նիստում 1998 թվականին):

2016–17 թթ.

«Երկրի տնտեսական զարգացումը առաջիկա տարիներին առաջին հերթին պայմանավորված կլինի տնտեսության հեռանկարային, մասնավորապես, բարձր տեխնոլոգիական ճյուղերում ներդրումային ակտիվությամբ, դա իր հերթին ռեսուրսներ կստեղծի մնացած ոլորտների զարգացման համար: Հայկական հասարակության մեջ, եւ մեր հանդեպ բարեկամաբար տրամադրված երկրներում այդպիսի ներդրումային ռեսուրսներ կան եւ կարող են ուղղորդվել Հայաստան, որն, իր հերթին, արդեն ունի բարձր տեխնոլոգիական ընկերությունների արագ զարգացող կորիզ: Որպեսզի այդ ներդրումները Հայաստան գան, անհրաժեշտ է ներդրումային ծրագրերի տնտեսական գրավչության բարձրացում՝ ռիսկերի զուգահեռ նվազեցման պայմաններում»:

«Տնտեսական մրցակցության թափանցիկ եւ հավասար պայմանների ապահովում բոլոր տնտեսվարողներին, անկախ նրանց քաղաքական ազդեցությունից»:

«Արագացված տնտեսական ինտեգրացում՝ Եւրոպական Միության, Ռուսաստանի Դաշնության եւ Մերձավոր Արեւելքի բարեկամական երկրների հետ, բարձր տեխնոլոգիաների մասով՝ նաեւ Միացյալ Նահանգների, Չինաստանի եւ Հնդկաստանի հետ, տարածաշրջանային տեխնոլոգիական հանգույց դառնալու հեռանկարով»:

«Բյուջեի եկամուտների հավաքագրման բարձրացում երկրում առկա հարստությունը համարժեք հարկելու հաշվին, արտաքին պարտքի մակարդակի կայունացում եւ աստիճանական նվազեցում»:

«Պետական ծախսերի օպտիմալացում եւ գերակայությունների վերակողմնորոշում՝ կրթության եւ պաշտպանական ոլորտի վրա, տարածաշրջանում գիտա-կրթական գերազանցության կենտրոնի ձեւավորում, բանակի տեխնոլոգիական վերազինում եւ ռազմարդյունաբերության զարգացում»

«Հայրենադարձության աջակցում՝ որպես երկիր կապիտալի եւ կարողությունների ներգրավման, եւ արտերկրի հայության հետ իրական ինտեգրացման միջոց»: (*տես՝ Ինչպես ավարտել այս պատերազմը*, Մեդիամաքս, 09.01.2017թ.):

Արդեն այս զուգահեռումը պիտի բավարար լիներ հասկանալու համար, որ ներկայացված «դիրքորոշումն» արդեն հերքվել է անցնող 20 տարիներին, եւ սա ընդամենը նույն մոտեցման վերակենդանացման փորձն է այլ ձեւակերպումներով: Ընդ որում՝ ծանոթ ձեռագրով: Թվում էր, թե այս փաստարկումներն այլեւս տեղ չպետք է ունենային ղարաբաղյան հարցի շուրջ ծավալվող բանավեճերում, եւ փոխզիջումային լուծման հակառակորդներն այլ փաստարկումներ պետք է գտնեին հասարակությանը ներկայացնելու: Բայց ոչ՝ հասարակությա-

նը կրկին մատուցում են նույն բանն այլ փաթեթավորմամբ: Բայց սա՝ դեռ մի կողմ:

Իրականում այս դիրքորոշման փաստարկման հիմքում թաքնված մի ավելի մեծ վտանգ կա: Դա ոչ թե նրա բովանդակային սնանկությունն է՝ ծայրից ծայր ապացուցված վերջին 20 տարում, այլ որ իր ներքին կառուցվածքով այն ավարտ չունի: Եթե մեկ անգամ էլ շարժվենք այս ճանապարհով ու, ասենք, 10 տարի հետո գանք մի X հանգրվանի, բայց պարզվի, որ հակառակորդը չի հրաժարվել ռեւանշից, ապա կրկին հայտնվում ենք նույն՝ ձախողված կետում (ձախողված, որովհետեւ այս դիրքորոշման հաջողությունը, ինչպես իրենք են պնդում, միայն այն դեպքում է, երբ Ադրբեջանը հրաժարվում է ռեւանշից): Ու այդժամ կրկին մեզ դեմ են տալու հենց նույն ձախողված արգումենտը՝ գիտե՞ք, անհրաժեշտ է մի քիչ էլ ուժեղանալ, եւ հակառակորդը վերջապես կսկվի ու կհրաժարվի ռեւանշից: Ամեն անգամ «ոչ բավարար» ուժեղությունը (իրականում՝ ավելի թուլացած լինելը) նրանք պատճառաբանելու են տարբեր գործոններով: Մեղավոր կհռչակվեն Ամերիկան, Ռուսաստանը, ապազգային ուժերը, վատ կառավարիչները, գլոբալ տաքացումը. բոլորն ու ամենը, բացի այս դիրքորոշումը ժողովրդի վզին փաթաթողներից: Հետապրիլյան (այսօրվա) բանավեճը հենց մեզ օրինակ: 97–98-ին այդ նույն դիրքորոշում հայտնողներն այսօր ասում են՝ դե գիտեք, Հայաստանի իշխանությունները վատն էին, դրա համար էսպես էղավ, այ հիմա պետք է ներքին խնդիրները լուծենք ու ուժեղանանք, որ հակառակորդը հրաժարվի ռեւանշից: Հաջորդ անգամ մեզ դեմ կտան մեկ այլ փաստարկում, էական չէ, թե ինչ: Ու այսպես շարունակ:

Այս «տրամաբանությունն» իրականում ծուղակ է: Սա փակ շրջան է: Նմանատիպ փաստարկումով ե՛ւ 97-ին, ե՛ւ հիմա հասարակությանը ներքաշում են մի փակ շղթայի մեջ, որից

դուրս գալ չկա: Հայաստանին փորձում են դարձնել պտտվող անվի մեջ անդադար վազող սկյուռիկ: Ամեն հաջորդ սրացում-բախումից հետո կրկին «հայրենասերի» ու «ազգի դարդերով ապրողի» դեմքով ասելու են՝ բայց կարող ենք ուժեղանալ ու Ադրբեջանին խաղաղություն պարտադրել, չէ՞ (մանավանդ որ՝ անվերջ կարելի է «ուժեղանալ»): Քաղաքացիներից շատերը մտածելու են՝ հա, իսկապես, ի՞նչ վատ է, կուժեղանանք ու մեր ուզած ձեւով կլուծենք: Ու տեղում ընկնելու են ծուղակը: Ինչպես խաղամոլն է ընկնում ծուղակը՝ ամեն կորստից հետո դնելով հաջորդ խաղադրույքը՝ ետ բերելու համար կորցրածը: Միայն թե ամեն հաջորդ անգամ խաղասեղանին է դնում ավելի մեծ արժեք: Ու վերջում տանուլ է տալիս ամեն ինչ: Եւ ինչպես միշտ (ու ճակատագրի հեգնանքն այստեղ է), այս բանավեճում նման «դիրքորոշման» հեղինակները հայտարարվում/ելու են հայրենասերներ, իսկ դրա վտանգները տեսնողներն ու լուծման անհրաժեշտությունը գիտակցողները՝ դավաճան:

Այս փակ շղթայից դուրս գալու երկու ձեւ կա. ա) փոխզիջումային լուծում, բ) Ադրբեջանի կապիտուլյացիա: Քանի որ հոդվածագիրը փոխզիջումային լուծման դեմ է, միակ ձեւը մնում է Ադրբեջանին կապիտուլյացիայի ենթարկելը: Ինչը եւ հոդվածագիրն ակնարկում է իր հրապարակման մեջ. *«...պատրաստվել այն պահին, երբ հակառակորդի ավտորիտար համակարգի ներքին ապակայունացումը մեր առջեւ ճանապարհ բացի նախաձեռնողական ռազմավարության վճռական քայլերի համար: Մեզ պետք չէ կառչել այսօրվա սրատուս քվոյից, այլ հետեւողականորեն գործել՝ բարենպաստ պահերին այն մեր օգտին փոխելու նպատակով»:* Մեզ, ըստ էության, առաջարկում են դառնալ նոր պատերազմի նախաձեռնողը՝ Ադրբեջանին վերջնականապես ծնկի բերելու նպատակով: Կա՞ սրանից ավելի մեծ արկածախնդրություն ու վատություն, որ կարելի է անել Հայաստանին: Նման մտածողությունը քաղաքա-

կան անմեղսունակության ու անգրագիտության դասական օրինակ է եւ պետության ռեսուրսները, ուժերի հարաբերակցությունը, միջազգային իրողություններն ընկալելու տարրական ունակության իսպառ բացակայություն: Նման մտածողությունը սպառնալիք է մեր պետությանը, եթե, Աստված մի արասցե, դառնա գերիշխող:

Հետեւաբար, եթե նման դիրքորոշման հեղինակներն իրոք համարում են, որ Հայաստանը կարող է կապիտուլյացիայի ենթարկել Ադրբեջանին, ապա իսկապես անմեղսունակներ են՝ անընդունակ քաղաքական գործընթացների ադեկվատ ընկալման: Իսկ եթե գիտակցում են դրա անհնարինությունը, սակայն ինչ-ինչ շահերից դրդված՝ մոլորեցնում են հասարակությանը, ապա հանցանք են գործում սեփական ազգի, պետության ու ապագա սերունդների նկատմամբ: Ըստ իս, մենք գործ ունենք երկրորդ տարբերակի հետ:

Իրական պատճառը, իմ կարծիքով, այն է, որ այս «դիրքորոշման» կողմնակիցները ՉԵՆ ՈՒԶՈՒՄ լուծել հարցը, բայց վախենում են դա հայտարարել բացահայտ: Որովհետեւ հայտարարելով՝ ԻՐԵՆՑ ՎՐԱ ՊԵՏՔ Է ՎԵՐՑՆԵՆ խնդրի չլուծման բոլոր հետեւանքների, այն է՝ սահմանին տրվող զոհերի, շարունակվող արտագաղթի, ժողովրդին անհեռանկարության մատնելու, Հայաստանն իզգոյ երկիր դարձնելու ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ: Բայց քանի որ նրանք, ինչպես կյանքն է ցույց տվել, պատասխանատվությունից փախչում են, ինչպես օձը՝ դաղձից, այդ պատճառով մեզ այս «դիրքորոշումը» մատուցում են վեհ ու հայրենասեր, խելացի թվացող գաղափարների, մտքերի տեսքով: Որ իրենք ոչ թե չեն ուզում լուծել հարցը, այլ լավ էլ լուծելու են, էն էլ ոնց են լուծելու: Կապիտուլյացիայի ենթարկելով հակառակորդին, կամ այլ կերպ ասած՝ Բաքվում թեյ խմելով: Ադրբեջանին ջարդուփշուր անելով, ծնկի բերելով ու նվաստացնելով: Ու սա ներկայացնում են որպես

ազգի փրկության միակ բանաձեւ: Բայց միեւնույն ժամանակ՝ ընդհանրական ու լղոզված ձեւակերպումներով: Որ հետո իրենց պատին դեմ տալու հնարավորություն չլինի: Եթե, Աստված չտա, հարցը չլուծվի, ու 10 տարի հետո մենք նորից կանգնենք այս բանավեճի առաջ, ապա Ավետիք Չալաբյանը կնշի 100 պատճառ, թե ինչու այս անգամ չստացվեց: Ու կրկին մեղավոր կլինեն բոլորը, բացի «դիրքորոշման» հեղինակներից:

Այնպես որ հեղինակը ճիշտ կաներ իր հոդվածը վերնագրեր. «Ինչպե՞ս նախաձեռնել նոր պատերազմ կամ ասք Հայաստանը փուռը տալու մասին»:

Հ.Գ. Մի քանի նկատառում հոդվածում արտահայտված որոշ մտքերի կապակցությամբ:

1. *«1992 թվականի ամռանը, նորանկախ Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունները բախվեցին իրենց գոյության առավել սուր ճգնաժամին՝ հետեւում էր մնացել Շուշիի փառապանծ ազատագրումը, հակառակորդը նվաճել էր Մարտակերտի շրջանի մեծ մասը, գրավել էր Արծվաշենը, պատրաստվում էր կտրել Լաչինի միջանցքը, Երեւանում իշխանությունը խուճապի մեջ էր եւ էմիսարներ էր ուղարկում Բաքու՝ խաղաղություն խնդրելու»* - **հոդվածագիրը ստում է:**

2. *«Մեր ուժերի մասով, այդ կես տարին հսկայական ճեղքման շրջան էր: Մինչ այդ գործող թեթեւազեն կամավորական ջոկատներին եկան լրացնելու Հայաստանի Հանրապետության կանոնավոր զինված ուժերը, նախկին Խորհրդային Միությունից հավաքագրված բարձրորակ սպայական անձնակազմի ղեկավարությամբ: Ռուսաստանի Դաշնությունից սկսեց Հայաստան առաքվել ժամանակակից սպառազինություն, որը արագ չեզոքացրեց հակառակորդի թվային առավելությունը: Հակառակորդի մասով, մենք կարողացանք վարպետորեն խաղարկել նրա ներսում թուրքամետ եւ ռուսամետ բեւեռների միջեւ հակասությունները, եւ, չսպասելով այդ հակասությունների լուծ-*

մանը, հարձակվողական պատերազմ պարտադրեցինք, որում հակառակորդը, մեկ անգամ կորցնելով նախաձեռնությունը, չկարողացավ այլեւս ուշքի գալ: Տառացիորեն մեկ եւ կես տարի անց, մեր գերազանցությունը արդեն այն կարգի էր, որ հակառակորդը, 1994 թվականի ձմեռային գործողությունների ընթացքում հազարավոր զոհեր թողնելով ռազմաճակատում, ստիպված էր արդեն ինքը զինադադար խնդրել»: – **կարդում ես ու ապշում, թե ինչքան բան է ինքնիրեն տեղի ունեցել այդ ժամանակ**: Բանակը կազմավորվել է ինքնիրեն, Ռուսաստանից սկզբում 600, իսկ ընդհանուր առմամբ՝ շուրջ 1200 միջին եւ բարձր սպայակազմի հայազգի ներկայացուցիչներ Հայաստան են եկել իրենք իրենցով, հսկայական քանակությամբ զենքն իր ոտքով, կամքով ու նախաձեռնությամբ Ռուսաստանից ինքնիրեն առաքվել է Հայաստան եւ այլն: Այս ամենն իրականություն է դարձել ինքնիրեն: Հեղինակ չունեն այս գործերը: Բանականության նկատմամբ օրգանական ատելություն չունեցող ցանկացած մարդու, սակայն, հասկանալի է, որ նման հարցերն առանց իշխանության անմիջական կազմակերպման չեն կարող լուծվել: Որ իշխանությունն էր բոլոր այդ նախաձեռնությունների հեղինակն ու իրականացնողը: Բայց հոդվածագիրը, որ նման կարեւորագույն ու միաժամանակ նուրբ թեմայով հավակնոտ վերլուծություն է գրել, համառորեն չի նկատել դա: Պատճառը իրականում այլ տեղ է: Այս մտածողության կրողներին անհրաժեշտ է հասարակության աչքում արժեզրկել հաղթած Նախագահի մյուս կարեւորագույն թեզը. **որ մեր ազգի հաջորդ հաղթանակը խաղաղության հասնելն է՝ Արցախը մերը պահելով:** Իսկ այն արժեզրկելու համար անհրաժեշտ է հնարավորինս նսեմացնել նախագահ ու գերագույն գլխավոր հրամանատար Տեր-Պետրոսյանի ու նրա վարչակազմի դերը հաղթական պատերազմի ընթացքում: Նսեմացնել՝ ոտնահարելով տրամաբանության ու բնության օրենքները, խեղաթյուրելով հայտնի ու անհայտ (կոնֆիդենցիալ) պատմական փաստերը, որոնք վաղ թե ուշ փաստաթղթավորված տեսքով դառնալու են հանրության սեփականությունը: Սա է այս մտածողության հետեւում թաքնված իրական մոտիվը՝ արժեզրկել **հաղթողի դերը**, որ հասարակությունը մերժի **հաղթողի խոսքը** հաջորդ հաղթանակի մասին:

3. Հոդվածագիրը ուշադիր չի ընթերցել կամ ունկնդրել ինչպես Տեր-Պետրոսյանի համագումարյան ելույթը, այնպես էլ նրա կողմից հրապարակված պարզաբանումները: **Այսօր քննարկվող բանակցային փաթեթը Ռոբերտ Քոչարյանի ու Սերժ Սարգսյանի բանակցած փաստաթղթերն են: Տեր-Պետրոսյանն այդ ամենի հետ ոչ մի կապ չունի**: Չգիտես ինչու, հոդվածագիրն այս փաստը նույնպես չնկատելու է տալիս, փոխանակ հենց նրանցից պահանջեր իր «հաղթողական» ծրագրին դավաճանելու պատասխանը:

4. Եթե հոդվածագիրը իրեն համարում է քաղաքագետ-հետազոտող (ինչը լավ է), ապա միանգամից իր այդ համբավը ջուրն է գցում՝ Կոնգրեսին հեգնական պիտակելով «օր առաջ խաղաղության կուսակցություն»: Քանզի քաղաքագետը չի կարող համակրանք ու հակակրանք արտահայտել, նա պետք է վերլուծի ու հետազոտի իրերի դրությունը, քաղաքական գործընթացների տրամաբանությունն ու եզրակացությունները, իսկ որոշ դեպքերում՝ կանխատեսումներ անի: Այս մի բնորոշումը գործածելով՝ Ավետիք Չալաբյանը դադարում է լինել հետազոտող, եթե այդպիսին համարում է իրեն: Իսկ եթե իրեն համարում է քաղաքական գործիչ կամ քաղաքական թիմի անդամ (ինչը նույնպես լավ է), ապա համարձակություն պետք է ունենալ եւ հայտարարել, թե որ թիմի անդամ է: Պարզ համարձակություն:

***iLur.am**, 20.01.2017թ.:*

ՄԱՐԿ ՆՇԱՆՅԱՆ
(հրապարակախոս, վերլուծաբան)

ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ՝ «ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՆՔԻ» ՀԻՄԱՆ ՎՐԱ

Լեւոն Տեր-Պետրոսյանի վերջին ելոյթի բուռն արձագանքները պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասի:

• Կատարյալ տխմարություններ (ինչպես, օրինակ, այն «տեսակետները», թե Ղարաբաղի իշխանությունները պիտի դատի տան Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ տարածքային զիջումների մասին խոսելու համար),

• մանկամիտ հոխորտանքներ (ինչպես, օրինակ, փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանի «անդրադարձը»),

• եւ Տեր-Պետրոսյանի դիրքորոշման անընդունելի լինելը շատից-քչից տրամաբանական փաստարկներով հիմնավորելու փորձեր:

Հենց այս երրորդ խմբին էլ կանդրադառնանք, որովհետեւ առաջին երկու խմբերին անդրադառնալը խոճկոր խուզելու պես բան է. աղմուկը շատ կլինի, արդյունքը՝ զրոյական:

Եւ այսպես՝ ի՞նչ հակափաստարկներ են բերվում Տեր-Պետրոսյանի դիրքորոշման անընդունելիությունը հիմնավորելու համար: Հիմնականը սա է. եթե մենք կարգավորման առաջին փուլում որոշ տարածքներ զիջենք՝ դրանից Ղարաբաղի ռազմաքաղաքական վիճակը միայն ավելի կծանրանա, թշնամին նպաստավոր դիրքերում կհայտնվի ու նոր հարձակում կսկսի, իսկ միջազգային երաշխիքներին հավատալ պետք չէ՝ դրանք ընդամենը թղթի կտորներ են: Միանգամայն ճիշտ է. միջազգային երաշխիքներին հավատալ իսկապես պետք չէ: Այսինքն՝ միջազգային օրենքներին ապավինել չարժե. պետք է ապավինել բացառապես սեփական ուժերին: Սա արձանագրենք

եւ անցնենք առաջ: Հարց է ծագում՝ բա այդ դեպքում ինչո՞ւ են Հայաստանի իշխանությունները հայտարարում, թե մեծ ուրախությամբ կզիջեն ազատագրված տարածքները, բայց՝ միայն այն բանից հետո, երբ Ադրբեջանը կճանաչի ԼՂՀ անկախությունը կամ գոնե անկախության իրավունքը: Չէ՞ որ այդ ճանաչումը նույնպես թղթի կտոր է: Նրանք կճանաչեն, մենք տարածքները կվերադարձնենք, իսկ նրանք որոշ ժամանակ անց որեւէ առիթով նոր պատերազմ կսկսեն անկախ ԼՂՀ-ի դեմ: Եւ ի՞նչ, միջազգային օրենքնե՞րը պիտի պաշտպանեն մեզ: Բայց մենք արդեն ֆիքսել ենք, չէ՞, որ միջազգային օրենքներին ապավինել չի կարելի:

Հենց սրա համար էլ այս փաստարկը ներկայացնողները հաջորդ միտքն են առաջ քաշում՝ որեւէ բան զիջել չի կարելի, ազատագրված տարածքները մեզ են պատկանում պատերազմի օրենքով, եւ վերջ: Իսկապես տրամաբանական է հնչում, եւ լավ կլիներ, որ այդպես էլ լիներ: Միայն թե՝ եթե մենք առաջնորդվում ենք «պատերազմի օրենքով», դրանով իսկ համաձայնվում ենք, որ մեր հակառակորդները նույնպես առաջնորդվեն նույն օրենքով: Այսինքն՝ մենք նախապես համաձայնվում ենք, որ եթե, օրինակ, Ադրբեջանը կամ որեւէ այլ երկիր գրավի Ղարաբաղը կամ Հայաստանի մի մասը, մենք պիտի սուսուփուս ընդունենք դա ու համարենք, որ ամեն ինչ ճիշտ է: Ընդ որում՝ Ադրբեջանն, իհարկե, Ղարաբաղը գրավել չի կարող (ապրիլյան պատերազմը ցույց տվեց դա), բայց եթե հանկարծ Թուրքիան որոշի օգնել իր «կրտսեր եղբորը» ու հարձակվի Հայաստանի վրա, հնարավոր է՝ տարածքային կորուստներ ունենանք: Իսկ միջազգային նորմերին ապավինել, եթե հիշում եք, չարժե: Համ էլ՝ միջազգային ուժերի նավերը չեն կարող բարձրանալ Հայաստանի լեռները: Ու միակ խախուտ հույսն այն է, որ Ռուսաստանը թույլ չի տա դա:

Այսինքն ի՞նչ է ստացվում: Ստացվում է, որ մեր բացառիկ հայրենասերներն ու Հայաստանի անկախության նվիրյալները գերադասում են առաջնորդվել խաղի այնպիսի կանոններով, որոնք ենթադրում են Հայաստանի հավերժ կախվածություն Ռուսաստանից: Ընդ որում՝ շատ կո՛շտ կախվածություն: Որովհետեւ պատերազմի օրենքով առաջնորդվելու պատրաստակամությունը ենթադրում է նաեւ մշտապես պատերազմելու պատրաստակամություն, իսկ պատերազմելու համար, ի դեպ, նաեւ զենք է պետք, որը Հայաստանը չի արտադրում:

Իմիջիայլոց, մի քանիսի խելքին էլ փչել էր քննադատել այն միտքը, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանալին Ռուսաստանի ձեռքին է: Հակափաստարկն էլ սա էր՝ դա այդպես չէ, որովհետեւ իրականում Ռուսաստանի ձեռքին հակամարտության չկարգավորմա՛ն բանալին է: Հիմա դե արի ու սրանց բացատրիր, որ դա նույն բանն է, որովհետեւ եթե կա փակ դուռ, եւ ինչ-որ մեկը կարող է որոշել՝ բացել այն, թե ոչ, նշանակում է՝ բանալին նրա մոտ է (անկախ նրանից՝ ուզո՞ւմ է բացել, թե ոչ): Ենթադրենք՝ միջազգային բոլոր կառույցները ղարաբաղյան խնդրի կարգավորման բանալիների տրցակներ ունեն, բայց Ռուսաստանը թույլ չի տալիս այդ կարգավորումը: Հիմա ի՞նչ ստացվեց, ո՞ւմ մոտ է իրական բանալին:

Ինչեւէ: Փաստն այն է, որ Տեր-Պետրոսյանի ելույթը շատերին ստիպեց անդրադառնալ ղարաբաղյան կարգավորմանը. թե չէ մի տեսակ երկրորդ պլան էր մղվել: Դա էլ է արդյունք: Իսկ նախընտրական իրավիճակի վրա այդ ելույթի ազդեցությանը կանդրադառնանք մի ուրիշ անգամ:

***«Հորորդ իշխանություն»**, 23.12.2016թ.; **hayastan24.com**, 23.12.2016թ.:*

ՀԱՐՈՒԹ ՈՒԼՈՅԱՆ
(Աշխարհագրագետ, հրապարակախոս)

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՄԻԱՆՇԱՆԱԿՈՐԵՆ ՄՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱՄԵՆԱԱԶԴԵՑԻԿ ԳՈՐԾԻՉԸ

Նախ փաստենք, որ Լեւոն Տեր-Պետրոսյանի վերջին ելույթի հետեւանքով առաջացած «թեժ» քննարկումները ինքնին խոսում են այն մասին, որ Տեր-Պետրոսյանը միանշանակորեն մնում է հայաստանյան քաղաքական դաշտի ամենաազդեցիկ գործիչը, անկախ նրանից, թե ոմանց համար որքան ծանր է այս փաստի հետ համակերպվելը: Այլոց նման՝ ես նույնպես այս երկու օրերի ընթացքում փորձում էի Տեր-Պետրոսյանի ելույթի դրույթները քննադատող որեւէ փաստարկված ու տրամաբանության շրջանակներում շարադրված կարծիք կամ վերլուծություն գտնել, այնինչ այդպես էլ չհանդիպեցի նման գրառումների: Քննադատությունների մեծ մասը կամ հիմնովին հիմարություն էին, այսինքն՝ որեւէ առնչություն չունեին Տեր-Պետրոսյանի բուն ելույթի հետ, կամ էլ շարադրված էին Տեր-Պետրոսյանի ելույթի որոշ դրույթների ու մտքերի փաստացի աղավաղման հիման վրա: Բայց քանի որ որոշ մանիպուլյացիոն «քննադատություններ», այդուհանդերձ, արժանանում են «միամիտների» հավանություններին, հարկ եմ համարում հնարավորինս համառոտակի անդրադառնալ այդ «քննադատությունների» մի մասին:

1. Տեր-Պետրոսյանը իր ելույթում հերթական անգամ պնդում է, որ «հակամարտությունների կարգավորման այլ տարբերակ, քան փոխզիջումը, գոյություն չունի»: Այս մտքի քննադատները նախ փաստում են, որ Տեր-Պետրոսյանը այս թեմայով

որեւէ նորություն չի ասում, ապա եզրակացնում են, թե՝ «տեսեք, Տեր-Պետրոսյանը կրկին ցանկանում է Արցախը հանձնել»: Թե «փոխզիջում» կամ «զիջում ես մասը, մյուս մասը կարողանում ես պահպանել» պնդումները որքանով են խոսում Արցախը հանձնելու մասին, դա մի կողմ թողնենք, բայց որ այդ մեղադրանքները՝ ուղղված Տեր-Պետրոսյանին, կամ մեկ այլ ընդդիմադիր գործչի, ապրիլյան քառօրյա պատերազմից հետո այլեւս ակտուալ չեն, դա միանշանակ է: Ինչպես Տեր-Պետրոսյանն է նշում՝ բացի Սերժ Սարգսյանի վարչակազմի եւ նրա հենարանը հանդիսացող կուսակցությունների, «մյուս քաղաքական ուժերը, այդ թվում Հայ Ազգային Կոնգրեսը, կարծիք արտահայտելուց բացի, գործընթացի վրա ազդեցության որեւէ այլ լծակ չունեն»:

Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո Սերժ Սարգսյանը բազմիցս բառացիորեն խոստովանել է, որ ինքը ստորագրել է Արցախի մի քանի շրջան Ադրբեջանին զիջելու Կազանյան փաստաթուղթը: Այսինքն՝ տարածքների զիջման հետ համաձայն ու ապրիլին 800 հեկտար կորցրած իշխանություններ հանդուրժելու պայմաններում քննադատել Տեր-Պետրոսյանին կամ այլ ընդդիմադիր գործիչների նրա համար, որ նրանք փոխզիջումից են խոսում, առնվազն անլուրջ է: Առավել եւս այն դեպքում, երբ Տեր-Պետրոսյանի ներկայիս «թունդ» քննադատների որոշ հատվածը Սերժ Սարգսյանի զիջողական հայտարարություններին կամ ընդհանրապես չեն արձագանքում, կամ էլ սահմանափակվում են նվնվոցներով:

2. Տեր-Պետրոսյանը իր ելույթում խոսելով Արցախյան խնդրի լուծմանն ուղղված միջազգային ջանքերի մասին, մասնավորապես մատնանշում է «Ռուսաստանի գործադրած լուրջ ջանքերը», ապա հավելում, որ Ռուսաստանի դերը Արցախյան խնդրում Արեւմուտքը ոչ միայն գիտակցում, այլեւ՝ գնահատում է: Ահա այս ձեւակերպումից ոմանք հերթական «լուրջ» եզրակացությունն են արել, թե՝ «տեսեք, Տեր-Պետրոսյանը ռուսամետ է; նրա վարքը ոչնչով չի տարբերվում մեր իշխանությունների վարքից; նա էլ է ցանկանում, որ Հայաստանն ու Արցախը մշտապես կախված մնան Ռուսաստանից»...

Արցախի խնդրում Ռուսաստանի ներդրած ջանքերի արձանագրումը, ինչպես Տեր-Պետրոսյանը նշեց՝ «մարդկանց համակրությունների կամ հակակրանքների հետ որեւէ կապ չունի», այլ որ դա «իրականություն է»: Թե որքանով են Ռուսաստանի ջանքերը իրականություն, ընդամենը վերհիշենք երկու անառարկելի փաստ:

ա. Երբ ողջ Արեւմուտքը՝ ԱՄՆ-ն, Եւրոպան, Արցախի խնդրով զբաղվող Մինսկի խումբը ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին հորդորում էին դադարեցնել կրակը, արձագանք չկար: Վերջիվերջո հրադադարի պայմանավորվածությունը ձեռք բերվեց Մոսկվայում՝ Հայաստանի ու Ադրբեջանի ԶՈՒ գլխավոր շտաբների պետերի մասնակցությամբ:

բ. Ռուսաստանի ջանքերը բազմիցս դրական են գնահատվել թե Հայաստանի, թե Արցախի, թե Ադրբեջանի, եւ թե Արեւմուտքի կողմից: Կոնկրետ ապրիլյան քառօրյայից հետո «Ռուսաստանի ձեռնարկած ջանքերը բարձր է գնահատել» ոչ այլ ոք, եթե ոչ՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման:

Շարունակելի:

---

ilur.am, 19.12.2016թ.:

* * *

Լեւոն Տեր-Պետրոսյանին ուղղված «փաթեթային մեղադրանքի» սնանկությունը.— «Փոխզիջման այլընտրանքը պատերազմն է» եւ «Հայաստանը բնակչությունից դատարկվում է ոչ այնքան սոցիալական ծանր պայմանների, աղքատության, արդարության բացակայության եւ կոռուպցիայի, որքան պատերազմի վերսկսման տեւական վտանգի պատճառով»,– Տեր-

Պետրոսյանի կողմից արտահայտված ահա այս մտքերին հակադարձելու ոչ մի քաղաքական հիմնավոր փաստարկ չունենալով, որոշ լրատվականներ, վերլուծագանգեր ու քաղաքական ուժեր ու անհատներ Տեր-Պետրոսյանին փորձում են հակադարձել, այսպես կոչված, «սոցիալական հարցումների» արդյունքների միջոցով, դրանք ներկայացնելով որպես «ժողովրդի կամք»: Թե որքանով են այդ «սոցիալական հարցումների» հրապարակված արդյունքները հավաստի, դա մի կողմ թողնենք:

Նման թեմաներով հարցումները ոչ մի պարագայում ոչ միայն չեն կարող ժողովրդի, այլեւ՝ կոնկրետ այդ հարցումներին մասնակցած անձանց իրական կարծիքները ներկայացնել: Առավել եւս այն դեպքում, երբ այդ հարցումների հարցադրումները ինքնին «կեղծ» են շարադրված: Ո՞ր մի միամիտն է հավատում, որ ինչ-որ քաղաքացի հրապարակայնորեն պատասխանելով «դուք կո՞ղմ եք տարածքներ հանձնելուն», կամ՝ «դուք վախենո՞ւմ եք պատերազմից» հարցերին կտա դրական պատասխան: Գրեթե ոչ ոք:

Մի՞թե դժվար է իրարից տարբերել «պատերազմի վերսկսման տեւական վտանգ»-ն ու բուն պատերազմ ասվածը: Բուն պատերազմի ժամանակ դու կամա թե ակամա գնում ես «վա բանկ», եւ այդ ժամանակ «վախ» ասվածը իրոք տեղ չունի: Հուտ վտանգի դեպքում դու անում ես ամեն ինչ՝ չեզոքացնելու այդ վտանգը: Ցանկացած բանական էակ չի կարող չվախենալ պատերազմից: Պատերազմի վտանգից չվախենալու դեպքում դու ստիպված պիտի լինես չվախենալ նաեւ ահաբեկչությունից, չվախենալ զոհերից... Ու քանի՞ այդպիսի մարդ կա, որը չի վախենում սեփական ընտանիքների անդամների կյանքի համար: Ինչպես Տեր-Պետրոսյանն է նշել իր ելույթում. «Սա մեզանից ոչ ոք չի կարողանում հրապարակայնորեն խոստովանել, բայց յուրաքանչյուրի սրտում սա է նստած»:

Իսկ բուն պատերազմի վերաբերյալ Տեր-Պետրոսյանը հայտարարեց հետեւյալը. «Սեփական նախաձեռնությամբ սանձազերծված հաջորդ պատերազմում, երբ էլ այն պատահի, Ադրբեջանը, հաստատաբար, դառը պարտություն կկրի ու եւս մի քանի շրջան կկորցնի»:

Վերադառնալով «սոցիալական հարցումներին», եթե դրանք իրապես խոսում են այն մասին, որ Տեր-Պետրոսյանի արտահայտած մտքերի ու մտահոգությունների վերաբերյալ մեր ժողովրդի գերակշիռ մասը, իբր, բացասական ու հակառակ կարծիք ունի, ապա առաջարկում եմ այդ նույն հարցումները իրականացնել հետեւյալ հարցադրումով. «Դուք ցանկանո՞ւմ եք խաղաղություն»: Ու երբ այդ արդյունքները ամփոփվեն, հանկարծակի հուշտ չլինեք խոստովանել, որ ժողովրդի 99,99 տոկոսը ցանկանում է խաղաղություն, ուստի ժողովրդի 99,99 տոկոսը լիովին համաձայն է Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ:

***iLur.am**, 21.12.2016թ.:*

* * *

Ով՝ ով, բայց ոչ ԲՀԿ-ն, ոչ ՀՅԴ-ն, ոչ ՕԵԿ-ը, ոչ էլ 2008թ.-ին Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը պաշտպանած ու ՀԱԿ նախկին դաշինքի մեջ եղած մարդիկ ոչ բարոյական, ոչ էլ քաղաքական ոչ մի իրավունք չունեն երբեւէ քննադատելու Արցախի խնդրի վերաբերյալ Տեր-Պետրոսյանի «փոխզիջումային» դիրքորոշումը:

Միամտություն, կամ՝ կատարյալ հիմարություն է կարծել, թե 2007-2012թթ.-ին Տեր-Պետրոսյանի շուրջը համախմբված որեւէ անհատ կարող էր, այնպիսի համազգային խնդրի վերաբերյալ, ինչպիսին է Արցախի խնդիրը, հակառակ կարծիք ունենալ Տեր-Պետրոսյանի «փոխզիջումային» տեսակետի վերաբերյալ: Նրանց համար, ովքեր պնդում են, թե 1998թ.-ից հետո Տեր-Պետրոսյանի կողմից արված այժմյան շեշտադրում-

ները իրենց համար «նորություն» են, ապա, որպես օրինակ, նրանց առաջարկում եմ ընթերցել 2010թ.-ի ՀՀՇ համագումարում Տեր-Պետրոսյանի ելույթը*:

Ինչ վերաբերվում է ԲՀԿ-ին, ՀՅԴ-ին ու ՕԵԿ-ին, ապա նրանք, որպես տարբեր ժամանակահատվածներում կոալիցիա կազմած կուսակցություններ, իշխանության գործունեության համար, ՀՀԿ-ի հետ հավասարապես, կիսել են (ՀՅԴ-ի դեպքում՝ շարունակում են կիսել) քաղաքական պատասխանատվությունը:

Թե 2003 (ՀՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ), թե 2008 (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ), թե 2016թթ.-ի (ՀՀԿ, ՀՅԴ) կոալիցիոն հուշագրերում առանձին դրույթներով հստակորեն սահմանված է, որ

– հավաքական պատասխանատվության եւ խորհրդապահության սկզբունքները կիրառելի են բոլոր դեպքերում** (2003թ.),

– քաղաքական կոալիցիայի կողմերը հավաստում են իրենց կամքը եւ վճռականությունը կոալիցիայի նպատակների իրագործման համար եւ ստանձնում են քաղաքական պատասխանատվություն՝ իշխանության գործունեության համար*** (2008թ.),

– համատեղ են ստանձնվում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերի իրականացման պատասխանատվությունը****:

Այսինքն՝ 2003թ.-ից ՀՀԿ-ն, ՕԵԿ-ն ու ՀՅԴ-ն պատասխանատվություն են կրում Ռոբերտ Քոչարյանի օրոք վավերացված «Մադրիդյան սկզբունքներ» կոչվող փոխզիջողական համաձայնագրի համար, իսկ 2008թ.-ից նրանց դե յուրե միանում է նաեւ ԲՀԿ-ն, եւ այս անգամ արդեն, նրանք բոլորը պատասխանատվություն են կրում ոչ միայն փոխզիջողական «թարմացված Մադրիդյան սկզբունքներ»-ի, այլեւ՝ Սերժ Սարգսյանի կողմից վավերացված փոխզիջողական «Կազանյան» համաձայնագրի համար:

Այնպես որ մեր ժողովրդին մնում է մանիպուլյացիաներին չտրվել ու սառը դատողությամբ գնահատել, թե ի՞նչ բարոյական ու քաղաքական արժեք կարող են ունենալ նախկին ՀՀՇ-ականների, նախկին Կոնգրեսականների եւ ներկայիս ՀՀԿ-ԲՀԿ-ՀՅԴ-ՕԵԿ-ականների կողմից հնչեցվող քննադատությունները՝ ուղղված Տեր-Պետրոսյանի փոխզիջումային-խաղաղասիրական դիրքորոշմանը:

* *http://www.anc.am/?p=1787*

** *http://www.a1plus.am/3547.html*

*** *http://kornelij.livejournal.com/373346.html*

**** *https://news.am/arm/news/313522.html*

facebook.com/harut.uloyan/posts/10210561926711629. 22.12.2016թ.:

* * *

1. Սեյրան Օհանյանն իր վերջին (28.12.16) գրառման մեջ նախ «ՍՊԱՅԻՆ վայել բարձր պատասխանատվությամբ վստահեցնում» է, որ նա «իշխանական նախագիծ չէ», ապա հերքում է այն «լուրերը», թե իրեն ուղղորդում են ՀՀ առաջին, երկրորդ եւ գործող նախագահները:

Նախ՝ այդ երբվանի՞ց է քաղաքականության մեջ հիմնավոր համարվում ՍՊԱՅԻ խոսքը: Բացի այդ, ինչպես ինքն է նշում, նա քաղաքական հայտ է ներկայացրել, իսկ քաղաքական հայտ ներկայացնող անձի կողմից նման ոճի վստահեցումը անընդունելի է բոլոր առումներով:

Ո՞ր մի պարզագույն տրամաբանություն ունեցող մարդը կարող է կարծել, թե Սեյրան Օհանյանին ուղղորդում է Լեւոն Տեր-Պետրոսյանը: Բնական է՝ նման կարծիք ունեցող մարդ գոյություն չունի: Հարցադրման մեջ Օհանյանի կողմից Լեւոն Տեր-Պետրոսյանին Քոչարյանի ու Սերժի կողքը ներառելն ունի ընդամենը մի նպատակ՝ ավելի տպավորիչ դարձնել իր անձի «չեզոքությունը»:

Երբ խոսում են իշխանությունների կողմից ընդդիմության դաշտ նետվող կեղծ ընդդիմադիրների մասին, դա լիովին ըն-

կալելի է, բայց երբ փորձ է արվում տպավորություն ստեղծել, թե ընդդիմությունն է կեղծ ընդդիմություն ստեղծում, դա արդեն, Տեր-Պետրոսյանի ասած, ցնդաբանությունների շարքին է դասվում:

2. Ըստ երեւույթին, հակադարձելով Լեւոն Տեր-Պետրոսյանի այն մտքին, թե Արցախի հարցի լուծման բանալին գտնվում է Ռուսաստանի ձեռքում եւ որ հարցի կարգավորման ուղղությամբ Ռուսաստանը լուրջ ջանքեր է գործադրում, Օհանյանը իր նախորդ գրառման (26.12.16) մեջ հայտարարել էր հետեւյալը՝ «Ղարաբաղյան հարցի լուծման բանալին, ըստ իս, գտնվում է Երեւանում եւ Ստեփանակերտում»: Չնայած դրան, նույն Օհանյանը իր վերջին գրառման մեջ հայտարարում է՝ «Բարձր եմ գնահատում բոլոր միջազգային կառույցների եւ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ՌԴ-ի շահագրգռվածությունը եւ զսպող առաքելությունը խնդրի խաղաղ կարգավորման գործընթացում»:

Եթե Արցախի հարցի լուծման բանալին, ինչպես Օհանյանն է պնդում, գտնվում է Երեւանում եւ Ստեփանակերտում, ապա ի՞նչ կարիք կա հատուկ շեշտադրմամբ «բարձր գնահատել» Ռուսաստանի «շահագրգռվածությունը եւ զսպող առաքելությունը»: Ի դեպ, Տեր-Պետրոսյանը ընդամենը արձանագրում է Ռուսաստանի առաջնակարգ դերակատարությունը Արցախի հարցում, այնինչ Օհանյանն ու իր պես շատերը, ըստ էության, ոչ միայն արձանագրում, այլեւ «բարձր են գնահատում» այն:

3. Օհանյանի կողմից ինքն իրեն պետության անվտանգության հետ նույնացնելն ու, ըստ այդմ, իր հասցեին հնչեցված քննադատությունները որպես «պետության անվտանգությանը վնասող հայտարարություններ» որակելը միանգամայն խոսում են այն մասին, որ Օհանյանը, իրականում, ընդհանրապես չի գիտակցում, թե ինչ է նշանակում «քաղաքական հայտ» ներկայացնելը:

facebook.com/harut.uloyan/posts/10210630531106696. 29.12.2016թ.:

* * *

Պատահականությամբ պատմության ընթացքը պայմանավորելը խելագարություն է.— Փոխզիջման թեմայով բոլորի մտահոգության առարկան այն է, թե Ադրբեջանն այդ փոխզիջմանն էլ համաձայն չի, այլ ամբողջ Արցախն է իրենը համարում, ավելին՝ նույնիսկ հայտարարում է, թե Երեւանն էլ է Ադրբեջանինը: Ու, ըստ այդմ, պնդում են, թե ոչ մի երաշխիք չկա, որ փոխզիջումներից հետո Ադրբեջանը չի դադարելու ներկայիս քաղաքականությունը վարել:

1. Որքան Ադրբեջանն է հայտարարում, որ իրենց համար անընդունելի է «իրենց տարածքում» երկրորդ հայկական պետություն ունենալը, այնքան էլ մեր կողմից հայտարարողներ կան, որ Արցախի հարցը վաղուց լուծված է: Որքան Ադրբեջանն է հայտարարում, որ ամբողջ Արցախն է իրենը, նույնիսկ՝ Երեւանը, այնքան էլ մերոնք են հայտարարում, որ Հյուսիսային Արցախն էլ պիտի ազատագրենք, Դաշտայինն էլ, Բաքուն էլ ենք մենք կառուցել ու շուտով այնտեղ թեյ ենք խմելու՝ Ալիեւի մատուցմամբ:

Եթե Ալիեւը խոսում է այն մասին, որ Սեւանն էլ, Զանգեզուրն էլ ադրբեջանական տարածքներ են, ապա Սերժ Սարգսյանը՝ խոսելով ադրբեջանական ագրեսիայի մասին, հայտարարում էր, որ «հիմա էլ Ադրբեջանը մեզ սպառնում է ռազմական գործողություններով, վստահ եմ՝ եթե այդպիսի գործողություններ լինեն, մի քանի ամիս հետո ադրբեջանցիները բողոքելու են ոչ թե [«օկուպացված»] 20 տոկոսի, այլ 25, 30 տոկոսի մասին» (02.10.2013): Այսքանը՝ հռետորաբանության տեսանկյունից:

2. Փոխզիջումային գործընթացի տեսանկյունից: Եթե հայաստանյան կողմը պատրաստակամություն է հայտնում տարածքներ զիջել, ապա ադրբեջանական կողմը խոսում է Արցախին ինքնավարություն, ինքնակառավարում կամ ինքնավար հան-

ռապետության կարգավիճակ տրամադրելու մասին*: Բանակցային այս երկու գլխավոր դրույթները, այն է՝ տարածքների զիջումն ու Արցախին «միջանկյալ կարգավիճակ»-ի տրամադրումը, ընդհանուր առմամբ, ամրագրված են թե՛ Կազանյան**, թե՛ Մադրիդյան*** փաստաթղթերում:

3. Եթե մտահոգությունները կապված են նրա հետ, որ մեզ խաբելու ու «քցելու» են, քանի որ մեր իշխանություններն են խաբվող ու «քցվող», ապա այս դեպքում մենք Ադրբեջանից բողոքելու ընդհանրապես տեղ չունենք: Ադրբեջանն ի՞նչ մեղավոր է, որ մենք բացարձակապես չենք վստահում մեր իշխանություններին: Ու, եթե՝ այո, մտահոգությունները կապված են մեր իշխանությունների որակի հետ, ապա մենք առաջին հերթին պիտի փոխենք ու կարգի հրավիրենք մեր իշխանություններին, այլ ոչ թե վերացական հայտարարություններով «էս գլխից» համարենք, որ Ադրբեջանը մեզ «քցելու» է:

4. Իշխանություններին աջակցելու տեսանկյունից: Ինչպես Կոնգրեսի 2-րդ համագումարի ժամանակ հայտարարեց Լեւոն Տեր-Պետրոսյանը. «Ղարաբաղի հարցի լուծման պատասխանատվությունը եւս մեկուկես տարի դրված է լինելու Սերժ Սարգսյանի վարչակազմի եւ նրա հենարանը հանդիսացող կուսակցությունների վրա: ...Մի այնպիսի համազգային խնդրի լուծման հարցում, ինչպիսին Ղարաբաղյան հակամարտությունն է, խաղաղության եւ հաշտության կողմնակից բոլոր կուսակցությունները, քաղաքացիական կազմակերպությունները եւ մտավորական խավերը պարտավոր են զորավիգ կանգնել օրվա իշխանություններին, անկախ նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքից»****:

Ինչպես տեսնում ենք, քաղաքական ուժերի կողմից ՕՐՎԱ իշխանություններին աջակցելու մասով Տեր-Պետրոսյանը նախապայմաններ չի առաջ քաշում, քանի որ համարում է, որ նրանք «բարոյական պատասխանատվություն» պետք է ստանձնեն մի այնպիսի համազգային խնդրի լուծման հարցում, ինչպիսին Արցախի խնդիրն է: Սակայն ժողովրդի աջակցության մասով Տեր-Պետրոսյանը իշխանություններին ուղղված հստակ նախապայմաններ է ուրվագծում՝ «արտաքին վտանգի պահերին կարիքն ունենալով այդ աջակցության, նրա [Սերժ Սարգսյանի] գլխավորած վարչախումբը պարտավոր է որոշակի դրական քայլեր կատարել, դեմքով շրջվել դեպի ժողովուրդը, իրական պայքար մղել կոռուպցիայի, իրավապահ մարմինների կամայականությունների, մենաշնորհների սանձարձակության, ընտրակեղծարարության, պետական պաշտոնյաների ամբարտավանության դեմ»*****:

5. Ռեալպոլիտիկի տեսանկյունից: Ինչո՞ւ մենք պետք է զարմանանք Ադրբեջանի կողմից պարբերաբար ագրեսիաներ իրականացնելուց կամ Արցախի հարցի լուծումը պատերազմի միջոցով տեսնելու հեռանկարից: Մի պահ Հայաստանը դիտեք Ադրբեջանի տեսանկյունից: Բացի նախկին ԼՂԻՄ տարածքներից, վերջինս կորցրել է մոտավորապես ԼՂԻՄ-ի տարածքի չափ եւս մի քանի շրջան: ԼՂԻՄ-ից բացի, բոլոր մյուս շրջանները, չհաշված Լաչինի միջանցքը, փոխզիջման «առարկա» են հանդիսանում բոլոր բանակցային փաստաթղթերում: Այսինքն՝ մենք ուզենք, թե չուզենք՝ այդ տարածքները միջազգային հանրությունը համարում է «Ադրբեջանական տարածքներ»: Մինսկի խմբի համանախագահները, նույնիսկ, բացահայտորեն են այդ տարածքները Ադրբեջանին հանձնելու Հայաստանին ուղղված կոչերով դիմել: Ու այս իրականությունից ելնելով՝ ձեզ պատկերացրեք Ադրբեջանի փոխարեն: Տարիներն անցնում են, սակայն տարածքներն այդպես էլ չեն վերադարձվում: Էլ ինչի՞ մասին պիտի մտածեիք դուք՝ Ադրբեջանի փոխարեն, եթե ոչ՝ ամեն հնարավոր միջոցներով այդ տարածքները վերադարձնելու: Հայաստանը «տարածքները» գրավել ու խաղաղություն է ցանկանում, Ադրբեջանն էլ տարածքներ է կորց-

րել, խաղաղություն է ցանկանում, բայց միեւնույն ժամանակ «իր տարածքներն» է հետ ուզում: Պարզ չի՞, թե ում ցանկացած խաղաղությունը պիտի ավելի «նախապայմանային» լինի: Եթե սրան էլ ավելացնենք այն, որ Ադրբեջանը շատ լավ է պատկերացնում Հայաստանի ներքին վիճակը՝ 6 մլրդ արտաքին պարտքը, տարեկան 40-50.000 արտագաղթը, տնտեսության վիճակը եւ այլն, եւ այլն, ապա նա՝ Ադրբեջանը, վերջին հիմարը պետք է լիներ, որ ձեռքերը ծալած համակերպվեր «իր տարածքների» կորստի հետ:

6. Հնարավոր չնախատեսված զարգացումների տեսանկյունից: Չնախատեսված զարգացումների հիմնավորմամբ Արցախի հարցի հնարավոր լուծումը հետաձգելը նույնն է, եթե ենթադրենք՝ մի քանի տարի հետո հնարավոր է գերտերությունները ռազմական առճակատման գնան, Արցախի հարցն էլ նորից բռնկվի, էլ հիմա ինչո՞ւ ենք տանջվում, կամ՝ կարող է մի քանի տարի հետո մեծ երկնաքար է ընկնում Երկրի վրա, էլ Արցախի հարցը լուծելու իմաստը ո՞րն է:

Հնարավոր չնախատեսված զարգացումներով, այսինքն՝ պատահականություններով, քաղաքական իրադարձություններն ու պատմության ընթացքը պայմանավորելը ոչ միայն անպատասխանատվություն, այլեւ՝ խելագարություն է: Եթե ինչ-որ պատահականություններ պիտի կանխորոշեն խաղաղություն ասվածը, ապա այդ խաղաղությունը, որտեղ էլ լինի, երբեք չի հաստատվի:

* *http://www.azatutyun.am/a/28060855.html*

** *http://www.aniarc.am/2016/06/23/kazan-document-23-june/*

*** *http://www.aniarc.am/.../.../13/madrid-principals-armenian-text/*

***** *http://www.ilur.am/news/view/56849.html*

****** *http://www.ilur.am/n ews/view/53478.html*

***iLur.am**, 06.01.2017թ.:*

* * *

Տեր-Պետրոսյանը կարողանում է պայթեցնել լճացման եզրին գտնվող դաշտը.— «Ես ասում էի՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը միանշանակորեն մնում է հայաստանյան քաղաքական դաշտի ամենաազդեցիկ գործիչը, սակայն այժմ ընդունում եմ սխալս: Տեր-Պետրոսյանը ոչ միայն ամենաազդեցիկ գործիչն է, այլեւ, քաղաքականությամբ շատ, թե քիչ հետաքրքրվող մարդկանց մեծ մասի մոտ, նա, կամա, թե ակամա, թեկուզ ենթագիտակցաբար, ընկալվում է որպես Հայաստանի գործող նախագահ՝ այդ ընկալումից բխող դրական ու բացասական արձագանքներով:

Ցանկացած արտաքին ու ներքին քաղաքական իրադարձությունների ժամանակ մարդկանց մեծամասնությունը սպասում է ոչ թե Սերժ Սարգսյանի կամ այլ ինչ-որ մեկի, այլ, միանշանակ, Տեր-Պետրոսյանի ելույթին կամ հայտարարությանը: Ոչ մի այլ գործչի ոչ մի ելույթ չի արժանանում այդքան դրական ու բացասական գնահատականների: Այո, Տեր-Պետրոսյանը եզակի է նաեւ հենց այդ բացասական արձագանքներով, քանի որ ոչ մի այլ գործիչ չի արժանանում նման լրջագույն վերաբերմունքի՝ թեկուզ ամենասուր էմոցիոնալ քննադատությունների: Մնացած բոլոր մեր «լիդերների» ելույթներն ու հայտարարությունները արհամարհվում են, իսկ ամենալուրջ արձագանքները հնչում են բացառապես ծաղրի մթնոլորտում:

Ընդամենը անցած տարվա կտրվածքով.

– Ապրիլյան պատերազմի ժամանակ բոլորը խոսում էին համախմբվածության, ազգովի Արցախ մեկնելու պատրաստակամությունից: Հենց Տեր-Պետրոսյանը նույն նպատակով հանդիպում է Սերժ Սարգսյանի հետ, ապա մեկնում է Արցախ, քաղաքական դաշտը, բառիս բուն իմաստով, պայթում է:

– ՊՊԾ գնդի գրավման օրերին բոլորը խոսում են «Սասնա Ծռեր»-ի հերոս լինելու մասին, հետագա զոհերի բացառ-

ման ու խաղաղ հանգուցալուծման անհրաժեշտության մասին, բայց հենց Տեր-Պետրոսյանն է բացառապես նույն բանը հայտարարում՝ քաղաքական լեզվով, քաղաքական դաշտը, բառիս բուն իմաստով, պայթում է:

– Սերժ Սարգսյանը խոսում է Արցախի խնդրի մասին, բանի տեղ դնող չկա, բացահայտ խոսում է տարածքներ հանձնելու մասին, առավելագույնը՝ նվնվում են: Հենց Տեր-Պետրոսյանն է խոսում փոխզիջման հրամայականի մասին, արդեն որ երրորդ անգամ քաղաքական դաշտը, բառիս բուն իմաստով, պայթում է:

Ներկարացնելով, ցանկանում եմ խոստովանել, որ անձամբ իմ համար Տեր-Պետրոսյանի գլխավոր արժանիքը հենց այդ է, որ նա մշտապես կարողանում է պայթեցնել ծայրահեղ լճացման եզրին գտնվող մեր քաղաքական դաշտը: Առանց նրա լրջագույն ներգրավվածության, մեր քաղաքական դաշտի առանց այդ էլ աննախանձելի վիճակը տասնապատիկ անգամ ավելի խայտառակ վիճակում էր լինելու:

Այսօր նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ծննդյան օրն է: Շնորհավոր, մեծարգո պարոն նախագահ»:

iLur.am, 09.01.2017թ.:

* * *

Տեր-Պետրոսյանի դիրքորոշումը քննադատողները պարբերաբար մի մանիպուլյացիոն բացահայտ կեղծիք են շրջանառության մեջ դնում.— Արցախի խնդրի վերաբերյալ Լեւոն Տեր-Պետրոսյանի փոխզիջումային դիրքորոշումը քննադատողները պարբերաբար մի մանիպուլյացիոն բացահայտ կեղծիք են շրջանառության մեջ դնում: Տեր-Պետրոսյանի քննադատները հայտարարում են, թե, իբր, Տեր-Պետրոսյանը իր փոխզիջողական, «ժողովրդի կողմից մերժված» տեսակետները

1997–98 թթ.-ից սկսած՝ տարբեր եղանակներով փորձում է փաթաթել հասարակության վզին:

Բաց թողնելով «ժողովրդի կողմից մերժված» փոխզիջման տեսակետի վերաբերյալ բացառապես դեմագոգիկ-դատարկաբանական արձագանքները, որոնց մասին բազմիցս են անդրադարձներ եղել, խոսեմ բուն մանիպյուլացիոն կեղծիքի մասին:

Կեղծիքն այն է, որ Տեր-Պետրոսյանին ուղղված մեղադրանքի մեջ շեշտվում է 1997–98 թթ.-ը, այսինքն՝ ներկայացվում է այնպես, իբր թե Տեր-Պետրոսյանը փոխզիջման մասին առաջին անգամ հենց այդ թվականներին է խոսել: Սրանից բխող բուն մանիպուլյացիոն նպատակը հետեւյալն է՝ ամեն կերպ «ապացուցել», որ Տեր-Պետրոսյանը, նախքան իշխանության գալը, Արցախի հարցի վերաբերյալ այլ տեսակետ է ունեցել, իսկ հետագայում, իբր, որդեգրել է լրիվ «անակնկալ» մոտեցում: Ավելին, այդ մանիպուլյացիայի «տրամաբանությունից» ելնելով՝ շրջանառվում է նաեւ հետեւյալը՝ Արցախի հարցի վերաբերյալ Տեր-Պետրոսյանն էլ, Քոչարյանն էլ, Սարգսյանն էլ իշխանության են եկել այլ ծրագրերով, ապա իրականացրել են լրիվ այլը: Թե որքանո՞վ է այս պնդումը ճշգրիտ Քոչարյան-Սարգսյան զույգի համար, դա այլ թեմա է: Ինչ վերաբերում է Տեր-Պետրոսյանին ուղղված մեղադրանքին, այսինքն՝ թե որքանո՞վ են իրականությանը համապատասխանում այն պնդումները, թե Տեր-Պետրոսյանը միայն 1997–98 թթ.-ից է սկսել շրջանառության մեջ դնել փոխզիջման անհրաժեշտությունը կամ, եթե կուզեք, հրամայականը, ապա այդ կեղծիքը բացահայտելու համար անհրաժեշտ է ընդամենը ընթերցել 1997թ.-ը նախորդող ժամանակաշրջանում Տեր-Պետրոսյանի արտահայտած մտքերը: Որպես օրինակներ.

«Ես ասացի, որ իմ վերլուծություններն ինձ բերել են այն համոզման, որ այսօր առճակատման ստրատեգիան արդեն սպառել է իրեն, եւ ժամանակն է անցնելու փոխզիջումների

ստրատեգիային: Փոխզիջումների մասին խոսելով՝ ես չեմ վախենում իմ վարկը կորցնելուց: Իսկ դուք կարող եք ժողովրդի մեջ տարածել, որ ես դավաճանել եմ Արցախի գործին» (3.09.1990թ., երբ Տեր-Պետրոսյանը նախագահ չէր, ավելին՝ Հայաստանն էլ անկախացած չէր):

«Բանակցությունը տեղի է ունենում փոխզիջում ձեռք բերելու նպատակով:», 11.11.1992թ.

«Քանի դեռ Լեռնային Ղարաբաղում խաղաղություն չի հաստատվել, եւ չեն վերացվել Հայաստանի շրջափակումները, ոչ մի իշխանության, լինի ՀՀՇ-ական, դաշնակցական, թե կոմունիստական, չի հաջողվի քիչ թե շատ բարելավել հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը: Սա՛ է դրության իրական պատկերը, եւ սնանկ են այլ պատճառների փնտրտուքները:...

Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի կողմից ԵԱՀԽ-ի խաղաղարար ծրագրի ընդունումն առաջին լուրջ քայլը պետք է համարել խաղաղության հաստատման, արցախահայության անվտանգության եւ բնականոն կենսագործունեության ապահովման ու հիմնահարցի փոխզիջումային լուծման ճանապարհին:», 27.05.1993թ.

«Քանի դեռ չի լուծված արցախյան կնճիռը, Հայաստանի բնականոն զարգացումը հարցական է, եթե չասենք՝ անհնար:», 21.09.1993թ.

«Հետեւողականորեն հանդես գալ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի պաշտպանության եւ հարցի լուծման փոխզիջումային տարբերակի որոնման դիրքերից:», 31.08.1996թ. (Տեր-Պետրոսյանի նախընտրական ծրագիր)

Ինչպես տեսնում եք, Տեր-Պետրոսյանը փոխզիջման անհրաժեշտության մասին խոսել է ոչ միայն 1997–98 թթ.-ը նախորդող ժամանակաշրջանում, այլեւ՝ այն ժամանակ, երբ նա ժողովրդի 83 տոկոսի կողմից դեռ չէր ընտրվել նախագահ, իսկ Հայաստանն էլ դեռ անկախացած չէր: Ավելին, Տեր-Պետրոսյանը 2008թ.-ին նույնպես, իր նախընտրական ծրագրում խոսելով Արցախի խնդրի մասին, նշում էր, որ իշխանությունները պետք է հանդես գան «հարցի լուծման փոխզիջումային տարբերակի որոնման դիրքերից»:

Ինչ վերաբերում է այն խոսակցություններին, թե «փոխզիջում»-ը չի ենթադրում անպայման տարածքների վերադարձ, եւ խոսք կարող է գնալ միայն «ինչ-որ այլ» բանի (ենթադրում եմ՝ օրինակ՝ ընտանի կենդանիների) փոխզիջման մասին, ապա նման խոսակցությունները ոչ ռեալպոլիտիկի տեսանկյունից, ոչ բանականությունից ելնելով քննարկման առարկա չեն կարող լինել ընդհանրապես: Այնպես որ Տեր-Պետրոսյանին ուղղված այն «մեղադրանքը», իբր թե նա միայն 1997–98 թթ.-ից է սկսել փոխզիջումից խոսել, ու որ դա, իբր, «անակնկալ» է ընկալվել, ահա այդ ամենը ոչ թե զուտ «մոլորյալ» խեղաթյուրման արդյունք են, այլ, վստահաբար, նպատակաուղղված մանիպուլյացիոն կեղծիք:

***iLur.am**, 12.01.2017թ.:*

* * *

Ինքնորոշման սկզբունքի ամրագրման եւ արցախին բանակցությունների սեղանից դուրս մղելու մասին.— 2016թ.-ի ապրիլյան պատերազմից հետո բուռն քննարկումների առիթ էին հանդիսացել Արցախի ինքնորոշման իրավունքի եւ Արցախը բանակցությունների սեղանից դուրս մղելու հարցերը: Երբ դեռ տարիներ շարունակ, սկսած 2007թ.-ից, առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ահազանգում ու մտահոգություններ էր հայտնում այդ հարցերի վերաբերյալ, քաղաքական դաշտում կամ քար լռություն էր տիրում, կամ էլ, «լավագույն դեպքում», արձագանքները կրում էին հետեւյալ բնույթը. «Արցախի հարցը վաղուց լուծված է»:

1. Արցախի ինքնորոշման իրավունքի մասին: 2009թ.-ին Լ'Աքվիլայում Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահները Արցախի հարցի վերաբերյալ հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ խոսելով «Մադրիդյան» ծրագրի մասին, նշեցին, որ հարցի լուծման հիմնարար սկզբունքներն են ուժի չկիրառումը, տարածքային ամբողջականությունը եւ ժողովուրդների ինքնորոշումը (1): Այնուհետեւ Աթենքում ԵԱՀԿ համաժողովի ընթացքում եւս ընդունվեց համատեղ հայտարարություն, որտեղ կրկին շեշտվեցին վերոգրյալ հիմնարար սկզբունքները (2):

Ահա այդ «հիմնարար» սկզբունքներից ոգեւորված, մեր իշխանությունները, ԱԳ Նախարար Էդվարդ Նալբանդյանի շուրթերով, այդ հայտարարությունները գնահատեցին որպես «հայկական կողմի խոշոր ձեռքբերում»: Ավելին, Նալբանդյանը նաեւ հայտարարում էր, թե, իբր, նման հայտարարություններ առաջին անգամ են արվում, թե, իբր, առաջին անգամ է, որ ամրագրվել է ինքնորոշման սկզբունքը, թե, իբր, առաջին անգամ է, որ Ադրբեջանը համաձայնել է ինքնորոշման սկզբունքի ամրագրման հետ (3):

Նախ՝ փաստենք, որ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի ամրագրումը ինքնին ենթադրում է նաեւ տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքի ամրագրում: Համենայնդեպս, Արցախի հարցի վերաբերյալ բոլոր տիպի անկողմնակալ հայտարարություններում ու խոսակցություններում եթե խոսվում է ինքնորոշման սկզբունքի մասին, ապա, առաջին հերթին, մատնանշվում է տարածքային ամբողջականության սկզբունքը:

Տարիներ առաջ, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարում էր, որ այդ ինքնորոշման սկզբունքը, տարածքային ամբողջականության սկզբունքի հետ համատեղ, նոր չէ, որ այն ամրագրված է եղել դեռեւս 1996թ.-ի Լիսաբոնի բանաձեւում,

եւ որի ընդունման դեմ նա (Տեր-Պետրոսյանը) վետո (4) է կիրառել, ոմանք Տեր-Պետրոսյանին կամ չէին հավատում, կամ էլ, այլ դրդապատճառներից ելնելով, ուղղակի լռում էին: Որ ինքնորոշման սկզբունքը ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ամրագրված է եղել դեռեւս 1996թ.-ի Լիսաբոնի գագաթնաժողովի ժամանակ, դա պարզ կարդացվում է ԵԱՀԿ կայքում հրապարակված տվյալ գագաթնաժողովի ամփոփիչ փաստաթղթում, որտեղ մյուս երկու սկզբունքների (տարածքային ամբողջականություն, ուժի բացառում) հետ միասին նշվում է նաեւ ինքնորոշման սկզբունքը (5): Ավելին, փաստաթղթում նաեւ արձանագրվում է, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման հարցի շուրջ այդպես էլ չի հաջողվել համաձայնության գալ:

Ինքնորոշման եւ տարածքային ամբողջականության մասին սկզբունքները ամրագրված են նաեւ 1997թ.-ի «Փաթեթային» տարբերակում, որի առթիվ Հայաստանը լուրջ առարկություն է ներկայացրել, մասնավորապես հայտարարելով. «Հայաստանը, ինչպես հայտնի է, չի կարող հարցի կարգավորման հիմք ընդունել Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքն այնքան ժամանակ, քանի դեռ չեն ճշգրտվել Ադրբեջան-ԼՂ հարաբերությունները, եւ չի հստակեցվել ԼՂ քաղաքական կարգավիճակը» (6): Նույն թվականի «Փուլային» տարբերակում այդ երկու սկզբունքների մասին այլեւս խոսք չկա (7):

Թե ի՞նչ է նշանակում «տարածքային ամբողջականություն» եւ «ժողովուրդների ինքնորոշում» սկզբունքների համադրումը, դրա մասին Տեր-Պետրոսյանը հանգամանալից խոսել է դեռեւս 2012թ.-ին, մասնավորապես հայտարարելով. «Երբ տարածքային ամբողջականության եւ ինքնորոշման սկզբունքները դրվում են իրար կողք, դա նշանակում է՝ Ղարաբաղի ինքնորոշումը պետք է լուծվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում, այսինքն՝ ոչ ավելի, քան ինքնավա-

ություն Ադրբեջանի կազմում: Թող չխաբեն ոչ մեկին, ուրիշ բան չկա» (8):

Մի խոսքով, ինչպես տեսնում եք, մեր իշխանությունների կողմից պարբերաբար արվող այն հայտարարությունները, թե, իբր, ինքնորոշման սկզբունքը առաջին անգամ ամրագրվել է 2007թ.-ին «Մադրիդյան» փաստաթղթում, ապա, հաջորդիվ, այլ հայտարարություններում ու փաստաթղթերում, հիմնովին կեղծիք են:

2. Արցախին բանակցությունների սեղանից դուրս մղելու մասին: Երբ դեռեւս 2007թ.-ից Տեր-Պետրոսյանը հայտարարում էր, որ Արցախի հարցում հայկական կողմի ամենամեծ սխալը Արցախին բանակցությունների սեղանից դուրս մղելն էր (9), իշխանությունների արձագանքը սահմանափակվում էր նրանով, թե բանակցություններում ընդունված է ինքնորոշման սկզբունքը, որը խոսում է այն մասին, թե Արցախի ճակատագիրը որոշելու է Արցախը (3): Այսինքն՝ այն մասին, որ նույն այդ բանակցություններում ամրագրված է նաեւ տարածքային ամբողջականության սկզբունքը, իշխանությունները չէին խոսում, այլ մշտապես գեղեցիկ շրջանցում էին կատարում: Ավելի պատկերավոր ասած՝ կռուտիտ էին լինում:

Երբ 2016թ.-ի ապրիլյան քառօրյա պատերազմից հետո Տեր-Պետրոսյանը կրկին մատնանշեց, որ «Քոչարյանն է Ղարաբաղին զրկել հակամարտության իրավահավասար կողմի միջազգայնորեն ճանաչված կարգավիճակից» (10), նախկին ԱԳ Նախարար Վարդան Օսկանյանը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ փորձ արեց հերքել այդ իրողությունը, ավելին՝ հայտարարեց, թե, իբր, Արցախը բանակցություններից դուրս է մնացել դեռեւս 1997թ.-ի ապրիլից (11):

Բանակցությունների լիիրավ կողմ լինել նշանակում է մի բան, այն է՝ բանակցություններին մասնակցող այլ կողմերի հետ մեկտեղ հավասարազոր հնարավորություն ունենալ՝ ընդունել

կամ մերժել քննարկվող ցանկացած հարց, դիմել առաջարկություններով, առարկություններ հայտնել եւ այլն: Արցախը այդ բոլոր հնարավորություններն ունեցել է 1997թ.-ի ներկայացված թե՛ «Փաթեթային», թե՛ «Փուլային» փաստաթղթերի քննարկումների ժամանակ: Հենց Արցախն է, որ հանդիսանալով բանակցությունների լիիրավ կողմ, մերժել է այդ փաստաթղթերը: Արցախը բանակցությունների կողմ է հանդիսացել նաեւ 1998թ.-ի նոյեմբերին՝ «Ընդհանուր պետություն» կոչվող փաստաթղթի ներկայացման ժամանակ, հանդես է եկել պաշտոնական դիրքորոշմամբ եւ փաստաթղթի նախագիծն ընդունել է որպես բանակցությունների հիմք: Ի դեպ, «Ընդհանուր պետության» փաստաթղթում հատուկ դրույթով նշվում է, որ «Զինված հակամարտության դադարեցման մասին համաձայնագիրը կստորագրեն ԵՐԵՔ կողմերը, եւ դա ուժի մեջ կմտնի Մինսկի խորհրդաժողովի հավանությունից եւ ԵՐԵՔ կողմերի խորհրդարանների վավերացումից հետո» (12):

Այսինքն՝ ՀՀ նախագահի պաշտոնից Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից ամիսներ անց, առնվազն 1998թ.-ի նոյեմբերին, Արցախը դեռ հանդիսանում էր բանակցությունների լիիրավ կողմ, նույնիսկ Արցախի խորհրդարանի ձայնն էր լսելի համարվում: Այսինքն՝ այն պնդումները եւս, թե, իբր, Արցախը բանակցություններից դուրս է մղվել 1997թ.-ին՝ Տեր-Պետրոսյանի կառավարման ժամանակ, հերթական բացահայտ կեղծիքն են եւ որեւէ առնչություն չունեն իրականության հետ:

3. Ինքնորոշման իրավունքի եւ բանակցությունների լիիրավ կողմ լինելու մասին՝ ընդհանրացված: Ի՞նչ է բանակցությունների լիիրավ կողմ լինելը, եթե ոչ՝ ինքնորոշման իրավունքի ամրագրում: Մի՞թե այս պարզ բանը չէին հասկանում մեր իշխանությունները, երբ բանակցությունների սեղանից դուրս մղելով Արցախին, մխիթարվում էին ինքնորոշման սկզբունքի

ամրագրմամբ՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության սահմաններում:

Ինչպես վերեւում տեսանք, թե՛ 1996թ.-ի Լիսաբոնի բանաձեւի, թե՛ 1997թ.-ի «Փաթեթային» տարբերակի վերաբերյալ Հայաստանի առարկությունը կապված է եղել հենց Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի ամրագրման հետ: Այսինքն՝ Հայաստանի որդեգրած քաղաքականությունը շատ հստակ է եղել, այն է՝ քանի որ առանց տարածքային ամբողջականության սկզբունքի ամրագրման անհնար է ամրագրել ինքնորոշման սկզբունքը, ապա ավելի գերադասելի է ընդհանրապես այդ սկզբունքները չամրագրել, այնպես, ինչպես դա արվել է «Փուլային» տարբերակում (7), որտեղ խոսակցություն չկա ոչ տարածքային ամբողջականության, ոչ էլ ինքնորոշման մասին: Բայց, հակառակ դրան, այդ ժամանակաընթացի բոլոր փաստաթղթերը քննարկման են ներկայացվել նաեւ Արցախի իշխանություններին: Այսինքն, ավելի պարզ ասած, եթե Արցախը Հայաստանի ու Ադրբեջանի հետ համարժեք որոշումներ ընդունելու իրավունք է ունեցել, ապա դա ինքնին նշանակել է Արցախի ինքնորոշման սկզբունքի ամրագրում: Ահա թե ինչ ճակատագրական սխալ են գործել մեր իշխանությունները՝ Արցախին դուրս մղելով բանակցությունների սեղանից: Իսկ այժմ ոչ միայն ամեն կերպ արժեզրկում են նախկին ձեւաչափի էությունը, ոչ միայն, բացահայտ սուտ խոսելով՝ ինքնորոշման սկզբունքի ամրագրումը ներկայացնում են որպես աննախադեպ իրողություն, այլեւ իրենց խայտառակ արկածախնդրությունները ամենայն լրջությամբ փորձ են անում վերագրել Լեւոն Տեր-Պետրոսյանին:

(1) http://profil.am/?p=8594
(2) http://www.azatutyun.am/a/1892189.html
(3) օրինակներ՝ http://www.azatutyun.am/a/1893493.html
https://armenpress.am/arm/print/586147/
http://www.azatutyun.am/a/1892189.html

(4) https://www.youtube.com/watch?v=PjK1Duh2N9o
(5) http://www.osce.org/ru/mc/39543?download=true
(6) http://www.aniarc.am/2016/04/21/nk-package-1997-july/
(7) http://www.aniarc.am/20.../.../21/step-by-step-1997-december-nk/
(8) http://www.chi.am/index.cfm...
(9) http://www.levonpresident.am/?catID=39&contID=67
(10) http://www.ilur.am/news/view/53478.html
(11) http://www.aravot.am/2016/04/12/678891/
(12) http://www.aniarc.am/2016/04/22/common-state-1998-nk/
ռուսերեն տարբերակ՝ http://www.vn.kazimirov.ru/doc18.htm

***iLur.am**, 17.01.2017թ.:*

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ
(Պատմական գիտությունների թեկնածու)

ՊԱՏՄԱԿԱՆ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԽՈՍՈՒՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 1920 ԵՒ 1997-2017 ԹԹ.

Հայ ազգային կոնգրեսի համագումարում (17 դեկտեմբերի, 2016 թ.) Լեւոն Տեր-Պետրոսյանի «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» վերնագրով ելույթի բազմաթիվ արձագանքներում, կարծես թե, որեւէ անդրադարձ չկա հետեւյալ արձանագրմանը.

«Այն կարեւորագույն խնդիրը, որը շատ ավելի ուժեղ վիճակում կարող էինք լուծել 18 տարի առաջ, այժմ հարկադրված ենք լուծել անհամեմատ թուլացած վիճակում: Իսկ մի քիչ էլ հապաղելու պարագայում անխուսափելիորեն կհայտնվենք սրանից վատթար դրության մեջ, **կրկնելով 1920 թվականի արկածախնդրությունը, երբ, ձգտելով առավելագույն տարածքային ընդարձակման, կորցրինք Հայաստանի Հանրապետության ունեցած տարածքի մոտավորապես կեսը** (ընդգծումն իմն է – Ա.Ս.)»:

Որեւէ անդրադարձի բացակայությունը, հավանաբար, պայմանավորված է այն հանգամանքով, որ 1920թ. կատարվածը որպես փաստ, դրան տված գնահատականը եւ տարված զուգահեռը անվիճարկելի են: Դա, իրոք, այդպես է: Բայց այստեղ, մի այլ, **ոչ թե նմանության, այլ տարբերության տեսանկյունից,** կարեւոր ասելիք կա: Եւ այդ ասելիքն առավել համոզիչ դարձնելու գործում մեզ մեծապես կօգնի Առաջին հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին (ստորեւ մեջբերվող քաղվածքները նրա՝ 1923 թվականին ՀՅԴ մի խորհրդաժողովի ուղարկած զեկուցագրից է, որը հետո հրապարակվեց գրքով՝ «Դաշնակցությունն անելիք

չունի այլեւս» վերնագրով, հղումները՝ 1994 թ. Երեւանում կատարված վերահրատարակությանը):

* * *

Մեկ անգամ չէ, որ փոխզիջումների հիման վրա ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման խնդրի հետ կապված՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը զուգահեռ է անցկացնում 1920 թվականի հետ: Այստեղ մեջբերենք մեզ հայտնի միայն առաջին զուգահեռը՝ դեռ 1993 թվականին.

«Հայոց պետականության կայացման, Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման եւ ընդհանրապես ազգային գաղափարախոսության դրսեւորման ընդերքում այսօր ընթանում է անհաշտ պայքար քաղաքական մտքի երկու ուղղությունների՝ պատմական իրավունքի վրա հիմնված ավանտյուրիզմի եւ ռեալ իրականության վրա հիմնված ռացիոնալիզմի միջեւ:

Այդ պայքարը գոյություն է ունեցել նաեւ նախկինում, մասնավորապես 1918–1920 թվականներին՝ Հայոց առաջին հանրապետության օրոք: Դժբախտաբար, այն ժամանակ պայքարն ավարտվեց առաջին ուղղության հաղթանակով, որի հետեւանքով Հայաստանը կորցրեց թե՛ իր անկախությունը, թե՛ իր տարածքների զգալի մասը» (Ելույթ ՀՀՇ 5-րդ համագումարում, տե՛ս՝ **Լեւոն Տեր-Պետրոսյան**, Ընտրանի, Եր., 2006, էջ 384-385):

Հետագայում, տարբեր ելույթներում նույն զուգահեռին նա անդրադառնում է շուրջ մեկ տասնյակ անգամ:

Այս, ինչպես ընդունված է ասել, «պատմական դասի», վկայակոչումը հենվում է իրավիճակների եւ խնդիրների նմանության վրա: Սակայն, ինչպես ասացինք, **միայն նմանությունները չէ, որ էական են, ավելի էական ու խոսուն են նաեւ տարբերությունները**: Ընդ որում՝ առաջինը երբեւէ չի մանրամասնվել, երկրորդի մասին ընդհանրապես չի խոսվել: Ընդ որում՝ հենց վերջինն է ավելի շատ օգնում նաեւ հասկանալու Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մասին պատկերացումների ու համոզմունքի հիմքերը, ի սկզբանե նրա որդեգրած քաղաքական ուղեգիծը եւ այդ ուղեգծի մի դրվագ՝ դեկտեմբերի 17-ի վերջին ելույթի շարժառիթները: Վերոհիշյալ **տարբերությունները** ցուցադրելու եւ ավելի ակնառու դարձնելու համար նախ մանրամասնենք **նմանությունները**:

1920 եւ 1997-2017 թթ. նմանությունները

– Այն ժամանակ՝ հայ-թուրքական հակամարտության առարկա Արեւմտյան Հայաստանի խնդիրն էր քննվում միջազգային համաժողովներում: Հիմա՝ հայ-ադրբեջանական հակամարտության առարկա Լեռնային Ղարաբաղի խնդիրն է միջազգայնացված («Հիմա» բառի տակ միշտ հասկանանք 1997–2017 թվականների միջոցը):

– Այն ժամանակ՝ Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած կոալիցիայում որպես «փոքր դաշնակից», Թուրքիան պարտված կոալիցիայի անդամ էր, պարտված երկիր: Հիմա՝ Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմում Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը ռազմական հաղթանակներ են արձանագրել ու հասել շահեկան պայմաններում կնքված զինադադարի:

– Այն ժամանակ Հայաստանը ուներ Սեւրի պայմանագիրը՝ որպես բանակցություններում սակարկման առարկա, հիմա՝ պարտադրված պատերազմում 1988 թվականին ինքնորոշման հայտ ներկայացրած Լեռնային Ղարաբաղի շուրջ ռազմական հաղթանակների արդյունքում ստեղծված տարածքային անվտանգության գոտի:

– Այն ժամանակ էլ կար հակառակորդի հետ առճակատման քաղաքականությունից փոխզիջումներով հակամարտության խաղաղ կարգավորման անցնելու օբյեկտիվ հնարավորություն, հիմա էլ կա այդ հնարավորությունը:

1920թ. Թուրքիան առաջարկեց բանակցությունների միջոցով հայ-թուրքական հակամարտության կարգավորում: Հայաստանը մերժեց այդ առաջարկը: Ըստ Քաջազնունու՝

«Երբ սահմանի վրա զինական ընդհարումները սկսվել էին արդեն, թուրքերը առաջարկեցին մեզ տեսնել ու բանակցել: Մենք մի արհամարհական ժեստով մերժեցինք առաջարկը: Եւ դա ***մեծ հանցանք*** *էր: Ոչ այն մտքով, որ վստահություն կար, թե բանակցությունները հաջողվելու են անպատճառ, այլ այն մտքով, որ մի խաղաղ ելք գտնելը* ***անկարելի չէր*** *(անհավանական, բայց ոչ անկարելի): Համենայն դեպս, մենք որոշ շանսեր ունեինք թուրքերին խոսք հասկացնելու» (էջ 32):*

Խոսքը վերաբերում է 1920թ. ամռանը եւ աշնանը: Ավելացնենք նաեւ, որ աշխարհաքաղաքական իրավիճակին եւ զարգացման միտումներին քաջատեղյակ եւ սրտացավ մարդիկ, անգլիացի գործիչներ, խորհուրդ էին տվել, որ ավելի ճիշտ է Հայաստանն իր հարցերն անմիջական հարեւանների, այդ թվում՝ Թուրքիայի հետ կարգավորի անմիջական բանակցությունների միջոցով, ոչ թե սպասի Փարիզի միջազգային կոնֆերանսի որոշումներին: Դա նույնպես արհամարհվել էր:

Եւ ահա, Քաջազնունին հետին թվով արձանագրում-մեղադրում է.

«Մի փաստ մնում է անհերքելի, աղաղակող. մենք չենք արել այն ամենը, ինչ որ պետք է անեինք, պարտական էինք անելու՝ պատերազմից խույս տալու համար: Անկախ նրանից, թե որքան կհաջողեինք, մենք պետք է փորձեինք հաշտության լեզու գտնել թուրքերի հետ: Սա՛ է, որ չենք արել» (նույն տեղում) :

Ի՞նչ կարող էր շահել Հայաստանը՝ առավել ուժեղ վիճակում ընտրելով ոչ թե առճակատման, այլ փոխզիջումների միջոցով հարցի խաղաղ կարգավորման ռազմավարությունը: Մեջբերում Քաջազնունուց.

«Ի՞նչ պիտի առաջարկեին մեզ թուրքերը, եթե ընդունեինք բանակցելու իրավերը:

Հավանականորեն պիտի սկսեին Բաթումից ու Բրեստ-Լիտովսկից եւ ապա աստիճանաբար զիջելով՝ հասնեին մինչեւ 1914 թվականի սահմանները: Գուցե մի քայլ էլ եւ գնային, հրաժարվեին նաեւ Բայազետից ու Ալաշկերտից: Անհավանական է, որ սրանից ավելի զիջող լինեին նույնիսկ 1920թ. սեպտեմբերին: Փոխարենը, կպահանջեին, իհարկե, որ Հայաստանի կառավարությունը հրաժարվեր Սեւրի դաշնագրով նախատեսված իրավունքներից» (էջ 33):

Սա նվազագույնն է: Չի բացառվում, որ լիներ ավելին: Բայց անգամ այս դեպքում, ավելի ուշ հօգուտ Հայաստանի լուծված կլինեին նաեւ Նախիջեւանի եւ Լեռնային Ղարաբաղի հարցերը:

Առճակատման քաղաքականության շարունակման հետեւանքով սկսված պատերազմը ընդամենը երկու ամիս անց ավարտվեց ծանր պարտությամբ եւ Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագրով, ինչով Հայաստանը հրաժարվեց նաեւ Սեւրի պայմանագրից՝ ոչ միայն դրա դիմաց ոչինչ չստանալով, այլեւ կորցնելով ունեցածի կեսը:

Եւ այս գիտակցությամբ է, որ Առաջին հանրապետության առաջին վարչապետը խաղաղ կարգավորումից հրաժարվելով հնարավոր ձեռքբերելիքի շանսը կորցնելը գնահատում է, ոչ ավելի, ոչ պակաս, քան՝ **«հանցանք»** բառով.

«Ի՞նչպես կընդուներ այդպիսի մի առաջարկ Հայաստանի կառավարությունը:

Կմերժեր, անկասկած: Չէր ընդունի, չէր հանդգնի ընդունելու եւ կգերադասեր պատերազմը: Եւ այդպես կաներ ոչ միայն դաշնակցական Բյուրո-կառավարությունը, այլեւ ամեն մի ուրիշ հայ կառավարություն: Ընդգծում եմ այս հանգամանքը, որովհետեւ ***սրանով զգալիորեն սահմանափակվում է մեր կուսակցության հանցանքի չափը*** *(այստեղ եւ հետո ընդգծումներն իմն են- Ա.Ս.):*

Կառավարությունը չէր հանդգնի ընդունելու, որովհետեւ բոլոր քաղաքական կուսակցություններն ու խմբակցությունները, ազգային բոլոր դիվանագետները, կոչված եւ անկոչ հայրենիք փրկողները՝ թե երկրի ներսում, թե մանավանդ երկրից դուրս, բոլորը իբրեւ մի մարդ կըմբոստանային, կքարկոծեին, միաբերան դավաճան կհայտարարեին այնպիսի մի կառավարությանը: ***Սեւրի դաշնագիրը շլացրել էր բոլորիս աչքերը, կաշկանդել միտքը, մթացրել իրականության գիտակցությունը»****: Այսօր մենք հասկանում ենք, թե որքան շահած կլինեինք, եթե 1920թ. աշնանը՝ Սեւրի դաշնագրի գնով, անմիջական համաձայնության եկած լինեինք թուրքերի հետ: Բայց* ***այն ժամանակ չէինք հասկանում:*** *(էջ 33):*

Քաջազնունու վերջին այս խոսքին՝ մի դիտարկում:

Դրանում տրամաբանական հակասություն կա: Մի կողմից՝ ասում է, թե «**այն ժամանակ չէինք հասկանում**» (նկատի ունի՝ կառավարությունը չէր հասկանում, որ հնարավորը կշահեին թուրքերի հետ փոխզիջումներով հաշտության գնալով): Մյուս կողմից՝ կծու ու հեգնական տոնով խոսում նրանց մասին, ովքեր կարող էին ընդդիմանալ նման մի քայլի եւ «դավաճան» հայտարարել կառավարությանը. «բոլոր քաղաքական կուսակցություններն ու խմբակցությունները, ազգային բոլոր դիվանագետները, կոչված եւ անկոչ հայրենիք փրկողները՝ թե երկրի ներսում, թե մանավանդ երկրից դուրս»:

1920 թվականի օգոստոս–սեպտեմբերին «Սեւրով շլացած» Դաշնակցության հոխորտանքն ու առճակատման ուղեգիծը նոյեմբերին, ծանր պարտությունից հետո, **տրամագծորեն** փոխվեց՝ Թուրքիան հռչակվեց միակ բարեկամ, իսկ թուրքական կողմնորոշումը՝ միակ ճշգրիտը: Հռչակվեց «**հաշտությունից դեպի բարեկամություն**» կարգախոսը եւ «**նոր պատմական դարաշրջանի սկիզբ**» (տե՛ս Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Եր., 1994, էջ 241): Ընդամենը մի քանի ամիս առաջ հաշտության բանակցություններից եւ հակամարտության խաղաղ կարգավորումից հրաժարվող եւ հակառակորդի հետ հոխորտանքով խոսող նույն Դաշնակցությունն իր այդ վարքագծին ինքնասպան գնահատական տվեց՝ **«ախտավոր եւ կույր մեծամոլություն»** (տե՛ս նույն տեղում, էջ 245):

Ինչեւէ: Քաջազնունու վերջին խոսքի հիման վրա կարելի է արձանագրել եւս մի քանի նմանություն 1920-ի եւ 1997–2017-ի միջեւ.

1920 թվականին եւս երկրի առջեւ ծառացած թիվ մեկ քաղաքական խնդրի լուծման համար կար նույնպիսի հասարակական-քաղաքական մթնոլորտ, ինչպես հիմա (1990-ականներից ի վեր)՝ Ղարաբաղյան հակամարտության համար: Այն ժամանակ էլ հասարակության մեջ կային երկրի համար առաջնային քաղաքական հարցի՝ հակամարտության խաղաղ կարգավորման հակառակորդներ՝ կուսակցություններ (ընդդիմություն), հասարակական խմբեր, բազում «ազգային դիվանագետներ», տարատեսակ «հայրենիք փրկողներ» ոչ միայն երկրի ներսում, այլեւ Սփյուռքում: Հիմա էլ դրանց պակասը չկա թե՛ ներսում, թե՛ դրսում, եւ դրանք ավելի պակաս ագրեսիվ չեն եւ ավելի մեղմ պիտակներ չեն կպցնում:

Այն ժամանակ Սեւրի դաշնագիրն էր «շլացրել բոլորի աչքերը», «կաշկանդել միտքը», «մթացրել իրականության գիտակցությունը», հիմա՝ «ազատագրված տարածքները»:

Այն ժամանակ՝ «ոչ մի թիզ պակաս՝ Սեւրի դաշնագրով նախատեսված տարածքներից» կարգախոսն էր նվազագույնը, հիմա՝ «ոչ մի թիզ՝ «ազատագրված տարածքներից»:

Այն ժամանակ էլ կային առավելապաշտության հիվանդագին դրսեւորումներ՝ «Ծովից ծովի» տեսքով, հիմա էլ դրանք կան՝ նույնպիսի եւ ավելի մեծ հավակնություններով:

Այն ժամանակ էլ՝ իրատեսության հիմքի վրա հարցը լուծողները բոլորի կողմից պիտի «դավաճան» բառով պիտակավորվեին, հիմա էլ նույնն է:

Իսկ ո՞րն է տարբերությունը

Առաջին.

Դաշնակցական կառավարությունը **կա՛մ չունեցավ անհրաժեշտ քաղաքական եւ պետական մտածողություն եւ «չհասկացավ»,** թե որն է ճիշտ քայլը, կա՛մ **տեղի տվեց հասարակական կարծիքի կողմից «դավաճան» հռչակվելու եւ իշխանությունը կորցնելու վտանգի առջեւ**: Երկուսն էլ խայտառակություն է, երկու դեպքում էլ քաղաքական ուժն իրավունք չունի ստանձնելու երկրի իշխանությունը եւ մի ողջ ժողովրդի ճակատագրի պատասխանատվությունը: **Դրա հետեւանքով հայ ժողովուրդը 1920թ. կորցրեց հնարավոր ձեռքբերելիքի կեսը: Չլիներ այդ հանգամանքը, այսօր մենք կունենայինք կրկնակի մեծ Հայաստան:**

Ի տարբերություն 1920 թ. իշխող կուսակցության, 1997 թվականին Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ նրա ղեկավարած քաղաքական ուժը **քաղաքական եւ պետական մտածողություն դրսեւորեց, չընկրկեց ամեն տեսակ հասարակական հակազդեցությունների եւ պիտակավորումների, նաեւ իշխանությունը կորցնելու վտանգի առջեւ, քաջություն ունեցավ**

վստահորեն գնալ պետական շահի թելադրած ճանապարհով: Եւ գնաց մինչեւ վերջ, անգամ այն բանից հետո, երբ նրան անակնկալ ընդդիմացան նույն քաղաքական թիմի առանցքային մի քանի պաշտոնյաներ: Չլիներ նրանց այդ ընդդիմացումը, Լեւոն Տեր-Պետրոսյանն իր ղեկավարած քաղաքական ուժի հետ միասին, ի հեճուկս ամեն տեսակ խոչընդոտների, լուծելու էր խնդիրը՝ քաջ գիտակցելով, որ դրանից հետո նաեւ կորցնելու է իշխանությունը: **Բայց այդ գնով Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղն այսօր լինելու էին բոլորովին այլ երկիր՝ բազմամարդ, ապահով, զարգացած եւ բարգավաճ:**

Ընդ որում՝ եթե 1920-ին հայ-թուրքական հակամարտությունը փոխզիջումներով կարգավորելու սակարկության առարկան ընդամենը մի **փաստաթուղթ էր՝ վիրտուալ տարածքներով**, հիմա՝ Ղարաբաղյան հակամարտությունը փոխզիջումների հիման վրա կարգավորելու առարկան **իրական տարածքներ** են: Այսինքն՝ նման քայլ անելու համար 1997-ին շատ ավելի մեծ քաղաքական համարձակություն եւ կամք էր պետք, քան 1920-ին:

Ոչ միայն Քաջազնունին, այլեւ ուրիշներ, հետին թվով, 1920-ին կատարվածի համար, որպես արդարացում, ասում են՝ «**այն ժամանակ անհնար էր կանխատեսել**»: Բայց սա ոչ թե արդարացում, այլ տվյալ ուժի քաղաքական սնանկության մի խոստովանություն է: Ներկայով զբաղվում է վիճակագրությունը՝ հավաքում, վերլուծում, գնահատում է այն, ինչ կա այսօր: Անցյալով պատմագիտությունն է զբաղվում՝ հավաքում, վերլուծում, գնահատում է այն, ինչն արդեն տեղի է ունեցել: Քաղաքականությունը այսօրվա եւ երեկվա իրողությունների, աշխարհաքաղաքական անցուդարձի եւ տասնյակ այլ հանգամանքների հաշվառման ու վերլուծության հիման վրա **հաշվարկում, կանխատեսում է վաղը՝ ապագան**: Եթե իրողություն-

ների հաշվառման եւ հաշվարկի հիման վրա կանխատեսման կարողություն չունես՝ իրավունք չունես քաղաքականությամբ զբաղվելու: Կամ՝ դու իրականում քաղաքականությամբ չես զբաղվում, այլ Աստված գիտի, թե ինչով: 1920-ին իրատեսական հաշվարկներ անելու ունակ մեկը չգտնվեց: 1997-ին արված հաշվարկները եւ կանխատեսումները լիակատար իրականացան:

Երկրորդ.

1920-ին ո՛չ Հայաստանի իշխանության մեջ ու քաղաքական դաշտում, ո՛չ հասարակության մեջ շատ թե քիչ առարկայական ձեւով չդրսեւորվեց պետական մտածողության եւ քաղաքական պատրաստության գեթ մի օրինակ: Այն ժամանակ ուրիշների նվիրած մի փաստաթուղթ, Քաջազնունու խոսքով՝ «**շլացրել էր բոլորի աչքերը, կաշկանդել միտքը, մթացրել իրականության գիտակցությունը**», հիմա, 1997-ին իշխող քաղաքական ուժի աչքերը **չէին շլացել իր իսկ ձեռք բերած հաղթանակներով, նրա միտքը մնաց չկաշկանդված, պահպանեց իրականության գիտակցությունը** ու վստահորեն գնաց անհրաժեշտ քայլին: Դրա ցայտուն ապացույցն իշխանության բարձր մակարդակի չորս տասնյակից ավելի պաշտոնյաների հրաժարականն էր հանրապետության նախագահի հետ՝ որպես քաղաքական սկզբունքին հավատարմության նշան: Քաղաքական որոշակի հասունություն դրսեւորեց նաեւ հայաստանյան հասարակությունը. ճիշտ է՝ մի մասը լուռ գայթակղվեց «հաղթողականների» ծրագրերով, բայց, այդուամենայնիվ, չմիացավ աղմկարարների՝ «պարտվողականության», «Ղարաբաղը ծախելու» եւ այլ վայնասունին: **Իսկ այսօր՝ 2017 թվականին, ավելին է.** դատելով Լեւոն Տեր-Պետրոսյանի դեկտեմբերի 17-ի ելույթի՝ տարբեր խավերի մարդկանց բուռն արձագանքներից, հասարակությունը քաղաքական պատրաստության շատ ավելի բարձր մակարդակ ունի՝ հենված, անշուշտ, նաեւ անցած երկու տասնամյակի դառը փորձի վրա:

Երրորդ.

Եւս մի տարբերություն, որքան էլ այն կթվա, թե 1920 թվականի հետ համեմատության ցայտուն արտահայտված եզր չունի:

Ոչ միայն որպես իշխանության ղեկավար 1997–98-ին, այլ նաեւ **որպես ընդդիմության առաջնորդ**, 2007 թվականից ի վեր, Լեւոն Տեր-Պետրոսյանի ու նրա ղեկավարած քաղաքական ուժի համար Ղարաբաղյան հակամարտության խնդրի լուծումն առաջնային է, ինչի ապացույցը նա բազմիցս է տվել թե՛ հրապարակային ելույթներով, թե՛ գործնական քայլերով՝ այդ լուծման համար պատրաստ ցանկացած օժանդակության եւ զոհողության: **Այլ կերպ չէր կարող եւ չի կարող լինել պետական գործչի եւ պետական մտածողության դեպքում**: Նրա վերջին ելույթն էլ «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» վերնագիր-բանաձեւով, այդ խնդրի լուծմանը նպաստելու անխաթար շղթայի հերթական մի օղակն է: Նախընտրական թոհուբոհում՝ գուցեեւ ի վնաս իրեն ու իր ղեկավարած քաղաքական ուժի:

iLur.am, 03.02.2017թ.:

ՆԱՐԵԿ ՍԱՐԳՍՅԱՆ
(Երաժիշտ, հրապարակախոս)

ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԵՒ ՀԱՀՐԱԽՈՍՆԵՐԸ

Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի օրը ծնված երեխաներն արդեն ավարտել են դպրոցը: Սակայն, «Երկիրը ծախելու» մասին խոսակցությունները շարունակվում են առ այսօր: Ըստ էության սրանում արտառոց բան չկա, նախագահների մեջ էլ այս առումով Տեր-Պետրոսյանը ամենեւին միայնակ չէ:

Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզիի 2007թ.-ի նախընտրական արշավի մասին ասեկոսեներ տարածվեցին, թե իբր այն ֆինանսավորել է Լիբիայի առաջնորդ Մուամար Քադաֆին: Նույնիսկ նշվում էր փոխանցված գումարի չափը՝ 50 մլն եւրո: Լրագրողական բազմաթիվ հետաքննություններ, ֆիլմեր, տասնյակ հարցազրույցներ, ամեն ինչ արվեց, եւ ո՛չ մի արդյունք: Ավելորդ է ասելը, որ եթե լիներ այդ ծանր մեղադրանքի չնչին ապացո՛ւյց իսկ, ապա Սարկոզին ֆրանսիական դատարանի առաջ ամենադաժան պատասխանատվությունը կկրեր: Բայց փաստեր չկային, իսկ «Սարկոզի-Քադաֆի» թեման ծամվել էր այնքան, որքան որեւէ քաղաքական թեմա կարող է ծամվել միայն Ֆրանսիայում:

Եւ ահա մի քանի շաբաթ առաջ Սարկոզիի վերջին պարտությունից հետո տեսագրված հրաժեշտի ելույթը տեղադրված է համացանցում: Տեսանյութի տակ՝ մեկնաբանությունների բաժնում մի քաղաքացի գրել է. «Հը, պարտվելը ո՞նց է: Քադաֆին էլ չկա՞, որ փող տա՝ նախագահ դառնաս»:

Ամեն տեղ էլ սեփական կարծիքն ու իրականությունը նույնացնող մարդիկ կան, որոնց համար փաստերը ոչինչ չեն նշանակում: Այդ մարդկանց հետ զրուցելիս մեկընդմիշտ պետք է մոռանալ «փաստարկ» բառը: Որովհետեւ եթե հարյուր փաս-

տարկը չի համոզել մարդուն, ապա հարյուրմեկերորդ փաստարկը նույնպես չի համոզի:

Բայց կարեւոր հարցը այլ տեղում է. արդյո՞ք անհիմն մեղադրող բոլոր մարդկանց նույն արշինով չափելը ճիշտ կլիներ: Իմ կարծիքով՝ ոչ: Ավելին, դա խառնակություն կլիներ՝ նույնիսկ եթե չգիտակցված: Եւ ահա թե ինչու: Գոնե Հայաստանում մենք տեսնում ենք բազմաթիվ ազնիվ մարդկանց, որոնք հոգսերի ու անարդարության տակ կքած հասել են հուսահատության եզրին: Տառապանքը անտանելի է, եւ շատերի հնչեցրած մեղադրանքները հաճախ ընդամենը անզորության ճիչ են՝ ի պատասխան իրենց բաժին հասած դառնությանը: 2008-ին Տեր-Պետրոսյանի աջակիցների զգալի մասը նույն այդ մարդիկ էին՝ ազնիվ հայ մարդիկ: Վաղվա Ազատ Հայաստանը նույնպես այդ մարդիկ են կերտելու: Տառապող մարդու անարդար մեղադրանքի հանդեպ ներողամիտ լինելը ցանկացած քաղաքական պատասխանատուի սուրբ պարտականությունն է:

Բայց կա նաեւ անհիմն մեղադրողների մի խումբ, որը Տեր-Պետրոսյանին սեւացնել փորձելու իր պատճառներն ունի: Նրանք ոչ մի կապ չունեն ո՛չ տառապանքի եւ ո՛չ էլ ազնվության հետ: Ինչպիսի Դեմքով» էլ նրանք ներկայանան՝ իբրեւ «Քաղաքագետ», իբրեւ «Լրագրող», իբրեւ «Փորձագետ» թե մեկ այլ բան, միեւնույն է, ***զազրախոսությունն*** է այդ խմբի «Մասնագիտական» աշխատանքը, որով նրանք իրենց ապրուստն են վաստակում:

Լավ նորությունն այն է սակայն, որ պատմությունը ըստ էության չի նկատում այդպիսիների գոյությունը: Հետեւաբար, ո՛չ մի բամբասանք կամ զրպարտություն ի վիճակի չէ ստվերելու առաջին նախագահի վաստակը: Ո՛չ մի ուժ չի կարող պատմությունից ջնջել, որ հենց Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ էր, որ հայ ժողովրդին վերջին հարյուրամյակների

ընթացքում հաջողվեց գրեթե մեկուկես անգամ ընդարձակել իր կենսական տարածքը: Սա փաստ է, Տեր-Պետրոսյանին ատողների համար՝ անտանելի, իսկ հայ ժողովրդի համար՝ հրաշալի մի փաստ: Եթե Տեր-Պետրոսյանը ուրիշ ոչինչ արած չլիներ էլ, միայն այս վաստակն արդեն պատմական է:

Պատմությունն ընթանում է իր սովորական հունով, եւ Տեր-Պետրոսյանին զրպարտողներն ընդամենը իրենք իրենց ծաղրանկարն են նկարում: Լավագույն դեպքում նրանցից ոմանց պատմությունը հիշելու է, ինչպես հիշում է ստալինիզմի դարաշրջանի մատնիչներից ոմանց անունը: Այդպիսին էր, օրինակ, «Ոսկերչյան» ազգանունով խորհրդային ռեժիմի մի մակաբույծ «Գրաքննադատ», որը ամբողջ կյանքում զբաղված էր լուսավոր մարդկանց անունը մթագնելով:

Սակայն, հիշվելու պատվին որպես կանոն արժանանում են քչերը: Նրանց մեծ մասին սպասում է պատմության աղբանոցը:

***iLur.am**, 19.12.2016թ.:*

ՍԻՄՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ
(Լրագրող)

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՁԳԵԼ Է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՑԱՆՑԸ

ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի համագումարյան ելույթից անմիջապես հետո ցանկություն կար գրելու այս մասին, ինչ տպավորություն ստացել էինք, սակայն սոցիալական ցանցերում մեկնաբանություն-որակումները զարմացրել ու մակերեսայնության առումով զայրացրել էին, նյութս կիսատ էր մնացել սեւագրում:

Թերեւս մեր հետեւողական ընթերցողները կհավաստեն, որ 2008 թ.-ից հետո Լեւոն Տեր-Պետրոսյանի երկրպագուն չենք եղել ու չենք, սակայն նախանախընտրական այս թոհուբոհում նրա ելույթն ու դրա ուղղվածությունն անկեղծ վերարթնացրեց հետաքրքրությունը նրա հանդեպ: Որեւէ կերպ չհամաձայնելով ֆեյսբուքյան շատ ստատուսագրերի կարծիքներին, էլ չենք ասում Նախագահին դասեր տվողներին ու դավաճան անվանողներին, զարմանում ենք, որ որեւէ մեկն այդպես էլ հարց չտվեց, թե ինչո՞ւ կրկնվեց նախորդ տասնամյակում արտահայտված միտքը պատերազմի, թե՝ խաղաղության մասին:

Քաղաքական կուլիսներում խոսակցություններն այն մասին, որ ՀԱԿ-ն, ըստ էության, Սերժ Սարգսյանի հետ դաշն է կնքել՝ 2017թ. ապրիլին կայանալիք ընտրությունների արդյունքում խորհրդարանում հայտնվելու համար, թերեւս որեւէ կերպ չեն արդարացնում նման բովանդակությամբ ելույթը:

Մեր տպավորությամբ, Լեւոն Տեր-Պետրոսյանը պարզապես նախընտրական թոհուբոհը տեղափոխեց պատկերավոր ասած՝ վոլեյբոլի խաղադաշտ ու ձգեց քաղաքական ցանցը,

որի մի կողմում իրենք՝ ՀԱԿ-ականներն են առայժմ ու իրեն նվիրվածները, մյուսում մնացած բոլոր քաղաքական ուժերը, որոնց ռեսուրսներն ու հնարավորությունները մեծ են ու շատ, սակայն խաղը սկսվել ու սիրողական մակարդակով շարունակվում է միայն իրենց՝ մարդաշատ կիսադաշտում՝ շրջան կազմած, միմյանց միջեւ սիրողական վոլեյբոլ խաղալով ու գնդակը բաց թողողներին նստացնելով՝ գլխներին բամփելով:

Մինչդեռ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի քաղաքական, իսկ այս դեպքում նաեւ սոցիալական հաշվարկները տեղում են եւ մոտ ապագայում, երբ սկսեն գործել, մյուս կիսադաշտից շատերը այդ մասին կհասկանան ու կխոստովանեն շատ ավելի ուշ: Ինչպես՝ 2007 թ. հոկտեմբերից հետո մինչեւ ՀՀ նախագահական ընտրությունների ավարտը, երբ յուրաքանչյուր անգամ Ազատության հրապարակում Լեւոն Տեր-Պետրոսյանը ելույթ էր ունենում ու դրան հաջորդող ամբողջ շաբաթվա ընթացքում իշխանական խամաճիկները, մունետիկներն ու կամակատարները նույն բանը կրկնում ու ըստ իրենց մակարդակի որակավորում էին: Միայն ամեն բան ավարտվելուց հետո ոմանք գլխի ընկան այդ մասին ու անթաքույց խոստովանեցին ԱԺ միջանցքներում: Նույնը հիմա է կրկնվում, սակայն շարունակելով իրենց բոսսին արջի ծառայություններ մատուցել, էլի կույր են շատերը եւ անհաղորդ իրականությանը:

Իրականում հանրությունը, հատկապես այն հատվածը, որոնց ընտանիքներում դեռահաս տղաներ կան, ովքեր իսկապես խաղաղության կողմնակից են, բայց ոչ իրենց արժանապատվության հաշվին, ովքեր ցավոք, զզվել են Ղարաբաղից էլ, ղարաբաղցիներից էլ, կամաց-կամաց ձգվում է դեպի Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Առաջինները՝ չեն ուզում արտագաղթել Հայաստանից եւ միայն այն պատճառով, որ իրենց տղան կամ տղաները բանակ չգնան՝ Ղարաբաղ, առաջին գիծ չընկնեն:

Երկրորդները՝ հասկանում են, որ Հայաստանը հայտնվելով ԵՏՄ-ում (ցավոք, դրա կողմնակիցներից է նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանը – ՄԻՏՔ), դուրս մնալով տարածաշրջանային բոլոր տեսակի միջազգային տնտեսական նախագծերից ու անողնաշար արտաքին քաղաքականության արդյունքում, գիտակցում են, որ միեւնույն է, Ղարաբաղի խնդիրը լուծվելու է փոխզիջումների արդյունքում, ուրեմն՝ ինչո՞ւ չսկսել հիմա:

Երրորդները՝ պարզապես զզվել են անցած 18 տարիների ընթացքում ղարաբաղյան կլանի Հայաստանում հայտնվելուց, ալան – թալանից, ամենաթողությունից, կեղեքումներից ու հետապնդումներից: Ցավոք, դրա արդյունքում բացասական վերաբերմունք է դրսեւորել նաեւ Ղարաբաղի ու ղարաբաղցիների հանդեպ: Իսկ առհասարակ, մեր հասարակության մեջ կարծես բացասական երեւույթներից է նաեւ ազգին ցի-երի վերածելու հակումը:

Այս ամենի արդյունքում Լեւոն Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ ՀԱԿ-ն իհարկե մեծամասնություն չի կազմի ապագա կառավարման համակարգի գլուխը հանդիսանալիք խորհրդարանում, սակայն առայժմ ամբողջ նախընտրական պայքարը դուրս է եկել դրա համար իշխանությունների բեմադրությունից ու ՀՀ առաջին նախագահը թելադրում է այլ խաղի կանոններ: Երբ հստակեցվեն դաշինքներն ու ընտրություններին մասնակցող ռեյտինգայինները, միմյանց միջեւ վոլեյբոլ ու դնգստոցի խաղացողները կշրջվեն ու կհասկանան, որ որքան իրենք են շատ, այնքան էլ՝ վոլեյբոլի ցանցի մյուս կողմում դիրքավորվածներն ու նրանց կողմնակիցները: Վերջիններիս մեծ մասն իհարկե կշարունակի տրվել ընտրակաշառքներին ու մարդկային տեսանկյունից իրենց կողմից վերցված դրամների դիմաց տրված խոսքը հարգելով ու վախենալով՝ կընտրեն իշխանական ուժին կամ՝ դրա արբանյակներից որեւէ մեկին, սակայն Արցախի հարցի լուծման ուղին մեկն է, այդ ուղ-

ղությամբ շարժումը սկսված է, հանրային տրամադրությունները կգեներացվեն նախընտրական շրջանում հենց Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից ու կտիրաժավորվեն իշխանական խամաճիկների բերաններով, ու այդքանով՝ Լեւոն Տեր-Պետրոսյանն ավելի խոհեմ, խելացի հաշվարկված, նպատակային է գործում, քան բոլոր մնացածները՝ միասին վերցված:

***mitk.am**, 25.12.2016թ.:*

ՍԵՐԳՈ ՏՈՆՈՅԱՆ
(Ճարտարապետ)

ԻՆՉՈ՞Ւ Է ԴԺՎԱՐ ԿԱՅԱՆՈՒՄ «ՊԱՏԵՐԱ՞ԶՄ, ԹԵ՞ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ» ԲԱՆԱՎԵՃԸ

ԼՂ հակամարտության կարգավորման շուրջ հայաստանյան քաղաքական-հասարակական բանավեճում առկա երկու, հիմնական դիրքորոշումներն են՝ ա) փոխզիջում խաղաղության դիմաց, բ) փոխզիջում կարգավիճակի դիմաց: Մյուս երկու կարեւոր տեսակետները՝ ստատուս քվոյի հավերժ պահպանումն ու պատերազմով հարցը վերջնականապես լուծելու մարտավարությունը, զուրկ են հակամարտության խաղաղ կարգավորման հիմնական սկզբունքից՝ ուժի չկիրառման պահանջից, հետեւաբար պետք է ստորադասվեն վերոնշած դիրքորոշումներին եւ համարվեն երկրորդական, այլընտրանքային: Հիմա, երբ «փոխզիջում՝ խաղաղության դիմաց» ծրագիրը քննադատվում է եւ համարվում ոչ բավարար կամ պարտվողական, հարց է առաջանում՝ ի՞նչն է խանգարում խաղաղության հետ զուգահեռ պահանջել նաեւ ԼՂ անկախության ճանաչումը: Խնդրին անհրաժեշտ խորությամբ անծանոթ մարդկանց էմոցիոնալ պատասխանն է՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի դավադրական նպատակները, չուզողությունը եւ այլն: Չընկնելով դատարկախոսության հորձանուտը, անդրադառնանք փաստերին: ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային փուլում ԵԱՀԿ Մինսկի խումբը երբեւէ չի ներկայացրել մի փաստաթուղթ, որտեղ կարգավիճակը գերադասվել է տարածքային ամբողջականության սկզբունքին: Միջազգային հանրությունը երբեւէ հանձն չի առել փաթեթային լուծման միջոցով ճանաչել ԼՂՀ անկախությունը: Առավելագույնը, ինչին հասել են բանակցային կողմերը՝ հակամարտության կարգավորման փու-

լային տարբերակն է, որի իրագործման առաջին փուլում նախատեսվող խաղաղության հաստատումը ոչ միայն միջազգային հանրության սկզբունքային պահանջն է, այլեւ հենց Հայաստանի կենսական շահերը ներկայացնող, իսկ ամենակարեւորը՝ ԼՂ բնակչության անվտանգությունը էականորեն ուրիշ մակարդակով ապահովող երաշխիքն է:

Խաղաղության հաստատումն է առաջին քայլը դեպի անկախության ճանաչումը: Ի՞նչ եք կարծում, եթե հնարավոր լիներ պնդել, որ միջնորդները ներկայացնեն լուծման այնպիսի տարբերակ, որտեղ առավելագույնը 7 շրջաններն Ադրբեջանի վերահսկողությանը հանձնելու դիմաց ճանաչվեր ԼՂՀ անկախությունը, ՀՀ կամ ԼՂՀ այդ ո՞ր ղեկավարը կմերժեր դա: Իսկ ահա Ադրբեջանը մերժել եւ մերժելու է, եւ այդ իսկ պատճառով էլ երբեք միջնորդներն այդպիսի նախագիծ չեն ներկայացրել եւ չեն ներկայացնելու: Ահա այս պարզ ճշմարտությունը չհասկանալու պատճառով է, որ հենց Հայաստանում այսքան դժվար է կայանում «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն» բանավեճը: Այս պարագայում, բնական է, որ հարց է առաջանում. «Ի՞նչ է զիջում Ադրբեջանը փուլային տարբերակի կիրառման դեպքում, եւ՝ խաղաղության հաստատումից, ԼՂ-ին միջանկյալ կարգավիճակ տալուց հետո, ո՞րն է դեպի ԼՂ անկախություն տանող ճանապարհը»: Որքան էլ որ դժվար է բարդույթներով տառապող մեր հասարակությանը բացատրել 1994թ.-ի հաստատված զինադադարի եւ խաղաղության համաձայնագրերի տարբերությունը, այդուհանդերձ դա ամենեւին էլ անլուծելի խնդիր չէ:

Ապրիլին, Ադրբեջանի կողմից սանձազերծված քառօրյա իրադարձությունները, ինչից հետո միջազգային հանրությունը խնդիր չդրեց իր առջեւ (հակառակ մեր պահանջի) պարզելու «մեղավորին», ապացուցում են շատ պարզ մի իրողություն, այն է՝ հակամարտող կողմերը, ըստ էության, գործող

զինադադարի պայմաններում, ոչ միայն իրար նկատմամբ, այլեւ միջազգային իրավունքի առջեւ չեն կրում որեւէ պատասխանատվություն ռազմական գործողությունները վերսկսելու հարցում, անկախ նրանից, որ բացարձակապես բոլորը անդադար հայտարարում են ճիշտ հակառակի մասին: Խաղաղության հաստատման, դրա ամրապնդման եւ ռազմական գործողություններ չվերսկսելու դրույթներով ամրագրված, միջազգայնորեն ճանաչված փաստաթուղթն է այն անխուսափելի զիջումը, ինչին պետք է հասնի Հայաստանը Ադրբեջանից: Այո՛, դա զիջում է, այո՛ դա երաշխիք է կայունության՝ խաղաղության, հաշտության, բարիդրացիության հաստատման ամենագլխավոր քայլը, ի դեպ՝ ի շահ երկու ժողովուրդների: Ինչ վերաբերում է կարգավիճակին, ապա անխուսափելի է հակադարձող հետեւյալ հարցը. «Ո՞ր դեպքում է ավելի իրատեսական ԼՂ անկախության ճանաչումը. ա) երբ գործում է անկայուն զինադադար եւ պատերազմի վերսկսումն սպասելի է ցանկացած պահի, թե՞ միջազգային փաստաթղթով ամրագրված խաղաղության պայմաններում»: Պատասխանն ակնհայտ է, հատկապես երբ հաշվի ենք առնում վերոբերած անհերքելի այն փաստը, որ երբեւէ բանակցային փաթեթներում չի ամրագրվել անկախության հարցը: Հետեւաբար, «փոխզիջում՝ կարգավիճակի դիմաց» ծրագիրը անիրատեսական է, ինչպես որ անհեռանկար եւ վտանգներով լի են ստատուս քվոյի պահպանումն ու պատերազմի միջոցով հարցը լուծելու գայթակղիչ առաջարկները:

iLur.am, 24.12.2016թ.:

* * *

«Խաղաղություն հիմա» շարժումն այլընտրանք չունի.— Ակնհայտ է, որ ղարաբաղյան հակամարտության ներկա փուլում եւ անորոշ ապագայում, հնարավոր է՝ տեղի ունենա նոր էս-

կալացիա: Խոսքը միայն ռազմական էսկալացիայի մասին չէ: Կարող է նաեւ՝ ակտիվանա բանակցային գործընթացը: Իսկ բանակցությունները, ըստ էության, զարգանալու երկու ուղղություն ունեն՝ ա) երբ քննարկումների ինչ-որ փուլում բանակցությունները հերթական անգամ կսառեցվեն, բ) երբ բանակցությունների ինչ-որ փուլում կստորագրվի խաղաղության համաձայնագիր:

Ռազմական գործողությունների վերսկսման դեպքում իրադարձությունները նույնպես կարող են զարգանալ երկու ուղղությամբ՝ ա) անորոշ ժամանակահատվածում տեղի կունենան ակտիվ ռազմական գործողություններ, որոնք այդ պահին գոյություն ունեցող ստատուս-քվոն կփոխեն հօգուտ կողմերից մեկի, բ) անորոշ ժամանակահատվածում տեղի կունենան այնպիսի ռազմական գործողություններ, որոնք կողմերից մեկին կապիտուլյացիա կպարտադրեն:Այս երկրորդ՝ կապիտուլյացիայի տարբերակը հիպոթետիկ է, քանզի այսօրվա աշխարհում, միջազգային կարգուկանոնի պայմաններում եւ այլն, դա գործնականում անհնար է:

Բայց անգամ հակամարտության կողմերից մեկի լիակատար պարտությունը բացարձակապես չի երաշխավորում, որ կհաստատվի խաղաղություն եւ բարիդրացիություն: Եւ բոլոր նրանք, ովքեր համարում են, որ 1994 թվականի զինադադարի կնքման պահից մինչ օրս հայկական կողմն է հաղթողը, կփաստեն նաեւ, որ դրանից հետո ադրբեջանական կողմը ամենեւին էլ խաղաղասեր չի դարձել, այլ՝ ճիշտ հակառակը: «Կապիտուլյացիա» պարտադրելու պարագայում վստահաբար լինելու էր նույնը, միգուցե, սակայն, այդ դեպքում պարտվող կողմից կրկնակի ռեսուրս եւ ժամանակ էր պահանջվելու ուժերի խախտված հավասարակշռությունը վերականգնելու եւ նոր պատերազմ վերսկսելու համար: Թերեւս՝ այս հանգամանքով է պայմանավորված այն, որ կողմերից ոչ մեկը իրեն

հաղթող եւ պարտվող չպետք է զգա: Չէ՞ որ եթե հանկարծ պարտվողի դերում մենք լինենք, ապա չենք հաշտվելու այդպիսի դրության հետ: Իսկ եթե պարտությունից հետո մեր սպառնալիքը լինելու է «Ստամբուլն արյան ծով կսարքենք» դատարկ կարգախոսը, իսկ գործնականում նույնիսկ սահմանը չենք կարողանալու բացել, ապա համաձայնեք, որ մենք Ադրբեջանի նկատմամբ այդպիսի հաղթանակ չենք տարել, որքան էլ որ մեր «փառապանծ» գեներալները այդպես ասեն: Հակառակ դեպքում՝ 2016-ի ապրիլը չէր լինի:

Ի՞նչ է ստացվում՝ երկու կողմերին էլ լիարժեք, անսասան, անփոփոխ հաղթանակի հասնելու համար անհրաժեշտ է հակառակորդին այնպիսի պարտության մատնել, որ պարտվող կողմի միակ սպառնալի ուժը երկար տարիներ մնան դատարկ կարգախոսները: Այո՛, Բաքվից էլ պակաս չեն հնչում այդ տեսակ սպառնալիքներ, բայց նախորդ տարի, չգիտես թե ինչու, խոսքերի հետ միասին հրթիռներ էլ թափվեցին Արցախի վրա:

Կհաջողվի՞ հաջորդ պատերազմում «գործը ավարտի հասցնել»՝ հարցը դրված է երկու երկրների ռազմատենչ կուսակցությունների օրակարգում: Ինչո՞վ է սնվում այդ օրակարգը, իսկ ավելի ստույգ՝ ինչպիսի՞ պայմաններում կարող է գոյություն ունենալ նման օրակարգ: Պատասխանը մեկն է՝ ստատուս-քվոյի պահպանման պարագայում: Երբ սկզբում արձանագրեցինք, որ բանակցությունների վերսկսումն ունի զարգացման երկու ճանապարհ, այժմ հարկավոր է հստակեցնել, որ այն դեպքում, երբ դրանք կասեցվում կամ սառեցվում են, իր չարաբաստիկ գոյությունն է շարունակում ստատուս-քվոն, ճիշտ այնպես, ինչպես ռազմական գործողությունների վերսկսման եւ դադարեցման դեպքում, երբ ստատուս-քվոն մասնակիորեն է փոխվում՝ հօգուտ կողմերից մեկի, եւ, ըստ էության, պահպանում է իր սպառնալի գոյությունը: Այսինքն՝ ստատուս-

քվոն ոչ թե խախտված, այլ փոխված կամ վերացած կլինի միայն երկու դեպքում՝ ա) երբ խաղաղություն հաստատվի, բ) երբ պատերազմ լինի: Ստատուս-քվոն, ահա, իր գոյության բոլոր, անխտիր բոլո՛ր դեպքերում *գործնականում* ոչ այլ ինչ է, եթե ոչ պատերազմի նախապատրաստական փուլ: Խաղաղության միջազգային պայմանագրի կնքումն է միայն, որ առավելագույնս ապահովում է պատերազմի բացառումը:

Պնդումը, թե ամեն գնով պետք է պահպանել ստատուս-քվոն, միաժամանակ խույս տալ լայնամասշտաբ պատերազմից, մոլորություն է, որ իշխում է Հայաստանում 1998 թվականից: Ոչ մեկը չի պատասխանում այն պարզ հարցին՝ եթե ստատուս-քվոն, ի վերջո, վերանալու է կա՛մ խաղաղություն հաստատելով, կա՛մ պատերազմով, երբ էլ դա լինի, ինչո՞ւ ենք ապա շարունակում այն պահել, եթե գործնականում՝ բանակցային գործընթացում տեղ գտած պայմաններով խաղաղության հաստատման ձեւաչափի հետ համաձայն չենք, իսկ նոր ռազմական էսկալացիայի հնարավորությունը ոչ միայն չենք բացառում, այլեւ անցյալ տարվա ապրիլյան իրադարձություններից հետո է՛լ ավելի հավանական ենք համարում:

Շատ լավ: Պետության անվտանգության ապահովման հարցում դրված է «ստատուս-քվոն պահպանել ամեն գնով եւ խուսափել պատերազմից» դոկտրինը: Ստատուս-քվոյի մասնակի փոփոխության դեպքում անհրաժեշտ է ողջ ուժերը նետել ուժերի հավասարակշռությունը վերականգնելու համար՝ ստեղծել «Ազգ-բանակ»: Հետո՞: Ո՞րն է հաջորդ քայլը, եթե սա էլ ձախողվի կամ, այսպես ասենք՝ բավարար չլինի: Կգնա՞նք խաղաղության: Պարզ է, չէ՞, որ այդ ժամանակ ավելի վատ պայմաններ են լինելու: Կգնա՞նք պատերազմի: Պարզ է, չէ՞, թե ինչպիսի ելք կարող է ունենալ այն (առհասարակ՝ երկու կողմն էլ պատերազմի արդյունքում մեծապես տուժելու են): Ինչպիսի հիմնավորումներ էլ բերեն ստատուս-քվոյի պահպանման կողմնակիցները, ակնհայտ է, որ այս ռազմավարությունը, անկախ բոլոր հանգամանքներից, վաղ թե ուշ երկիրը տանելու է ավերիչ պատերազմի: Սա է այն ճշմարտությունը, որը, անպատասխանատվությունից ելնելով՝ ոչ մեկը չի խոստովանում, որովհետեւ ստատուս-քվոյի պահպանման փիլիսոփայության մեջ իր գերակշիռ դերն է խաղում խուսափողականությունը, մեղքը ուրիշի վրա բարդելու հատկությունը, վախկոտությունը: Դրա համար պետք են անհեռանկար ստատուս-քվոյի պահպանման հնարավորինս շատ պաշտպաններ Հայաստանում եւ Արցախում:

«Մի կերպ պահպանենք ստատուս-քվոն, իսկ եթե պատերազմ լինի, ապա, հավատացեք՝ կհաղթենք: Ինչ գնով ուզում է լինի, քանի տարի պետք է՝ զոհեր կտանք, երկրի ռեսուրսների մեծ մասը կտրամադրենք այս սուրբ նպատակին, ինչը, այո՛, կարող է եւ, մեղմ ասած, չիրականանալ: Բայց ստատուս-քվո կոչվածին չենք դավաճանի, չենք մեղադրվի «հայրենասեր» չլինելու մեջ: Կնահատակվենք ու կզոհաբերենք ամենը, այլընտրանք չունենք»:

«Խաղաղություն հիմա» շարժումն այլընտրանք չունի:

***iLur.am**, 16.02.2017թ.:*

ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Քաղաքագիտության դոկտոր, ԱՄՆ Լիհայի համալսարանի պրոֆեսոր)

ԼՈՒՐՋ ԵՐԵՒԱԼՈՒ ՓՈՐՁԵՐ, ԿԱՄ ԻՆՉՈՒ ՉՊԵՏՔ Է ՎԱԽԵՆԱԼ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ ազգային կոնգրեսի համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի ունեցած ելույթը բուռն ու կանխատեսելի բազմաթիվ արձագանքների արժանացավ: Առանց փոշին թափ տալու՝ դարակներից դուրս բերվեցին արդեն բոլորիս մահու չափ ծանձրացրած մեղադրանքներն ու հակափաստարկները, եթե, իհարկե, կարելի է դրանց հակափաստարկ անունը տալ՝ «ոչ մի թիզ հող», «արյունով վերցրած հողը թղթով չեն վերադարձնում», «կարեւորը թվերը չեն, այլ ոգին», «խնդիրն ուժերի հարաբերակցությունը չէ, այլ մեր ապաշնորհ իշխանություններն ու դիվանագետները», «1994թ. զինադադար կնքելու փոխարեն՝ Ադրբեջանին պետք է կապիտուլյացիայի ենթարկեինք», «մենք արդեն լուծել ենք Ղարաբաղի հարցը» եւ այլն: Այս պնդումներին պատասխանելը եղել ու մնում է չափազանց անշնորհակալ գործ, որովհետեւ դրանց հեղինակներին պատասխանները չեն հետաքրքրում: Ժամանակակից սոցցանցային ժարգոնով ասած՝ այդ մարդիկ զբաղված են տրոլինգով: Հնարավոր էլ չէ այդ պնդումների շուրջ նորմալ խոսակցություն ծավալել: Օրինակ՝ ի՞նչ կարելի է ասել մարդկանց, որոնք պնդում են, թե 1994թ. իսկապես հնարավորություն կար Ադրբեջանին կապիտուլյացիա պարտադրելու եւ դառնալու հավերժական հերոսներ, բայց, չգիտես ինչու, Հայաստանի իշխանությունները որոշեցին դրա փոխարեն զինադադար կնքել: Կամ հնարավո՞ր է արդյոք, բացի անհապաղ բժշկական օգ-

նության դիմելու խորհրդից, ուրիշ բան ասել մարդկանց, որոնք պնդում են, թե անգամ եթե տարածք ենք կորցնելու, նախընտրելի է, որ դա տեղի ունենա ոչ թե խաղաղ ճանապարհով ու փոխզիջումների միջոցով, այլ պատերազմով, այսինքն՝ բացարձակապես անիմաստ զոհեր տալուց հետո:

Պետք է արձանագրել, սակայն, որ նման՝ նորմալ բանավեճի ոչ ենթակա պնդումներին զուգահեռ՝ սկսել է Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գաղափարի դեմ աճող հաճախականությամբ արծարծվել մի առարկություն, որը կարող է շատերին տրամաբանական, նույնիսկ համոզիչ թվալ: Խոսքս այն պնդման մասին է, թե տարածքային զիջումների գնով խաղաղության գնալը հարցը, լուծելու փոխարեն՝ պատուհաս է դառնալու մեր գլխին, որովհետեւ զիջումները՝ 1) հագեցնելու փոխարեն՝ ավելի գրգռելու են Ադրբեջանի ախորժակը, եւ 2) Հայաստանն ու Արցախն ավելի խոցելի են դարձնելու ադրբեջանական ագրեսիայի դեմ (տես, օրինակ՝ Հայկ Մարտիրոսյան, «Տեր-Պետրոսյանի ուղերձը հատուկ է ազգային ու պետական դավաճանին», Անկախ Նորություն, 19.12.2017; Արա Պապյան, «5 շրջանները հանձնելուց հետո անհնար է պահել Ղարաբաղը», Առաջին Լրատվական, 08.12.2016; Նորատ Տեր-Գրիգորյանց, «Այդ ի՞նչ պոռնկական հարցադրում է՝ զիջել հող, թե չզիջել: Զիջելու բան չկա», Առաջին Լրատվական, 21.12.2016):

Եթե մի պահ անտեսենք պնդման որոշ հեղինակների՝ քաղաքակիրթ բանավեճի հետ անհամատեղելի բառապաշարը, որ արդեն ցիտված նյութերի վերնագրերից է ճչում, այս պնդումն, առաջին հայացքից, զուրկ չէ տրամաբանությունից: Թվում է նաեւ, թե պնդման հիմքում ընկած է իրատեսության ու զգուշավորության կոչ, ինչով այն էապես տարբերվում է «ոչ մի թիզ հող»-ի եւ «արյունով վերցրած հողը թղթով չեն վերադարձնում»-ի մետաֆիզիկայից: Այդ կոչը նույնիսկ կարելի է մեկնաբանել այսպես. «Մենք սկզբունքորեն դեմ չենք զիջումների գնով խաղաղություն հաստատելու գաղափարին, եթե դա իսկապես հնարավոր լիներ: Բայց դա, ցավոք, անիրատեսական, եթե չասենք՝ միամիտ հույս է: Զիջումները մեզ խաղաղություն չեն տալու, այլ ընդամենը՝ նույն պատերազմական վիճակը, միայն՝ ավելի թուլացած ու խոցելի դիրքերով»: Կոչի հեղինակները նաեւ չեն հոգնում ադրբեջանցիների ագրեսիվ հռետորաբանությունը մատնացույց անելուց եւ հիշեցնելուց, որ ադրբեջանցիները նույնիսկ Երեւանի նկատմամբ հավակնություններից են բացեիբաց խոսում:

Թվում է՝ այս փաստարկին հնարավոր չէ ոչինչ հակադրել: Բայց ինձ թույլ կտամ մի երկու հարց ուղղել դրա պաշտպաններին. դուք իսկապե՞ս մտածում եք, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը, կամ նույնիսկ Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը, ովքեր նույնպես տարբեր ժամանակներում սկզբունքային համաձայնություն են տվել տարածքային զիջումներ ենթադրող լուծումների տարբերակների, այս ամենը չեն հասկանում: Դուք իսկապե՞ս մտածում եք, որ խոսքն առանց զիջումները շահագործելը բացառող երաշխիքների, պարզապես տարածքների գնով խաղաղություն գնելու մասին է, ու որ Տեր-Պետրոսյանը կամ, ընդհանրապես, Հայաստանում բանականությունը չկորցրած որեւէ մարդ կարգավորման կայունության գրավականը կարող է Ադրբեջանի բարի կամքը համարել: Ո՞ւմ համար պարզ չէ, որ, նախ, խոսքը ոչ թե զիջումների, այլ փոխզիջումների մասին է, եւ որ որեւէ տարածքային զիջում հայկական կողմից կարող է տեղի ունենալ միայն վերը նշված մտավախությունները փարատող երաշխիքների ապահովման դեպքում: Ո՞ւմ համար պարզ չէ, որ նման երաշխիքների մշակումը բանակցությունների հիմնական առարկաներից մեկն է, եթե ոչ՝ հիմնականը: Բայց արի ու տես, որ որոշ մարդկանց համար պարզ չէ: Ստիպված ենք բացատրել: Ստիպված

ենք բացատրել, որ եթե նույնիսկ մատնանշած վտանգներն իրական են, դա չի նշանակում, թե դրանք չեզոքացման ենթակա չեն: Ստիպված ենք բացատրել, որ ընդհանրապես որեւէ խնդրի գոյության արձանագրումը չի կարելի շփոթել այդ խնդրի անլուծելիության հետ, ինչը հենց այն տրամաբանական փոսն է, որտեղ հայտնվել են սույն պնդման հեղինակները:

Եւ այսպես, **առաջին** երաշխիքը, որը հայկական կողմը միշտ պահանջել է ու, վստահ եմ՝ շարունակում է պահանջել, այն է, որ զիջվելիք տարածքները պետք է վերածվեն ապառազմականացված գոտու: Նման գոտու ստեղծումը նշանակում է, որ Ադրբեջանն ի վիճակի չի լինի կայծակնային արագությամբ ուժեր կենտրոնացնել եւ հարձակում սանձազերծել Արցախի դեմ: Որեւէ հարձակում անպայման ենթադրելու է զինված ուժերի, այդ թվում՝ ծանր տեխնիկայի անցում ապառազմականացված գոտու տարածքով, ինչը ժամանակ ու հնարավորություն կտա հայկական կողմին զինված ուժերը մարտական պատրաստության բերելու եւ հարձակմանը դիմակայելու նպատակով մոբիլիզացիա սկսելու:

Երկրորդ, ապառազմականացված գոտում կտեղակայվեն խաղաղապահ ուժեր ու միջազգային դիտորդներ, որոնք կկարողանան արձանագրել որեւէ խախտում Ադրբեջանի կողմից՝ դրանից բխող բավականին լուրջ հետեւանքներով: Կարող են առարկել, թե այդ նույն միջազգային ուժերը, որ կարգավորման դեպքում դիտորդներ պետք է տրամադրեն, արդեն քանի տարի է՝ որդեգրել են չեզոքության պրակտիկան ու միշտ խուսափում են մեղավորին մատնացույց անելուց: Սա թույլ առարկություն է, որովհետեւ կարգավորումից հետո նրանք շահագրգռված են լինելու ոչ թե չեզոքություն, այլ կայունություն ապահովելով, ինչը ենթադրում է միանգամայն այլ շահեր ու վարքագիծ: Կարող են նաեւ առարկել, որ խաղաղապահները ոչինչ էլ չեն կարողանա զսպել, ինչպես այս հարցին առնչվող

մի բանավեճի ժամանակ պնդել էր ֆեյսբուքյան մի օգտատիրուհի՝ օրինակ բերելով Ռուանդայում տեղակայված ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի ճակատագիրը 1994 թվականին: Սա նույնպես թույլ առարկություն է: Ճիշտ է, իհարկե, որ որոշ դեպքերում խաղաղապահներն աչքի չեն ընկել արդյունավետությամբ, ինչպես Ռուանդայի դեպքում: Բայց նրանց արդյունավետության մակարդակն ինչ-որ հաստատուն իրողություն չէ: Այն կախված է խաղաղապահների մանդատից, այդ մանդատն ստանձնած պետությունների ուժից ու հեղինակությունից, ինչպես նաեւ կարգավորման արդյունքում ձեւավորված ստատուսքվոն պահպանելու նրանց շահագրգռվածությունից: Ռուանդայում ձախողված խաղաղապահ առաքելությունը նման առաքելության միակ կամ նույնիսկ ամենաներկայացուցչական օրինակը չէ: Վերոհիշյալ ֆեյսբուքյան օգտատիրուհին ու նրա մտավախությունը կիսողները կարող էին հիշել նաեւ, ասենք՝ Հարավային Օսեթիայի ռուսական խաղաղապահ առաքելությունը, ինչն, իմ կարծիքով, ավելի քան արդյունավետ էր:

Երրորդ, քանի որ ապառազմականացված գոտին ամրագրված պետք է լինի միջազգային պայմանագրով եւ ունենա միջնորդների երաշխիքները, դրա խախտումը գործի կդնի միջնորդների համապատասխան պարտավորությունները՝ որոշակի սանկցիաների, չի կարելի նաեւ բացառել՝ հայկական կողմին ռազմական օգնության կամ հայկական կողմի օգտին անմիջական ռազմական միջամտության տեսքով:

Չորրորդ, միջազգային պայմանագրով ամրագրված ապառազմականացված գոտու դեմ որեւէ ոտնձգություն պարզ խոստման դրժում չի լինի, այլ միջազգային պայմանագրի կոպիտ խախտում: Իրականում դա նույնիսկ կոպիտ խախտում անվանելը նրբասացություն է: Զինված մուտքն ապառազմականացված գոտի համարվում է ագրեսիա, անկախ այն բանից, որ խնդրո առարկա գոտին տվյալ պետության սուվերեն տա-

ռածքում է: Իսկ դա նշանակում է, որ ագրեսիայի զոհը կարող է դա համարժեք ռազմական պատասխանի արդարացում (casus belli) համարել՝ առանց բացասական միջազգային հետեւանքներից վախենալու եւ նույնիսկ միջազգային աջակցության ակնկալիքով:

Հինգերորդ, քանի որ ապառազմականացված գոտու դեմ ոտնձգության դեպքում Հայաստանը կարող է ունենալ եւ պետք է ունենա պայմանագրով ամրագրված ռազմական միջամտության իրավունք, եւ քանի որ նման միջամտությունը կլինի ագրեսիայի զոհի կարգավիճակով, Հայաստանը կարող է նաեւ աջակցություն ակնկալել ռազմական փոխօգնության հայ-ռուսական պայմանագրի շրջանակներում:

Վեցերորդ, եթե նույնիսկ այդ պայմանագիրն ու դրա իրավական պարտավորությունները մի կողմ դնենք, դժվար չէ պատկերացնել, որ կարգավորումից հետո ադրբեջանական ագրեսիան բուն Արցախի, առավել եւս՝ Հայաստանի դեմ, լրջորեն կբախվի այս ռեգիոնում դերակատարություն ունեցող որոշ պետությունների շահերին: Ասվածը նույնիսկ Թուրքիային է վերաբերում, էլ չեմ խոսում Ռուսաստանի ու Իրանի մասին, որոնք ոչ միայն նման շահ չունեն, այլեւ Արցախի ու Հայաստանի դեմ ագրեսիան անկասկած կդիտեն որպես սեփական կենսական շահերի դեմ ուղղված ոտնձգություն: Ուզում եմ հատուկ շեշտել, որ այստեղ խոսքը մեր նկատմամբ ջերմ վերաբերմունքի ու սիրո մասին չէ, ոչ էլ նույնիսկ պայմանագրային պարտավորությունների, այլ հենց այդ պետությունների կենսական շահերի: Եւ այստեղ բացարձակապես որեւէ նշանակություն չունի այն փաստը, որ ռուսներն, ասենք՝ Ադրբեջանին զենք են վաճառել կամ որ 2016թ. ապրիլյան պատերազմի ժամանակ մեզ անվերապահ աջակցություն չեն հայտնել: Տարբերությունը չեմ բացատրում՝ ընթերցողի նկատմամբ հարգանքից ելնելով:

Յոթերորդ, հետագա ագրեսիան բացառելու երաշխիք կարող է լինել նաեւ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ սպառազինությունների կրճատման պայմանագիրը: Դա կարելի է անել՝ հատկապես աչքի առաջ ունենալով հարձակողական գործողությունները դժվարացնելու կամ բացառելու, միաժամանակ՝ պաշտպանվելը հեշտացնելու նպատակը:

Վերջապես՝ **ութերորդ** եւ ամենակարեւոր երաշխիքը. հակամարտության կարգավորումը նշանակում է հաշտություն, ոչ թե նոր պայմաններով զինադադար, իսկ հաշտությունն ու զինադադարն սկզբունքորեն տարբեր բաներ են: Զինադադարն ընդամենը նշանակում է, որ կողմերն ընդունում են շփման գծում ուժով ինչ-որ բան էականորեն փոխելու անհնարինությունը, բայց չեն հրաժարվում ուժով հարցը լուծելու մտադրությունից: Զինադադարը լուրջ միջազգային ու իրավական պարտավորություններ չի ենթադրում, ինչպես այն չի ենթադրում տնտեսական ու մշակութային կապերի վերականգնում, հետեւաբար՝ պատերազմի գնի հավելյալ բարձրացում: Հաշտությունը ենթադրում է այս ամենը, ամրագրվում է ԵԱՀԿ-ի որոշումներով, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ու Գլխավոր ասամբլեայի համապատասխան բանաձեւերով եւ նշանակում է, որ կողմերը ոչ միայն ընդունում են դրա արդյունքում ստեղծված ստատուս-քվոն, այլեւ քայլեր են ձեռնարկում, որոնք ստատուս-քվոյից հրաժարումն անխուսափելիորեն դարձնում են առավել անցանկալի ու դժվար: Սա է պատճառը, որ զինադադարները սովորաբար անկայուն են, իսկ հաշտության պայմանագրերով հաստատված հարաբերությունները՝ կայուն: Համեմատեք, օրինակ, Իսրայելի հարաբերությունները Եգիպտոսի հետ 1948-ից մինչեւ 1978թ. ընկած ժամանակաշրջանում, եւ նույն երկրների հարաբերությունները 1978 թվականից հետո, կամ, մի կողմից՝ Իսրայելի ներկա հարաբերությունները Եգիպտոսի ու Հորդանանի հետ, մյուս կողմից՝ նույն երկրի հարա-

բերությունները Լիբանանի ու Սիրիայի հետ: Կարող են առարկել, թե նույնիսկ նման հաշտությունները 100 տոկոսանոց երաշխիք չեն նոր հակամարտություններից խուսափելու համար: Բայց ինչպես ամերիկյան հայտնի ասացվածքն է ուսուցանում, այս աշխարհում 100 տոկոսանոց են միայն մահն ու հարկերը: Պնդել, թե 1948–1978 թթ. ժամանակաշրջանի եգիպտա-իսրայելական հարաբերությունների ու այդ երկրների՝ 1978թ. հաշտության պայմանագրին հաջորդած ժամանակաշրջանի հարաբերությունների միջեւ ահռելի տարբերություն չկա, պարզապես ծիծաղելի է: Այս համատեքստում արժե անդրադառնալ այն վստահ պնդմանը, թե կարգավորումն ավելի կկոշտացնի Ադրբեջանի դիրքորոշումը: Պակաս հավանական չի կարելի համարել այն սցենարը, որ խաղաղ կարգավորումն Ադրբեջանում խաղաղության էլեկտորատի համար քաղաքականապես կհեշտացնի համարձակ լինելը՝ միեւնույն ժամանակ համալրելով այդ էլեկտորատի շարքերը, հատկապես՝ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, եւ ես սա հատուկ ուզում եմ շեշտել, որ իրականում ագրեսիան՝ կարգավորումից հետո, Ադրբեջանի համար շատ ավելի վտանգավոր ու անհեռանկար է դառնալու, քան հիմա է: Գոնե չի կարելի որպես աքսիոմատիկ ճշմարտություն ընդունել այն պնդումը, թե բոլոր ադրբեջանցիներն առավոտից իրիկուն տրված են Երեւանն ու Ստեփանակերտը արյան ծով սարքելու անուրջներին, ու որ նրանց դիրքորոշումներն ընդհանրապես կախված չեն քաղաքական իրողություններից: Այո, անվիճելի է, որ նրանց մոտ բավականին տարածված են հակահայկական տրամադրություններն ու ատելության հռետորաբանությունը, բայց չի կարելի մոռանալ, որ նրանք պատերազմում պարտված կողմ են, իսկ նման դրսեւորումները պարտությունների համարյա անբաժան ուղեկիցն են: Ես վստահ եմ, որ կարգավորման ու բարիդրացիական հարաբերություններ հաստատելու լուրջ քայլերին զուգահեռ՝ այդ տրամադրություններն Ադրբեջանում զգալիորեն կնվազեն:

Եւ այսպես, խաղաղ կարգավորման դեմ բերված՝ առաջին հայացքից իրատեսություն քարոզող փաստարկը, թե զիջելու դեպքում մենք դատապարտված ենք, իրականում ոչ մի կապ չունի իրատեսության հետ: Այն ընդամենը հերթական հնարքն է, որ մոգոնել են խաղաղ կարգավորման գաղափարի դեմ, ինչին որոշ մարդիկ փորձել են մի քիչ տրամաբանական տեսք տալ: Բայց դա չի հաջողվել, որովհետեւ այդ փաստարկի հեղինակներն իրականում ավելի շատ դեկլարատիվ պնդումներ են արել, քան իրական փաստարկ պաշտպանել: Մասնավորապես, նրանք բավարար ջանքեր չեն գործադրել որոշ կանխատեսելի հարցերի ու հակափաստարկների պատասխանելու ուղղությամբ: Նրանք շփոթել են խնդրի գոյությունը խնդրի անլուծելիության հետ: Վերջապես, նրանք չեն խորշել սեփական պնդումները հայհոյանքների ու մեղադրանքների ռելսերի վրա դնելուց: Իսկ մարդիկ սովորաբար հայհոյում են, երբ ասելու բան չունեն կամ երբ գիտակցում են, որ ասելիքը համոզիչ չէ:

***iLur.am**, 06.02.2017թ.:*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
(Գործարար, հրատարակիչ)

«ՉԻ» ԶՐՈՒՑԱԿԻՑՆ Է «ԱՆՏԱՐԵՍ» ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ*

Արժեքը մարդն է

– **Ձեր կարծիքով, ՀԱԿ համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի արձագանքները որքանո՞վ էին ադեկվատ:**

– Ես կարծում էի՝ դրական արձագանքն ավելի քիչ կլինի, բայց տեսա, որ այսօր շատ ավելի մարդ է բնակչից դարձել քաղաքացի եւ պատասխանատվություն զգում իր արածի կամ չարածի համար: Ոնց որ թե՝ դրականն ավելի շատ է, քան բացասականը: Ես կարծում էի՝ առաջին նախագահի խոսքը քչերին է հասու, բայց այս անգամ եւս նա ցույց տվեց իր հեռատեսությունը: Ինչ վերաբերում է բացասական արձագանքներին կամ մուտիլովկաներին. վերցնում են ինչ-որ նախադասություն, վերագրում Տեր-Պետրոսյանին ու սկսում քննադատել այն բանի համար, ինչ ինքը չի ասել: Օրինակ՝ ասում են՝ Տեր-Պետրոսյանը կոչ արեց հանձնել հողերը: Մինչդեռ նա նման բան չի ասել: Նա հող հանձնող չէ, նա հող չի հանձնել եւ այսօր էլ ոչ մեկին նման կոչ չի անում: Ինչ է, ի վերջո, առաջարկել Տեր-Պետրոսյանը. ասում է՝ ժողովուրդ, եկեք լուծենք այս հարցը, եկեք այլեւս այսպես վատ չապրենք, չլինենք պատերազմող վիճակում, որ ամեն օր զոհեր լինեն: Մեզ համար ամենաթանկ բանը հողը չէ, մարդն է: Ունենք ահավոր մեծ արտագաղթ, ինչը էապես պակասեցնում է պաշտպանունակությունը: Ու հիմա նա առաջարկում է՝ եկեք էդ խնդիրը լուծենք: Քանի որ իշխանությունը գտնվում է ՀՀԿ-ի, մասամբ

---

* ***chi.am**, 23.12.2016թ.:*

նաեւ՝ ՀՅԴ-ի ձեռքում, նրանք պետք է լուծեն խնդիրը եւ նրանք պետք է պատասխանատվություն կրեն այդ խնդրի լուծման համար: Տեր-Պետրոսյանն ընդամենը կարծիք հայտնեց, թե ինչպես է պետք լուծել Ղարաբաղի խնդիրը: Եւ այս ելույթի մեջ ինձ ամենաշատը գրավել է հետեւյալ նախադասությունը՝ թող իշխանությունը գտնի ավելի լավ, հաղթողական լուծում, եւ մենք ներողություն կխնդրենք:

Նա արտահայտեց իր կարծիքը, որի հետ շատ մարդիկ համաձայն են, ինչ-որ մարդիկ համաձայն չեն, բայց եթե որեւէ մեկը գտնի ավելի լավ լուծում, ընդ որում՝ ռեալ լուծում, ապա խնդրեմ, ինչո՞ւ չզինվորագրվենք այդ գաղափարին: Եթե ունեն այդպիսի տաղանդավոր, կրեատիվ լուծումներ, լավ կլիներ՝ ցույց տային ու գործեին:

– Տեր-Պետրոսյանին քննադատեցին իշխանությունները, որոնք այսօր բանակցում են այն նույն սկզբունքների շուրջ, որի մասին խոսեց Տեր-Պետրոսյանը:

– Իրենք չէին սպասում, որ Տեր-Պետրոսյանի խոսքերը նման արձագանք կգտնեն ժողովրդի մեջ: ՀՀԿ համագումարը հեռարձակում էր 20 հեռուստատեսությունից 50-ը, իսկ ՀԱԿ համագումարին ոչ բոլոր հեռուստաընկերություններն են անդրադարձել կամ անդրադարձել են թռուցիկ, առանց խոսելու բովանդակության մասին: Միայն մի քանի կայք է ամբողջությամբ ներկայացրել համագումարը, տեղադրել ելույթի տեսագրությունն ու տեքստը: Եւ այդ ելույթը համացանցով նայած քաղաքացիների թիվը ավելի քան 40 հազար էր: Ու հիմա ՀՀԿ-ն հայտնվել է մի վիճակում, երբ լինելով իշխող կուսակցություն, նրանց ոչ մի ելույթ հասարակության մեջ այնքան հետաքրքրություն չի վայելում, ինչ Տեր-Պետրոսյանի արտասանած մի պարբերությունը: Եթե դուրս գաք փողոց ու քաղաքացիներին հարցնեք՝ ինչի մասին էր խոսում Սերժ Սարգսյանը ՀՀԿ համագումարում, ինչ յոթ խրատ էր տալիս, մեկ տոկոսն

էլ չի հիշի: Ու այս աղավաղված, գաղջ մթնոլորտում հանկարծ Հայաստանում ողջ հասարակությունը քննարկում է Տեր-Պետրոսյանի ելույթը: Նրա խոսքերը քննարկում են Ադրբեջանում, քննարկում են Սփյուռքում, լուրջ երկրների քաղաքական շրջանակները, բոլորն են խոսում այդ ելույթի մասին:

Եւ ուզում եմ հարցնել՝ մի՞թե սա չէ իրական իշխանությունը, ում նշած թեմաները քննարկում, դրանցով հետաքրքրվում, տառապում է ժողովուրդը: Սա է իշխանությունը: Թող Սերժ Սարգսյանի ելույթը, գործունեությունը եւս լինեին այնքան կարեւոր, հետաքրքիր, իրականանալի, որ մարդիկ խոսեին այդ մասին:

– Հասարակության ընկալելիության հետ կապված. 1997-ին կարծես թե չընկալեցին, չընդունեցին այն լուծումը, որ առաջարկում էր Տեր-Պետրոսյանը, իսկ հիմա արդյո՞ք ընկալում է:

– Ես համոզված եմ, որ Հայաստանի առաջին իշխանության կորիզը, որ զբաղված էր պայթեցրած գազամուղն ու երկաթգիծը վերանորոգելով, պատերազմի ժամանակ՝ պատերազմելով, պատերազմից հետո բանակցություններով, սեփական PR-ի վրա ուշադրություն չի դարձրել, ուշադրություն չի դարձրել սեւ PR-ի վրա: Ես մինչեւ 2007թ. ատել եմ Տեր-Պետրոսյանին: Ես՝ լինելով կիրթ, աշխարհ տեսած անձնավորություն, ատել եմ նրան: Հետո մի պահ ինձ զսպեցի, որպեսզի ուղեղս սկսի աշխատել այդ ուղղությամբ, սկսեցի կարդալ, նայել, ճանաչել, որպես մասնագետ՝ փորձել գտնել էդ սեւ PR անողների ձեռագիրը, եւ համոզված ասում եմ՝ Արմենիկումի PR-ը եւ Տեր-Պետրոսյանի ու Վանո Սիրադեղյանի սեւ PR-ն անողների ձեռագիրը համընկնում է: Եւ սեւ PR-ը արդյունքը տվել է. նրանք հասցրել էին ինձ այն աստիճանի, որ մինչեւ 2007թ. ատեմ վերջին հազար տարում Հայաստանի միակ հաղթող ղեկավարին այն ամենի համար, ինչ ինքը չի արել, ինձ հասց-

րել էին այն աստիճանի, որ հաղթանակը կոչեմ ցուրտ ու մութ, որ չփորձեմ մտածել, չուզենամ բացել «Պատերազմ, թե խաղաղություն» հոդվածը, չուզենամ կարդալ անվտանգության խորհրդի նիստի ելույթը եւ այլն: Ու կարծում եմ՝ եթե ես այդ կրթական ցենզը, մտածելակերպը ունենալով սեւ PR-ի զոհ եմ եղել, ուրեմն՝ կարող է ինչ-որ մարդիկ եւս այդ ամենին զոհ գնացած լինեն: Այսօր Հայաստանն այդ սեւ PR-ի զոհն է, նրանք կարողացել են փոխել հայաստանցու մտածելակերպը, արժեհամակարգը: Ես համոզված եմ՝ եթե այն ժամանակ ինֆորմացիոն, PR բլոկի պատասխանատուները զբաղվեին ճիշտ ինֆորմացիան տեղ հասցնելով, սեւ PR-ին դիմակայելով, ապա հայաստանցիները այդպես չէին մտածի, որովհետեւ այդպես մտածում էր մենակ Սերժ Սարգսյան-Ռոբերտ Քոչարյան զույգը, դրանում համոզել էին Վազգեն Սարգսյանին, ու տարածում էին իրենց ասածը իրենց սեփական լծակներն օգտագործելով:

– Հիմա քաղաքացին հասկանո՞ւմ է այս ամենը, թե՞ ոչ:

– Մենք դասագիրք ենք հրատարակում եւ տարեցտարի տեսնում ենք, թե ինչքան է պակասել դասագրքերի քանակը: Սա նշանակում է՝ նույնչափ պակասել է քաղաքացիների թիվը, պակասել է բանակում ծառայողների քանակը, եւ գնալով դժվար է դառնում ողջ ֆրոնտը պահել: Շատ ավելի ծանր բեռը տնտեսության վրա է:

Մեր բանակի դուխը էնքան բարձր է, որ, ինչպես ասաց Տեր-Պետրոսյանը, եթե Ադրբեջանը համարձակվի մեկ անգամ էլ հարձակվել, մի քանի շրջան եւս կկորցնի: Բայց թե ինչքան ռեսուրս է պետք՝ այդ ամենը պահելու համար՝ չեն ասում: Այս առումով խնդիրներ կան: ՀՀ-ն չունի էդ ռեսուրսը: Հայաստանցին այսօր դուխի, դժվար պահին համախմբվելու գործոնն ընկալում է, բայց թե ինչ տնտեսական հնարավորությունների հետ է կապված այս ամենը, չի ընկալում: Պետք է զենք ստանալու հնարավորություն ունենաս, որովհետեւ միայն փող ունենալը բավական չէ: Ենթադրենք՝ Վրաստանը թույլ չտա իր տարածքով ոչ ՀՀ-ին, ոչ Ադրբեջանին զենք ստանալ, ապա Ադրբեջանը դա կանի Կասպից ծովով, Ղազախստանով, իսկ մենք ինչ ենք անելու: Նման բաները հաշվի առնել է պետք: Պետք է նաեւ հաշվի առնել, որ այս 18 տարիների ընթացքում փչացրինք նաեւ մեր ունեցած հարաբերությունները: Կարեւոր կտորը՝ երկու հայկական բանակցող ունեինք՝ ԼՂՀ եւ ՀՀ, կորցրինք հանուն Քոչարյանի լեգիտիմացման, կորցրինք շատ այլ հնարավորություններ՝ հանուն Ս. Սարգսյանի լեգիտիմացման փորձերի:

Այսօր Արցախում քաղաքացիների քանակն է նվազում, Հայաստանի բնակչությունն է կես եղել, ինչպե՞ս ենք կարողանալու այդ ռեսուրսները հայթայթել:

– Պարզապես, երբ խոսում ենք Արցախի խնդրի լուծման մասին, որպես առաջին քայլ նշվում է ազատագրված տարածքների վերադարձը:

– Այդ տարածքները պետք է կարողանալ պահել: Ցանկացած տարածք իմաստ ունի այն դեպքում, երբ բերք է տալիս: Տարածքն առանց մարդ պետք չէ: Լուսինը եթե մեզանով անենք՝ դրանից ի՞նչ օգուտ: Եկեք այսօրվանից լուսինը կոչենք Հայաստանի Լուսնային հանրապետություն, կամ Լուսնի Հայաստանի հանրապետություն, կամ Մարսը կոչենք հայկական տարածք: Հիմա ինչ ուզում եք՝ արեք: Եթե տարածքի խնդիր կա՝ առանց մարդու, վերցրեք: Ում է պետք տարածք՝ առանց մարդու: Արժեքը հողը չէ, արժեքը մարդն է: Եթե մարդկանց կեսին ուղարկել ենք աշխարհի ծայրեր, ու մնացել են անհայրենիք, սա է աղետը: Մարդն է արժեք, տարածքը երկրորդական արժեք է: Մարդն ու տարածքն իրար հետ անում են պետություն:

Ինձ թվում է՝ այն մարդիկ, որոնք խոսում են պատերազմին կողմ՝ ՀՀ քաղաքացի չեն, կամ եթե քաղաքացի են՝ երկքաղաքացի են, եւ շահերի կենտրոնն այլ տեղ է, եւ ՀՀ-ն

կորցնելու դեպքում իրենք կունենան այլ հայրենիք, այլ պետություն: Ես չունեմ այլ հայրենիք: Ունեմ-չունեմ՝ մեկ հայրենիք ունեմ՝ Հայաստանն է: Ես չեմ ուզում մնալ անհայրենիք, չքաղաքացի վիճակում: Ես ուզում եմ ունենալ պետություն, եւ ուզում եմ իշխանությունը վարի այնպիսի քաղաքականություն, որ պետություն ունենամ նաեւ 10 տարի հետո ու ոչ ավելի փոքր, քան հիմա է, ոչ ավելի խեղճ, քան հիմա, ոչ ավելի տկար, քան հիմա: Ես ուզում եմ ունենալ ուժեղ, ծաղկող, ազատ պետություն:

ԺԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏՅԱՆ

(Պատմաբան, Միչիգանի համալսարանի պրոֆեսոր, արտակարգ եւ լիազոր դեսպան)

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՀԱՄԱՐ ԿԳԱ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՊԱՀԸ*

Վերջին օրերին քննարկման առիթ է դարձել Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ դեկտեմբերի 17-ին ՀԱԿ համագումարում հնչած ելույթը, որում ՀՀ առաջին նախագահն անդրադարձել է, մասնավորապես, ԼՂ հակամարտության կարգավորման խնդրին:

Ելույթի եւ դրա վերաբերյալ հրապարակված կարծիքների առնչությամբ մեկնաբանություն ենք խնդրել 1991–1997թթ. ՀՀ նախագահի ավագ խորհրդական, պատմաբան, դիվանագետ, պրոֆեսոր Ժիրայր Լիպարիտյանից:

– ՀԱԿ համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանն անդրադարձավ ԼՂ հակամարտության լուծման հնարավորություններին: Ելույթին վերաբերող արձագանքները հիմնականում բաժանվեցին երկու մասի՝ կողմ եւ դեմ, եղան նույնիսկ սուր քննադատություններ: Դուք ինչպե՞ս եք գնահատում առաջին նախագահի խոսքը:

– Ինձ մոտ կասկած չկա, որ Լեւոն Տեր-Պետրոսյանի այս ելույթը նշանակալից էր ե՛ւ քաղաքական, ե՛ւ պատմական առումով: Այնքան կարեւոր էր, որքան իր՝ 1997-ի նոյեմբերի «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը: Անկախ նրանից, թե այն ինչ ազդեցություն կունենա ԼՂ հարցի լուծման կամ առաջիկա խորհրդարանական ընտրությունների վրա, այդ ելույթը պետական գործչի ելույթ էր:

---

* ***aravot.am**, 30.12.2016թ.:*

Լիովին համաձայն եմ Տեր-Պետրոսյանի ներկայացրած փաստերի՝ հիմնական կարեւորության, օգտագործած տրամաբանության եւ եզրակացությունների հետ: Այստեղ մի քանի իրականություններ կան, որոնք չենք կարող անտեսել.

ա. Ներկա իրավիճակը անընդունելի է մեր հակառակորդի, մեր հարեւանների եւ միջազգային հանրության համար,

բ. Ներկա իրավիճակը վստահաբար տանում է դեպի նոր պատերազմ: Ինչպես անցյալում, ներառյալ՝ ապրիլյան պատերազմի պարագայում, միջազգային հանրությունը Ադրբեջանին չի դատապարտելու ռազմական գործողությունների վերսկսման համար,

գ. Ներկա իրավիճակը ավելի քան վտանգավոր է Հայաստանի եւ Ղարաբաղի համար: Պետական բյուջեն պայթում է: Զոհված զինվորների ընտանիքների համար արտաբյուջետային միջոցների ենք դիմում: Առողջապահության նոր նախարարն հայտարարում է՝ մաղարիչ ասվածն ընդունելի է, որովհետեւ պետությունը ի վիճակի չէ կարգին ռոճիկ տալ այդ ասպարեզի աշխատողներին: Պետական պարտքը, ներքին թե արտաքին, արդեն անցել է ընդունելի սահմանները: Արտագաղթը շարունակվում է, հարկային բազան նվազում է, զինվորական ծառայության ենթակա երիտասարդների թիվը՝ նույնպես:

Նման իրականությունների շարքը երկար է: Սրանք նաեւ պետական գաղտնիքներ չեն: Իր ելույթում Տեր-Պետրոսյանը հստակորեն ներկայացրել է այդ շարքից մեծ թվով խնդիրներ: Եւ չնայած այս ամենին, այդ ելույթի նկատմամբ երկու կարեւոր նկատառում ունեմ:

Առաջինը վերաբերում է Հայաստանի եւ Իսրայելի պարագաների համեմատությանը: Առաջին նախագահն իր ելույթում հանգամանորեն անդրադարձել է «ազգ-բանակ» հասկացության պատմական եւ ժամանակակից օգտագործմանը: Իսրայելի պարագայում այդ հասկացողության գործնականացումը

ունի հաջողության տարբեր պատճառներ: Դրանից ամենակարեւորն այն էր, որ Իսրայելը կարողացավ ապահովել մի մեծ եւ ուժեղ պետության՝ ԱՄՆ-ի ամբողջական, գրեթե՝ անսակարկ, ռազմական, քաղաքական, ֆինանսական եւ դիվանագիտական օժանդակությունը: Մենք չունենք նման պետություն մեր կողքին: Ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Իրանը նման դեր չեն ստանձնել, որքան էլ շատերը փորձում են նման հույս փայփայել: Ռուսաստանը լուրջ պետություն է եւ արդեն ավելի քան երկու տասնամյակ մեզ ասում է, թե ինչն է իր համար ընդունելի: Ուրիշ բան հասկանալը կամ ուրիշ բանի հավատալը ցնորամտություն է:

Այն, որ Տեր-Պետրոսյանի առաջարկները մոտենում են Լավրովի առաջարկին, ինքն իր մեջ ոչ լավ է, ոչ վատ: Եւ վատ չպիտի որակել պարզապես միայն այն պատճառով, որ Լավրովն է դա առաջարկում: Լավրովից շատ առաջ Տեր-Պետրոսյանն այդ մասին խոսել է: Նրանցից յուրաքանչյուրն իր պատճառներով պայմանավորված խոսում է գոյություն ունեցող իրականությունների իրապաշտ կարելիությունների մասին: Իսկ այդ իրականությունները ստեղծողները նույն մարդիկ են, որոնք իրենց անհեռատեսությամբ ու անհիմն փաստարկներով ընդդիմացան 1997-ի լուծմանը եւ հետագայում վարեցին այնպիսի քաղաքականություն, որը խորացրեց ՀՀ կախվածությունը Ռուսաստանից եւ հանգեցրեց ներկա իրականություններին: Եւ վերջապես՝ այդ լուծումը միայն Լավրովի լուծումը չէ: ԱՄՆ-ը, Եւրոպան էլ Ռուսաստանի հետ են այս հարցում, անկախաբար՝ միասին կիրականացնեն այն, թե Ռուսաստանը դա կանի այլ ճանապարհով:

Նույնքան եւ ավելի կարեւոր է ԼՂ հարցի կարգավորման կապակցությամբ համեմատությունը՝ այսօր սեղանին դրված փաստաթղթերի, իրենց տարբերակներով՝ 1997-ի առաջարկի հետ: Բայց 1997-ի առաջարկով Լաչին գավառը մնում էր հայ-

կական հակակշռի տակ, եւ նրա կարգավիճակը որոշվելու էր ԼՂ կարգավիճակի հետ՝ երկրորդ փուլում: Առկա փաստաթղթերով՝ Լաչինի կարգավիճակը կարծես առանձնանում է ԼՂ կարգավիճակից եւ անցնում է ինչ-որ «միջազգային» ուժի: ԼՂ անվտանգության տեսակետից այս կետը ավելի կարեւոր է, քան որեւէ սկզբունքային հայտարարություն որեւէ փաստաթղթի մեջ: Հուսով եմ՝ սխալվում եմ:

Տվյալ պայմաններում, սակայն, դա էլ, ի վերջո, երկրորդական է: Տեր-Պետրոսյանի հետ ավելի քան համաձայն եմ. որքան հետաձգենք հակամարտության լուծումը, այնքան ավելի վատ է լինելու մեզ համար: Եւ սա ամենակարեւոր գործոնն է, որը քննադատները չեն ուզում տեսնել եւ դրա փոխարեն հայրենասիրական հռետորության են դիմում: Ժամանակը արդեն շուրջ երկու տասնամյակ ցույց է տվել, որ արդարացված է ժամանակի ժխտական դերի վերաբերյալ այս վարկածը:

– Առաջին նախագահի ելույթը միանշանակ չի ընդունվել հանրության կողմից: Կան գործիչներ, որոնք Լեւոն Տեր-Պետրոսյանին համարում են դավաճան: Չե՞ք վախենում, որ Ձեզ էլ կմեղադրեն հայրենիքի դավաճանության մեջ:

– Կարծում եք՝ նման անվանարկումը նորությո՞ւն է լինելու: Մարդիկ, որոնք հանրության անունից կամ հանրային սպառման համար նման անվանարկումների վրա են հենվում, իրենք իրենց վերագրում են «դավաճանին» դիմադրողի՝ հերոսի դերը: Նախընտրում եմ հարցի կապակցությամբ խոսել փաստարկներով եւ ոչ նման էժանագին որակումներով:

Իսկ եթե անհրաժեշտ է հարցը վիճարկել դավաճանի ու հերոսի կամ փրկչի եզրաբանությամբ, պիտի առաջարկեի հետեւյալը. դավաճանները նրանք են, որոնք անգիտակցաբար կամ գիտակցաբար անտեսելով կուրացնող իրականությունները, տակավին կառչում են վտանգավոր «տեսլականներից» եւ մեր ժողովրդին տարել-տանում են դեպի հերոսության ու մարտի-

ոոսության «ռազմավարություն»: Հայ ժողովրդի գոյության նպատակը երկնքում որպես հերոս եւ մարտիրոս ընդունվելը չի կարող լինել: Մենք այդ «քվոտան» վաղուց սպառել ենք:

Անկախաբար, թե ով է պատասխանատու այսօրվա իրականությունների համար, թե ով է պատճառը, որ մենք կորցրինք ԼՂ հարցի լուծումներից նվազագույն վատը, որը կարող էր չարյաց փոքրագույնը լինել, այսօր ունենք իրականություններ, որոնք հնարավոր չէ մոռացության մատնել՝ օգտագործելով «գերհայրենասիրական» հռետորաբանություն:

– Իսկ ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Սերժ Սարգսյանը որոշակի քայլ չի անում ԼՂ հարցում: Հնարավո՞ր է, որ այդ՝ «գերհայրենասիրական» հռետորաբանությունից եւ «հայրենիքի դավաճան» որակումից է խուսափում:

– Նախագահ Սարգսյանը մեծ փորձ ունի այս բնագավառում: Իմ տպավորությունն այն է, որ նա փորձում է խուսանավել իր իրապաշտության եւ դրա հնարավոր քաղաքական հետեւանքների արանքում: Դա հասկանալի է: Սակայն ինքն այնպիսի պաշտոն է ստանձնել եւ այնպիսի պայմաններում է գործում, որ անկարելի է խուսանավել առհավետ: Երկրի վիճակն այնպիսին է, որ խուսանավությունը չի կարող երկար տեւել: Միջազգային կացությունն էլ, ներառյալ՝ Դոնալդ Թրամփի ընտրությունը, դա թույլ չի տալու:

Յուրաքանչյուր պետական գործչի եւ, ինչու չէ, յուրաքանչյուր պետության համար կգա որոշելու, պատասխանատվություն վերցնելու պահը: Մեզ նման փոքր պետությունների համար այդ պահերը ավելի արագ են գալիս եւ ավելի հաճախակի: Պետք է հիշել, սակայն, որ նման պահերին որոշում չկայացնելն էլ ունի նույնքան պատասխանատվություն, որքան՝ կայացնելը:

Ենթադրում եմ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը այդ պահերից մեկի գիտակցման եւ նախազգուշացման հետ էր կապ-

ված: Առաջին նախագահն էլ, ի վերջո, նման պահերի իր փորձն ունի: Գործիչը պետք է որոշի՝ նա պետակա՞ն գործիչ է, թե՞ պարզապես քաղաքական: Կասկած չունեմ, որ պետականը հաջողացնելու համար պետք է նկատի ունենալ քաղաքական դաշտը, սակայն պատասխանատվություն ստանձնելը այլ մակարդակի վերաբերմունք է պահանջում:

– Ի դեպ, ԼՂ վարչապետի մամլո քարտուղար Արտակ Բեգլարյանն իր ֆեյսբուքյան էջում գրառում էր կատարել, ըստ որի Ղարաբաղի ժողովուրդը դեմ է ազատագրված տարածքները հանձնելուն: Այս տրամադրությունները կարո՞ղ են խանգարել հակամարտության հանգուցալուծմանը:

– Արտակ Բեգլարյանին ճանաչում եմ եւ հարգում եմ՝ որպես մտածող ու մտահոգ գործչի: Բեգլարյանի այդ հայտարարությունը վերաբերում է ԼՂ ժողովրդի այսօրյա տրամադրություններին: Անշուշտ, դա մտածելու տեղիք է տալիս: Միեւնույն ժամանակ, դժվար թե ուրիշ բան կարելի էր ակնկալել: Ավելի քան երկու տասնամյակ այդ ժողովուրդը իր անվտանգության հետ կապված վերլուծությունները ստացել է հակակշռի ենթակա տեղեկատվական համակարգից: Ղեկավարությունը չի ուզում պատասխանատվություն ստանձնել, ժողովրդին համոզում է ինչ-որ բանի մեջ, հետո էլ ասում է՝ «տեսե՛ք, ժողովուրդը չի ուզում»:

Ես չգիտեմ նման «ուղերձը» որքան տարբեր կարող էր լինել, եթե ԼՂ ժողովրդին ներկայացված լինեին իսկապես առարկայնորեն ձեւակերպված անվտանգության հետ կապված այլ տարբերակներ:

Իսկ այդ ժողովրդին բացատրե՞լ են, թե առկա տրամադրություններով ապագան ինչ է հրամցնում: ԼՂ ղեկավարներն ու նրանց խրախուսողները իրենց առավելապաշտական պահանջներն ապահովագրում են՝ ասելով, որ այլ լուծումը, որը այդ պահանջներին չի համապատասխանում, վտանգում է ժողովրդի կենսական շահերը: Ուրեմն՝ ժողովուրդը ի՞նչ շանս ուներ այլ բան մտածելու: Կամ եթե մտածեր՝ արտահայտելու: Տակավին չեմ էլ խոսում այդ կարծիքների հավաքման մեթոդաբանության մասին:

– Սակայն, Արտակ Բեգլարյանը միակը չէ, որ նման կերպ է արձագանքել Տեր-Պետրոսյանի ելույթին:

– Բոլոր առարկություններն էլ պետք է ընդունել լրջորեն, բացի նրանցից, որոնք պարզապես հայհոյանքներ են: Չեմ զարմանում, որ որոշ նորելուկ «քաղաքագետներ» «դավաճան» եւ այլ բառեր են գործածում: Առաջին անգամը չէ, որ նման մարդիկ փորձում են քաղաքական դաշտի աստիճանները բարձրանալ Տեր-Պետրոսյանի կամ այլոց հասցեին նման բառեր գործածելով՝ առանց որեւէ իսկական մասնակցություն բերելու այս ամենակարեւոր հարցի եւ նրա լուծման մասին քննարկմանը: Ամաչում եմ նաեւ, որ գեներալ Նորատ Տեր-Գրիգորյանցի նման մարդը «պոռնկություն» բառն է օգտագործում:

– Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթին արձագանքել է նաեւ Սեյրան Օհանյանը, որը դա արել է առանց ուղղակիորեն անդրադառնալու առաջին նախագահի խոսքին: Օհանյանի ֆեյսբուքյան գրառմանը ծանո՞թ եք:

– Սեյրան Օհանյանը խոսում է Բաքվի հետ բանակցության մասին: Ես միշտ էլ նախընտրել եմ ուղղակի բանակցությունները եւ դա արել եմ քանիցս՝ երբեմն հաջող արդյունքներով, երբեմն էլ՝ ոչ հաջող, սակայն առանց վնաս պատճառելու խաղաղության ձգտող գործընթացներին:

Ամփոփեմ Օհանյանի ասածը: Նա նշում է, որ.

ա. Ինքը համաձայն է Բաքվի հետ ուղղակի բանակցությունների,

բ. ԼՂ հարցի լուծումը, ի սկզբանե, ԼՂ անկախ պետականության միջազգային ճանաչումն է,

գ. Այդ պետականության համար անհրաժեշտ է պահել ԼՂ ներկա սահմանները՝ ներառյալ նախկին ԼՂԻՄ-ի շուրջ եւ այժմ՝ ԼՂՀ հակակշռի տակ գտնվող յոթ տարածքները,

դ. Մենք՝ Հայաստանի, Ղարաբաղի եւ Սփյուռքի, իբրեւ թե, 10 միլիոնանոց հայությունը տիրապետում ենք բոլոր միջոցներին՝ միայնակ պահելու համար այն, ինչ այսօր ունենք եւ դա պարտադրելու աշխարհին:

Չգիտեմ՝ այս իրավիճակում ի՞նչ է մնացել բանակցելու: Բաքու ենք գնում ասելու՝ ի՞նչ, որ Ադրբեջանն ընդունի՞ մեր ուզած տարբերակը: Նաեւ Բաքու գնալն ու բանակցելը նշանակում է Ալիեւին ընդունել որպես ռացիոնալ առաջնորդի: Մյուս կողմից՝ չէ՞ որ Օհանյանը նաեւ ասում է, թե Ադրբեջանը միայն ռազմական տրամաբանությամբ է առաջնորդվում: Ուրեմն՝ վերջնագի՞ր ենք տալու եւ հետո պատերա՞զմ հայտարարելու:

Այսինքն՝ Օհանյանն ասում է այն, ինչ մտածում են շատերը, թե իբր ԼՂ հարցը լուծված է: Մնում է, որ մյուսներն էլ ընդունեն մեր այդ որոշումը՝ անկախ առկա իրականություններից:

Օհանյանի եւ նրա նման խոսողների տրամաբանության մեջ ուշագրավ է նաեւ Սփյուռքին վերագրված դերը: Սա արդեն որերորդ անգամ է՝ որոշ քաղաքական գործիչներ եւ պետական պաշտոնյաներ Սփյուռքը պատկերացնում են որպես մեծ պետություն կամ դրան փոխարինող մի մեծ կառույց եւ նրան վերագրում կարողություններ ու առաքինություններ, որոնք պիտի լրացնեն Հայաստանի եւ Ղարաբաղի մոտ բաց մնացած կարողությունները:

Մի քանի տարին մեկ անգամ «վերագտնում» ենք Սփյուռքը, ասում ենք՝ եթե այս կամ այն անենք, Սփյուռքը մեզ կփրկի: Մոռացե՞լ ենք 1997-ը, երբ առաջին նախագահին ընդդիմանալով Ռ. Քոչարյանն ու իր գործակիցները փաստարկեցին, թե խուսափելու համար փոխզիջումների վրա հիմնված

լուծումից եւ դիմադրելու համար բոլորին, անհրաժեշտ է միայն չեղյալ համարել ՀՅԴ գործունեության կասեցումը եւ խոսել ցեղասպանության մասին: Նրանց խոսքով՝ դա անելով Հայաստանում սփյուռքյան ներդրումները հավասարվելու էին Ադրբեջանում նավթի բերած արտասահմանյան ներդրումներին:

ՀՅԴ-ն վերադարձավ քաղաքական դաշտ, մաս կազմեց Քոչարյանի կառավարության ու արդեն մի քանի տարի է մաս է կազմում Սարգսյանի վարչակարգին: Ցեղասպանության հարցը բարձրացրինք-հասցրինք պետության արտաքին քաղաքականությունը ճշտող տեսության: Ստեղծել ենք Սփյուռքի նախարարություն, մեդալներ ենք բաշխում: Նույնիսկ 100 հազար դոլար, այո՛, 100 հազար դոլար ենք ծախսում «Նյու Յորք Թայմս»-ում մի էջ գովազդ գնելու համար, որպեսզի նոր ներդրումներ հրավիրենք ու երկիրը շենացնենք: Ե՞ւ:

Այսպիսի քաղաքական մտածողության մեջ Սփյուռքը փոխարինում է ԱՄՆ-ին կամ Ռուսաստանին կամ էլ մտացածին այլ համապատասխան ուժի: Օհանյանը պիտի շատ լավ գիտենա Ռուսաստանի դերը այս բոլորի մեջ, մանավանդ Ռուսաստանի տրամադրությունները ԼՂ հարցի լուծման վերաբերյալ: Պիտի իմանա նաեւ մեր՝ աճող կախվածությունը, հաճելի թե ոչ, այդ պետությունից: Հատկապես՝ ռազմական, եւ, իհարկե, դրանով չսահմանափակված: Իսկ այդ կախվածությունը խորացավ վերջին երկու տասնամյակներին Օհանյանի առաջադրած նման սցենարներով: Որքա՞ն ժամանակ ենք մեր փափագն ու երազները շփոթելու իրական հնարավորությունների հետ:

Մի հավելյալ կարեւոր կետ եւս. Լեւոն Տեր-Պետրոսյանի ներկայացրած տրամաբանությանը հակադրվողները, երբ խոսում են քաղաքակիրթ լեզվով, վատագույն սցենարներն են ներկայացնում՝ իբրեւ հետեւանք այսօր սեղանին դրված լուծման: Նրանք պնդում են հետեւյալ թեզը. «Մենք միայնակ կարող ենք

մեր առավելագույն պահանջները պարտադրել բոլորին, հայերս՝ բոլորի դեմ»: Սակայն այդ հակաճառողներից ոչ մեկը չի ներկայացրել իրենց թեզին հետեւող հավանական սցենարները, չեմ էլ ասում՝ վատագույն սցենարները: Ա՛յ, դա կստեղծեր վիճարկման արդար դաշտ:

Այս հարցի մասին առայժմ այսքանը: Մանրամասն եւ հանգամանալից կանդրադառնամ ավելի ուշ:

ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
(Խմբագիր, լրագրող, վերլուծաբան)

20 ԿԱՄ 200 ՏԱՐԻ ՀԵՏՈ Ի՞ՆՉ ԿԳՐՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ՝ ՃԻ՞ՇՏ ԷՐ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԸ, ԹԵ՞ ՈՉ*

Լեւոն Տեր-Պետրոսյանն այն պետական-քաղաքական գործիչներից է, որին կարելի է սիրել, կարելի է ատել, որին կարելի է փառաբանել կամ պիտակավորել, ինչն արվում է Հայաստանում, Արցախում եւ սփյուռքում: Այս կարծիքին է լրագրող Թաթուլ Հակոբյանը: **ԳԱԼԱ-ի** հետ զրույցում նա անդրադարձավ ՀԱԿ համագումարին Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթին:

– **Պարոն Հակոբյան, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն այսօր ունեցած իր ելույթում վերահաստատեց ղարաբաղյան խնդրի կարգավորման տարիներ առաջ իր առաջարկած տարբերակի անխուսափելիությունը: Նա հայտարարեց. «Այլ տարբերակ չկա, 18 տարի առաջ ասում էիք՝ կա, կա՞, ցույց տվեք: Չկա, այն, ինչ այսօր դրված է սեղանին, նույն առաջարկը, ինչ 97 թ.-ին, որոշ տարածքների զիջման դիմաց Ղարաբաղին միջազգայնորեն ճանաչված միջանկյալ կարգավիճակ շնորհելու եւ վերջնական կարգավիճակի հարցն ապագային թողնելու՝ երաշխավորված ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում խաղաղապահ ուժերի տեղակայում: Սա է, ուրիշ բան չկա, ուրիշ հեքիաթի չհավատաք»: Ո՞րն է Ձեր կարծիքը Տեր-Պետրոսյանի այս շեշտադրման վերաբերյալ:**

– Լեւոն Տեր-Պետրոսյանը հետեւողական է իր տեսակետ-

---

* *galatv.am, 17.12.2016թ.:*

ներն առաջ տանելու հարցում եւ հետեւողական է իր համոզմունքների մեջ: Նրա այսօրվա ելույթը, որը կրկին խորքային ելույթ էր, կրկին արժանանալու է ամենախիստ քննադատությունների, բայց մյուս կողմից ցույց է տալիս, որ նա հավատում է ղարաբաղյան կարգավորման այն տեսլականին, այն տարբերակին, որը նա ուզում էր բերել Հայաստանին եւ Արցախին որպես լուծում 1997 թվականին, որը նաեւ պատճառ էր, կամ պատճառներից մեկը հրաժարականի՝ հենց նրա ղարաբաղյան քաղաքականությունն էր:

Այսինքն, Լեւոն Տեր-Պետրոսյանն այս հարցում այլեւս կարող ենք ասել, որ չի կարող փոխվել: Նա կրկնում է այն, ինչ կրկնել է 1993, 1997 թվականներին եւ այսօր: Սա կարող ենք արձանագրել: Ելույթը բավականին ծավալուն էր, որում անդրադարձավ բազմաթիվ կարեւորագույն խնդիրների, որոնց շատ քաղաքական-պետական գործիչներ չեն անդրադառնում: Ընդհանրապես, եթե ես համեմատելու լինեմ այլ ելույթների հետ, ի տարբերություն շատ այլ քաղաքական-պետական գործիչների, Լեւոն Տեր-Պետրոսյանը չի խուսափում ամենացավալի հարցերին անդրադառնալ, որոնք այսօր կանգնած են Հայաստանի պետականության առաջ եւ այսօր սպառնալիք են Հայաստանի պետականությանը: Դրանք են՝ արտագաղթը, կոռուպցիան, հարեւանների հետ ստեղծված այս վիճակը: Օրինակ, ես համեմատեմ Սերժ Սարգսյանի՝ մշակույթի գործիչների հետ հանդիպման հետ, որն, իհարկե, ձեւաչափով այլ հանդիպում էր, բայց նկատելի էր, որ այնտեղ տիրում էր շատ ավելի դրական մթնոլորտ, կարեւորագույն հարցերից խուսափելու ցանկություն, որոնք կանգնած են որպես սպառնալիք Հայաստանի առաջ: Ի դեպ, Տեր-Պետրոսյանը կարողանում է վեր կանգնել այդ պոպուլիզմից եւ իրականությանը նայել այնպես, ինչպես որ կա:

Կրկնում եմ, այսօրվա ելույթն առաջիկայում լինելու է ամենաշատ քննադատված, ամենաշատ քննարկված, ամենաշատը մեջբերված ելույթը:

– Ի՞նչ եք կարծում, Լեւոն Տեր-Պետրոսյանի պնդումները, որ արել էր 97-ին, այս ընթացքում հաստատվե՞լ են, որ իսկապես չկա այլ տարբերակ:

– Դա մի հարց է, որի պատասխանը մենք չենք կարող վերջնականապես տալ, քանի դեռ որեւիցե լուծում չի եղել: Տարբեր առիթներով էլի եմ ասել, որ եթե 20 տարի կամ 200 տարի հետո հայ ժողովուրդը կարողացավ Ղարաբաղի հարցում ունենալ այնպիսի մի լուծում, որը կհաստատի այսօրվա ստատուս-քվոն, այսինքն, մենք որեւէ բան չենք զիջել, այդ դեպքում պատմության ընթացքում Լեւոն Տեր-Պետրոսյանի մասին հավանաբար կգրեն, որ, ցավոք, նա մի նախագահ էր, ով հայ ժողովրդին մղում էր ցավալի փոխզիջումների, որ տեսնո՞ւմ եք՝ մենք ոչինչ չզիջեցինք: Սա 20 կամ 200 տարի հետո, երբ որ մենք չենք լինի: Բայց նաեւ մենք պետք է հիշենք, որ կարող է լինել մի իրավիճակ, երբ որ մենք շատ ավելի բան կորցրած կլինենք Ղարաբաղում, քան այն, ինչն առաջարկում էր Լեւոն Տեր-Պետրոսյանը: Այդ ժամանակ արդեն դասագրքերում կգրվի՝ բայց մենք ի՞նչ սխալ գործեցինք՝ ականջալուր չլինելով Լեւոն Տեր-Պետրոսյանին, ով ասում էր՝ պետք է հաղթածի մի մասը զիջել, որպեսզի մյուս մասը կարողանաս պահել: Քանի դեռ լուծում չկա, շատ դժվար է տալ գնահատական՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը ճի՞շտ է, թե՞ սխալ: Մի քանի բան, այնուամենայնիվ, կարելի է ասել, որ Հայաստանից արտագաղթը ցավալիորեն շարունակվում է, եւ դա Հայաստանի ամենամեծ սպառնալիքն է, եւ արտագաղթի հիմնական պատճառներից մեկն այն իրավիճակն է, որը ստեղծվել է Հայաստանում՝ Ղարաբաղի չլուծված հակամարտությունը, հարեւանների հետ այս իրավիճակը, որն ունենք: Սա է իրականությունը:

Եւս մեկ բան ակնհայտ է Լեւոն Տեր-Պետրոսյանի ասածից, որ իրականություն է դառնում: Այն լուծումը, որն ինքը պաշտպանում էր 97 թվականին, այսօր բանակցությունների սեղանին դրված է ճիշտ նույն տարբերակը: Այսինքն, այստեղ նա ճիշտ է ասում: Մի տարբերություն կա, որ 97 թվականին Լեւոն Տեր-Պետրոսյանը կողմնակից էր այդ լուծմանը՝ միջանկյալ կարգավիճակի դիմաց Ադրբեջանին տարածքներ վերադարձնելը, մյուս կողմից՝ մենք չգիտենք, թե այսօրվա իշխանություններն ինչ դիրքորոշում ունեն այն առաջարկին, որը դրված է սեղանին:

– Եթե ուզում ենք պահել ունեցածը, ուրեմն պետք է կարողանանք ձեւավորել լեգիտիմ իշխանություն: Հակառակ պարագայում, արդյոք նման որակներով իշխանությունն ունակ կլինի արտաքին քաղաքական դաշտում ճիշտ խաղալ: Այսինքն, եթե մենք գնալով թուլանում ենք, ապա այո, կարծես թե չի նշմարվում այլընտրանքը՝ շատ ցավալի կորուստների:

– Կարեւոր պահերից է, բայց դու կարող ես ունենալ ամենալեգիտիմ իշխանությունը, բայց հաջորդ պատերազմի ժամանակ պարտություն կրել: Մյուս կողմից՝ դու կարող ես ունենալ ոչ լեգիտիմ իշխանություն, բայց մյուս պատերազմի ժամանակ պարտություն չկրել: Լեգիտիմությունը չափազանց կարեւոր է, բայց լեգիտիմությունը չպետք է դարձնել որպես ամեն ինչի փրկության դեղամիջոց, բալասան: Հարցն այդպես չպետք է դնել: Իհարկե, շատ կարեւոր է լեգիտիմությունը, մյուս կողմից ո՞վ է ասում, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը 1997 թվականին, որ գնում էր ցավալի փոխզիջումների, լեգիտիմություն ուներ: Ինքն այդ ժամանակ ուներ լեգիտիմության բավականին մեծ դեֆիցիտ: Լեգիտիմությունը չպետք է դարձնել որպես բացարձակ արժեք: Մենք կարող ենք պատմությունից բերել օրինակներ, երբ որ ոչ լեգիտիմ իշխանությունները կարողացել են

հաղթել պատերազմում, եւ հակառակը: Բայց, իհարկե, միանշանակ է, որ միշտ էլ լեգիտիմ իշխանությունն ավելի ուժեղ դիրքերից է կարողանում խոսել, որովհետեւ լեգիտիմ իշխանությունն իր հետեւում զգում է իր ժողովրդի շնչառությունը, իր ժողովրդի ցանկությունները, իղձերն ու մտահոգությունները: Ոչ լեգիտիմ իշխանությունները դա զգում են Մոսկվայից, այլ երկրների մայրաքաղաքներից՝ նույնքան ոչ ժողովրդավարական, ավտորիտար առաջնորդներից: Այստեղ, իհարկե, մեծ տարբերություն կա:

– Պարոն Հակոբյան, իսկ որո՞նք էին Տեր-Պետրոսյանի հիմնական ուղերձները:

– Լեւոն Տեր-Պետրոսյանի այս մեկ ժամանոց ելույթում կային մի շարք, կարմիր թելի նման գնացող ուղերձներ, որոնք արժե, որ քննարկումների նյութ դառնան: Առաջինը, որ նա անուղղակի կերպով, գուցե նաեւ ուղղակի, Սերժ Սարգսյանին ասաց, որ Ղարաբաղի հարցում պետք է գնալ ցավալի փոխզիջումների: Սա, իմ կարծիքով, նրա ելույթի կարեւորագույն ուղերձներից մեկն էր՝ ուղղված Սերժ Սարգսյանին: Ճիշտ է, մի կողմից նա անխնա կերպով քննադատեց ռեժիմին եւ կոալիցիոն կառավարությանը, նա ՀՀԿ-ին անվանեց աղետ հայ ժողովրդի գլխին, բայց մյուս կողմից նա հստակ ուղերձ հղեց Սերժ Սարգսյանին:

– Իսկ գուցե այս հարցում իր ծառայությունն՞ը մատուցեց Սերժ Սարգսյանին:

– Ես կարծում եմ, որ, այդուամենայնիվ, Լեւոն Տեր-Պետրոսյանն այն քաղաքական, պետական գործիչը չէ, որ ծառայություն մատուցելու դիմաց ակնկալի մեկ կամ մի քանի տեղ խորհրդարանում: Ես կարծում եմ, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայ ժողովրդի ապագայի հետ կապված խորը մտահոգություններ ունեցող պետական-քաղաքական գործիչ է:

Վերադառնալով նրա ուղերձներին՝ ես կարող եմ ասել, որ նա հստակ ուղերձ հղեց իշխանություններին, որ ազգ-բանակ քաղաքականությունը, որը դուք որդեգրել եք, շատ վտանգավոր է, եւ ինքը փորձեց նաեւ օրինակներով ցույց տալ, թե ինչպես է եղել ազգ-բանակ պետության օրինակները համաշխարհային պատմության մեջ: Հավանաբար այս հարցում իշխանությունների կողմից կլինի համապատասխան արձագանք: Ակնհայտ էր նաեւ նրա հետեւյալ ուղերձը, որ պետք չէ ակնկալել սփյուռքից հրաշքներ:

Նա ոչ թե նվաստացրեց սփյուռքին, այլ ասաց, որ այսպիսին են սփյուռքի կարողությունները՝ հաշվի առնելով, որ ինչու պետք է սփյուռքն օգնի Հայաստանին, երբ որ ինքը՝ սփյուռքը, տեսնում է, որ նույն իշխանությունները թալանում են սեփական ժողովրդին: Իհարկե, նա բավականին անուղղակի կերպով կոշտ քննադատության ենթարկեց կոալիցիայի մաս կազմող ՀՅԴ-ին եւ Ռոբերտ Քոչարյանին՝ հիշեցնելով նրա որսի մեկնելն Աֆրիկա:

Եւ եւս մի շատ կարեւոր ուղերձ էր նրա այն խոսքը, որ 1998 թվականից հետո՝ իրեն իշխանությունից հեռացնելուց հետո, այն փիլիսոփայությունը, որ որդեգրեցին Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի կառավարությունները, այսինքն՝ Հայաստանը կարող է զարգանալ շրջափակման պայմաններում, այդ պնդումն իրականություն չդարձավ, եւ Հայաստանը չի կարող թշնամական հարեւաններով շրջափակման պայմաններում հասնել հաջողությունների: Սրանք էին հիմնականում նրա ուղերձները: Որպես ամփոփում դրա համար էր, որ նա իր ղեկավարած ուժի՝ ՀԱԿ-ի համար 2017թ. ապրիլյան ընտրություններին առաջարկեց ընտրել «Խաղաղություն, հաշտություն, բարիդրացիություն» նշանաբանը:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ
(Պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ պրոֆեսոր)

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ԲԱՑԵՑ ԲՈԼՈՐ ԽԱՂԱՔԱՐՏԵՐԸ. ՆՈՒՅՆ ԽՆԴԻՐԸ ՀԻՄԱ ԴՐՎԱԾ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՌՋԵՒ*

Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Ներսիսյանը Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցում կողմնակից է փոխզիջումային տարբերակին՝ ասելով, որ հայկական կողմը պիտի հրաժարվի մաքսիմալիստական մոտեցումներից, գնա փոխզիջումների եւ պահպանի Արցախը նախկին ԼՂԻՄ-ի սահմաններում, այլապես կարող է կրկնվել այն, ինչ տեղի ունեցավ 1920-21 թթ.: Պատմաբանը այս տեսակետը հայտնեց «Առաջին լրատվական»-ի հետ զրույցում՝ մեկնաբանելով Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ դեկտեմբերի 17-ի ելույթը ՀԱԿ կուսակցության համագումարում:

– Պարոն Ներսիսյան, Լեւոն Տեր-Պետրոսյանը ասում է, որ առանց Ղարաբաղյան խնդրի լուծման եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հնարավոր չի ապահովել երկրի զարգացումը, եւ եթե այսօր չգնանք այդ լուծմանը, հետագայում շատ ավելի թույլ վիճակում եւ ավելի վատթար պայմաններով ենք լուծելու հիմնախնդիրը: Դուք նույնպես միշտ նշել եք, որ ազգային հիմնախնդիրների հարցում պետք է ավելի իրատես լինել, ունենալ ավելի չափավոր, պրագմատիկ մոտեցումներ: Այս իմաստով, որքանո՞վ եք համաձայն Տեր-Պետրոսյանի մոտեցումների հետ ներկայիս իրավիճակում, եւ ի՞նչ զուգահեռներ կարող ենք

---

* *1in.am, 24.12.2016թ.:*

անցկացնել 1918–20 թթ. հայ-ադրբեջանական, հայ-թուրքական հարաբերությունների հետ:

– Ընդհանուր առմամբ, ես կիսում եմ առաջին նախագահի տեսակետները այն առումով, որ փոխզիջումները պարտադիր են երկրի հետագա տնտեսական, քաղաքական զարգացման արդյունավետությունը ապահովելու համար, մանավանդ, որ տվյալ իրավիճակում հնարավոր չէ պատերազմով խնդիրը լուծել, եւ պատերազմը այս տարածաշրջանում առհասարակ ձեռնտու չի ո՛չ Ռուսաստանին, ո՛չ Արեւմուտքին, ո՛չ մեզ, եւ ո՛չ էլ Ադրբեջանին: Փոխզիջումային տարբերակը ընդհանուր առմամբ պատմության մեջ միշտ էլ եղել է ընդունելի, երբ ինչ որ մի բան տալիս ես ինչ-որ մի բան պահելու համար: Կրկնում եմ, խոսքը վերաբերում է փոխզիջումներին, ոչ թե միակողմանի զիջմանը: Այս տեսանկյունից, Հայաստանի առաջին հանրապետության շրջանում մեր քաղաքական միտքը սայթաքումներ է թույլ տվել, որովհետեւ չի գնացել փոխզիջումների՝ մասնավորապես բոլշեւիկ-քեմալական դաշինքնի առկայության պայմաններում: Եւ դա ռեալ էր, երբ արդեն հասկանալի էր, որ Անտանտի դաշնակիցները ոչինչ չեն անելու Սեւրի պայմանագրի իրականացման ուղղությամբ: Այդ ժամանակ մենք պիտի փորձեինք գնալ թուրքերի հետ փոխզիջումների, օրինակ՝ հրաժարվել Սեւրի պայմանագրով նախատեսված սահմաններից, որը դեռեւս իրականանալի չէր՝ ինչպես Վիլսոնի իրավարար վճիռը՝ նոյեմբերի 22-ի Թուրքիայի սահմանազատումը: Տվյալ քաղաքական իրավիճակում, սթափ մտքի պայմաններում պիտի պարզ լիներ, որ այդ գաղափարները իրականանալի չէին, եւ մենք պիտի զոհեինք ինչ-որ բան ինչ-որ տարածքներ պահելու համար: Համենայն դեպս կարծում եմ, որ մենք կարող էինք այդ ժամանակ պահել 1914 թ. սահմանները, գուցե կարողանայինք պահել նաեւ Իգդիրը, Բայազետը, բայց մենք կրկին չգնացինք փոխզիջումների՝ հավատալով Անտանտի տերություններին, որոնք արդեն թաքուն մտածում էին՝ ինչպես Քեմալին քաշել իրենց կողմը՝ ի հեճուկս Ռուսաստանի, եւ իրենք ինչ-որ տեղ հասան իրենց նպատակին, իսկ մենք այս իրավիճակում կորուստներ տվեցինք, ավելին՝ դաժան կորուստներ տվեցինք: Իսկ արդեն հաջորդ տարի՝ 1921 թվականին, Հայաստանը բաժանվեց:

Ուզում եմ ասել, որ եթե մենք քաղաքական քաջություն ունենայինք, հրաժարվեինք մաքսիմալիզմից եւ փորձեինք Հայաստանը հռչակել խորհրդային՝ մինչեւ 1920 թ. օգոստոսի 24-ին ռուս-թուրքական համաձայնագրի նախագծի ստորագրումը, ավելի շատ տարածքներ կշահեինք:

Նույնը վերաբերում է այսօրվան: Այդ առումով, ես միշտ էլ ընդունել եմ Տեր-Պետրոսյանի տեսակետները, որովհետեւ հիմա իսկապես մեր ժողովուրդը խաղաղության կարոտ է: Առհասարակ ես համամիտ եմ նրա այն տեսակետին, որ ժողովուրդները սիրում են այն թագավորներին, ովքեր խաղաղություն են բերել: Այդ առումով էլ միշտ բարձրաձայնել եմ, որ, այո՛, ժողովուրդները միշտ էլ սիրում են այն թագավորներին, որոնք բերում են խաղաղություն, օրինապահություն, կարգապահություն, աշխատանք, սոցիալական բարգավաճում, որի դեպքում պետությունը աճում է:

– Բայց պարոն Ներսիսյան, ի՞նչ երաշխիք կա, որ տարածքներ հանձնելով՝ կլինի խաղաղություն մի պետության հետ, որը չի թաքցնում իր ռազմական ագրեսիան եւ իր հավակնությունները տիրելու ոչ միայն նշված տարածքներին, այլեւ ողջ Արցախին, անգամ Հայաստանի Հանրապետության տարածքներին:

– Բնականաբար, ես սպասում էի այդ հարցին: Դեկլարատիվ հայտարարությունները մի բան են... Տվյալ դեպքում՝ Ալիեւի նմանատիպ ռազմաշունչ հայտարարությունները պարզապես պահի թելադրությամբ արված հայտարարություններ են:

Նման բան հնարավոր չէ: Իսկ ինչ վերաբերում է հարցին՝ ի՞նչ երաշխիք կա, ապա երաշխիքը հետեւյալն է՝ հրադադարի համաձայնագիրը պետք է վերափոխվի խաղաղության պայմանագրի՝ ռեալ կետերով:

– Ադրբեջանը հրադադարի պայմանագիրը չի հարգում եւ խախտում է ցանկացած պահի, եւ դա ցույց տվեց ապրիլյան պատերազմում:

– Ճիշտ է, չի հարգում:

– Ուրեմն, ինչո՞ւ պիտի հարգի խաղաղության պայմանագիրը: Օրինակ՝ եթե պայմանագիր է կնքվում, մենք առաջինը հանձնում ենք տարածքները եւ ինչ-որ մի փուլում Ադրբեջանը, տեսնելով, որ ինքը ուժեղ է եւ ավելի լավ դիրքեր ունի, շարունակում է հարձակումը ավելի բարենպաստ դիրքերից եւ ամբողջացնում է Արցախի բռնազավթումը:

– Ես չէի ասի, որ Ադրբեջանը ավելի ուժեղ է, ես լուրջ չեմ համարում նման հայտարարությունները: Այստեղ խնդիրը լրիվ այլ հարթության վրա է: Նա շատ բան կարող է հայտարարել, ասել՝ մենք այս կանենք, այն կանենք:

Ես, որպես պատմաբան, ամենեւին հակված չեմ այս կամ այն քաղաքական ուժին անվերապահորեն ընդունելու կամ մյուսին մերժելու, ես պարզապես փորձում եմ իմ հնարավորությունների սահմաններում դատել՝ ելնելով պատմական իրադարձությունների, հատկապես 1918-21 թթ. պատմական փորձից: Կարծում եմ՝ այդ ռազմաշունչ հայտարարությունները դեկլարատիվ բնույթ ունեն: Տեր-Պետրոսյանը իր ելույթում ասաց, որ Ղարաբաղը պետք է ստանա միջանկյալ կարգավիճակ, խաղաղապահ զորքեր, իսկ գրավյալ տարածքները պիտի տրվեն Ադրբեջանին, եւ ուրիշ բան չկա: Փաստորեն, նա բացեց բոլոր խաղաքարտերը: Եւ ես այն կարծիքին եմ, որ այդ նույն խնդիրը հիմա դրված է հանրապետության նախագահի առջեւ: Հոգու խորքում համոզված եմ, որ նախագահն ինքն էլ պիտի որ հակված լինի ղարաբաղյան թնջուկը այդ կերպ լուծելու տարբերակին:

Բայց մի բան ասեմ. այսպես կոչված՝ քաղաքական, ընդդիմադիր ուժերը, որոնք շահարկում են Ղարաբաղի խնդրում փոխզիջումների հարցը եւ նույնիսկ ռազմաշունչ հայտարարություններ են անում, թե եթե պետք եղավ, մենք կգնանք մինչեւ Բաքու, նրանք անկեղծ չեն, եւ ցանկացած քաղաքական ուժ, անկախ ներկայիս իշխանությունների թերություններից, եթե գա իշխանության, ստիպված պիտի գնա այն ուղիով, որն այժմ համարվում է ավելի ճիշտ եւ ավելի արդյունավետ:

– Դուք ասում եք՝ պետք է գնալ փոխզիջումների: Հայկական կողմը հայտարարել է, որ պատրաստ է տարածքային զիջումներ անել, իսկ ի՞նչ զիջումների մասին է խոսել Ադրբեջանը: Արդյոք Ադրբեջանն ասե՞լ է, որ կգնամ զիջումների, եթե հայկական կողմն էլ պատրաստակամություն հայտնի զիջումներ անել: Ինչի՞ մասին ենք խոսում: Տեր-Պետրոսյանը խոսում է միայն հայկական կողմի հնարավոր զիջումների մասին, բայց չի ասում, թե ի՞նչ զիջումների է պատրաստ Ադրբեջանը:

– Տեր-Պետրոսյանը, որքան հիշում եմ, այս դեպքում խոսում է 5 գրավյալ շրջանները (Քելբաջարից բացի) Ադրբեջանին զիջելու դիմաց՝ Ղարաբաղին միջանկյալ կարգավիճակ տալու մասին:

– Ընդ որում, վերջնական կարգավիճակի հարցը թողնում են հետագային, այսինքն՝ հայկական կողմը պիտի զիջի այդ տարածքները, հետագայում կորոշեն՝ անկախ պիտի լինի, թե՞, օրինակ, ինքնավար կարգավիճակ ստանա Ադրբեջանի կազմում: Դուք համաձա՞յն եք լուծման այդ տարբերակին:

– Իմ համաձայնությունը հարցի մյուս կողմն է: Ես ինքս խաղաղության կողմնակից եմ եւ համոզված եմ, որ մենք

հաստատ կպահենք Ղարաբաղը՝ առանց այդ գրավյալ տարածքների: Այն, ինչ կարող ենք պահել ռեալ՝ մեր ժողովուրդներին բերելով խաղաղություն, կարծում եմ՝ հնարավոր է այս տարբերակով, իսկ հակառակ դեպքում՝ պատերազմը անընդհատ կշարունակվի, որից մենք չենք շահի:

– Ձեր ընդդիմախոսներն էլ ասում են, որ հնարավոր չի պահել Ղարաբաղը՝ այդ տարածքները հանձնելով եւ Ղարաբաղը դնելով շրջափակման մեջ՝ ուղիղ հարվածի տակ: Այդ դեպքում անգամ Հայաստանի տարածքներն են ուղիղ վտանգի ենթարկվում:

– Ինչպե՞ս շրջափակման մեջ, չէ՞ որ այնտեղ կա Հայաստանին կապող օղակ:

– Ընդամենը Լաչինի մի փոքր միջանցքը: Արդյո՞ք դա ապահովում է երկարատեւ անվտանգություն:

– Գիտեք, դա կախված է նաեւ մեզնից: Ես կողմնակից չեմ ուռռա-կեցցեական կարգախոսներին: Եթե այսպես մտածենք, չուժեղացնենք մեր պետականությունը, չուժեղացնենք, չիզորացնենք մեր բանակը, այս ստատուս-քվոյի վիճակը պահելով էլ ոչ մի երաշխիք չունենք, որ վաղը ինչ-որ բան չենք կորցնի: Կպահենք, թե կկորցնենք՝ կախված է միայն մեզնից, մեր ճիշտ արտաքին քաղաքականությունից: Հայրենասիրությունը միայն այն չէ, որ ուռռա-կեցցեական հայտարարություններ անենք, հետո գնանք Արցախ, նկարվենք: Կոնկրետ ռեալ քայլեր պիտի արվեն: Մենք պիտի հրաժարվենք մաքսիմալիզմից, որպեսզի ամրացնենք մեր պետականությունը: Հիմա մենք ներքին սոցիալ-տնտեսական խնդիրներ ունենք: Արցախը տանում է մեզնից շատ բան՝ ֆինանսներ, մարդկային ռեսուրսներ եւ այլն: Խաղաղությունը քանի դեռ չի տիրում մեր հոգիներում...

– Խաղաղությունը Ադրբեջանում եւ Ալիեւի հոգում ընդհանրապես չի տիրում, նա ամեն դեպքում հակված չի խաղաղության, եւ չունենք որեւէ փաստ, որի հիման վրա կարող ենք ասել, որ Ադրբեջանը ուզում է խաղաղություն:

– Այո, ճիշտ է: Ես չեմ պնդում, որ Ալիեւը հակված է խաղաղության: Խաղաղությանը նրա հակվածության աստիճանը կախված է նաեւ մեզնից: Եթե մենք գնանք խաղաղության այս ուղղությամբ, որը մատնանշում է նաեւ առաջին նախագահը, ինձ թվում է՝ հետագայում նա կհրաժարվի իր ռազմատենչ ձգտումներից: Եւ դա նշեց նաեւ առաջին նախագահը, որ եթե պատերազմ լինի, հաստատ մենք կհաղթենք պատերազմում, բայց պատերազմի լինել-չլինելը նախ մեզնից չի կախված, երկրորդը՝ մարդիկ հիմա խուսափում են պատերազմից, մարդիկ սիրում են խաղաղություն:

– Մարդիկ ավելի իրատեսորեն են նայում՝ հասկանալով, որ տվյալ դեպքում զիջելը ոչ թե խաղաղություն կբերի, այլ ավելի խոցելի է դարձնում անվտանգությունը:

– Նայած, թե մենք ինչ ենք զիջում: Եթե զիջում ենք տարածքներ, որոնք մեր պատմական տարածքներն են, այդ դեպքում կարելի է մտահոգվել:

Սա, ինչպես մեր նախկին հարցազրույցներից մեկը, կարող է տարաբնույթ ընկալումների տեղիք տալ, թե ես, որպես պատմաբան, այնպիսի հայտարարություններ եմ անում, որը համահունչ է Ադրբեջանի քաղաքական ծրագրերին: Ամենեւին այդպես չի: Դա մեր քաղաքական մտքի պահանջն է, որպեսզի հրաժարվենք մաքսիմալիզմից, ապահովենք խաղաղություն եւ գոնե պահենք Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար մարզը՝ որպես հայկական տարածք: Կարծում եմ, որ այս դեպքում խաղաղություն կտիրի, եւ Ադրբեջանի ռազմաշունչ հայտարարություններն էլ կդադարեն: Համենայն դեպս ես այն կարծիքին եմ, որ մեր իշխանության վերին օղակներում էլ են այսպես մտածում, բայց քանի որ հիմա նախընտրական շրջան է, եւ ընդդիմադիր ուժերը կարող են դա

օգտագործել՝ որպես իշխանությունների կողմից դավաճանական քայլ, բացահայտ չեն արտահայտվում այդ առումով:

Կարծում եմ, որ իսկապես անհրաժեշտ է անկեղծ հանդես գալ ժողովրդի առաջ, հայտնել բանակցությունների հիմնական նպատակադրումները, որ ժողովո՛ւրդ, մենք ուզում ենք խաղաղություն, որ այսպես պիտի լինի, որպեսզի ժողովուրդը դա հասկանա, եւ գնալ այն ճանապարհով, որը կբերի խաղաղության: Եւ դրանից հետո բոլոր ուժերը ներդնել մեր պետականության հզորացման եւ ամրապնդման գործում:

ՏԻԳՐԱՆ ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆ
(Գրող, հրապարակախոս)

ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒՆԻ ՄԵԿ ԽՆԴԻՐ՝ ԱՐՑԱԽԸ*

– Տիգրան, Դուք վերջերս «Հետքին» շատ կարճ, բայց իմ կարծիքով ուշագրավ հարցազրույցում ասում էիք, որ Հայաստանում չկան արտաքին եւ ներքաղաքական խնդիրներ, Հայաստանում կա մի խնդիր, դա Արցախի հարցն է, եւ մնացածն ածանցյալ են դրանից եւ Արցախի հարցում էլ կա զոհը եւ կա հերոսը, որ էլի էդ մարդիկ են, մենք ենք: Ի՞նչ է սա նշանակում, նշանակում է, որ էլ ընտրություն չի՞ լինելու մեզ մոտ:

– Մեզ մոտ լավ կամ վատ, որակյալ կամ անորակ ընտրություններ տեղի են ունենում 90 թվականից սկսած, բայց չկա ընտրություն: Դրա համար եմ ասում, որ ներքաղաքական կյանք չկա, արտաքին քաղաքականություն չկա, կա Արցախի խնդիր եւ դա է բոլորը: Այսինքն, մենք սեւեռված ենք Արցախի խնդրի վրա: Չեմ կարծում, որ ՀՀ ԱԳՆ-ն ուրիշ շատ լուրջ խնդիրներով բանակցում է աշխարհի մյուս պետությունների հետ: Պաշտոնական ինչ տեղեկատվություն լսում ես, մեծ մասամբ առնչվում է Ղարաբաղի հարցին: Նույնն էլ՝ ներքին քաղաքականության մեջ. մարդիկ կարող են շատ լուրջ բաներ խոսել՝ կոռուպցիայից, սոցիալական, տնտեսական խնդիրներից, բայց բոլորի համար մեծ հաշվով փորձաքարն Արցախի հարցն է: Այսինքն՝ ինչ ուզում ես խոսիր, բայց ամենագլխավորը, որ ժողովուրդը քեզանից ակնկալում է, Արցախի հարցն է: Եւ դեկտեմբերի 17-ի ելույթով Լեւոն Տեր-Պետրոսյանն ա՛յդ ճշգրտումն արեց: Ասում են՝ ոչ մի նոր բան չասաց, բնական է, նոր բան

* *civilnet.am, 13.01.2017թ.:*

պիտի չասեր, որովհետեւ այն, ինչ կարեւոր էր, կոնցեպտուալ էր, ասվել էր 97-98-ին: Ինքը ճշգրտում մտցրեց, իսկ հետո՝ արդեն հոդվածում, որը բացատրական էր, ասաց, թե դա հատուկ արվում է ընտրություններից առաջ, որովհետեւ ամենալավ ժամանակը նախընտրական շրջանն է: Այսինքն՝ ընտրություններից առաջ այդ բովանդակությունը պիտի մտնի մեր քաղաքական քննարկումների մեջ:

– Բայց հանրության մեծ մասը ասում է Արցախի հարցը լուծված է, ի՞նչ Արցախի հարց:

– Իմ նախորդ հարցազրույցում (**hetq.am, 09.01.2017, «Ես ընտրել եմ ժամապահի աշտարակը»**) մի հարցադրում էի արել. եթե Արցախի հարցը լուծված է, ինչո՞ւ են այսքան շատ զոհվում, 160 զոհ ենք ունեցել 2016 թվականին: Վերջերս մի հայտարարություն տեսա, որն ուղղված էր էլի Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի դեմ: Այսպիսի մի ֆրազ կար, ասում էին՝ «խաղաղություն եւ պատերազմ. կեղծ երկընտրանք»: Ես ուղղակի ապշեցի այդ ֆրազից. ի՞նչ է նշանակում՝ «խաղաղություն եւ պատերազմ. կեղծ երկընտրանք»: Դա կեղծ է թվում, որովհետեւ պատերազմի կողմնակիցները չեն համարում, որ իրենք պատերազմի կողմնակից են, դրա համար էլ այդ երկընտրանքը թվում է կեղծ, որովհետեւ իրականում պատերազմի կողմնակիցներ Հայաստանում չկան: Հայաստանում կան, այսպես կոչված, ստատուս-քվոյի կողմնակիցներ: Իսկ ստատուս-քվոն պատերազմ չէ: Հիմա մենք ասում ենք՝ զոհեր տվեցինք, այդ զոհերը հերոս տղերք են, բայց իրենք ստատուս-քվոյի զոհերն են, իրենք պատերազմի զոհերը չեն, պատերազմի զոհերն 90–94 թվականին զոհվածներն էին: Եւ ես կարծում եմ, որ «ազգբանակը», 1000 դրամների հավաքագրումը, ուղղակի արվում է ստատուս-քվոն նոր որակի բարձրացնելու համար:

– Դուք նաեւ նշել էիք, որ ստատուս-քվոն շատ ծանր վիրավորվել է Ապրիլյան պատերազմի ընթացքում:

– Ապրիլյան պատերազմը հարված էր: Կարծում եմ՝ Ադրբեջանը շատ լավ գիտեր, որ ինքն այդ հարվածով Ղարաբաղը չի կարող գրավել, լուրջ հաջողություններ գրանցել, դա հարված էր ուղղված ստատուս-քվոյին:

– Եւ հաջողվե՞ց դա փոխել:

– Դա ստատուս-քվոյի փորձարկումն էր: Հետո արդեն մտավ մեր հասարակության մեջ, որոշակի արձագանք գտավ՝ նույն «Սասնա ծռերի» գործողությամբ, մյուս կողմից էլ արձագանք գտավ դեկտեմբերի 17-ի ելույթում, որտեղ Կոնգրեսի նախագահը, ՀՀ առաջին նախագահը փորձում էր հիշեցնել 18 տարի առաջվա իր ասածը:

– Տարիքս բավականացնում է, որ հիշեմ պատերազմից անմիջապես հետո ընկած ժամանակաշրջանը, երբ որ պատերազմով անցած մարդիկ, իրենց մաշկի վրա զգացած մարդիկ շատ ավելի զուսպ էին խոսում պատերազմի մասին, ասենք Ադրբեջանը քառատելու մասին, «Քուռ-Արաքսը» էլ չեմ ասում, քան հիմա: Հիմա այս մասին ավելի շատ խոսում են դեզերտիրները, ովքեր բանակում չեն ծառայել, ինչո՞ւ է այդպես:

– 97–98 թվականներին, իհարկե, արձագանքները շատ ավելի զուսպ էին: Որովհետեւ այդ ժամանակ դեռ կար այն միտքը, այն համոզմունքը, որ ոչ, մենք ունենք այլընտրանք, մենք փորձելու հնարավորություն ունենք: Ի դեպ, Վազգեն Սարգսյանի մի ելույթ կա՝ Ստեփանակերտում մտավորականության, պաշտոնյաների, լրագրողների առջեւ: Ինքն ասում է՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը մեզ հնարավորություն է տվել փորձելու, մենք այդպես ենք ընկալում իր հրաժարականը: Մենք պիտի փորձենք, եւ ինքը շատ երկար բացատրում է ինչ պետք է անենք՝ Սփյուռքը համախմբենք, մեր ուժերը համախմբենք, չթողենք, որ հայաստանցի-ղարաբաղցի հարաբերությունները խաթարվեն եւ այլն: Այսինքն՝ այդ ժամանակ կար հույս, կար փորձելու

տարբերակ, հիմա ռեակցիան շատ ավելի կատաղի է, որովհետեւ անցած 18 տարվա ընթացքում համոզվել են, որ ստատուս-քվոն չբերեց որեւէ արդյունքի, իսկ հակառակ արդյունքներ եղան՝ ե՛ւ բնակչությունը պակասեց, ե՛ւ Ղարաբաղի շրջանները չբնակեցվեցին, ե՛ւ սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրները չլուծվեցին: Այդ պատճառով այսօր շատ ավելի մեծ է արձագանքը: Արցախում Վահրամ Աթանեսյանը մի կլոր սեղան էր կազմակերպել, շատ հմայիչ վերնագրով՝ «Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի արցախյան ընկալումները»: Ճիշտն ասած՝ 2-րդ րոպեից ուզում էի արդեն անջատել, բայց համբերությունս հավաքելով ամբողջը նայեցի: Բանն այն էր, որ դա ոչ մի գաղափարի վրա հիմնված, հայհոյախառն մի ընդդիմություն էր այս պահին, ըստ էության, իշխանություն չունեցող քաղաքական մի գործչի: Այ, մենք ասում ենք՝ մեր էն տղերքը, որ կանգնած են սահմանին, իրենց ցավը տանենք, ես այդ բանը շատ լավ հասկանում եմ, իմ տղան ընդամենը 1.5 տարի առաջ է վերադարձել, 2 տարի Աղդամի դիրքերում էր կանգնած: Բայց ինձ համար ցավալի եւ ահավոր ծանր է տեսնել, որ նրանց հետեւում քաղաքական մտքի այդպիսի դատարկություն կա, այդքան անիմաստ խոսակցություն, ինչպես որ այդ տեսանյութում էր: Ես դրանից ճիշտն ասած վախենում եմ, տագնապում եմ, որովհետեւ ամեն ինչը շարքով ու հերթով պիտի լինի, չէ՞, ինչպես բանակում՝ հետեւակ, հրետանի, հետո մյուսը, մյուսը...

– Հայաստանում չկա՞ն մտածող մարդիկ, կամ չե՞ն ուզում այդ մտածող մարդիկ բարձրաձայնեն, ինչու եմ այս հարցը տալիս, որովհետեւ Լեւոն Տեր-Պետրոսյանը հենց խոսում է, բոլորը այսպես ասեմ՝ հարձակվում են, բայց մյուս կողմից չեմ տեսնում նաեւ այլ մտածող մարդկանց խոսքեր: Չեմ ասում՝ Տեր-Պետրոսյանը ճիշտ է ասում, թե սխալ, դուք ի՞նչ եք կարծում, Հայաստանում պակասե՞լ է մտածող մարդկանց քանակը, թե՞ վախենում են արտահայտվեն, որովհետեւ այս ռազմահայրենասիրական պաթոսը իրենց ստիպում է, որ մի բան ասելուց առաջ... այ դուք հստակ ասում եք, բայց մարդիկ կան, որ վախենում են, ասում են՝ լավ մեզ կասեն դավաճա՞ն ես դու, ի՞նչ հողերի մասին ա խոսքը:

– Կարծում եմ՝ մեծ դեր ունեն եւ կարծրատիպերը, եւ մեր սովետական դաստիարակությունը, որը բացի սովետական լինելուց, նաեւ բավական մեծ չափով ազգայնական էր: Այդ դաստիարակությունն է, որ թույլ չի տալիս ընկալել ելույթը, խոսքը: Մյուս կողմից կաղապարը, որ հենց 97-ից էլ դրվեց. խաղաղության մասին որեւէ խոսակցություն պարտվողականություն է: Կաղապարը դրվեց ու վերջացավ, մարդիկ չեն կարողանում ընկալել մի պարզ բան. մենք բոլորս դպրոցում սովորել ենք, մաթեմատիկա, երկրաչափություն, ֆիզիկա նման բաներ ենք անցել, ասենք մեզ մաթեմատիկայի խնդիր են տալիս, ու մենք դասատուին ասում ենք՝ գիտեք, ընկեր էսինչյան, դուք պարտվողական քաղաքականություն եք վարում, որովհետեւ մեզ ստիպում եք խնդիր լուծել, որովհետեւ այս խնդիրը մենք կարող է՝ կարողանանք լուծել, կարող է՝ չկարողանանք: Այ սա է, որ թույլ չի տալիս հասկանալ այն, ինչ ասում է Լեւոն Տեր-Պետրոսյանը: Լեւոն Տեր-Պետրոսյանը ե՛ւ 97-ին ե՛ւ հիմա ընդամենը ասում է մի պարզ բան. խաղաղությունը հիմք վերցնելով լուծել խնդիրը: Դրա մեջ ես անձամբ չեմ տեսնում ոչ Ղարաբաղի կորուստ, ոչ Ղարաբաղի ժողովրդի անվտանգության խաթարում:

– Բայց կա հողեր վերադարձնելու հստակ պահ, որը նույնն ասում էր Սերժ Սարգսյանը:

– Հակառակորդները, եթե նրանք իսկապես հակառակորդներ են, ոչ թե աղմկարարներ, պիտի դնեն պատերազմի խնդիր, ու նույն ձեւով՝ դպրոցի ու դասատուի օրինակով, պիտի լուծեն պատերազմի խնդիրը: Որեւէ մեկը մինչ օրս ապացուցե՞լ է,

թե մենք ունենք հնարավորություն, որ գնանք Բաքուն գրավենք կամ հազար տարի պահենք այս սահմանները եւ, այդ ամենն անելով՝ նաեւ զարգանանք, մեր բնակչությունը աճի, կենսամակարդակը բարձրանա: Ոչ մեկը հակառակ թեզն առաջ չի քաշում. բոլորի համար շատ հաճելի է ստատուս-քվոյի ճահիճը: Երբ ասում եմ՝ ստատուս-քվոն հարված ստացավ, հենց այնպես, օդից չեմ ասում: Այդ միքտն ինձ մոտ առաջացավ, երբ անցած տարվա ապրիլի վերջին-մայիսին գնացի Ղարաբաղ: Ես չտեսա այն անհոգությունը, որը կար 2010 թվականին, 2015-ին կամ 2008-ին: Այդ անհոգությունն այլեւս չկար ժողովրդի մեջ: Մարդկանց մտահոգություններն էին փոխվել, տրամադրությունն էր փոխվել: Եւ եթե մենք սիրում ենք Ղարաբաղը, իսկ ես կարծում եմ՝ մեր ժողովրդի 100 տոկոսը սիրում է, չկա մարդ, որ ասի՝ չէ, ես Ղարաբաղը չեմ սիրում, Ղարաբաղից հրաժարվում եմ, եթե սիրում ենք, ապա պետք է իսկապես մտածենք Ղարաբաղի անվտանգության եւ հարատեւության մասին:

– Այսինքն, ասում եք, որ խաղաղության համար պետք է վճարենք:

– Խաղաղության համար պետք է աշխատենք: Խաղաղության հասնելը ծանր աշխատանք է, խաղաղության համար շատ ավելի մեծ քաջություն ու արիություն է պետք, քան պատերազմ գնալուց:

– Ես սա որեւէ վիրավորական բանով չեմ ասում, բայց Վանո Սիրադեղյանի ժամանակ ասում էին՝ մեր դեմ խաղ չկա, նույնը վերագրում էին Վազգեն Սարգսյանին, Ռոբերտ Քոչարյանն ավելի ուրիշ ձեւ էր ասում՝ տղամարդ չկա այս երկրում, Սերժ Սարգսյանը դա չի ասում, բայց կարծեք թե՝ իր դեմ էլ խաղ չկա: Մեծ հաշվով պարզվեց, որ ցավոք ողբերգական կամ այլ պատճառներով իմ նշած մարդկանց դեմ խաղ կար, ի՞նչ եք կարծում՝ Սերժ Սարգսյանի եւ այս ռեժիմի դեմ խաղ կա՞, թե՞՝ ոչ, ո՞րն է հակաթույնը:

– Իմ կարծիքով՝ որեւէ ռեժիմի դեմ միակ հակաթույնը խնդիրների պատկերացումն ու գիտակցումն է: Մենք ողջ էությամբ չենք պատկերացնում ու գիտակցում խնդիրները: Այ, ձեր ասած այդ բոլոր տարիներին տեսել ենք՝ ինչպես են մարդիկ վազում մարդկանց հետեւից՝ թողնելով խնդիրներն ու դրանց էությունը: 96-ին Վազգեն Մանուկյանն էր, հետո Կարեն Դեմիրճյանը, Ստեփան Դեմիրճյանը, Գեղամյանը, Արթուր Բաղդասարյանը, մյուսը, մյուսը: Մինչդեռ սա (25 տարին) բավական երկար ժամանակ էր խնդիրներն ըստ էության հասկանալու եւ գնահատելու համար: Կարծում եմ՝ մեզ մոտ էական որեւէ փոփոխություն կլինի, երբ մարդիկ սկսեն ըստ էության հասկանալ խնդիրները, իսկ խնդիրների խնդիրն, ինչպես ասացի՝ Արցախի հարցն է:

ՀԱԿԻՐՃ ԿԱՐԾԻՔՆԵՐ

ԳԱԳԻԿ ԱԴԱՄՅԱՆ (Էլեկտրիկ-ինժեներ),– Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն: Այն մարդիկ, որոնք փոխզիջումային խաղաղության հասնելու ծրագիրը չեն դիտարկում որպես մարդասիրական քայլ, անիմաստ հազարավոր զոհերից խուսափելու քայլ, արտագաղթը ներգաղթով փոխարինելու քայլ, երկրի զարգացումը բնականոն հուն տեղափոխելու քայլ,այլ պրիմիտիվորեն դիտարկում են այն որպես հողեր հանձնելու քայլ,սկսում եմ կասկածել, որ այդ մարդկանց ներքնաշխարհում մի ինչ որ մարդկային բան պակաս է, որ այլ մարդկանց ցավերին իրենք անհաղորդ են, մի խոսքով կասկածում եմ իրենց մարդկայնություն ունենալու վրա...

facebook.com/adamyangaguli/posts/685283591632333. 20.12.2016թ.:

* * *

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ (ՀՀ ԳԽ պատգամավոր (1990–1995 թթ.), Ստեփանակերտ),– Նախագահ Տեր-Պետրոսյանը, որքան ես եմ հասկանում, հիշեցումներ չի արել: Նա անկեղծորեն ներկայացրել է իր պատկերացումները: Ես շատ ուրախ կլինեի, եթե քաղաքական դերակատարներից մեկը հիմնովին հերքեր նրա կասկածները: Ցավոք, ես նման վերլուծության եւ կանխատեսումների ծանոթ չեմ, ուստի կուզենայի, որ մեր քաղաքական միտքը կամ հաղթահարեր Լեւոն Տեր-Պետրոսյանի աուրան, կամ հանրային-հրապարակային դիսկուրսում չզլանար հաշվի առնել հնարավոր վատագույնի կանխավարկածը... Մի անգամ՝ անցյալ դարասկզբին, մենք այդ հնարավորությունը բաց ենք թողել եւ հատուցել այնպես, ինչպես Չարենցն է նկարագրել. «Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան: Եւ արնոտ միգում ճարճատում են դեռ...»: Աստված հեռու պահի նման մոլորությունից:

***aravot.am**, 13.01.2017թ.:*

* * *

ԱՐՄԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ (Կառավարման մասնագետ),– Ամեն տարեվերջին Օքսֆորդի բառարանի խմբագրությունն ընտրում է տարվա բառը, որն ամենաբնութագրիչն է համարում տվյալ տարվա համար: 2016-ի համար այդպիսի բառ է ընտրվել «post-truth»-ը: Բառն արդեն թարգմանել են «հետճշմարտություն»: Կարելի է նաեւ «հետճշմարիտ», որպես ածական, քանի որ այն բնորոշում է հանգամանքները, քաղաքականությունը, երբ օբյեկտիվ, ճշմարիտ փաստերն ավելի քիչ են ազդում հասարակական կարծիքի վրա, քան հույզերը կամ անձնական համոզմունքները, որոնք հեռու են ոչ միայն ճշմարիտ լինելուց, այլեւ առողջ բանականությունից:

Կարեւոր է հաշվի առնել, որ post-(հետ) նախածանցն այստեղ օգտագործվում է ոչ թե հետո իմաստով՝ իբրեւ թե ճշմարտությունն արդեն անցած էտապ է, այլ ցույց է տալիս, որ ճշմարտության գաղափարը մարդկանց կողմից այլեւս ընկալվում է անկարեւոր, անպետք:

Եթե երեւույթի վրա անգլախոսները նոր են ուշադրություն դարձրել, ապա մենք դրան ծանոթ ենք վաղուց: Դրա արմատավորման համար էլ պարտական ենք մտավորականներին ու մեդիային:

Հիշեցի սա Լեւոն Տեր-Պետրոսյանի սպասվելիք ելույթի կապակցությամբ:

Ելույթից հետո, ինչպես ասում են, հետեւեք մեդիա-ֆոկուսնիկների ձեռքերին, թե ինչպես են կարեւոր գաղափարները, փաստերը, մեսիջները հերթական անգամ կորցնելու «մութուցրտի», «մազութըլափեցինի» հետեւում:

***iLur.am**, 19.12.2016թ.:*

* * *

ՋԱՎԱՀԻՐ ԱՅՎԱԶՅԱՆ (Ինժեներ-քիմիկ-տեխնոլոգ),– Լեւոն Տեր-Պետրոսյանը մեկ անգամ եւս ապացուցեց, որ պետական գործիչ է, եւ պոպուլիզմով չի զբաղվում: Այ,սա է պատճառը, որ միջակությունը չի կարող ներել առաջին նախագահին:

facebook.com/javahir.ayvazyan/posts/1063422070435697. 17.12.2016թ.:

* * *

ՄԱՐՏԻՆ ԵՒ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՍԼԱՆՅԱՆՆԵՐ (Ճարտարապետ եղբայրներ),– Փետրվարի 1-ին Հայաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսն ուշագրավ հայտարարություն է արել, խոսել է ԼՂՀ խնդրի մասին եւ հայտարարել, որ այդ հակամարտության չկարգավորված լինելը եղել է Հայաստանի զարգացման գլխավոր խոչընդոտը. «Ապրիլյան ողբերգական բախումներից հետո ինձ համար պարզ դարձավ, թե ԼՂՀ խաղաղ կարգավորման բացակայության պատճառով ինչքան շատ ռեսուրսներ, թանկարժեք ռեսուրսներ... չեն ուղղվում մեր ընդհանուր նպատակներին ու այն գերակա ուղղություններին, որ ես եւ դեսպանատունը սահմանել ենք մեզ համար: ԼՂ կարգավորման բացակայությունը սնուցում է կոռուպցիան, քանի որ դրա պատճառով փակ են մնում Հայաստանի սահմանները, իսկ երբ սահմանները փակ են, ազդեցիկ գործարանների եւ մյուսների համար հեշտ է վերահսկել տնտեսական շուկաներն ու թույլ չտալ մրցակցություն», («Ժողովուրդ», 02.02.2017):

Նկատենք, որ ԱՄՆ դեսպանն անուղղակիորեն կամ հենց ուղղակիորեն, անկախաբար ասում է ՀՀ հիմնադիր նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից երկու տասնամյակ շարունակ հնչեցված եւ ՀԱԿ 2-րդ համագումարի իր ելույթում ամրագրած դրույթները: Պետք է ենթադրել, որ ԱՄՆ դեսպանը ոչ միայն ծանոթ է ՀԱԿ ղեկավարի ելույթին, այլեւ լիովին համաձայն է այն-

տեղ արտահայտված մտքերին: Ասել է թե՝ առանց խնդրի կարգավորման, այն է՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, Հայաստանը չի կարող զարգացման հեռանկարներ ունենալ: Ղարաբաղյան խնդրի չկարգավորված լինելով է պայմանավորված Հայաստանի առջեւ ծառացած բոլոր խնդիրների լուծումը՝ սկսած կոռուպցիայից, մենաշնորհներից, աղքատությունից, մինչեւ աղետալի արտագաղթ... Ասել է թե՝ առանց ՀԱՇՏՈՒԹՅԱՆ անհնար է այդ խնդիրների լուծում ապահովել: Առավելապես, երբ շրջափակման մեջ ես, երբ ճանապարհները փակ են, երկիրը շնչահեղձ է լինում: Ուրեմն երրորդ կարեւոր նախապայմանը ԲԱՐԻԴՐԱՑԻՈՒԹՅՈՒՆՆ է:

ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսն ուղղակիորեն խոստովանել է, որ այս բոլորը նրա համար պարզ է դարձել ապրիլյան ողբերգական բախումներից հետո: Այսպես թե այնպես, դեսպանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հաստատում է, որ Հայաստանն այլընտրանք չունի, քան Խաղաղությունն է, Հաշտությունն է, Բարիդրացիությունն է:

***hraparak.am**, 08.02.2017թ.:*

* * *

ՀԱՍՄԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ (Բանաստեղծ, արձակագիր, լրագրող),– Լրատվության տարածման ինչ աղբյուր կա, ինչքան մարդ կա, քաղաքական տաշտում ինչքան խմոր կա գրադ կայանները դրել ու գնդակոծում են Առաջին նախագահին:

Ուզում եմ իմանալ՝ Լեւոնը չգիտե՞ր, որ հայաստանյան տարբեր զինատեսակներով իրեն խոցելու են: Որ ասեք՝ չգիտեր, էդ էր, որ թամամ կլիներ:

Անգամ մեր Երկրորդ եւ Երրորդ նախագահները տարածքների փոխզիջման մասին բաց-բաց չեն խոսում, Լեւոն, ի՞նչ առյուծի կաթ ես կերել, որ քեզ որպես թիրախ դրեցիր ու ասացիր՝ կրակե՛ք, ինչքան ուզում եք կրակե՛ք...

Ապրիլյան քառօրյայից հետո կռվող Տղերքը դարձան Հերոսի մեր կերպարը: Նրանք իրենց փոքրիկ, դեռատի կրծքները դեմ տվին թշնամու ահեղ տանկերի բերանին ու թշնամուն ասացին՝ առաջ չեք գալու... Դուք պատկերացնո՞ւմ եք փոքրիկ սրտիկների բաբախյունը՝ զորեղ տանկերի ոռնոցի առաջ: Ո՞ր մի հայը չի ասել՝ ես ձեր փոքրիկ սրտիկներին մեռնեմ:

Հիմա էդ փոքրիկ սրտիկներով պահած-շահած հողի փոխզիջման մասին խոսելը մա՛հ է: Առաջ էլ նույնն էր, չհիշեցնեմ: Լեւոն, ո՞նց քեզ տվիր այդ մահվան բերանը: Ոչ մեկն այդպես բաց-բաց չէր անի, ո՛չ մեկը... Դա տարերքի դեմ գնալ է նշանակում: Բայց դու գնացիր: Դա մահվան դեմ հանդիման գնալու պես մի բան էր, որի մասին խուսափում էին բարձրաձայն խոսել մյուս նախագահները...

Նորից կրկնեմ առաջին նախադասությունը. լրատվության տարածման ինչ աղբյուր կա, ինչքան մարդ կա, քաղաքական տաշտում ինչքան խմոր կա գրադ կայանները դրել ու գնդակոծում են Առաջին նախագահին:

...Ես պարզապես ապշած եմ տանկի առաջ կանգնելու ու գրոհելու նրա ուժի վրա: Մինչդեռ նա կարող էր շրջվել ու չվնասվել:

Ուրիշ ոչինչ:

Առայժմ ուրիշ ոչինչ...

Հ.Գ. Եզակիով ու մտերմիկ տոնով խոսելու պատճառն այն է, որ մինչեւ հիմա ականջումս հնչում է ժողովրդի ձայնը՝ Լեւոն, Լեւոն...

***hraparak.am**, 18.12.2016թ.:*

* * *

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ (Լեզվաբան, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի դասախոս),– Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը չկարդացի, այլ լսեցի:

Լսում էի մտածելով, համաձայնվելով ու չհամաձայնվելով, զարմանալով մտքի ճկունության վրա... Դե նրա հայերենի հմայքն ուրիշ է:

Պետական ու քաղաքական գործիչների համար բարձր նշաձող է սահմանված: Թե կարող են, թող հաղթահարեն: Դատարկախոսությունից եւ պոռոտախոսությունից հոգնել ենք:

Հ.Գ. Սիրելի ընկերներ, ես «Լեւոնի վկա» չեմ, բայց պիտի խնդրեմ բարեկրթության սահմանները չխախտել եւ ինձ անպտուղ բանավեճի մեջ չներքաշել:

***iLur.am**, 19.12.2016թ.:*

* * *

ԱՐԹՈՒՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ (Պատմաբան),– Վերջին շրջանում ամենածայրահեղ անզիջողականների ու ոչմիթիզիոողականների առաջին շարքերում են հայտնվել տարիներ շարունակ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում բարձր պաշտոններ զբաղեցրած Արա Պապյանը եւ Արման Մելիքյանը:

Պապյանը եղել է ՀՀ ԱԳ Իրանի բաժնի վարիչ (1994–1995 թթ.), Ռումինիայում Հայաստանի դեսպանատան առաջին քարտուղար եւ ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար (1995–1997 թթ.), ՀՀ ԱԳ անվտանգության գծով համագործակցության բաժնի վարիչ (1997–1999 թթ.), ՀՀ ԱԳ մամլո քարտուղար (1999–2000 թթ.), Կանադայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան (2000–2006 թթ.):

Իսկ Մելիքյանը՝ Ղազախստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար եւ արտակարգ ու լիազոր դեսպան (1993–1999 թթ.), ՀՀ ԱԳ հատուկ հանձնարարություններով դեսպան (1999–2004 թթ.), ԼՂՀ արտաքին գործերի նախարար (2004–2005 թթ.):

Նրանց պաշտոնավարման տարիներին են Մինսկի խմբի կողմից Հայաստանին ու ԼՂՀ-ին ներկայացվել Ղարաբաղի

հարցի լուծման «Փաթեթային» (1997թ.), «Փուլային» (1997թ.) եւ «Ընդհանուր պետության» (1998թ.), իսկ ԱՄՆ-ի կողմից՝ «Քիվեստյան» (1999թ.) առաջարկները: Բոլոր այդ առաջարկներում էլ փոխզիջման հիմքում դրված է եղել ազատագրված տարածքների վերադարձման պահանջը, իսկ Քի-Վեստում՝ նույնիսկ Լաչինի միջանցքի դիմաց Մեղրու շրջանն Ադրբեջանին զիջելու դրույթը:

Արտաքին գործերի նախարարության համակարգում բարձր պաշտոններ զբաղեցրած Արա Պապյանն ու Արման Մելիքյանը, բնականաբար, չէին կարող ամենայն մանրամասնությամբ տեղյակ չլինել Հայաստանի, իսկ «Ընդհանուր պետության» եւ Քի-Վեստի պարագայում նաեւ ԼՂՀ իշխանությունների կողմից ընդունված այդ «պարտվողական» ու «դավաճանական» ծրագրերին:

Ուստի հարց է առաջանում, թե ինչո՞ւ այդ գերհայրենասեր, անզիջողական ու ոչմիթիզիոողական հերոսները ժամանակին չեն բացահայտել Հայաստանի իշխանությունների «պարտվողական» ու «դավաճանական» գործարքները եւ ի նշան բողոքի չեն հրաժարվել իրենց տաքուկ պաշտոններից: Այս հարցը կարող է ունենալ երկու պատասխան՝ կա՛մ նրանք նույնպես համաձայն են եղել այդ հակազգային ծրագրերին, կա՛մ էլ դեմ լինելով, փոքրոգաբար չեն ուզել կորցնել դիվանագետի վայելած փափուկ կյանքը: Ավելի ստոր, ողորմելի, անբարոյական պահվածք դժվար է պատկերացնել: Չեմ կասկածում, եթե այսօր էլ Պապյանին ու Մելիքյանին դեսպանի պաշտոն առաջարկեն, նրանք վայրկենապես կմոռանան Ղարաբաղն էլ, ազատագրված տարածքներն էլ ու կգնան որոճալու «իրենց բաժին խոտը»:

Ահա՛, այսպիսի խիզախ անզիջողականներ եւ ոչմիթիզիոողականներ: Ո՛վ ով, բայց առնվազն այս երկուսը որեւէ իրավունք չունեն տարածքների վերադարձման անընդունելիու-

թյան մասին խոսելու, քանի որ, պաշտոնական դիրքի շնորհիվ հնարավորություն ունենալով, չեն փորձել կանխել կամ բացահայտել իշխանությունների «պարտվողական» եւ «դավաճանական» մտադրությունները: Ինձ իրավունք չեմ վերապահում անզիջողականության հարցում կասկածելու ազատամարտիկների եւ հասարակ մարդկանց անկեղծությանը, բայց Պապյանի ու Մելիքյանի այսօրվա պահվածքը հայրենասիրության, անզիջողականության ու ոչմիթիզիողականության հետ ոչ մի կապ չունի: Ժողովրդին հիմարի տեղ դնելով, նրանք պարզապես զբաղված են գարշելի քաղաքական վաշխառությամբ:

Հ.Գ. Բնութագրական է նաեւ, որ, ըստ որոշ տեղեկությունների, ուրիշների արյան գնով Ծովից-ծով Հայաստան ստեղծելու եւ Բաքուն գրավելու ամենօրյա կոչով հանդես եկող Արա Պապյանը վաղուց իր ընտանիքը տեղավորել է Կանադայում՝ աշխարհի ամենախաղաղ ու ապահով երկրներից մեկում:

***iLur.am**, 11.02.2017թ.:*

* * *

ՕԼԻՄՊԻԱ ԷԼՈՅԱՆ (Ավագ մաքսային տեսուչ),– Ուզում եմ հասկանալ՝ Տեր-Պետրոսյանի ելույթը էսքան մարդու սենց միանգամից շիզոֆրենիայի հասցրեց, թե էդ մարդիկ տենց շիզոֆրենիկ էլ կային, ուղղակի ելույթից հետո առավելագույնս բացահայտվեցին???

facebook.com/olimpia.eloyan/posts/1231408603614702. 22.12.2016թ.:

* * *

Ես միայն մի բան լավ չեմ հասկանում. էս ստեղծվող իբրեւ ընդդիմադիր դաշինքները հիմա իշխանությունների՞ն են դեմ, թե՞ Տեր-Պետրոսյանին: Լիքը մարդիկ դեռ գլխի չեն, որ 98 թվից

Տեր-Պետրոսյանը չի էս երկրի նախագահն ու բոլոր ասպարեզներում առկա վիճակի պատասխանատուն, բայց չգիտես ինչու բոլորի ելույթներն ընդդեմ Լեւոնի են, բոլորի կռիվը Լեւոնի դեմ է, բոլորը՝ քնած թե արթուն, շարունակում են անողոքաբար պայքարել Լեւոնի դեմ: Առողջ մարդ համարյա չի մնացել: Սենց էլ կրակ կլինի՞:

***iLur.am**, 22.01.2017թ.:*

* * *

ՌԱԴԱ ԹԵՅՄՈՒՐԱԶՅԱՆ ԲՈՒՍՄԱՆ (Ուսուցիչ),– Ինձ մի բան ա շատ հետաքրքրում: Նոյեմբերին Սերժը Կիսելյովի հետ հարցազրույցում ասեց, որ Հայաստանն ու Արցախը պատրաստ էին վերադարձնել յոթ ադրբեջանական շրջաններ: Էդ ժամանակ ինչո՞ւ համազգային դժգոհություն չեղավ: Ոչմիթիզիողականները մտան ծակերը: Բայց հենց Լեւոնը խոսում ա փոխզիջման մասին՝ մի վայնասուն ա բարձրանում երկրով մեկ, էլ դու սուս: Մարդիկ հանկարծ հիշում են, որ իրանք շատ հայրենասեր են: Ինչո՞ւ: Լեւոնը 18 տարի ա, էլ Հայաստանի նախագահը չի, որոշող չի, շատ ուզենա էլ չի կարող «հող հանձնել», հանգստացեք, խորը շունչ քաշեք եւ ձեր հայրենասիրական փամփուշտները ուղղեք այսօր Հայաստանի նախագահի աթոռը զբաղեցրած մարդուն:

facebook.com/rada.bousman/posts/10211329615865689. 18.12.2016թ.:

* * *

ՔՐԻՍՏԻՆԵ ԽԱՆՈՒՄՅԱՆ (Խմբագիր, լրագրող),– Տեր-Պետրոսյանը էն մարդկանցից ա, որոնք պաշտպանության կարիք չունեն: Ինքն իր խոսքն ասում ու հիմնավորում ա: Բայց երբ իր ելույթներից հետո սկսում են արձագանքել, մի երկու բառ ամեն դեպքում ուզում ես ասել ի պատասխան: Ի պատասխան, անշուշտ, ոչ թե ի պաշտպանություն:

1. Ձեւական առումով. ով ասես չի ալարում հա պնդի, թե Կոնգրեսը՝ Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ քաղաքական դաշտում էլ գործոն չի: Նույն բանը պնդում են նաեւ իհարկե այլոց մասին: Բայց չգիտես ինչու, միայն Տեր-Պետրոսյանի դեպքում է, երբ նա խոսում է, սկսում է հիստերիան; Հարց, եթե մարդը էլ գործոն չի, ինչի՞ եք խառնվել իրար: Ձեր տրամաբանությամբ պիտի ստացվեր, որ մարդ է էլի, իր համար, հայտարարություն է արել, խոսք է ասել, մեկ է՝ ինքը էդ ազդեցությունը չունի էլ, որ ասածն իրականություն դարձնի: Այդ դեպքում, ինչի՞ եք հակասում ձեր իսկ տրամաբանությանը: Ի դեպ, ասենք Հայրիկյանն ու մյուսներն էլ ինչ-որ բաներ են հա հայտարարում, էդ ինչո՞ւ էդ կարգի արշավ չեք սկսում նրանց դեմ: Եթե մարդն էլ գործոն չէ, ի՞նչ կարիք ունեք նրա խոսքին ի պատասխան մի բան էլա գրելու: Այնպես որ, երեւի կողմնորոշվեք, կամ խոստովանեք, որ գործոն է, ու նոր արտահայտվեք ի պատասխան, կամ եթե գործոն չէ, ինչպես մյուս «չգործոնները», ապա ամոթ ձեզ, որ ձեր ծանր տեղը թեթեւացնում եք:

2. Բովանդակային առումով: Ցանկացած ոք ունի կարծիք արտահայտելու իրավունք: Որեւէ բան պնդելու դեպքում պետք է այն հիմնավորել: Հատկապես, քաղաքականության դեպքում, որովհետեւ ոզնուն էլ պարզ է, (եթե անգամ Բիսմարկը չլիներ), որ այն հնարավորությունների, եւ ոչ թե ցանկությունների արվեստ է: Տեր-Պետրոսյանն ասում է, պետք է հարցը լուծել, պետք է հարցը լուծել արագ, չձգձգել, ասում է՝ պետք է լուծել փոխզիջմամբ, որ երկու կողմն էլ պարտված դուրս չգան, որովհետեւ միայն այդ դեպքում է հնարավոր ժողովուրդների հետագա համակեցությունը, ու դրա համար կամք է պետք, դա մեր երազանքի տարբերակը չէ, բայց պետությունն ու հայրենիքը այն տեղը չէ, որտեղ կարելի է բախտախնդրությամբ խաղալ՝ «պան իլի պրոպալ» տարբերակով, հետեւաբար եթե դիմացինդ իրոք պատրաստ է, ապա դու էլ կարող ես գնալ զիջումների եւ հարցը լուծել, որքան էլ դժվար լինի, որովհետեւ հեռանկարում միայն դա կարող է մարդկանց բարեկեցություն, խաղաղություն ու հանգիստ կյանք բերել, բայց եթե դիմացի կողմը որոշի հետո հետքայլ անել, այնպես չէ, որ մենք պիտի լռենք, ցույց կտանք, որ զիջման գնացել ենք հանուն ժողովուրդների եւ պետությունների շահերի, ուժեղի քայլ ենք արել, սակայն, կարող ենք ապացուցել, որ խելոք չմնալու դեպքում, մի քանի շրջան էլ կվերցնենք, որպեսզի խելքը գլուխը հավաքի: Մարդն իր տեսակետն ասում ու հիմնավորում է, ի պատասխան ի՞նչ է հնչում: Չէ՛՛՛, դա լավ տարբերակ չի, էդ նշանակում է «ծախել» ու էլ չգիտեմ ինչ: Լավ, էդ բառագրոհը մի կողմ, եթե համաձայն չեք, ապա որն է ձեր առաջարկած այլընտրանքային տարբերակը: Ընդ որում, տրամաբանությունը սովորաբար հուշում է, որ այլընտրանքը պետք է բաղկացած լինի ոչ միայն ինչ, այլեւ ինչպես հատվածից: Ամեն ինչ փորձել պահել: Ահա այլընտրանքային տարբերակը, ասում են: օկ: Իսկ ինչպե՞սը: Բոլոր նրանք, ովքեր պնդում են, թե պետք է ամենը պահել, (լավ են անում, որ իրենց ցանկությունը դա է, կենաց, ես էլ եմ դա ուզում, դեռ մի բան էլ ավելին, որ Բաքուն ու Ստամբուլն էլ մերը լինեին, հեչ չէր խանգարի, հա ու մեկ էլ՝ Կիլիկիայի վրա էլ աչք ունեմ), պետք է մատնանշեն նաեւ ինչպեսը: Եկեք պահենք: Ամենը: Լաաավ: Բայց ո՞նց: Եղբայրներ քաջ ու քույրեր նազելի, ձեւը ասեք, մենք էլ իմանանք, ու միանանք ձեզ: Ռեալիստական ձեւեր միայն, խնդրում եմ, ցանկություններ պետք չեն, որովհետեւ ցանկություններով կարող է պարզվել, որ ձեզնից ավելի մաքսիմալիստներ էլ կան: Ձեւը ասեք, ինչպեսը: Չեք ասում: Բայց ենթադրվում է, որ գուցե նկատի ունեք ստատուս քվոն պահելը, ժամանակ ձգելը: Հետո, մինչեւ երբ, ինչքա՞ն: Հիմա ենթադրեք դուք, հարգելի «թունդ, թնդագույն հայրենասերներ» բանակցողներն եք: Ի՞նչ եք անելու, որ ես ձեզ հավատամ: Ոչ թե որ անկեղծ եք, այլ կարող եք, որ աշխատող տարբե-

րակներ ունեք: Գնացինք ասենք, Ալիեւին ասինք՝ ճանաչում ես Ղարաբաղը անկախ պետություն՝ 7 շրջաններով հանդերձ: Թույն միտք է, բայց նորություն չէ, ինչեւէ: Ասեցիք, էդ ազերն էլ ասեց՝ չէ: Որն է հաջորդ քայլը: Մի րոպե, փորձենք կռահել: Սա էլ հո «Ջահել Պապը» սերիալը չէ, որ մատներս տանենք դեպի գլոբուս, ու յաբախտի մի բան գուցե կպնի: Ասեց, ուրեմն, չէ, հետո ի՞նչ արեց: Մենք հետո ի՞նչ արեցինք: Ենթադրվում է, որ մենք դուրս ենք գալիս բանակցություններից: Հա՞, չէ՞: Թե՞ դուրս չենք գալիս: Բա ի՞ նչ ենք անում: Ասում ենք՝ սա է ու վերջ, նա էլ չէ է ասում, բանակցությունները փակուղում են: Բա հետո՞: Չէ, հարցն այն չէ, որ եթե նա ամեն ինչին չէ ասի, պիտի գլուխներս կախ համաձայնենք, Ալիեւն է, ազեր է, կարող է խելքին փչի ինչի ասես՝ ասի՝ չէ: Բայց դե մենք էդ բանակցություններում հո երկուսով չենք, միջազգային հանրություն կա, ԵԱՀԿ Մինսկի խումբ կա, բան: Հիմա, ասեց չէ ու պատերազմ սկսեց, ի՞նչ է լինելու: Այ, հենց էդ պան իլի պռոպալը: Այսինքն, յա մենք ենք սաղ վերցնելու, յա՝ իրանք: Լավ կլինի, իհարկե, որ մենք սաղ վերցնենք, բայց մեկ էլ մտքովս անցնում է՝ բա որ իրա՞նք: Չէ, ոչ թե որ մեր ուժին ու զինվորի կամքին եմ կասկածում, այլ որովհետեւ հասկանում եմ, որ եթե երկուսս էլ գնանք Վա Բանկ, միջազգային հանրությունը մատը մատին չի տալու կուլմինացիայի ժամանակ, ասելու է՝ եւ թող հաղթի ուժեղագույնը: Իհարկե, արկածանդիր տարբերակ է, ուշքս էլ գնում է արկածների համար, բայց սիրելիներ, եթե խոսքը հենց միայն ինձ է վերաբերվում: Բայց հայրենիքը, պետությունը, ներող, միայն իմը կամ ձերը չէ: Այն բոլորինս է: ու ներող, բայց ես չեմ կարող հայրենիքս դարձնել ռուսական ռուլետկայի առարկա: Գիտե՞ք ինչու, որովհետեւ ես երազում եմ զավակներ ունենալ, որոնք էս պետության մեջ, էս հողի վրա պիտի ապրեն: Հայրենիքն ու պետությունը մեր բոլորիս հավաքական սեփականությունն է, ու ոչ մեկ իրավունք չունի

այն «ստավկա» դնել: Սա բովանդակային, բայց եթե ունենք այ ինչպես հարցի պատասխանը, ապա փլզ, թաքուն մի պահեք: Բարձրաձայնեք, մենք էլ դրոշները վերցրած ուռա գոչելով վազենք ձեր մոտ, թե չէ, սիրուն չի ստացվում, որ ինչը ասում եք, ինչպեսի մասին լռում: Պետությունն էլ, ինչպես ասում էր մի խելացի մարդ, որբի գլուխ չէ, որ ով ոնց ուզենա, խուզի: Ձեւը մատնանշեք, ձեւը: Լեւոնի ելույթը կարդացել եմ, համոզել է, այ երբ որ դուք ձեր տարբերակի իրագործման ձեւը հրապարակեք, նոր կխոսանք: Թե չէ, մի քիչ սիրուն բան չի ստացվում, տպավորություն է, որ հայրենասիրությունը սարքել եք պարապ վախտվա խաղալիք, տարբերակներ եք առաջարկում ու մերժում, բայց լուծում՝ ոչ: Սիրուն չի, գոսպոդա աֆիցեռի, սիրուն չի:

facebook.com/khanumian/posts/10211636038758824. 18.12.2016թ.:

* * *

Քաղաքական ու հասարակական գործիչների շրջանում ԼՂ հարցի հիմնական խնդիրը գիտե՞ք որն է. ազնվության պակասը... որ քիչ են էն մարդիկ, ովքեր արտահայտվում են այնպես, ինչպես մտածում են... որ հարցը դիտարկում են մենակ պետականության, եւ ոչ թե սեփական, քաղաքական-կուսակցական շահի տեսանկյունից... հարգանքի են արժանի այն քչերը, ովքեր անկեղծ են, ու իրենց անկեղծ կարծիքները հիմնավորում են... մնացյալները վախենալու են, որովհետեւ քաղաքական խոսքի փոխարեն բաժակաճառեր են ասում... ու ստիպում են մարդկանց հավատալ, որ քաղաքական խոսքը բաժակաճառի նման բան է... խնդիրը այն է, որ ոչ մեկը, կամ ավելի ճիշտ գրեթե ոչ մեկը չի էլ ջանում իր խոսքը հիմնավորել, շատերին թվում է, որ սիրտ մխիթարող ու դուխ տվող խոսքեր ասելը բավական է, ինչ-որ բան խառնվել է Հայոց աշխարհում... քաղաքական խոսքում պակասում է ազնվությունն

ու խիզախությունը, դիվանագիտականում՝ նախընտրում են անկեղծությունը, ոմանց ականջները կանչի... ոնց որ ընկերներով հավաքված, ասես՝ իմ լավ քույր/եղբայր, քո ցավը տանեմ, ամեն հարցում միշտ կողքիդ եմ լինելու, որովհետեւ այդպես պիտի լինի... լաավ է, բայց ինչպես սովորաբար պատահում է, իրական խնդիրների ժամանակ առաջինը գործում են նրանք, ովքեր լուռ էին, իսկ շատ քաղցր խոսքեր ասողները խառն են լինում... այ հիմա վախենում եմ, որովհետեւ գիտեմ, որ լավ լավ ելույթներ ունեցողները առաջինն են թռնելու, ինչպես նրանց մեծ մասը ժամանակին բանակից է թռել...

facebook.com/khanumian/posts/10211725100225305. 26.12.2016թ.:

* * *

ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ (Ծրագրավորող),– Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի ամենաթունդ քննադատներից մեկը՝ Արցախյան ազատամարտի հայտնի վետերան, Մարտական խաչի ասպետ Վահան Բաղասյանը, խոսելով Ադրբեջանի դիվերսիոն գործողությունների մասին, ասել է բառացիորեն հետեւյալը. «1994 թվականից մինչեւ 1997–1998 թթ. հակառակորդը մեզնից վախենում էր, ու քանի որ վախենում էր, հարգում էր ու չէր սպանում մեր զինվորին, իսկ հիմա մեր զինվորին սպանելը իրենց համար դարձել է խրախուսման մի մեծ միջոցառում» (1in.am, 18.01.2017թ.):

Այսինքն՝ ըստ Բաղասյանի, Տեր-Պետրոսյանի նախագահության շրջանում Ադրբեջանը վախենում էր մեզանից ու դիվերսիոն գործողություններ չէր ձեռնարկում, իսկ Քոչարյանի ու Սարգսյանի օրոք այլեւս չի վախեցել ու մինչ օրս անընդհատ սահմաններին սպանում է մեր զինվորներին:

Եզրակացությունը թողնում եմ ընթերցողին:

***iLur.am**, 18.01.2017թ.:*

* * *

ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ (Ճարտարագետ),– Արդեն 6 օր է ամբողջ ՖԲ-ը զբաղված է մի գործով ՀՀ Հիմնադիր Նախագահին քննադատելով եւ հայհոյելով: Ու ցավոք այդ մարդիկ ապրիլյան պատերազմի ժամանակ երբ նահատակվեցին 130 մեր Հերոս եղբայրները ոչ մի ծպտուն չհանեցին շատերը: Երբ մեր զինվորները բահերով ու քլունգներով կռվեցին ու նույն պատերազմի ժամանակ 800հա կորցրեցինք նույնիսկ համակերպվեցիք: Իսկ հիմա երբ ՀՀ Հիմնադիր Նախագահն հարցի լուծումը առաջարկում է խաղաղության միջոցով, արդեն կարելի է հայհոյել: Իսկ եթե դուք չեք առաջարկում այլընտրանք դրանով ապացուցում եք, որ ձեր նպատակը ոչ թե հարցի Խաղաղ լուծումն է ու Զինվորի կյանքը այլ կեղծ հայրենասիրությամբ ինքնահաստատվելը:

facebook.com/permalink.php?story_fbid=1234698176599328&id=100001774723771. 22.12.2016թ.:

* * *

ՄԱՐԻԱՄ ԾԱՏՐՅԱՆ (Պատմաբան),– Տեր-Պետրոսյանի երեկվա ելույթը փոթորիկ է առաջացրել, ինչ խոսք, ակադեմիական էր: Ինձ համար ազդու, գրագետ խոսք էր, քաղաքական պրագմատիզմի դասական օրինակ, բաց, հասկանալի ու ՀԱՄԱՐՁԱԿ: Իրոք, համարձակ՝ հաշվի առնելով, որ նախընտրական փուլում ենք: Չի կարելի քննադատել, վատաբանել ԱՅԼԸՆՏՐԱՆՔ չառաջարկելով: Ինձ թվում է 18 տարին բավական երկար ժամանակ էր հասկանալու, ըմբռնելու կամ այլ ծրագիր ներկայացնելու համար: Ղարաբաղյան հարցը երկար տարիներ տրամպլին դարձրած քաղաքական գործիչների համար բաց տեքստով լուրջ նշաձող սահմանեց: Չերչիլն ասում էր՝ քաղաքական գործիչները մտածում են ընտրու-

թյունների, իսկ պետական գործիչները՝ սերունդների մասին: Պետական գործչին վայել խոսք էր՝ առանց էմոցիայի, արկածախնդրության ու ամբոխահաճո էլեմենտների:

Չլինելով կուսակցական՝ ինձ դուր եկավ խաղաղության, հաշտության ու բարիդրացիության կոչը:

Հ.Գ.՝ Քաղաքական ռոմանտիզմով, շովինիզմով տառապողներին, ջղաձգված մանր-մունր ակԾիվիստներին, լրջագույն ելույթի մեջ միայն Հենրիկ Մխիթարյան-ը հասկացածներին էլ ուժ ու եռանդ եմ մաղթում՝ Մասիսը ետ բերելու համար:

facebook.com/mariam.catryan/posts/1063930710395511. 18.12.2016թ.:

* * *

ՍՄԲԱՏ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ (Փորձագետ, Մոսկվայի «Միաբանություն» կենտրոնի ղեկավար),– Այսօր որքան էլ քննադատենք, բայց գաղափարական հենքի վրա կանգնած է ՀԱԿ-ը: Այսինքն՝ որքան էլ Լեւոն Տեր-Պետրոսյանի վերջին ելույթի հետ կապված մարդիկ քննադատեն, կամ համաձայն լինեն, բայց դա գաղափարական հենքի վրա էր կառուցված: Մնացած բոլոր ուժերի մեծամասնությունն, այսօրվա դրությամբ արդեն պարզ երեւում է, որ ստեղծվում են իշխանական ճամբարի ֆինանսական, վարչական կամ այլ ռեսուրսների հիման վրա: Դա կարող է քողարկված լինել, ուղղակի կամ անուղղակի լինել: Այսօրվա դրությամբ՝ այդ մնացած ուժերը, լավ, թե վատ, կապված են կամ կապված են եղել իշխանական ճամբարի հետ, եւ պլանավորվում է օգտագործել այդ վարչական ռեսուրսները:

...Բնական է, ՀԱԿ-ը, ինչքան էլ քննադատեն, հստակ քաղաքական ուժ է, հստակ ասում է իր քաղաքական ծրագրերը՝ չվախենալով, չհաշվելով: Այդ առումով ամենամեծ հարգանքը ՀԱԿ-ն է վայելում ե՛ւ Ռուսաստանում, ե՛ւ Եւրոպայում, ե՛ւ մյուս ուժային կենտրոնների մոտ, բայց դա չի նշանակում, որ նրան աջակցում են: ՀԱԿ-ն ասում է՝ ժողովուրդ, գտնում եմ, որ այս-

պես է պետք անել, եկեք քննարկումներ անենք: Իհարկե այդ քննարկումները չվերագրենք հայհոյանքներին, զազրախոսություններին, այդ առումով էլ ՀԱԿ-ն ավելի մաքուր ու ճիշտ է, որովհետեւ հասկանում է, որ իհարկե ազգայնամոլական գաղափարների շուրջ ավելի շատ կարելի է միավորվել, կարելի է Հռոմի պապից շատ կաթոլիկ երեւալ՝ ճչալ, գոռալ, բայց այդ ճվճվոցները ոչ մի բանի չբերեցին ու մենք անընդհատ աստիճան առ աստիճան ընկել ենք ու հասել ենք սանդղակի ամենաներքեւի մասին, եւ չգիտեմ այնտեղից ուր ենք հասնելու...

***1in.am**, 17.01.2017թ.:*

* * *

ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (Լրագրող),– Տեր-Պետրոսյանի ելույթից հետո մի ֆլեշմոբանման կամպանիայա սկսել ֆեյսբուքում. Ապրիլյան պատերազմում զոհված հերոսների նկարներն են դնում ու Ռոբերտ Աբաջյանի, Քյարամ Սլոյանի, Ադամ Սահակյանի եւ մյուսների անունից ասում՝ «ես ոչմիթիզհողական եմ»՝ իբր ի հակադրություն Լեւոնի խաղաղության ուղերձի:

Որքանո՞վ ա բարոյական սպեկուլյացիայի միջոց դարձնել զոհված տղաների անունները՝ որպես արգումենտ ձեր քաղաքական համոզմունքների ճշմարտացիության: Չէ՞ որ զոհված մարդը չի կարող հակաճառել ու ասել, ասենք՝ «ես գիտակցաբար կյանքիս գնով պաշտպանել եմ հայրենիքս, բայց դեմ չեմ փոխզիջմանը»:

Զոհված տղաների անունը էս դեպքում չարաշահողները ոչնչով չեն տարբերվում նրանցից, ովքեր օգտագործում են նույն տղաների անունը՝ իշխանություններին քլնգելու նպատակով (իբր՝ տղաների գլուխը կերաք եւ այլն): Երկուսն էլ հավասար չափով գեշ բաներ են:

Ի դեպ, վստահ եմ, որ առաջին նախագահը «ոչմիթիզհողականներ» ասելով սահմանում կանգնած, առավելեւս, սահ-

մանը պաշտպանելիս զոհված տղաներին նկատի չուներ, այլ էն քաղաքական գործիչներին, ֆեյսբուքչիներին ու այլ սելֆիդայիներին, որոնք մերժելով փոխզիջումը՝ փոխզիջմանն այլընտրանք չեն առաջարկում:

Անձամբ ես փոխզիջմանն այլընտրանք եմ համարում բոլոր հողերի ինտենսիվ վերաբնակեցումը, բայց պրոցեսը ոնց որ մեռյալ կետից առաջ չի շարժվում (Քաշաթաղն ու մյուս շրջանների 5-10 ընտանիքանոց գյուղերը չհաշված):

facebook.com/permalink.php?story_fbid=10208926646669154&id=1405208089. 20.12.2016թ.:

* * *

ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Ծրագրավորող),– Լեւոն Տեր-Պետրոսյանին կուզեի մաղթել միայն մի բան. առիթ չունենալ ակտիվ լինել քաղաքականությունում, վայելել վաստակած հանգիստը, զբաղվել իր սիրած զբաղմունքներով:

Չեմ կարող դա մաղթել. քաղաքական դաշտի իմպոտենտությունն ինձ էդ հնարավորությունը չի տալիս: Քանի չկա ուրիշ քաղաքական խոսք ասող, Տեր-Պետրոսյանի տիպը իրեն թույլ չի տա մի կողմ քաշվել ու կողքից նայել տիրող քաղաքական վակուումին:

Ես հիանում եմ էս Մարդով: Ու հուսամ, որ դեռ երկար առիթ կունենամ հիանալու:

Ովքեր խոսքերիս սարկազմով են նայելու, վստահ եմ, մի օր կհասկանան, խելք կհավաքեն»:

***iLur.am**, 10.01.2017թ.:*

* * *

ՆԵՐՍԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Պատմաբան),– Ամեն անգամ Լեւոն Տեր-Պետրոսյանի կշռադատված եւ հեռատես, հայրենանպաստ եւ գրագետ հարցազրույցներից կամ հրապարակային ելույթներից հետո քաղաքական դաշտում նշմարվող ջղաձգումները եւ հատկապես՝ հանրապետական կուսակցության հետեւորդների նյարդային ցնցումների պատճառը ոչ այնքան Լեւոնին չընդունելը, նրան չսիրելը կամ նրա ասածների սխալ լինելն է, որքան այն, կարելի է ասել միայն այն, որ նրանք հայտնվում են ստորացվածի կամ բռնաբարվածի անտանելի կարգավիճակում, քանզի հենց այդ պահին ավելի հստակ են տեսնում Լեւոնի եւ իրենց կիսաճիճու առաջնորդների միջեւ եղած ահռելի տարբերությունը, այդ պահին ավելի խորն են գիտակցում՝ որքան թափթփուկ են իրենց առաջնորդները՝ Լեւոնի հետ համեմատած: Ու թեեւ այս մասսաները մի քանի օր շարունակ, իրենց ստորացված զգալով, հայհոյում են աջ ու ձախ, իրենց բռնաբարված զգալով, կացնահարում են բոլորին, բայց միեւնույնն է նրանցից յուրաքանչյուրը, իմ խորին համոզմամբ, իր մտքում անընդհատ ասում է սա. – Արա, լավ էլի, բա սա չլիներ մեր առաջնորդը.....

facebook.com/nerses.harutyunyan/posts/1221402391273375. 17.12.2016թ.:

* * *

ՆԱՐԵԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ (Տնտեսագետ),– Մորական կողմից ղարաբաղցի եմ, թե՛ տատս, թե՛ պապս Հադրութի Ուխտաձոր գյուղից են ծնունդով: Գյուղը սահմանամերձ մի գյուղ ա, Ուխտաձորը նոր անունն ա, հնում Էդուլու անունն ա կրել: Հերթական արցախյան չքնաղ գյուղ՝ խեղված ճակատագրերով: Պատմությունները գյուղի հետ կապված շատ են: Վարդան պապիս ախպոր անունը Թեմուր էր: Փոքր ժամանակ ծիծաղում էինք, թաքուն Լենկ Թեմուր էինք ասում: Մի օր պատմեց իր անվան ծագումնաբանությունը: Իրականում իր անունը Թեյմուր էր: Էդ ժամանակներում նորածինները իրար ետեւից հաճախ են մահացել թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական գյու-

ղերում, ու մարդիկ կարծել են, թե դրա պատճառը արմատացած ատելությունն ու երկուստեք շռայլորեն տրվող անեծքներն են: Նման դժբախտությամբ ընտանիքները (հայ-ադրբեջանցի) պայմանավորվում էին իրար հետ ու հաջորդ երեխայի ծնվելուն պես թաքուն հանդիպում սահմանին: Հայ ծնողները գրկում էին ադրբեջանցի երեխային ու տալիս հայկական անուն, ադրբեջանցի ծնողները գրկում էին հայ նորածնին՝ տալով ադրբեջանական անուն: Այ, սենց էլ պապիս եղբոր անունն ա կնքվել Թեյմուր: Հասարակ մարդիկ վստահ են եղել, որ ատելությունն ու շարունակվող կռիվն ա եղել ամեն վատի պատճառը ու եկել նրան, որ «ցեղի» շարունակությունը վեր ա ամեն բանից: Նաեւ հասկացել են՝ մահվան դեմն առնելը՝ խաղաղվելն ա: Բայց հիմնականում եկել են դրան, երբ մահը չոքել ա հենց իրանց դռանը, երբ դժբախտության հետ անձամբ են առերեսվել:

Ես հաճախ եմ էդ գյուղերում զգացել ու եկել նրան, որ իրական հաղթանակը խաղաղությունն ա: Պատերազմը արդեն նշանակում ա, որ մի տեղ լավ պարտվել ենք: Սա բոլոր դեպքերում ու բոլոր կողմերի համար: Հիմա էլ հո հաղթած կողմ ենք, հաղթած չե՞նք, իլա գնացեք էդ գյուղեր, հն՞՞՞:

Մի տեսակ վստահ եմ է՛, որ խաղաղության ջատագովներն ու «լուռ» լռողներն են անհրաժեշտության դեպքում վազելու կռվի, այլ ոչ թե մեր «քաջազուն արու տիկնայք»: Ու խի՞՞՞, քանզի պատերազմից վախում ենք, «պատերազմելուց»՝ ոչ: Ինչո՞ւ կա տենց կարծիք, որ խաղաղությանը կողմ լինելը վախկոտություն ա: Կարող ա՝ հասունություն ա՞:

Կուզեի գոնե էս հարցում ցեղից անցում կատարենք պետության՝ պետք չի սպասենք, որ հենց մեր դռանը չոքի դժբախտությունը...

Պետությունից վեր բան չկա՝ ցեղիդ շարունակությունն էլ ոչ երկար կյանք ունի, ոչ էլ գրոշի արժեք, առանց Պետության...

***iLur.am**, 22.12.2016թ.:*

* * *

ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (Մանկավարժ),– Ինչքան ուզում եք քննադատեք, ինչքան ուզում եք քարկոծեք Առաջին Նախագահին, բայց նա ասել է ճշմարտությունը, ինչպես դա արեց հրաժարականից առաջ: Հայտնի ուժերը այսօր միլիարդատերեր են, ավերված ասպատակված բռնագաղթված հայաստանցիների հաշվին, գոնե հիմա լռեք, պապանձվեք հայրենիք ենք կորցնում: Կյանքը ցույց տվեց, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը ճիշտ էր երիցս:

facebook.com/narine.hovhannisyan.33/posts/1267383276652459. 18.12.2016թ.:

* * *

ՅՈՒՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ (Լրագրող),– Իր վերջին հարցազրույցում (1in.am. 31.01.2017) Հայաստանի քաղաքագետների միության նախագահ Հմայակ Հովհաննիսյանը, ընդարձակորեն անդրադառնալով Արցախյան հիմնահարցի լուծման վերաբերյալ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ 2016թ. դեկտեմբերի 17-ի ելույթում արտահայտված տեսակետին, այն գնահատել է խիստ վնասակար ու դավաճանական: Կարկառուն (ավելի ճիշտ՝ կառկառուն) քաղաքագետին ուզում ենք հիշեցնել, որ Տեր-Պետրոսյանն, ըստ էության եւ ավելի հանգամանորեն, նույն տեսակետն է արտահայտել դեռեւս 1997–1998 թթ. իր հանրահայտ հրապարակումներում (1997-ի սեպտեմբերի 26-ի մամլո ասուլիսում, «Պատերա՞զմ, թե խաղաղություն» հոդվածում, Անվտանգության խորհրդի նիստում ունեցած ելույթում):

Բայց այդ «վնասակար ու դավաճանական տեսակետը» Հմայակ Հովհաննիսյանին ամենեւին չի խանգարել 2008 թվականի նախագահական ընտրություններում «անձնվիրաբար» պաշտպանել Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը: Ավելին, Հովհաննիսյանը 2007-ի հոկտեմբերի 26-ին Ազատու-

թյան հրապարակի հարթակում կանգնած է եղել Լեւոն Տեր-Պետրոսյանի կողքին, երբ վերջինս նախընտրական իր առաջին իսկ ճառում կրկին հանգամանորեն ներկայացրել է այդ «վնասակար ու դավաճանական» տեսակետը:

Իսկ 2008թ. հունվարի 9-ին նա Տեր-Պետրոսյանին է հղել հետեւյալ հիացական շնորհավորական նամակը. «Մեծարգո Լեւոն Հակոբի, Հայաստանի քաղաքագետների միության վարչության եւ իմ անունից շնորհավորում եմ Ձեր ծննդյան տարեդարձը: Տասնամյա ընդմիջումից հետո Ձեր վերադարձը մեծ քաղաքականություն ճանապարհ բացեց Հայաստանում հրապարակային քաղաքականության վերածննդի համար: Որքան էլ դժվար ընթանա այդ վերածնունդը, վստահ եմ, որ ժամանակավոր տեղատվությունները շուտով կհաղթահարվեն, եւ Ձեր առաջնորդությամբ ընդդիմությունն ի զորու կլինի վերականգնել մեր երկրում վերջին տարիներին անկյուն մղված հրապարակային քաղաքականության դերն ու նշանակությունը: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն եւ մուսալեռցիներին հատուկ կենսունակություն՝ ի վերուստ Ձեզ նախագծված առաքելությունն իրագործելու համար: Խորին հարգանքով՝ Հմայակ Հովհաննիսյան» («ՀՀ Առաջին նախագահի արխիվ», թղթ. 03/9.9.01.2008):

Ի դեպ, Հովհաննիսյանը Առաջին նախագահի «երկրպագուն» է եղել նույնիսկ նախագահական ընտրություններից հետո, ինչի վկայությունն է նրա հոդվածներից մեկի հետեւյալ բնորոշ հատվածը. «Ղարաբաղը բարոյական արժեք էր բոլորիս համար մինչեւ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը: Դրանից հետո, սակայն, սկսվեց մի գործընթաց, որը հանգեցրեց այս կացությանը, երբ ղարաբաղցիները եւ Ղարաբաղն այլեւս չեն դիտվում որպես գերագույն բարոյական հեղինակություն: ...Հիմա ես պետք է ասեմ այն դրականի մասին, ինչը Լեւոն Տեր-Պետրոսյանը կարողացել էր, այնուամենայնիվ, ի կատար ածել իր գործունեության ընթացքում, եւ ինչի հետ ես միանշանակ համաձայն էի եւ այն ժամանակ, եւ այսօր: Լեւոն Տեր-Պետրոսյանը Ղարաբաղի ղեկավարությանը եւ քաղաքական դեմքերին տվել էր ազատություն՝ իրականացնելու սեփական մոտեցումները: ...Ղարաբաղի ղեկավարությունն ինքն այդ ինքնուրույնությանը հասել էր նաեւ սեփական ջանքերով, բայց, միաժամանակ, ի պատիվ Լեւոն Տեր-Պետրոսյանի, պետք է ասեմ, որ նա հասկացավ, որ Ղարաբաղի ձգտումը՝ առանձին քաղաքականություն վարելու, հենց նաեւ Հայաստանի շահերից է բխում» (theanalyticon.com ամսագիր. փետրվար 2009թ.):

Այս ամենը նշանակում է, որ 2008-ի նախագահական ընտրություններում պաշտպանելով Տեր-Պետրոսյանի թեկնածությունը՝ Հմայակ Հովհաննիսյանը պաշտպանել է նաեւ նրա «վնասակար ու դավաճանական» տեսակետը, այսինքն Հովհաննիսյանը նույնքան «վնասակար ու դավաճանական» արարք է գործել, որքան առաջին նախագահը:

Ինչեւիցե, եթե Հայաստանում քամելեոնների մրցանակաբաշխություն անցկացվեր, ապա Հմայակը հաստատապես կարժանանար լավագույնի, բացառիկի, անգերազանցելիի մրցանակին:

***iLur.am**, 01.02.2017թ.:*

* * *

ԱՇՈՏ ՂԱՐԻԲՅԱՆ (Լրագրող),– Ես մի որդի ունեմ, նրան մեծացնում եմ որպես հայրենասեր, զինվոր, հայրենիքի պահապան... բայց իմ որդին կկվի ձագերից չէ, որ մի հատը ձգեմ ցած... ես խաղաղություն եմ ուզում, ուզում եմ նրան առանց ահի ու սարսափի բանակ ճանապարհել, ու ողջ-առողջ դիմավորել... ես ուզում եմ նրան Հայաստանում մեծացնել... չեմ ուզում փախցնել հեռու-հեռու, ես խաղաղություն եմ ուզում...

facebook.com/ashot.garibyan/posts/1127184527380320. 19.12.2016թ.:

* * *

ՄՅԱՍՆԻԿ ՄԱԼԽԱՍՅԱՆ (ՀՀ ԳԽ եւ ԱԺ պատգամավոր, ազատամարտիկ),– Լեւոն Տեր-Պետրոսյանը հիմնավոր ներկայացրել է իր տեսակետը, որը ՀԱԿ-ի դիրքորոշումն է: Ես նոր բան չեմ կարող ավելացնել իր դիրքորոշմանը: Ես այն ժամանակ դեմ էի, սակայն անցած ժամանակահատվածը ցույց տվեց, որ ՀՀ առաջին նախագահի տեսակետին հակառակ տեսակետը չարդարացրեց մեր սպասելիքները: Միգուցե այդ ժամանակահատվածում եթե ընդունեինք նրա տեսակետը, մեր երկիրը կարող էր առաջընթաց ունենալ, մեր բնակչության թիվը կավելանար, մենք տնտեսապես ավելի զարգացած լինեինք, ավելի հզոր բանակ ունենայինք: Անցած ժամանակահատվածն ապացուցեց, որ երկրի առաջին նախագահն ավելի հեռուն է տեսնում, ավելի տեսանելի խնդիրներ է առաջ քաշում:

***hraparak.am**, 16.01.2017թ.:*

* * *

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ (Նախկին դիվանագետ, Գերմանիա),– «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» նշանաբանին համարժեք այլընտրանք, փաստորեն, մինչ օրս քաղաքական դաշտում դեռեւս չի առաջարկվել: Պատճառն այն է, որ ստեղծված իրավիճակում քաղաքական ուժերի համախմբման համար իրական այլ պլատֆորմ, քան այս նշանաբանն է, պարզապես, գոյություն չունի:

Համակողմանի վերլուծություններն ու իրողություններն ապացուցում են, որ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի 2016թ. դեկտեմբերի 17-ին առաջարկած եւ Հայ Ազգային Կոնգրեսի որդեգրած այս նշանաբանով առաջնորդվելը, փաստորեն, միակ հանգուցալուծումն է՝ մեր տարածաշրջանում եւ նրա շուրջը տեղի ունեցող բոլոր վտանգավոր զարգացումներից խուսափելու կամ դրանք կանխելու համար:

Ավելին, միջազգայնորեն ընկալելի այս ելակետային նախաձեռնությամբ հանդես գալու դեպքում է, որ Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը միասնաբար կկարողանան հայտնվել շահեկան դիրքերում, վերականգնել միջազգային հեղինակությունն ու իրավունքները, ապահովել որոշակի զարգացում: Եթե անգամ այս դիրքորոշումն, ըստ որոշ ընդդիմախոսների, իր մեջ պարունակում է մեզ համար ինչ-որ վտանգ, ապա ակնհայտ է, որ հենց այդ վտանգն էլ արդյունքն է վերջին տարիներին ունեցած քաղաքական մի շարք կոպիտ բացթողումների: Այո, դա անտեսելն արդեն իրոք դարձել է անհնար եւ պատասխանատվությունն էլ ընկած է հենց ներկայիս իշխանությունների վրա:

Հաշվի առնելով բոլոր իրողությունները, այնուամենայնիվ, մեծ հույսեր եմ փայփայում, որ բանականությունը դեռեւս կհաղթի եւ քաղաքական ուժերն ու հասարակությունը կկարողանան համախմբվել «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» իրատեսական նշանաբանի շուրջը:

facebook.com/vardan.markosyan.7/posts/1400924326619146. 10.02.2017թ.:

* * *

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Գործարար, հրատարակիչ),– Ես տեսնում եմ, որ իմ պետությունը վերջին 20 տարվա մեջ մաշվում-կորչում է: Իմ ժողովրդի մեծ մասը լքել է երկիրը: Եւ հասկանում եմ, որ մոտակա մի քանի տարվա մեջ այն վերջանալու է, այլեւս չենք ունենա մեր պետությունը: Այսինքն՝ թեյը կխմեն Երեւանում, եւ ոչ թե Բաքվում: Եւ գիտակցում եմ, որ հարկավոր է դրա դեմն առնել:

Ընդ որում, հիմնախնդիրները միայն ժողովրդագրության մեջ չեն: Պատերազմելու համար հարկավոր է նաեւ ունենալ

համապատասխան տնտեսություն: Այն պետք է լինի զարգացող, ուժեղ, «նվաճող» տնտեսություն: Իսկ մերը մեռնող տնտեսություն է: Պատերազմելու համար հարկավոր է նաեւ լավ հարաբերություններ ունենալ աշխարհի հետ: Այսինքն՝ ունենալ հզոր դիվանագիտություն: Իսկ մեր դիվանագիտությունն այսօր մեռած դիվանագիտություն է:

Եւ այս պարագայում կա երկու տարբերակ: Առաջինը՝ սպասել-տեսնել, թե երբ է մեռնելու պետությունը: Իշխանությունը հենց սա էլ անում է վերջին 10-20 տարիներին: Այն է՝ սպասել-տեսնել, ուտել-լափել, ոչ մի բան չանել, որ քո տնտեսությունն ուժեղանա: Ոչ մի բան չանել, որ քո ժողովրդագրական ցուցանիշները նորմալ դառնան: Որպեսզի դու կարողանաս այդ պատերազմին դիմագրավես: Այնպես որ ես այսօր մեր երկրում տեսնում եմ հոգնած, արնաքամ եղող, մեռնող պետության մոդել:

Իսկ տարբերակը հետեւյալն է՝ առաջարկվում է լուծում, գիտակցվում է, որ ամեն ինչ չի կարելի այսպես թողնել: Հարկավոր է իրավիճակի փոփոխություն: Հարկավոր է խաղաղություն: Որովհետեւ եթե հիվանդը մի տասը տարի, քսան տարի չգտնվի կայուն վիճակում, կմեռնի:

Հիմա ես տեսնում եմ, որ իմ պետությունը մեռնում է, եւ ուզում եմ միջամտել, որ չմեռնի: Իսկ իմ այդ միջամտությունը կոչվում է խաղաղություն:

Եթե որեւէ մեկը կարող է այլ ձեւով մեռնող պետությանը հանել կրիտիկական վիճակից, ես նրա ճակատը կհամբուրեմ:

Եթե մեկը կա, որ կարող է Բաքվին կապիտուլյացիայի պայմանագիր ստորագրել տալ, ես նրա ճակատը կհամբուրեմ:

Եւ ես իրավունք ունեմ հարցնելու՝ եթե նման տարբերակ կա, ապա այս 18 տարիների մեջ ինչո՞ւ դա չարեցին:

Այնպես որ մնում է երկու բան. կամ կապիտուլյացիայի պայմանագիրը ստորագրել Բաքվում, կամ ընդունել այն լուծումը, ինչն այսօր առկա է: Այնպես որ այլ տարբերակ գոյություն չունի, քան խաղաղությունն է: Իսկ թե խաղաղություն՝ ի՞նչ պայմաններով, թող բարձր խոսողներն այն ստանան ամենալավ պայմաններով:

«Փասփ»ից, 18.02.2017թ.:

* * *

ԱՐՄԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ (Պատմաբան),– Հենց նոր լսեցի առաջին նախագահի ելույթն ու կարծում եմ, որ հերթական անգամ նախագահը մերժեց զգացմունքայնությունը:

Այսպես կոչված հայրենասիրական զգացմունքայնությունը երկու դրսեւորմամբ է արտահայտվում՝ անկեղծ եւ կեղծավոր: Այն տղերքը, որոնք դեմ են ամեն տեսակի զիջման, հարկ եղած դեպքում դա ապացուցում են սեփական կյանքի գնով: Քանի որ նախագահը հիշատակեց 1920 թ-ի դեպքերը, հիշենք հուսահատված զգացմունքայնության անկրկնելի մի դրսեւորում, երբ հանձնվող Կարսի պարիսպների տակ ինքնասպանություն գործեց գնդապետ Մազմանովը: Իսկ ո՛չ մի թիզ հողի նշանաբանով հանդես եկող կեղծ հայրենասիրական զգացմունքայնության դրսեւորման արենան՝ երեւանյան սրճարաններն են, կամ լավագույն դեպքում, առավել համարձակների համար՝ Ստեփանակերտի Վերածննդի հրապարակը:

Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը մտածելու, վերլուծելու, խորհելու համար է: Սա այլ որակ է, այստեղ չկա ամբիոններից ճոճղացողների հեզաճկուն թռչկոտումներն, իրարամերժ մոտեցումներն, ազգադավ գործարքներն, ուրացումն ու դավաճանությունը: Մեծ դասական Սերժ Սարգսյանի մատնանշած գաղջի մեջ ապրող, թերեւս միակ պետական գործչի ելույթ էր:

facebook.com/armen.meliqyan.9/posts/1161882730596209. 17.12.2016թ.:

* * *

Ոչմիթիզհողականության բանական հիմնավորման դեպքում մի մեծ քար կգցեի Տեր-Պետրոսյանի բաղը: Մեծ Հայաստանը սրտովս է, անհավես բան է՝ երկու ժամ մեքենայով գնաս, հետո՝ անցակետում ժամերով կանգնես, թե ի՞նչ է, մասնակցում ես սահման հատելու տհաճ արարողակարգի՝ Վրաստանից հողեր եմ ուզում...

Ամեն Բան ասվեց՝ աշխարհի տիրոջ մերը, ո՞ւմ ուզենք, ե՞րբ եւ որտե՞ղ ուզենք, բայց այլընտրանքային ոչինչ ասպարեզում չերեւաց: Չկա՝ չասեցիք, չլսվեց ձեր խոստացած ավետարանական ճշմարտությունը: Չնայած հերոս կտրեցիք, աշխարհի կարծիքը քֆրտելու ունակություններով, մի խումբ աղջիկներ էլ հիացան ձեր առնականությամբ ու հերոսականությամբ, բայց աշխարհը մի օր կարող է զայրանալ ու կպարզվի՝ «շատերը մկան ծակին օխտը թուման են տալիս», իսկ կայարանում Սասունցի Դավիթն է՝ հպարտ ու անկենդան:

Մի հետաքրքիր եզրահանգում ունեմ: Սերժ Սարգսյանը, երբ խոստովանեց, որ ինչ որ մի պահի վարակվել է յոթ շրջան հետ տալու էնտուզիազմով, էտ ամենը անցավ շատ հպանցիկ: Իհարկե կային ոմանք, որ իրենց վրով չէր՝ Սերժին հակադրվելը: Բայց էս հարայ հրոցի մեջ, ո՞վ ասես խոսաց՝ կեղծ ու իրական հայրենասերներ, հերոսներ եւ պատեհապաշտ դեմագոգներ: Ինձ թվում է՝ խնդիրը ենթագիտակցական տիրույթում է: Չսիրելով Տեր-Պետրոսյանին, դուք ենթագիտակցորեն ընդունում եք այդ մարդու խարիզման: Ու հենց այդ խարիզման է՝ ուրվականի նման հետապնդում շատերիդ: Ձեր ենթագիտակցական ընկալումներն իրական են, բայց այն պետք է անց կացնել նաեւ բանականության պրիզմայով ու կպարզվի, որ էսքան հարայ հրոց անելու իմաստ չկար: Եթե մտածեիք՝ կհասկանայիք, մարդը կարծիք է հայտնել, բայց փոխզիջման գնացողը ընդդիմության ղեկավարը չէ: Հիշեք՝ Սերժ Սարգսյանը կարող է նորից վարակվել տարածքներ զիջելու էնտուզիազմով...

facebook.com/armen.meliqyan.9/posts/1168453509939131. 24.12.2016թ.:

* * *

Սահմանամերձ գյուղերում եւ Արցախում ապրող իմ սերնդակիցների մանկությունն անցավ ռմբապաստարաններում, ու այդ մանկությունն աղճատվեց՝ ծանր հիշողությունների անդառնալի բեռ փոխանցելով հետագա կյանքին: Մեր գյուղում գրեթե դպրոցները չընդհատվեցին, մենք դպրոց էինք գնում հեռավոր տներում, որոնք համեմատաբար ապահով էին, իսկ ճանապարհին եւ դպրոցում խոսում էինք, թե արդյոք քանի՞ հարյուր սնարյադ գնաց Ղազախի ուղղությամբ, ու թե հիմա ինչպես են թուրքերը սարսափած: Մանկական երեւակայությամբ մենք արդեն կերտել էինք հաղթանակը, որը հետո դարձավ իրականություն: «Ցուրտն ու մութն» անգամ երեխաների համար գոյություն չուներ, ամոթ էր՝ «հացի հերթերի», «ցրտի ու մթի» մասին խոսելն, ու զարմանում եմ, թե ինչո՞ւ երեւանցիները թույլ տվեցին, որ ինչ-որ պատեհապաշտ սրիկաներ մեր պատմության այդ հերոսական շրջանը որակեն «ցրտի ու մթի» տարիներ:

Պարտքս եմ համարում միանալ գաղափարակից ընկերներիս ու հաղթանակի տարիներին երկիրն առաջնորդած նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին շնորհավորել տարեդարձի առթիվ:

Ոմանք նախագահին աստվածացնում են, իսկ ոմանք՝ մոլեռանդորեն ատում: Երկու դեպքում էլ կորցնում ենք պետական գործչին բացահայտելու պատեհությունը: Այդ խնդիրը կլուծեն հետագա սերունդները՝ շատ գրքեր ու կեղծ տեսություններ կթափվեն աղբակույտի մեջ, անարժեքությունը կմոռացվի: Ստորությունը երկար թագավորել չի կարող...

Շնորհավոր, պարո՛ն Նախագահ, հպարտ եմ, որ հենց Ձեզ էր բաժին ընկել առաջնորդելու մեր երկիրն այդ բախտորոշ էտապում: Դա զուսպ ու հավասարակշիռ քաղաքականության արդյունքում ձեռք բերած հաղթանակ էր, որն այսօր հախուռն ու խելագար մոլուցքով պղծում են:

Առողջություն եւ երկար տարիների կյանք, թեեւ լիուլի կատարել եք Ձեր առաքելությունը, բայց ես՝ Հայաստանի քաղաքացիս, ավելին եմ պահանջում, քանի որ քաղաքական դաշտի ամայացման արդյունքում՝ նոր սերունդը չստացավ իր սերնդակից առաջնորդին, որին կարող էր ապավինել:

iLur.am, 09.01.2017թ.:

* * *

Առաջին նախագահի ուղերձը բերելու է նոր իրավիճակ: Վստահ եմ, շուտով կլինենք դրա ականատեսը: Արեւմտամետությունը կամ ռուսամետությունը կմղվեն երկրորդ պլան, որովհետեւ գերխնդրի նշածողը մատուցվել է հասարակությանն ու դա չի կարող անարձագանք մնալ: Այսուհետ մեր հասարակությունը բաժանվելու է ուղերձի կողմնակիցների եւ մերժողների միջեւ: Պատահական չէ, որ ջղաձգումների մեկնարկը մեծածավալ է, որովհետեւ փորձում են նվազեցնել ուղերձի հասանելիությունը հասարակության մեջ: Բայց քանի որ սա չի ասվել կարճաժամկետ խնդիրների լուծման համար ու դա դառնալու է քաղաքականություն ապա կասկածից վեր է, որ ամեն մարդ լսելու եւ մտածելու է ասվածի մասին:

facebook.com/armen.meliqyan.9/posts/1204972729620542. 31.01.2017թ.:

* * *

ՍԱՐԳԻՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (Հոգեթերապեւտ),– Ֆեյսբուքում պսեւդո ռազմահայրենասիրական պաթոսաfuck վիճակ է: (Ներողություն անգլերեն այդ 4 տառի համար...)

Ով չի կարող ուռա-պատրիոտիկ ստատուսներ, տեքստեր գրել? Ով չի կարող ասել «թուրքի մերը», «հող հանձնողին հանձնենք հողին», ով չի կարող գլուխ հարդուկել ապագայում դեռ տեղի ունենալիք զանազան «հերոսապատումներով» եւ, վերջապես, ով չի ուզում՝ կտրիճ Դավոն լավ ըլնի? :D

Եկեք սոցիալական էքսպերիմենտ անենք: Ով է համաձայն? Գրենք մի «հզորազդու եւ հերոսական ռազմահայրենասիրական» ստատուս, տեսնենք՝ ոնց են արձագանքում:

Օրինակ, գրեմ. «Մենք պետք է այժմ ոչ թե մտածենք, թե ինչպես խաղաղություն կնքել դարավոր ոխերիմ թշնամու հետ, այլ պետք է մոբիլիզացնե՛նք բոլոր հնարավորությունները՝ վերջնականապես ազատագրե՛նք նաեւ Դաշտային Ղարաբաղը եւ անվերապահ կապիտալուլյացիա պարտադրենք Ադրբեջանին»:

Կլինեն հարյուրավոր լայքեր, տասնյակներով «ես քո ցավը տանեմ, իմ ՀԱՅ ախպեր» կարգի քոմենթներ: Ու վերջ. էլ բան պետք չի: Կարեւորը՝ երեւացինք ուլտրահայրենասեր, ինքներս մեզ թվացինք ուժեղ ու ամեն ինչ կարողացող, ձեռքի հետ էլ մասկուլին որակներ ցուցադրեցինք: Մնացածը՝ ջհանդամը:

Կարող ենք անգամ հարց էլ չտալ՝ իսկ այդ ամենը ոնց անել, ինչի հաշվին, ինչ ռեսուրսներով, իսկ այս երկիրը դեռ գոնե մի տասնամյակ էլ կձգի այս տեմպերով, եւ այլն եւ այլն... Ավելորդ հարցեր են...

ԿԱՐԵՒՈՐՆ ԱՐՏԱՔԻՆ ԷՖՖԵԿՏՆ Է, ՈՉ ԹԵ ԷՖՖԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ, ՉԷ?)):

facebook.com/sargis.mikayelyan/posts/1184290901606729. 18.12.2016թ.:

* * *

ՖԵԼԻՔՍ ՄՈՒՇԵՂՅԱՆ (Ճարտարագետ),– Մեր երկիրը իշխանություն չունի՞: Լ. Տեր-Պետրոսյանը հողերը հանձնում է դուք քնած ե՞ք: Ժողովուուրդ, Լեւոնը հող հանձնող չի: Նա այդ հողերը ազատագրած բանակի Գերագույն գլխավոր հրամանատարն է: Պարզապես առաջին նախագահը վերահաստատել է իր տարբերակը, երկիրը պատերազմից դուրս բերելու ու նորմալ երկիր դառնալու հիմքեր ստեղծելու մասին: Եթե սխալ է, դուրներդ չի գալիս՝ իրեն քննադատելու, Քենեդուն սպանելու մեղքը իր վրա բարդելու փոխարեն առաջարկեք ավելի լավ տարբերակ: Միայն թե ոչ թե խոհանոցում թաղթին նստած՝ այլ տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական ազդեցություններն ու հնարավորությունները հաշվի առնելով: Հաջողություն եմ ցանկանում:

facebook.com/fellix.mushegyan/posts/705002356343337. 19.12.2016թ.:

* * *

Նախ պետք է հասկանանք՝ կո՞ղմ ենք խաղաղ կարգավորմանը եւ ի՞նչ պայմաններով (որոնք կորոշվեն բանակցությունների ընթացքում): Եթե կողմ չենք՝ ուրեմն համաձայն ենք ներկա իրավիճակին (ստատուս-քվո) որը հավերժ չի կարող պահպանվել թեկուզ այն պատճառով, որ գնալով երկիրը դատարկվում եւ թուլանում է, իսկ Ադրբեջանը հզորանում է: Մյուս տարբերակը հենց վաղը սկսել անորոշ ելքով պատերազմ Ադրբեջանի դեմ՝ իհարկե եթե միջազգային հանրությունը թույլ տա եւ մեր գլխին չբամփի (որը անխուսափելի է): Խնդրում եմ ավելացնել կա արդյոք այլ ելք եւ թվածս տարբերակներից ո՞րը ում (իշխանություն, ժողովուրդ, Լ. Տեր-Պետրոսյան, Ռուսաստան) է ձեռնտու:

facebook.com/fellix.mushegyan/posts/705673979609508. 20.12.2016թ.:

* * *

Անկասկած է, որ Արցախյան հիմնախնդրի արծածման առաջին օրվանից Ադրբեջանի թիկունքին կանգնած է եղել Թուրքիան: Նա իր խորհուրդներով եւ օժանդակությամբ թույլ չէր տա Ադրբեջանին սխալներ թույլ տալ բանակցությունների ընթացքում: Եթե Լ. Տեր -Պետրոսյանը իր կրթական, ինտելեկտուալ մակարդակով մի քանի գլուխ բարձր լինելով երկրորդ եւ երրորդ նախագահներից, հենվում էր նաեւ բանիմաց, կրթված, փորձառու մասնագետների վրա: Հաջորդները շրջապատեցին իրենց քծնող պատեհապաշտներով, ովքեր պատրաստ էին նրանց ցանկացած ճիշտ թե սխալ քայլը արդարացնել եւ գովաբանել: Արդյունքը չէր կարող այլ լինել: Էլ չեմ ասում հեղաշրջման միջոցով համակարգային ձեւախեղումների կործանարար ազդեցության մասին՝ քաղաքական ու տնտեսական կյանքի վրա: Սրանք ծանրակշիռ պատճառներ ունեն շարունակելու իրենց անփառունակ իշխանությունը: Միակ ճանապարհը մնում է հենվելով մեր քաղաքական ուժերի ողջախոհության վրա՝ միասնական ուժերով ազատվել չարիքից ու երկիրը փրկել արհավիրքից:

facebook.com/fellix.mushegyan/posts/710577085785864. 28.12.2016թ.:

* * *

ԱՐՄԱՆ ՄՈՒՍԻՆՅԱՆ (Արեւելագետ, հրապարակախոս),– Լեւոն Տեր-Պետրոսյանի համագումարյան ելույթի ու դրան հաջորդած քննարկումների ու արծագանքների առիթով.

1. Այդպես էլ ոչ ոք, լինի քաղաքական, թե հասարակական դաշտից, ոչ մի այլընտրանքային կոնցեպտ հասարակությանը չներկայացրեց: Ելույթին արծագանքելու մասին չեմ խոսում, այլ Արցախյան հարցում ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿՈՆՑԵՊ-

ՏՈՒԱԼ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ, որ գոյություն ունի անկախ Տեր-Պետրոսյանի մոտեցումներից:

2. Մտովի փորձեք հանրային գիտակցությունից ջնջել/հանել Տեր-Պետրոսյանի՝ նախորդ 25 տարիների ասելիքը ղարաբաղյան հարցի վերաբերյալ: Տեսեք տակն ի՞նչ կմնա: Անկախությունից սկսած, ավելի քան 25 տարի ուրիշ ո՞վ է ասելիք, լուծում առաջարկել հասարակությանը՝ մեր պետության առջեւ կանգնած ամենացավոտ հարցի վերաբերյալ: Տակը մնացածն իրար որ գումարեք՝ 3 էջ կարող է չլինի: 25 տարի շարունակ այս խնդրից փախել են բոլորը! Բոլորն անխտիր, բացի Տեր-Պետրոսյանից ու նրա ղեկավարած քաղաքական ուժից: Մեզ համար Արցախյան հարցը խնդիր է, որ պետք է լուծել: Ինչպես կյանքի որեւէ բնագավառում որեւէ բարդ խնդրի հանդիպած մարդը կփորձի լուծել այն: Մյուսների համար ղարաբաղյան հարցը կամ գլխացավանք է, որից պետք է հնարավորինս հեռու մնալ՝ քաղաքականապես անշահեկան վիճակում չհայտնվելու համար կամ հայրենասիրություն խաղալու գործիք, ինչը սովորաբար կառուցվում է ատելության քարոզի, ազգային սնապարծության, սեփական ուժերի գերագնահատման եւ իհարկե մեր զինվորների կյանքերի վրա: Պատված պատասխանատվության ԲԱՑԱՐՁԱԿ բացակայությամբ: Որովհետեւ ՑԱՆԿԱՑԱԾ ԼՈՒԾՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ:

3. Հազար անգամ էլ լինի, չարժի զլանալ ու հիշեցնել, որ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ է հանրային գործունեության ու խոսքի առանցքը: Դա է, որ քաղաքական խոսքը տարբերում է ճամարտակությունից ու բեսեդկայի գյալաջիներից (ներողություն՝ հայերեն համարժեքը չգտա), պրագմատիզմն՝ ավանտյուրիզմից ու wishful thinking-ից (ցանկալին իրականի տեղ դնելու մտայնությունից): Ամենահեշտ բանն է՝ նստել ու սեփական երազները, որոնք ոչ մի աղերս չունեն երկրի ռեսուրսների ու

ձեւավորված իրողությունների հետ, ներկայացնել հանրությանը՝ որպես պետությանը փորձություններից դուրս բերելու (իրականում՝ փորձանքի մեջ գցելու) ծրագիր:

4. Հայտնի բան է. մարդիկ նյարդայնանում են, երբ գիտեն, որ իրենք սխալ են, իսկ դիմացինն՝ իրավացի: Եւ հակառակը՝ անսահման խաղաղ են, երբ գիտեն, որ ճիշտն իրենք են, եւ որ այդ բանավեճում ամեն ինչ՝ փաստեր, տրամաբանություն, ժամանակ, աշխատում են իրենց օգտին: Անհիմն խոսողները նյարդայնանում են, շեղում թեման պիտակների դաշտ, խոսում ամեն ինչից, բացի բուն թեմայից եւ աղավաղում դիմացինի ասելիքը: Հիմա հետահայաց նայեք Տեր-Պետրոսյանի ելույթին հաջորդած արձագանքներին, եւ ամեն ինչ պարզ կդառնա: Եւ եթե ուշադիր հետեւեք առաջիկա նախընտրական քարոզարշավին, ամեն ինչ էլ ավելի պարզ կդառնա:

***iLur.am**, 11.01.2017թ.:*

* * *

Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ 2016թ. դեկտեմբերի 17-ի ելույթի վայքննադատներին.

«Դիվանագիտության հաճախ անտեսված հիմնական օրենքը. երբ կարող ես ամեն ինչ կորցնել, եթե վստահ չես, որ պատերազմը կշահես, ընդունիր ցանկացած խաղաղություն, որ հնարավորություն ունես ձեռք բերել»:

Սա բառացի քաղվածք է ամերիկացի գրող, հրատարակիչ Բիլ Ֆոսեթի «100 սխալներ, որոնք փոխել են պատմությունը» գրքից – Bill Fawcett, 100 mistakes that changed History, Berkeley Books, New York, 2010, p.42

Կարծես հատուկ գրված լինի այսօրվա մեր «հայրենասերների», բազմոցին պառկած ոչմիթիզիոողականների, Արա Պապյանի եւ Արման Մելիքյանի նման «հանճարեղ ու սկզբունքային»

դիվանագետների ու մարդկության փորձը դորդուբեշ արածի դեմքով վերլուծագանգերի համար:

facebook.com/arman.musinyan/posts/10154495289681799. 12.02.2017թ.:

* * *

ԿԱՐԻՆԵ ՅԱՐԱԼՅԱՆ (ՀՌ(Ս)Հ դասախոս),– Ճիշտն ասած չգիտեմ, է՞լ ինչպես բացատրի Լեւոն Տեր-Պետրոսյանը...

եւ, ընդհանրապես, չգիտեմ՝ արդյո՞ք մենք ունակ ենք հասկանալ ասվածն ու ադեկվատ ընկալել իրականությունը, թե շարունակաբար թաղվելու ենք սոցիալ-քաղաքական միֆերի, բարոյալքման ու հոգեբանական ապատիայի մեջ, արդյունքում վերջնականապես կործանելով մեր հայրենիքը...

facebook.com/karine.yaralyan.1/posts/1298825856846693. 17.12.2016թ.:

* * *

ՀԱՐՈՒԹ ՈՒԼՈՅԱՆ (Աշխարհագրագետ, հրապարակախոս),– Լեւոն Տեր-Պետրոսյանի երեկվա ելույթը՝ հիրավի իր լավագույն ելույթներից էր, թե ամբողջապես, թե առանձին շեշտադրումներով: Հերթական անգամ կրկին Տեր-Պետրոսյանն էր, ով չվախենալով մեր «հայրենասեր-ազգայնականների» կողմից, իր բառերով ասած՝ «մաշված պիտակների» արժանանալուց, քաղաքական լեզվով բացեիբաց խոսեց կենսական այնպիսի թեմաներից, ինչպիսին են արցախյան հիմնախնդիրը, ազգ-բանակ գաղափարը, կոռուպցիան, 1000 դրամների նախագիծը, Սփյուռքից ակնկալվող օգնությունները, արտագաղթը... Ցույց տվեք մեր քաղաքական դաշտում մեկ այլ անձ, ով այսպիսի վճռականությամբ ի զորու է նայել ճշմարտության աչքերին:

Կոնկրետ ինձ համար ամենագնահատելի, ինչպես Տեր-Պետրոսյանը ասեց՝ «հրապարակային խոստովանությունը», հետեւյալն էր՝ «Հայաստանը բնակչությունից դատարկվում է ոչ այնքան սոցիալական ծանր պայմանների, աղքատության, արդարության բացակայության եւ կոռուպցիայի, որքան պատերազմի վերսկսման տեւական վտանգի պատճառով»:

facebook.com/harut.uloyan/posts/10210523591993285. 18.12.2016թ.:

* * *

4 տարի առաջ եմ գրել. Արցախի «խնդրի» չլուծման համար, բացի Տեր-Պետրոսյանից ու նրան աջակցողներից, մեղավոր են անխտիր բոլոր նախկին թե ներկա «կայացած» քաղաքական ուժերն ու գործիչները: Եթե Տեր-Պետրոսյանին ՉԴԱՎԱՃԱՆԵԻՆ ու չխանգարեին, նա 97–98 թթ.-ին լուծելու էր այդ խնդիրը ու լուծելու էր նախկինում մշակված եւ ԲՈԼՈՐԻՆ հայտնի ծրագրով: (Տեր-Պետրոսյանի ծրագրին, մինչեւ իր նախագահ դառնալը, շատ լավ ծանոթ էին թե մնացած գործիչները, թե ժողովուրդը: Թող անիմաստ չպնդեն, որ «պատերա՞զմ, թե՞ խաղաղություն» հոդվածում հնչեցված դրույթները բոլորի համար նորություն էր... Դրանց մասին Տեր-Պետրոսյանը մինչ այդ էլ ա խոսացել...) Բայց պատերազմից հետո, երբ դուխ հավաքեցին, արդեն մաքսիմալիստական սկզբունքներով սկսեցին դեմ գնալ Տեր-Պետրոսյանին, իսկ նրա փոխզիջումային տարբերակը բնութագրեցին որպես՝ «ծախել Արցախը»: Սակայն, ինչպես փաստերն են ցույց տալիս, դա ընդամենը ժողովրդին հաճոյանալու համար էր/է արվում, իսկ իրականում այն ժամանակվա անվտանգության նիստերում նույն այդ մարդիկ հայտարարում էին, որ «Ղարաբաղի հարցում հիմա կարիք չունենք փոխզիջման գնալու: Կզիջենք այն ժամանակ, երբ հարկադրված լինենք:... Ղարաբաղյան կարգավորման պրոցեսում պետք է վարել ակտիվ սառեցման քաղաքականություն», իսկ Տեր-Պետրոսյանի հակադարձումը, թե «հարկադրված զիջումը նշանակում է կապիտուլյացիա, իսկ կապիտուլյացիայի ժա-

մանակ դու ոչինչ չես զիջում, այլ հլու հնազանդ ընդունում ես այն, ինչ փաթաթում են քո վզին:... Հայաստանը վաղն ավելի ուժեղ չի լինելու, քան այսօր: Հետեւաբար, վաղվա ցանկացած լուծում ավելի վատն է լինելու, քան այսօրվանը», մեղմ ասած լուրջ չընկալվեց ու մինչեւ հիմա էլ ՉԻ ԸՆԿԱԼՎՈՒՄ:

14–15 տարի ա անցել ու դեռ Արցախի հարց են լուծում... Չնայած, դեռ Քոչարյանը պիտի «ոչ մի թիզ հող» հանձնելով լուծեր այդ հարցը... Բայց դե իրականությունը լռիվ այլ ա, ու «ոչ մի թիզ հող»-ը ընդամենը իշխանության գալու կարգախոս ա, իսկ իշխանության գալուց հետո միանգամից սկսում են փոխզիջումներից խոսալ... Ու թե ինչ ծրագրով են/էին պատրաստվում «ոչ մի թիզ հող» հանձնելով վերջնականապես ԼՈՒԾԵԼ Արցախի խնդիրը, մինչեւ հիմա ԳԱՂՏՆԻՔ Ա: Բնականաբար նրանցից ոչ ոք էլ իրականում ՈՉ ՄԻ ծրագիր էլ չունի Արցախի խնդիրը «ոչ մի թիզ հող»-ով լուծելու համար... Նման ծրագիր կարող էր լինել միայն էն դեպքում, երբ Հայաստանը կլիներ մի գերտերություն, իսկ Ադրբեջանը մի չնչին երկիր, ու հետեւաբար Հայաստանի համար ոչ շրջափակումները նշանակալից կլինեին, ոչ էլ՝ պատերազմը... Ու էտ ժամանակ «ստատուս-քվոն» թող ոչ թե տասնյակ տարիներ տեւեր, այլ դարեր... Բայց եթե իրականում պատկերը էն ձեւ ա, որ Ադրբեջանը ամեն բնագավառում մի քանի անգամ գերազանցում ա մեզ ու էտ տարեց-տարի ավելի ակնհայտ ա դառնում, բնականաբար «ստատուս-քվոն» որպես խնդրի լուծում պահպանելը ոչ միայն անընդունելի ա, այլեւ՝ կործանարար... ինչի վառ ապացույցը ԱՐՏԱԳԱՂԹՆ ա:

Արցախի խնդրի լուծումը՝ հասարակ ներքաղաքական խնդրի լուծում չի ու գաղափարախոսությունների բազմազանությունից ելնելով, հարցի լուծման համար բազում տարբերակներ չկան: Սա թերեւս միակ խնդիրն ա, որը առավելագույնս պիտի համախմբեր քաղաքական ուժերին ու ժողովրդին: Սակայն

համախմբումը պիտի տեղի ունենար հիմք ընդունելով այն պարզ պնդումը, որ փոխզիջման այլընտրանքը՝ պատերազմն ա... Բայց ոչ մի տեսակի համախմբում տենց էլ տեղի չի ունենում ու դա կարա լինի երկու պատճառով. առաջին. քաղաքական ուժերը/գործիչները իրականում ոչ մի կոնկրետ ծրագիր էլ չունեն ու իրենք էլ չգիտեն, թե ոնց պիտի լուծվի խնդիրը... երկրորդ. բոլորը առաջնորդվում են զուտ անձնական շահով:

Իսկ վերջում. ո՞վ ա տուժում էս ամենից... բնականաբար ժողովուրդը... Ու ստեղ ամենից շատն ա սազում էն պնդումը, որ «ամեն ժողովուրդ արժանի ա իր իշխանություններին»...

facebook.com/harut.uloyan/posts/10210528482995557. 18.12.2016թ.:

* * *

Ես ասում էի՝ հարցում իրականացրեք «խաղաղություն ցանկանո՞ւմ եք» հարցադրումով, սակայն այս 3 օրվա ընթացքում ինքնաբուխ կերպով ամբողջ ազգը այդ հարցումը իրականացրեց: Ազգի 99,99 տոկոսի Նոր Տարվա մաղթանքը խաղաղությունն էր: Բաքուն գրավելու մաղթանքներ այդպես էլ չհնչեցին: Ու թե ինչպե՞ս են խաղաղությամբ Բաքուն գրավելու, կամ ինչպե՞ս է պատահում, որ խաղաղություն ցանկացող ազգի մոտ պատերազմի սպառնալիքը առաջնահերթություն չի դիտվում երկիրը լքելու համար, դա թող մեր պասպորտով վերլուծագանգերը բացատրեն: Ի դեպ, անձամբ ես նույնիսկ սոցիալական բարելավման մասին գրառումներ չեմ տեսել, այն դեպքում, երբ, իբր, այդ խնդիրը մեր ժողովրդի մոտ ավելի առաջնային է, քան խաղաղության հաստատումը:

facebook.com/harut.uloyan/posts/10210668214408755. 03.01.2017թ.:

* * *

Արտագաղթի տեմպը փոխանակ փոքրանա, գնալով ավելի է ահագնանում: Նախ եւ առաջ, «նորմալ» ընթացքի դեպքում, այն պետք է փոքրանար զուտ հանրահաշվական սկզբունքներից ելնելով: Այսինքն՝ եթե, օրինակ, 100.000-ից մի տարվա ընթացքում արտագաղթում է 10.000, այսինքն՝ 10 տոկոսը, ապա հաջորդ տարի մնացած 90.000-ից պետք է արտագաղթեր առավելագույնը 9.000, մյուս տարի, մնացած 81.000-ից, 8.100, եւ այդպես շարունակ... Սա, ասում եմ, վատագույն ընթացքի դեպքում, երբ արտագաղթի տեմպը «տարօրինակորեն» մնում է նույնը: Իսկ ի՞նչ է կատարվում Հայաստանում: Արտագաղթի տեմպը ոչ թե նվազում, ոչ թե «տարօրինակորեն» կայուն է մնում, այլ՝ խայտառակորեն աճում է: Եթե 2013թ.-ին արտագաղթել է 31.200, 2014-ին՝ 41.700, 2015-ին՝ 43.470, ապա 2016-ին արտագաղթել է արդեն 48.170 մարդ: Այսինքն, օրինակ, 1.000.000 բնակչության դեպքում 2013թ.-ին արտագաղթել է բնակչության մոտ 3 տոկոսը, 2014-ին՝ 4, 2015-ին՝ 5, 2016-ին՝ 5,5 տոկոսը: Այսինքն, Հայաստանի բնակչության նվազման հետ մեկտեղ, տարեցտարի անշեղորեն ավելանում է արտագաղթող մարդկանց քանակը: Թե այս խայտառակ ընթացքը ինչերի կարող է հանգեցնել, դժվար չէ կռահել: Ու այսքանից հետո, թող մեր խելոքները շարունակեն պնդել, թե արտագաղթի տեմպի անշեղորեն աճը պատերազմի վտանգի հետ ոչ մի առնչություն չունի:

***hayastan24.com**, 06.02.2017թ.:*

* * *

Նախօրեին «Օրակարգից դուրս» հաղորդման ժամանակ ՀՅԴական Հրանտ Մարգարյանը, խոսելով Արցախի խնդրի լուծման ներկայիս փոխզիջումային ծրագրի մասին, քննադատում էր Կոնգրեսի տեսակետը՝ այն անվանելով «մեծ ավանտյուրա»:

Անդրադառնալով երաշխիքներին՝ դաշնակցական ներկայացուցիչը հռետորական հարց է բարձրացնում՝ «Ադրբեջանը ընդունո՞ւմ է Ղարաբաղի անկախությունը, թե՞ ոչ: Ադրբեջանը ընդունո՞ւմ է, որ Ղարաբաղի ժողովուրդը պետք է որոշի Ղարաբաղի ճակատագիրը, թե՞ ոչ»: Մի քանի րոպե անց նույն անձը հայտարարում է հետեւյալը՝ «Հիմիկվանից ասեմ, որ եթե Ղարաբաղի ժողովուրդը որոշի, որ Ադրբեջանի կազմում պետք է մնա, ես դրան էլ դեմ եմ, որովհետեւ Ղարաբաղը, Հայաստանը, հայ ժողովուրդը պետք է որոշի (Ղարաբաղի ճակատագիրը)»:

Այսինքն, մի կողմից՝ Հրանտ Մարգարյանը Ադրբեջանից պահանջում է, որ վերջինս ընդունի, որ Արցախի ճակատագրի որոշողը Արցախի ժողովուրդն է, իսկ մյուս կողմից՝ հայտարարում է, որ ինքն անձամբ դեմ կլինի, եթե Արցախի ժողովուրդը որոշի, որ Արցախը պիտի Ադրբեջանի կազմում մնա, ավելին, որ Արցախի ճակատագիրը ոչ միայն Արցախը պետք է որոշի, այլեւ՝ Հայաստանն ու ամբողջ հայ ժողովուրդը: Հարց է առաջանում. որքանո՞վ է ընդունելի Ադրբեջանից պահանջել՝ ճանաչել Արցախի ինքնորոշման իրավունքը, երբ դու ինքդ ես «էս գլխից» ոտնահարում նույն այդ իրավունքը:

Տարօրինակը, մեղմ ասած, այն է, որ դաշնակցականները (Հրանտ Մարգարյան, Արմեն Ռուստամյան), քննադատելով Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Կոնգրեսի տեսակետները, «մոռանում» են, որ իրենց կողմից անընդունելի համարվող՝ Արցախի հարցի լուծման ներկայիս փոխզիջումային ծրագրի հետ ոչ Տեր-Պետրոսյանը, ոչ էլ Կոնգրեսը ոչ մի առնչություն չունեն, այլ, ընդհակառակը՝ ՀՀԿ-ի հետ «համատեղ» միայն իրենք՝ դաշնակցականներն են, որպես կոալիցիոն անդամ, ներկա-

յումս պատասխանատու Արցախի խնդրի վերաբերյալ ընթացող բանակցությունների համար:

Եթե դաշնակցականները կտրականապես դեմ են 2007թ.-ից շրջանառվող «Մադրիդյան սկզբունքներ» կոչվող փոխզիջումային ծրագրին, ապա ինչո՞ւ դուրս չեն գալիս կոալիցիայից, կամ, ավելի ճիշտ, ինչո՞ւ են առհասարակ կոալիցիա կազմել՝ նախօրոք շատ լավ պատկերացում ունենալով բանակցային ընթացքի մասին: Մենք մի քանի տարի առաջ ականատես ենք եղել, թե ինչպես է Դաշնակցությունը, «սկզբունքորեն» համաձայն չլինելով հայ-թուրքական արձանագրություններում տեղ գտած որոշ դրույթների հետ, դուրս եկել կոալիցիայից: Արդ՝ ի՞նչն է խանգարում Դաշնակցությանը, թելադրված Արցախի հարցում «սկզբունքային» անհամաձայնություններով, այժմ նույնպես դուրս գալ կոալիցիայից, առավել եւս՝ այն դեպքում, երբ վերջերս ԱԳՆախարար Էդվարդ Նալբանդյանը կրկին հայտարարեց, որ բանակցություններն ընթանում են Մադրիդյան սկզբունքների հիման վրա: (Ինչպես ամենավերեւում նշվեց, ներկայումս քննարկվող փոխզիջումային ծրագիրը, այսինքն՝ Մադրիդյան ծրագիրը, դաշնակցականների համար «մեծ ավանտյուրա» է:)

Իսկ թե ի՞նչ «սկզբունքների» թելադրմամբ է պատահում, որ ներկայիս բանակցությունները վարող իշխանությունների փոխարեն, քննադատության թիրախ են դառնում Տեր-Պետրոսյանն ու Կոնգրեսը, դա միայն հեղափոխությունների ժամանակաշրջանը ավարտված համարող հայ հեղափոխական դաշնակցականներին ու իրականությունը «մեծ ավանտյուրա» համարողներին է հայտնի:

***iLur.am**, 14.02.2017թ.:*

* * *

ՏԻԳՐԱՆ ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆ (Գրող, հրապարակախոս),– Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո, երբ պետք էր ամոթն ու հպարտությունը մատուցել հասարակությանը մեկ փաթեթով, առաջ եկավ «ազգ-բանակի» գաղափարը, որն ամոթի ուշացած արդարացումն էր եւ հպարտության կառուցվածքային մարմնացումը. թե իբր, գիտե՞ք, վրիպել էինք ու ազգը՝ բանակ, բանակն ազգ դարձնելու պահը բաց թողել:

Ասածիս ճշմարտացիությանը մի գրամ չեմ կասկածում, հատկապես որ հաստատումը հիմա հանդիպում է փողոցային ամեն վահանակի վրա՝ «կոչված եւ զորակոչված» պաստառներով. իբր թե Սիրուշ տոտան, ասենք, պաղպաղակ է ծախում ոչ թե էրեխեքին ու թոռներին պահելու համար, այլ որպեսզի արդարացնի տարիքի ու սեռի բերումով զորակոչված չլինելը:

Մնացածդ (կամ՝ մնացածս) աջ դարձ, քայլով մարշ:

Անհրաժեշտությունը եթե լիներ, ազգ-բանակը պետք է ձեւավորվեր հենց պատերազմի ժամանակ՝ «գեղ կանգնի – գերան կոտրի» ժողովրդական իմաստնությամբ, եւ այսօր օսլայած օձիքները գոնե պետք է մի քանի նմուշ ունենային՝ չուզողների աչքը մտցնելու համար: Պիտի ասեին՝ սահմանամերձ, օրինակ՝ Վազաշենի ազգը բանակ է, а вы, сволочи, гуляете по пабам и ресторанам: (Չգիտեմ՝ ինչու էս մասը ռուսերեն ստացվեց, կներեք:)

Նախադեպը չկա: Սահմանամերձ գյուղացիները խոպա՞ն գնան, թե՝ ազգ-բանակ դառնան: Ո՞ր դեպքում կկարողանան երեխանցը շոր ու տետրակ առնել, սովորելու տալ ու բարձրագույնի հասցնել: Համ էլ խոպան գնալն ուրիշ աշխարհ տեսնելու շանս է, իսկ ազգ-բանակում՝ կոչված ու զորակոչված, թուրքի մառախուղից բացի բան չեն տեսնելու: Մառախուղն էլ մի նենց բան չէ, որ ասես՝ թուրքինը չի, մերն ա:

Եւ հիմա օսլայած օձիքներն աննախադեպ պրոյեկտ են ուզում իրականացնել՝ մոտավորապես մորմոնների պես, որ անունները հավաքում ու մկրտում են՝ մեռած ես, թե ողջ՝ ինչ տարբերություն: Ասել է թե՝ դուք կյանք չունեք, դուք մկրտված եք պատերազմով, եւ եթե պատերազմ էլ չկա, երանի նրան, ով առանց տեսնելու կհավատա: Մառախուղը՝ ձեզ օրինակ:

Բայց վտանգավորը սա չէ կամ միայն սա չէ: Վտանգավորն ազգը պետության դեմ հանելն է՝ ղաչաղի ինստիտուցիոնալիզացիան:

Երբ բանակը՝ պետության կարեւոր մի բաղադրիչը, նույնացվում է ազգի հետ, պետությունը դառնում է ոչինչ: Ով բանակում ծառայել է, կհասկանա ասածս: Այնտեղ քննարկում չկա, խոսք ու զրույց չկա, միայն հրամաններ են:

Ավելի արդար չէ՞ր լինի պետությունը հայտարարել բռնապետություն, նախագահին՝ միապետ (մարշա՛լ, գեներալիսիմո՛ւս), փակել սահմանները, վերացնել մամուլը, հարյուր քաղբանտարկյալի փոխարեն ունենալ հազարը կամ տասը հազարը:

Ավելի անկեղծ կլիներ, բայց դա պատասխանատվություն է: Պետք է ունենալ անքննելի հրամանի մթնոլորտ՝ չունենալով հրաման տվող ու տրված հրամանի պատասխանը տվող:

Օսլայած օձիքները պատասխանատվություն չեն ուզում վերցնել: Ազգ-բանակով նրանք պատասխանատվությունը ցրում են բոլորիս վրա:

Կհաղթենք՝ փառք: Կարեւոր չէ՝ ինչպե՞ս, ի՞նչ գնով, նաեւ՝ ինչո՞ւ, երբ արդեն հաղթել ենք:

Կպարտվենք՝ կվերանանք բոլորով ու վերջապես: Ու ոչ ոք թող չասի, թե ինքը գիտեր գլխներիս գալիքը:

Մենք ազգ-բանակ ենք: Աջ դարձ, քայլով մարշ:

***iLur.am**, 20.02.2017թ.:*

* * *

ԹԵՒԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ (ՀՀ ԱԺ պատգամավոր),– ՀԱԿ 2-րդ համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը դիտեցի ծայրից ծայր: Անկախ իմ վերաբերմունքից այդ կուսակցության քայլերի եւ առաջին նախագահի առանձին դիրքորոշումների հանդեպ՝ ազնվորեն գրում եմ զգացածս. ի դեմս նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի Հայաստանն ունի խորքային պետական գործիչ, որպիսիք շատ չեն մեր երկրում, իսկ ավելի անկեղծ՝ շատ եւ շատ քիչ են:

Խորհուրդ մեր նոր կառավարությանը՝ ուշադիր ընթերցեք այդ ելույթը, այնտեղ մտածողության, հատկապես լեզվամտածողության առումով շատ բան կա սովորելու: Ամբիցիաների հետեւից պետք է գիտելիք գա, խորքային մտածողություն, մի քիչ էլ տաղանդ գա, պոնտերն ու ինքնաառաջմղումը, «պինդ տղայի» դատարկ դիմակը կարճ կյանք ունեն:

Մինչ բովանդակային քննարկումը, էլի մի քանի անգամ հաստատ կկարդամ:

facebook.com/tevan.poghosyan/posts/10155647075768378. 17.12.2016թ.:

* * *

...Ես երբեք չեմ եղել ՀԱԿ-ի հետեւորդ եւ չեմ լինելու: Չեմ կիսում հենց Արցախյան հիմնախնդրի լուծման իրենց պատկերացումը, ԵՏՄ-ական կողմնորոշումը եւ այլ շատ այլ հարցեր: Վերջակետ: – Սովորել պե՞տք է, թե ինչպես է փաստարկում իր խոսքը Լեւոն Տեր-Պետրոսյանը: Պե՞տք է հասկանալ, թե ինչպես մարդ կարող է մի ելույթով քաղաքականացնել եւ մանիպուլյացնել ամայացած ամբողջ դաշտը: Այո՛: Վերջակետ: – Խառնե՞ց բոլորիդ: Այո՛: Վերջակետ: – Բա այդքան անիմաստ եք համարում ու այդքան էներգիա ծախսեցիք պիտակավորելու, հայհոյելու, դատավորի պես վերջնական վճիռը հայտարարե-

լու համար... Այդքան էներգիա ու ջա՞նք տարավ անիմաստությունը ձեզանից: Այո՛: Իսկ ասածս պարզ մի բան էր: Հրապարակային խոսք մշակել ու հրամցնել իմացող մարդ մեր երկրում շատ քիչ կա: Շատ շատ քիչ, ես միայն 2-3-ին գիտեմ, Լեւոն Տեր-Պետրոսյանը հաստատ մեկն է նրանցից: Այս ելույթին էլ հարկավոր է առնվազն նույն մակարդակի կամ մի բան էլ ավել մակարդակի խոսք հակադրել, որ ամեն ինչ տեղն ընկնի: Առայժմ տեսնում եմ միայն հակադարձ աղմուկ եւ ոչ մի հիմնարար խոսք...

facebook.com/tevan.poghosyan/posts/10155650314988378. 18.12.2016թ.:

* * *

Կարծում եմ, որ պետք է նախընտրական շրջանում Արցախյան հիմնախնդիրը դառնա քննարկման առարկա, հատկապես սահմանադրական բարեփոխումներից հետո: Մենք անցում ենք կատարում խորհրդարանական համակարգի: Ընտրելու ենք մեծ լիազորություններ ունեցող օրենսդիր իշխանություն, որը պետք է վերահսկի գործադիրի աշխատանքը, ու բնական է, որ օրենսդիրները պետք է պատասխան տան, թե ի՞նչ ծրագրերով են գալու, ի՞նչ քայլեր են ձեռնարկելու եւ ինչպե՞ս են նպաստելու Արցախյան հիմնախնդրի լուծմանը:

Ես կհամարեմ ազնիվ, եթե քաղաքական ուժը կամ գործիչը գա ու ասի, որ 5 տարում ինքը ընդամենը կես քայլ է անելու այս հարցում, թող լինի փոքր քայլ, բայց կարեւորն այն է, որ այդ քայլը մատնացույց արվի:

Ես ուշադիր ընթերցելու եմ բոլորի նախընտրական ծրագրերը ու կտեսնեմ, թե դրանցում ի՞նչ գործողություններ են առաջարկվում: Օրինակ, գալով խորհրդարան՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական ու մնացած ոլորտներին վերաբերող ինչպիսի՞ համագործակցություն են պատկերացնում Արցախի հետ, ինչպե՞ս են աշխատելու միջազգային տարբեր հարթակներում: Սա շատ կարեւոր է, քանի որ ինձ համար ծրագիրը սիրուն ձեւակերպած մեկ-երկու նախադասություն չէ, այլ հստակ քայլերի ու գործողությունների մասին արձանագրում...

Առայժմ ոչինչ չեմ տեսնում: Միայն լոզունգների հնչեցումը դեռ քիչ է: Քաղաքական ուժեր ու գործիչներ կան, որոնք սիրում են հաճախ ասել՝ այն ինչ կասի Արցախը, մենք կլինենք համակարծիք: Սա ընդամենը գեղեցիկ նախադասություն է:

Բայց ուզում եմ հասկանալ, ինչպե՞ս են պատրաստվում իրագործել Արցախի ցանկությունները, մեր վերջնական նպատակը: Հարցի վերջնական լուծման մասին, եթե հարցնեք, բոլորը կասեն՝ ուզում ենք, որ Արցախը լինի Հայաստանի մաս, բայց ինձ հետաքրքրում է, թե դրան հասնելու համար ինչպիսի՞ քաղաքականություն են վարելու, բանակը ինչպե՞ս են ամրապնդելու, ո՞նց է պահպանվելու մեր զինվորների անվտանգությունը, սպառազինության հարցերը ո՞նց են լուծելու, գիտությանը որքա՞ն գումար են տալու կամ ինչպե՞ս են լուծելու առողջապահական խնդիրները, որպեսզի մեր ապագա սերունդը, մեր զինվորն առողջ լինի:

***«Հայոց աշխարհ»**, 01.02.2017թ.:*

* * *

ՏԱԹԵՒԻԿ ՊՈՂՊԱՏՅԱՆ (Ազգագրագետ),– Էն որ Վահրամ Բաղդասարյանը լուրջ դեմքով հայտարարում է, որ ղարաբաղյան հարցի լուծման բանալին հայկական բանակի ձեռքում է...

Բա որ մեր ձեռքում է լուծումը, դե լուծեք: Փաստորեն գիտեք, որ մեր ձեռքում է բանալին ու չեք լուծում կամ կարող եք ու չեք լուծո՞ւմ: Ու ամենավատը այն է, որ այս մարդը չի հասկանում, որ իր ասածը հանցագործության խոստովանություն է: Ոնց որ օրերով սեյֆի բանալիները ման գանք, մեկ էլ մեկն ասի՝ իմ մոտ է: Առաջին արձագանքը կլինի – դե բաց, պրծնենք էս

հարցից: Հիմա եթե չի բացում, ուրեմն հատուկ է անում, հատուկ վնաս է տալիս պետությանը:

facebook.com/pogp.tatev/posts/10202460181903327. 29.12.2016թ.:

* * *

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ (Պատմական գիտությունների թեկնածու),– Սեյրան Օհանյանը էսպիսի մի բան է գրել, թե «Արցախի հարցը (նկատի ունի՝ հակամարտության կարգավորված չլինելը – Ա.Ս.) ոչ թե խոչընդոտ է զարգացող ու անվտանգ հայոց պետականություն ունենալու ճանապարհին, այլ ճիշտ հակառակը»:

Վերջապես գտնված է Հայոց պետականության զարգացման եւ անվտանգության ապահովման բանալի-ճանապարհը: Մի այսպիսի չկարգավորված հակամարտություն էլ ունենանք Վրաստանի հետ, ասենք, Ջավախքի հարցով, մի հակամարտություն էլ Թուրքիայի հետ՝ Անիի ու Կարսի հարցով, եւ կարճ ժամանակում զարգացման եւ անվտանգության ցուցանիշով «կհասնենք ու կանցնեք Ամերիկայի Միացյալ Նահանգներին»:

facebook.com/ashot.sargsyan.f/posts/1021291868014222. 26.12.2016թ.:

* * *

Սեյրան Օհանյան. «Հայաստանը պարտավոր է գտնել արժանապատիվ խաղաղության բանաձեւ իր հարեւանների, այդ թվում՝ Ադրբեջանի հետ»:

Բա գտնեիր(իք): Էդ ծրագրով իշխանության եկաք չէ՞ 18 տարի առաջ: Մեկ, երկու տարի առաջ էլ էդ մասին ասեիր: Էս քսան տարի՝ էդ խնդիրն ա: Չկարողացաք չէ՞ «գտնել»: Ու մի անգամ ձեզնից մեկն ասա՞ց, հենց դու ասացի՞ր՝ որ չկարողացաք: Թե՞ դու ուրիշ մոլորակից հենց նոր իջար: Թռչող ափսեով: Էս քանի՛ հոգի ա լծվել մարդու հավատը մարդկության նկատմամբ սպանելու գործին:

facebook.com/ashot.sargsyan.f/posts/1022148901261852. 28.12.2016թ.:

* * *

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ (ՀՀ նախկին վարչապետ),– ...Ես միանշանակ առաջնահերթ եմ համարում Արցախի հարցի լուծումը՝ իբրեւ ոչ միայն Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, այլեւ ամբողջ Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգության ու տնտեսական զարգացման նախապայմաններից մեկը: Սա միայն մեր հարցը չէ, կոնֆլիկտի գոյության տարիներին հարցը դարձել է համաշխարհային քաղաքական օրակարգի, միջազգային կառույցների պարբերական քննարկումների թեմա: Հարկ չեմ համարում անդրադառնալ կոնֆլիկտի ամբողջ պատմությանը եւ բանակցությունների տարբեր փուլերին, միեւնույն է, բուն իրականությունը գիտեն միայն մասնակիցները, իսկ հրապարակավ արված հայտարարությունները բոլորիս հայտնի են: Գործնականում այսօր հրապարակի վրա երեք տարբեր տեսակետներ են, որոնք արտահայտվում են «Ոչ մի թիզ հող», «Զիջել մասը՝ պահելու համար ամբողջը» կարգախոսներով, եւ հանրահայտ Մադրիդյան սկզբունքների տարատեսակները:

Իմ տեսակետը միանշանակ է՝ խաղաղություն: Խաղաղություն այստեղ եւ հիմա: Իմ քաղաքական գործունեության ընթացքում ես հստակ ու աներկբա կողմ եմ եղել փոխզիջման միջոցով խաղաղության հասնելուն, այս սկզբունքն եմ պաշտպանել ե՛ւ իբրեւ վարչապետ, ե՛ւ Ստեփան Դեմիրճյանի հետ «Արդարություն» դաշինքում, ե՛ւ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ ՀԱԿ դաշինքում: Դա, բացի իմ համոզմունքը լինելուց, ժողովրդի ճնշող մեծամասնության ցանկությունն է, որ ձեւավորվել է՝ գիտակցելով իրավիճակը, ուժերի դասավորությունը տարածաշրջանում ու աշխարհում:

Դա է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների տեսակետը:

***irates.am**, 27.01.2017թ.:*

* * *

ՆԱՐԵԿ ՍԱՐԳՍՅԱՆ (Երաժիշտ, հրապարակախոս),– Տեր-Պետրոսյանի գաղափարների մասին, Արցախի խնդրի մասին, պատերազմի եւ խաղաղության, պետության իրական շահի մասին մոտ ապագայում դեռ շատ կխոսենք՝ առջեւում ընտրական պայքար է: Ընդամենը մի նկատառում.

Գիտեք, իմ համոզմունքն է, որ ազատ երկիր ունենալու համար քաղաքական բանավեճը անհրաժեշտություն է: Ընդ որում ինչքան հարցը բարդ, այնքան բանավեճի անհրաժեշտությունը ավելի սուր: Քաղաքական ուժերը պարտավոր են բանավիճել Արցախի հարցի խաղաղ կարգավորման տարբերակների շուրջ: Սակայն ներկայումս դա անհնար է: Որովհետեւ միայն մեկ ուժ կա որ ինչ-որ լուծում է առաջարկում եւ իշխանության է հավակնում: ՀԱԿ-ը հո ինքն իր հետ չի՞ բանավիճելու: ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆԸ ԴԵՄ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ Ո՛Չ ՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ ՀՀ-ՈՒՄ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ՉԿԱ, ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ: Սա ասում եմ ամենայն պատասխանատվությամբ:

Ու դա բացատրելի է: Հարցը շա՛տ բարդ է եւ իմացությունից բացի պահանջում է քաղաքական կայուն համոզմունքներ: Իսկ դա հատուկենտ մարդիկ ունեն:

Ընդամենը մի օրինակ բերեմ: Վերցնենք «1000 դրամի» օրենքը եւ ՔՊ կուսակցությունը: Փաշինյանը հայտարարում է, որ կողմ է օրենքին, Միքայելյանը հայտարարում է, որ դեմ է օրենքին: Կուսակցությունը միասնական դիրքորոշում չունի: Եւ խոսքը, զգացե՛ք, ընդամենը մի օրենքի նախագծի մասին է: Չեմ չարախնդում, որովհետեւ գիտեմ, որ նույնիսկ դա՛ հեշտ չէ: Պահանջել երիտասարդ (բոլոր իմաստներով) կուսակցություններից որեւէ դիրքորոշում Արցախի խնդրի վերաբերյալ նույնն է, որ դպրոցականից բարձրագույն մաթեմատիկայի խնդրի լուծում պահանջես:

facebook.com/NarekSargsyan4/posts/250001442080761. 18.12.2016թ.:

* * *

ԳՈՀԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ (Լրագրող),– Դուք կարող եք սիրել Տեր-Պետրոսյանին, կարող եք ատել նրան: Կարող եք նույնիսկ առանց լսելու համաձայնել իր հետ՝ «Լեւոնի վկայի» կարգավիճակում, կարող եք հակադրվել իր ցանկացած տեսակետին կամ առաջ քաշած գաղափարներին, բայց ՉԵՔ ԿԱՐՈՂ ՉԸՆԴՈՒՆԵԼ, որ ներկայիս Հայաստանում, նրանից բացի, չկա մեկ այլ գործիչ, որ ՄԻՏՔ ներմուծի մեր քաղաքական դաշտ: Ավելին՝ տիրապետի իր քաղաքական օրակարգի ճանապարհային քարտեզին:

Շատ մեծ ցավով եմ ասում, բայց խորապե՛ս եմ համոզվել, որ իրենից բացի՝ մնացած բոլորը կամ անուժ/անկյանք բույսեր են (ընդ որում՝ որեւէ մեկին վիրավորելու նպատակ չունեմ էս ձեւակերպմամբ, իսկ եթե վիրավորվեցիք՝ ներող եղեք), կամ՝ թութակներ, որոնք իրենք էլ չեն հասկանում՝ ինչ են ասում, ինչպես եւ ինչու, կամ էլ ուղղակի բնակարանի կահույք/ավելորդ ուտող բերան:

Կրկնում եմ՝ շարադրանքս որեւէ կապ չունի Տեր-Պետրոսյանի արտահայտած մտքերի ճշմարիտ կամ սխալ լինելու հետ, որոնց համաձայնել-չհամաձայնելում դուք, իհարկե, ազատ եք՝ ինչպես թռչուն: Ես նույնիսկ նրանից ճառագող խարիզման եմ մի կողմ դնում, որ էլի՛ բացակայում է մյուսների մոտ՝ ցանկացած շփում/ունկնդրում/ակնդրում ասոցացնելով դամաշնիկ-խալաթով խոհանոցում բզբզալու հետ...

***iLur.am**, 19.12.2016թ.:*

* * *

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ (Բժիշկ, հրապարակախոս),– Հստակ ասելիք ունի միայն «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքը, այն էլ ի՞նչ ասելիք՝ ամենաէականը, ամենաանհրաժեշտն ու կենսականը: Կեղծ

հայրենասիրության ու ամբոխավարության ֆոնին ավելի ու ավելի է ընդգծվելու Հայ ազգային կոնգրեսի խոսքի, գաղափարների կարեւորությունը:

Հայ հասարակությունը, համոզված եմ՝ զգալու է խաղաղության առաջնահերթությունը եւ իր քվեով պետք է բարձր տոկոս ապահովի Հայ ազգային կոնգրեսին՝ միաժամանակ բարձրացնելով Հայաստանի եւ հայ ժողովրդի վարկանիշը՝ որպես խաղաղասիրական էությամբ բարձր գիտակցության հասարակություն:

Որքան շատ քաղաքական գործիչներ Հայ ազգային կոնգրեսից ընդգրկվեն Խորհրդարանի կազմում, այնքան ավելի որակյալ քաղաքական ու օրենսդիր մարմին կունենանք:

Մենք ստանձնել ենք այնպիսի բարձր առաքելություն, որ մեր ասելիքը, խոսքը պետք է հնչի հզոր ու համոզիչ, չպետք է կարկամած, անվստահ խոսքով թուլացնենք մեր ասելիքի հույժ կարեւորությունը:

Կարո՞ղ ենք մեր այսօրվա մարդկային, տնտեսական ու ռազմական ռեսուրսներով լիակատար պարտության՝ կապիտուլյացիայի ենթարկել Ադրբեջանին: Իհարկե՝ ոչ: Կարո՞ղ ենք երկարաձգել ստատուս-քվոն, եւ արդյո՞ք դա բխում է հայկական կողմի շահերից: Բարեբախտաբար, ստատուս-քվոն պահպանելու ուղղությամբ մեզանից ոչինչ կախված չէ: Արդեն իսկ ակնհայտ է, որ ոչ ոք մեզ չի սպասում եւ ստատուս-քվոն պահպանելու հնարավորություն չի տալիս: Խաղաղության գործընթացի հիմքում պետք է լինի հետեւյալ աքսիոմատիկ դրույթը՝ փոխզիջումն է տանում խաղաղության, զիջումը պարտություն է, պարտությունը խաղաղության չի տանում, տանում է դեպի պատերազմ: Վերջին օրերի դիվանագիտական անցուդարձը եւս հուշում է, որ բուռն իրադարձությունների շեմին ենք գտնվում: Ռուս քաղաքագետ Մարկեդոնովը նշում է, որ ղարաբաղյան հարցի լուծումը Պուտինի անձնական հսկողության տակ

է, իսկ նրա նախաձեռնությամբ ցանկացած հարց հասնում է տրամաբանական ավարտին: Արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան հայտարարում է, որ ղարաբաղյան հարցի լուծման փոխզիջումային տարբերակն այլընտրանք չունի՝ խրախուսելով Հայաստանում սկզբնավորված, դեպի խաղաղություն տանող ժողովրդական դիվանագիտությունը:

Օրերս հնչեց Մինսկի խմբի համանախագահների հայտարարությունը՝ Մյունխենի միջազգային համաժողովի շրջանակում (որտեղ նաեւ կազմակերպվել էր Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումը), որով կոչ արվեց կողմերին՝ հասարակություններին նախապատրաստել խաղաղության, ոչ թե պատերազմի՝ հայտարարելով, որ պատերազմը ելք չէ:

Ռուսաստանը եւ միջազգային հանրությունը ստատուս-քվոյի փոփոխության ճանապարհին են, հայկական կողմը նույնպես պետք է հանդես գա ընկալելի, Ղարաբաղի անվտանգությունն ապահովող նախաձեռնություններով՝ ստատուս-քվոն փոփոխելու օգտին: Հարցը լուծող կառույցները տեսնելու են խաղաղության, հաշտության, բարիդրացիության ձգտող հայ հասարակություն եւ իշխանություն: Միայն այդ կերպ է Ռուսաստանի եւ միջազգային կառույցների թիրախը դառնալու Ադրբեջանը: Եւ ի վերջո, կայացվելու եւ անգամ կորզվելու է փոխզիջում Ադրբեջանի կողմից: Ինչո՞ւ խաղաղության գնալ՝ ուշացա՞ծ (թեեւ արդեն իսկ շատ ենք ուշացրել), պարտադրված նորանոր կորուստներից հետո՞, թե այսօր՝ կանխելով սպասվելիք կորուստները: Խաղաղություն պահանջում է առաջին հերթին հզորը, հաղթողը, խաղաղության պահանջն ու քարոզը ոչ թե թուլության ու վախկոտության, այլ ուժի, հզորության եւ պատասխանատվության նշան են:

Մենք ամեն ինչ անելու ենք, որպեսզի Ռուսաստանի եւ միջազգային կառույցների համատեղ ճնշմամբ Ադրբեջանը խաղաղության տանող փոխզիջումից հրաժարվելու այլընտրանք չունենա:

iLur.am, 20.02.2017թ.:

* * *

ԿԱՐԵՆ ՏՈՆՈՅԱՆ (Կենդանաբան-կինոլոգ),– Երկրի ղեկավարներն ու քաղաքական գործիչները պարտավոր են ԼՂ հարցում չլողզել պատճառահետեւանքային կապը, որովհետեւ դա նվազագույնը բարոյական չէ, հատկապես՝ այն մարդկանց հանդեպ, ովքեր ապրում են Լեռնային Ղարաբաղում, եւ նրանց կեղծ հույսերով չսնեն: Պետք է ազնիվ լինել: Դա նվազագույնն է, ինչ կարող են անել նրանք, ովքեր բանակցում են կամ հավակնում են լինել քաղաքական գործիչ: Նրանք պետք է կարողանան ժողովրդին պարզ ու անկեղծ ասել ոչ միայն իրենց ցանկությունները կամ տեսակետները կարգավորման հարցում, այլեւ դրա հնարավոր հետեւանքները:

Այս կանոնին առայժմ հետեւել ու հետեւում է միայն Լեւոն Տեր-Պետրոսյանը...

Ասենք՝ ժողովուրդ ջան, բանակցությունները ենթադրում են, ամեն դեպքում, որոշակի զիջումներ, բայց ես՝ Պետրոս Պողոսյանս, դեմ եմ ցանկացած տեսակի զիջումների, ու քանի որ դա նշանակում է առճակատում, ապա, այո, ես կողմ եմ, որ մեկ անգամ էլ մտնենք պատերազմի մեջ եւ հարցն այդ ձեւով լուծենք վերջնականապես: Ու եթե այդ Պետրոսը պարզ արկածախնդիր չէ, ապա, անշուշտ, նաեւ կիիմնավորի, որ պատերազմի մեջ մտնելով՝ այս ու այս ռեսուրսներով կկապիտուլացնենք հակառակորդին: Լա՞վ կիիմնավորի՝ ժողովուրդն էլ ծափ կտա, կասի, այո՛, տո գրողի ծոցը բանակցություններն էլ, Մինսկի

խումբն էլ, գնում ենք կռիվ: Վա՞տ կիիմնավորի՝ կասեն՝ չէ, եղբայր, անհեռանկար բանի մեջ մտնել չենք ուզում, ցտեսություն:

Նույնն էլ պարտավոր են անել հակառակ տեսակետը կրողները: Կգա Պողոս Մարտիրոսյանը եւ կասի՝ ժողովուրդ, ես, ցանկանալով ստանալ առավելագույնը, հասկանում եմ նաեւ, որ բանակցությունների այլընտրանքը պատերազմն է, սակայն քանի որ կարծում եմ, որ պատերազմի մեջ մտնելն արկածախնդրություն է, հետեւաբար՝ կողմ եմ նրան, որ բանակցենք, ինչ-որ բաներ զիջելով՝ ստանանք ինչ-որ բաներ: Իմ պատկերացրած զիջումների մաքսիմումն այս է, որի դիմաց կարելի է ստանալ սա ու սա: Ու էլի, ժողովուրդը կլսի, ու ինքը կորոշի՝ ուղարկո՞ւմ է այդ մարդուն բանակցությունների, թե ասում է՝ ցտեսություն, եղբայր, լավ է, մենք գնում ենք կռիվ:

Եւ եթե Պողոսն էլ, Պետրոսն էլ ազնիվ լինեն, ժողովուրդը, ի վերջո, կտեսնի, որ դավաճանությունը ոչ թե անկեղծորեն սեփական տեսակետը ներկայացնելն ու հիմնավորելն է, այլ ժողովրդի հետ ազնիվ չլինելը: Որ իրական դավաճանությունը մի բան ասելն է, մեկ այլ բան անելը: Կտեսնի, որ իրական անբարոյականությունը, փոխզիջումների շուրջ բանակցելով հանդերձ՝ դրանց մասին լռելն ու այլոց դրանում մեղադրելն է:

facebook.com/permalink.php?story_fbid=1780297765628250&id=100009441305304. 27.12.2016թ.:

* * *

ԿԱՐՊԻՍ ՓԱՇՈՅԱՆ (Լրագրող),– Մարտնչող տգիտությունը, ամբոխահաճո շովինիզմը ու չհասկանալ հանուն չհասկանալու սկզբունքը ողողել են ֆեյսբուքը:

Բայց միայն ֆեյսբուքում եւ շատ ավելի լավ, քանզի իրականությունն այլ է, ժողովուրդը խաղաղություն է ուզում:

facebook.com/karpis.pashoyan/posts/1203385256422167. 17.12.2016թ.:

* * *

Տեր-Պետրոսյանի ելույթը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի համար կարող է մեկնարկային նոր կետ հանդիսանալ:

Ռազմահայրենասերները մի փոքր կգոռգռան, մեկ երկու անգամ հակառուսական ակցիաներ կիրականացնեն եւ կհանգստանան: Իսկ Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը վաղ թե ուշ կյանքի է կոչվելու եւ հենց փոխզիջման սկզբունքով, որտեղ հաղթողներ եւ պարտվողներ չեն լինի:

facebook.com/karpis.pashoyan/posts/1203169703110389. 17.12.2016թ.:

* * *

Ո՞վ է մեղավոր, որ Հայաստանի քաղաքական, փիլիսոփայական միտքն ամուլ է:

«Պետք է իշխանափոխություն անել». այս տարիների միակ քաղաքական ձեւակերպումը սա է եղել, իսկ բոլոր մյուս ձեւակերպումները պտտվել են դրա շուրջը: Կուսակցությունները խարսխված են մարդաքանակի, փողի եւ պոպուլիստական ճառերի վրա, դրանք նույնիսկ գաղափարախոսություններ էլ չունեն:

Այս ամենի համատեքստում տրամաբանորեն քաղաքական բանավեճի առարկա չի դարձել նաեւ Ղարաբաղյան հակամարտությունը եւ ամլացած քաղաքական-փիլիսոփայական միտքը չի կարողացել դրա կարգավորման հեռանկարների վերաբերյալ ստեղծել կոնցեպտուալ այլընտրանքային բանաձեւեր:

Ինչպես նշեցինք ընդդիմադիր կուսակցությունների միակ նպատակը մշտապես իշխանափոխությունն է եղել, իսկ հակամարտության կարգավորման վերաբերյալ նրանք խուսափել են տեսակետներ հայտնել՝ այդ բարդ խնդիրը թողնելով միայն իշխանություններին: Այն տպավորությունն է, որ նրանք

շրջանցել են այդ հարցը պատասխանատվությունից խուսափելու եւ ընտրական ձայներ չկորցնելու նպատակով:

Կա հակամարտության կարգավորման Լեւոն Տեր-Պետրոսյանի բանաձեւը, որը հիմնական գծերով շարունակում են նաեւ ներկայիս իշխանությունները: Սրա այլընտրանքը հայհոյանքն է եւ Դավիթ Սանասարյանի կողմից գրվող հետազոտությունը:

Պետք է այլընտրանք ստեղծվի՝ նույնիսկ այլընտրանքներ, քաղաքական ուժերը պետք է պոպուլիստական ճառերից այն կողմ նաեւ Ղարաբաղի մասին հստակ տեսակետներ հայտնեն: Միայն այդ դեպքում բանավեճն այս կիմաստավորվի:

facebook.com/karpis.pashoyan/posts/1204028583024501. 18.12.2016թ.:

* * *

Այսպիսի իրարանցում մեկ էլ «Պատերազմ եւ խաղաղություն» հոդվածի ժամանակ էր եղել:

Տեր-Պետրոսյանին եւ այդ գաղափարի բոլոր պաշտպաններին ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա պիտակեցին որպես դավաճան:

Եղան լուրջ բովանդակային քննադատություններ, որոնց շուրջ կարելի է մտածել եւ բանավիճել, ցավոք սրտի դրանք փոքրամասնություն են կազմում: Հիմնականում տիրապետող է կույր, հայրենասիրական եւ ամբոխահաճո դեմագոգիան՝ ոչինչ չասող եւ ոչ մի տեղ չտանող (ես դավաճան պիտակից չեմ վախենում): Չլինելով կուսակցական՝ ես պաշտպանելու եմ Տեր-Պետրոսյանի այդ գաղափարը՝ այնքան ժամանակ մինչեւ չգտնվի առավել արդյունավետ տարբերակ (դժվար էլ գտնվի):

Առավել մանրամասն հետո:

facebook.com/karpis.pashoyan/posts/1203562479737778. 18.12.2016թ.:

* * *

ԱՇՈՏ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ (Այգեգործ, ԱՄՆ),– Այդքան մեղքեր վերագրելով Լեւոն Տեր-Պետրոսյանին, մոռացել եք նրա ամենագլխավոր ՄԵՂՔԸ, որ նա չափազանց իրատես է եւ հեռատես, ազնիվ՝ իր մտքերի, նպատակների եւ ծրագրերի բարձրաձայնման ժամանակ, եւ ամենակարեւորը՝ առավել մտահոգված իր Հայրենիքի եւ նրա Պետականության ճակատագրով, քան որեւէ քաղաքական գործիչ, որն էլ առիթ է հանդիսացել ոմանց հոգեխանգարմունքի եւ պոռնկական վայրահաչոցների, որոնց հեղինակները՝ նրա առաջին նախագահության օրոք, իրենց ընդդիմություն հայտարարած՝ ՀՅԴ, ԱԻՄ, ԱԺՄ, ՍԻՄ եւ այլ անհայրենիք ողորմելիների հետեւորդներն են, որոնց գարշելի ստրկամիտ էությունն էլ օգտագործում է սեռժառոբական ռեժիմը՝ իր ապազգային քաղաքականության իրականացման նպատակով:

facebook.com/ashot.kalantaryan.52/posts/923157971117131. 19.12.2016թ.:

* * *

Քննարկում են Լեւոն Տեր-Պետրոսյանի չասած խոսքերը... ֆանտաստիկա...

facebook.com/ashot.kalantaryan.52/posts/924522614314000. 21.12.2016թ.:

* * *

ԳԱԳԻԿ ՔԱՄԱԼՅԱՆ (Գործարար),– Արեւմտյան ինտեգրացիան ու ղարաբաղյան հակամարտությունը համադրելի չեն:

ԵԱՏՄ ինտեգրացիան ու ղարաբաղյան հակամարտությունը համադրելի են:

Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթից հետո, քաղաքական դաշտը բաժանվեց երկու մասի՝ հայրենասերների ու ոչ հայրենասերների: Ովքե՞ր են հայրենասերները՝ միջին վիճակագրության

հայերը, ովքեր կազմում են մեր հասարակության 90%-ը, իսկ ոչ հայրենասերները նրանք են, ովքեր գիտակցում են, որ պետություն ունենալը հայրենասիրական ճառերի ու պատկերացումների հետ կապ չունի, այն հստակ հաշվարկների վրա հիմնված քաղաքական ընկալում է:

Դուք ասում եք Ղարաբաղ, իսկ ես ասում եմ Հայաստանի Հանրապետություն: Ձեր ասած Ղարաբաղում՝ Արցախ չկա, բայց իմ ասած Հայաստանի Հանրապետությունում այնքա՜ն Արցախ կա, որ դուք չեք էլ կարող պատկերացնել:

facebook.com/gagik.qamalyan/posts/1213111812116555. 18.12.2016թ.:

* * *

Ասել եմ ու կասեմ՝ ինչքան կտեւի ղարաբաղյան կոնֆլիկտը, այդքան էլ կտեւի ռուսական լուծը:

Այս էլեմենտար ճշմարտությունը չհասկանալը՝ ես համարում եմ դիտավորություն ու ռուսական դաշտում խաղալու բացարձակ իրողություն:

Լեւոն Տեր-Պետրոսյանը, հայաստանյան քաղաքական էլիտայում այն միակն է, որ խոսում է այս մասին, իսկ դա նշանակում է, որ ես իրեն չեմ կարող չհամարել ինձ դաշնակից այս փուլում:

Դուք ասում եք հանուն Արցախի, ես էլ ասում եմ, որ ձեր ասած հանուն Արցախը՝ զորիբալայանական հայրենասիրությունն է, համեմված ռուսական շահերին ծառայելու համեմունքով:

Հ.գ. Այնպես որ, ստորագրում եմ, Լեւոն Տեր-Պետրոսյանի երեկվա ելույթի ցանկացած բառի տակ:

facebook.com/gagik.qamalyan/posts/1212742342153502. 18.12.2016թ.:

* * *

Հայաստանում հողասիրությունը հակադրել են մարդասիրությանը, դրա համար էլ պետությունը դարձրել ենք գեղի կլուբ ու մատուցել ենք գեղցիներին:

facebook.com/gagik.qamalyan/posts/1213899995371070. 19.12.2016թ.:

* * *

Ես այդպես էլ չհասկացա այն տեսակին, ովքեր 2008-ին Լեւոն Տեր-Պետրոսյանի «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն» հոդվածը համարում էին ճշմարտություն, իսկ այսօր այդ դիրքորոշումը համարում են ազգի դավաճանություն:

facebook.com/gagik.qamalyan/posts/1213930212034715. 19.12.2016թ.:

* * *

Հայաստանում տարածքային զինկոմիսար աշխատած մարդիկ, մի քանի տարիների ընթացքում կարողացել են ձեռք բերել Հայաստանի պայմանների համեմատ խոշոր չափերի կապիտալ, ինչը նշանակում է, որ նրանք կաշառակերներ են... իսկ ովքե՞ր են կաշառատուները՝ իհարկե բոլոր այն ծնողները, ովքեր իրենց երեխաների համար կաշառք են տվել, որպեսզի կամ ազատեն պարտադիր զինծառայությունից, կամ էլ մի անվտանգ տեղում ծառայության ուղարկեն իրենց երեխաներին:

Հիմա ես ինչի՞ համար խոսեցի այս մասին, որովհետեւ հայտնվել են ռեմբոներ ու բոլորիս ապացուցում են, որ Հայաստանում պատերազմից մարդիկ չեն վախենում ու այդ վախից չեն արտագաղթում: Պատերազմից վախել են ու վախում են աշխարհի գրեթե բոլոր հասարակությունները, անկախ նրանց ռազմական պատրաստվածությունից: Մեր հասարակությունը երկու տասնամյակ շարունակ գտնվում է պատերազմական վիճակի մեջ: Այս տարիների ընթացքում ունեցել ենք հազարավոր

զոհեր, ինչը չի կարող պատճառ չհանդիսանալ, որ մարդիկ վախեն իրենց ու իրենց երեխաների կյանքերի համար: Ես այսպիսին եմ ու ասում եմ ճշմարտությունը, որովհետեւ չեմ կարող առօրյայում տեսնել մի բան, իսկ հրապարակավ խոսել մի այլ բան: Շատերի համար այս բանավեճը դիտարկվում է միայն ի հակադրություն Լեւոն Տեր-Պետրոսյանի, ի՞նչը նշանակում է, որ նրանց համար գործընթացները պայմանավորվում են անձերով, այլ ոչ թե գաղափարներով ու ծրագրերով: Ժամանակին, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը ասեց, որ ԵԱՏՄ անդամակցությունը անշրջելի է, ինձ համար դա անընդունելի էր ու ես քննադատեցի ու մինչեւ այսօր քննադատում եմ այդ տեսակետը, բայց դա չի նշանակում, որ այդ տեսակետի պատճառով, ես պետք է մերժեմ մեկ այլ քաղաքական տեսակետ, որ արտահայտում է Լեւոն Տեր-Պետրոսյանը...

Ինձ համար Հայաստանը կհաղթի այն ժամանակ, երբ հայաստանցի մարդը դուրս կգա հայ-ռուսական ու հայ-թուրքական կոմպլեքսավորված հարաբերությունների ազդեցությունից, իսկ դա միայն հնարավոր կլինի, եթե մենք մերժենք պատերազմի քաղաքականությունը ու նախաձեռնող լինենք տարածաշրջանային նացիոնալիզմի հիմնադրմանը: Մինչեւ իմ, ազերու ու վրացու շահերը գլոբալ իմաստով չդարձնենք համընդհանուր, ապա հիշե՛ք, ե՛ւ ռուսը, ե՛ւ թուրքը իրենց աշխարհաքաղաքական շահերը փաթաթելու են մեր վզին:

facebook.com/gagik.qamalyan/posts/1216305575130512. 22.12.2016թ.:

* * *

Ասում են՝ Գագիկ, ամուսնացել ես... լքիր քաղաքական հրապարակախոսությունը ու զբաղվիր ընտանիքովդ՝ գոնե երկու ամսով: Ժողովուրդ ջան, չեմ կարող: Այս օրերին Հայաստանում ձեւավորվել է մի բանավեճ, որը շատ մեծ նշանակություն

ունի իմ երկրի ապագայի մասով: Խոսվում է պատերա՞զմ, թե՞ խաղաղություն վիճակների մասին:

Պատերազմը պրովոկացիա է, որը սկսվել է 25 տարի առաջ ու չի ավարտվում ու կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ պատերազմող երկրները կերտում են պատերազմող մարդու տեսակ, ում համար հայրենիքը՝ առաջին հերթին արյուն է, այլ ոչ թե ապրելու ու ստեղծագործելու հնարավորություն: Ինձ անվանում են պացիֆիստ, ջհուդամասոնական, լեւոնական, ազգի դավաճան... ոչինչ, ես դրանից չեմ նեղվում: Ինձ համար կարեւորը իմ երկրի ապագան է, որտեղ մարդուն կապրեցնեն, որտեղ հայրենիքի պատկերացումը ոչ թե կսկսվի հողի հանդեպ սիրուց, այլ մարդու հանդեպ սիրուց, քանզի եթե դու չես սիրում մարդուն, ապա դու այդ հողը կվերածես անմշակ ու անմարդաբնակ տարածության...

Հ.Գ. Առայժմ այսքանը

«Իլուր»-ը շնորհավորում է Գագիկ Քամալյանին ամուսնության առթիվ եւ մաղթում իր նորաստեղծ ընտանիքին երջանկություն եւ խաղաղ կյանք իր երազած Հայաստանում:

***iLur.am**, 22.12.2016թ.:*

* * *

Ընենց հաճելի զգացողություն եմ ունենում, երբ Կոպենհագենից ու Փարիզից ինձ հայրենասիրության դասեր են տալիս, թե՛ բա ապեր հայրենիքի ուժը հողի մեջ է... բա որ հողի մեջ է, դուք ի՞նչ եք անում այդ հողից հազարավոր կիլոմետրեր հեռավորության վրա:

facebook.com/gagik.qamalyan/posts/1218289358265467. 24.12.2016թ.:

* * *

Եթե մեր բանակը լինի աշխարհի ամենաուժեղագույն բանակը, ապա ես նորից կլինեմ այն տեսակետին, որ Հայաստանի Հանրապետությանը խաղաղություն է պետք:

facebook.com/gagik.qamalyan/posts/1221975877896815. 29.12.2016թ.:

* * *

Մի երկու բան ասեմ եւրոպաներում ու ամերիկաներում ապրող սուտի հայրենասերներին, որ հասկանան, թե ինչի՞ համար է պատերազմական իրավիճակը վտանգավոր Հայաստանի Հանրապետությանը ու այս տարի սահմանափակվեմ այսքանով:

Քառօրյա պատերազմի ընթացքում Հայաստանի Հանրապետությունը ծախսել է մոտավորապես 14 միլիարդ ու մի քանի միլիոն դրամ: Դե հիմա պատկերացում կազմեք, թե ի՞նչ է նշանակում երկարատեւ պատերազմ... այս պահի դրությամբ հայկական զինված ուժերը պաշտպանում են 1200 կմ տարածք, որը իրականացնելու համար մեծ մարդկային ռեսուրս է պետք, իսկ վերջի տարիների ընթացքում մենք գիտենք, թե ինչպիսի տեմպերով է նվազում թե՛ Արցախի Հանրապետության բնակչությունը, թե՛ Հայաստանի Հանրապետության բնակչությունը...

Ասում են, եթե թալանածը հետ բերենք ու նորմալ երկիր ստեղծենք, ապա ամեն բան կկարգավորվի: Ես ոչ հերքում եմ այս պնդումը, ոչ էլ պնդում եմ, որ այն բացարձակ ճշգրիտ մոտեցում է, պարզապես, ես հենց այս պահին տեսնում եմ, թե՛ առաջիկա ընտրությունները ինչպիսի՞ ընթացք են ստանալու, որովհետեւ մինչ մենք այստեղ բանավիճում ենք, ղարաբաղյան կլանի լակեյները նախընտրական շտաբներ են ձեւավորում ու ռեստորաններում այդ շտաբների աշխատողների համար արդեն քեֆեր են կազմակերպում... Մայիսին Հայաստա-

նից մի նոր թափով է սկսվելու արտագաղթ ու ինչքան էլ դուք ջղաձգվեք, միևնույն է Ալիեը այս ամենը շա՛տ լավ հասկանում է ու մի զարմացեք, որ նա կարողանում է քաղաքականություն խաղալ Մոսկվայի հետ, իսկ մենք ոչ:

facebook.com/gagik.qamalyan/posts/1222634764497593. 30.12.2016թ.:

* * *

Ասում են, Պետք է հավերժ կռվենք, որովհետեւ այդպիսին է հայի ճակատագիրը:

Այսպես մտածողները՝ մեկ դար առաջ խաբեցին Սասունում ապրող իմ պապերին ու նրանց զրկեցին իրենց սեփականությունից, այսօր նորից պաթոսային ֆիդայասիրությամբ արդեն ինձ են փորձում համոզել, որ հայի միակ փրկությունը մինչեւ մահ կռվելն է: Ես ձեզ հավաստիացնում եմ, չկա նման բան, որովհետեւ հայի միակ փրկությունը ապրելու ու ստեղծագործելու մեջ է: Հայը եւս կարող է վարել քաղաքականություն ու չի կարող մշտապես ապրել պատերազմի վախով:

facebook.com/gagik.qamalyan/posts/1235323453228724. 13.01.2017թ.:

* * *

Քանի որ ինձ համար ամենակարեւոր քաղաքական հարցերից մեկը ղարաբաղյան հիմնահարցն է, ու այդ խնդրի վերաբերյալ իմ ու Լեւոն Տեր-Պետրոսյանի դիրքորոշումները համընկնում են, ուստի հայտարարում եմ, որ առաջիկա ընտրությունների ընթացքում ես համագործակցելու եմ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, քանզի խաղաղությունն այլընտրանք չունի:

***iLur.am**, 21.01.2017թ.:*

* * *

Լեւոնի հետ համագործակցությունը ինձ ոչինչ չի տալու, ավելին ասեմ, ես ինձ դնելու եմ հարվածների տակ, բայց ես դրանից չեմ խուսափելու: Ես չեմ հայտնվելու նրա կողքին, որ պաշտոն զբաղեցնեմ, կամ փող վաստակեմ ո՛չ հարգելիներս, պաշտոն զբաղեցնելու համար կհայտնվեի ՀՀԿ-ում, իսկ փող վաստակելու համար, գիտեք ինչքա՞ն կուսակցություններ կան ու ինչպիսի՜ ֆինանսական հնարավորություններ ունեն: Հիմա կասեք ինչի՞ համար եք այդ ամենը անում, եթե դուք շատ հարցերում նրա հետ համակարծիք չեք...ասեմ, որովհետեւ ինձ համար այս փուլում գոյություն ունի մեկ կարեւորագույն հարց, դա այն է, ո՞վ է այն համարձակը, որ կհամարձակվի համատարած պաթոսային պատկերացումների մեջ խոսել խաղաղության, հաշտության ու բարիդրացիության կարեւորության մասին: Հիմա այս ընտրությունների ընթացքում Լեւոն Տեր-Պետրոսյանն է խոսել այդ մասին ու ես առանց վարանելու գնալու եմ նրա հետ քարոզարշավի, ու պայքարելու եմ նրա հետ այս տեսակետի տարածման համար»:

***iLur.am**, 22.01.2017թ.:*

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ, ԲԱՆԱԿԻ ԿԱՅԱՑՄԱՆ, ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՄ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՎԱՆԴԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ԻՐ ՁԻՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ*

Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ Հայ ազգային կոնգրեսի 2-րդ (20-րդ) համագումարի ելույթը, բառիս բուն իմաստով, ցնցեց ողջ հասարակությանը: Դրական եւ բացասական արձագանքների իրական հաշվեկշիռը կարելի է կազմել քիչ ավելի ուշ: Այս պահին, սպասելիության առումով, թերեւս, ավելի անսպասելի էր հասարակական դրական արձագանքի բարձր մակարդակը: Բացասական արձագանքների մեջ, ըստ էության, չկա ռացիոնալության հիմքի վրա որեւէ հակադարձում՝ ո՛չ մասնավոր հարցում, ո՛չ, առավել եւս՝ ընդհանուր-համակարգային: Մինչդեռ ակնհայտ է, որ այս ելույթն արդեն իսկ դարձել է եւ մնալու է՝ որպես հասարակական-քաղաքական զարգացումների վրա ազդող կարեւորագույն գործոն:

Ընդդիմախոսներից շատերն են անհարմար վիճակում հայտնվել, ու հատկապես՝ նրանք, ովքեր անձնական ամբիցիաների հարց ունեն, էլ չասենք՝ առարկայական անձնական շահեր: Եւ, շրջանցելով ռացիոնալ խոսքը, ինչպես միշտ՝

---

* *iLur.am, 24.12.2016թ.:*

նման դեպքերում, կրկնում են բաներ, ինչը հարյուր անգամ ասել են ու հարյուր անգամ ստացել արժանի պատասխան: Այդ թեմաներից ծամում են, մասնավորապես, բանակի կայացմանը, Արցախի ազատագրմանը, Ղարաբաղյան հաղթանակներին Լեւոն Տեր-Պետրոսյանի «դեմ լինելը», փարածքները նրա «կամքին հակառակ» ազատագրելը, Բաքուն գրավելու եւ Ադրբեջանին անվերապահ կապիտուլյացիա թելադրելու վրա նրա դրած «արգելքը» եւ այլն: Այս պնդումներում, իհարկե, ինչպես ասում են, «անիծվում է փարրական փրամաբանության հերը» (եթե նրա կամքին հակառակ՝ ազատագրեցիք յոթ շրջանները, ինչո՞ւ նույն կերպ, նրա կամքին հակառակ՝ չգրավեցիք Բաքուն: Ուրեմն՝ ձեզ պետք է դատել՝ որպես ակնհայտ հնարավորությունը չօգտագործած դավաճանների):

Բոլոր դեպքերում՝ «Ղարաբաղի եւ պատերազմի հետ Լեւոն Տեր-Պետրոսյանի կապ չունենալու» թեման ու դրանից բխող «մեղադրանքները» կրկին լայնորեն շրջանառվում են: Ուստիեւ՝ ստորեւ հերթական անգամ ներկայացնում ենք այդ ամենին, իրերի բերմամբ, ամենաքաջատեղյակ մարդկանց վկայություններ, արձանագրումներ ու գնահատականներ, որոնց ֆոնին այդօրինակ պնդումներն ու «մեղադրանքները» դառնում էժանագին ու մեղկ բարբաջանք, հիվանդ ուղեղի արտադրանք: Ու հիվանդ ուղեղով այդ մարդիկ դեռ հավակնում են քաղաքական գործիչ կոչվելու, ժողովրդին առաջնորդելու, նրա ճակատագիրը տնօրինելու:

iLur.am

* * *

ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ (ՀՀ պաշտպանության նախարար, վարչապետ),– Հանրապետության նախագահն է, որ կայացնում է ամենադժվարին, ամենապատասխանատու որոշումները եւ տեր է մեր բոլոր հաղթանակներին, տեր է մեր բոլոր պարտություններին, գնացքից երբեք չի թռչելու, տանելու է մեր գնացքը մինչեւ վերջ: Ես այսօր չեմ խոսելու մեր հաղթանակների մասին, մեր բանակի մասին. մեր բանակը եւս մեկ անգամ տեսնել ցանկացողները վաղը կարող են ներկա լինել հայ-ռուսական մեծ զինախաղերին, որոնք ամենախոշորն են Սովետական Միության փլուզումից հետո, եւ որին մասնակցում է շուրջ 4 հազար զինվոր: Մեր բանակի մասին անգամ փոքր-ինչ կասկած ունեցողները կարող են ներկա լինել. բոլորիդ սիրով հրավիրում եմ սեպտեմբերի 21-ին, ժամը 11-ին, այս հրապարակում տեղի ունենալիք՝ Անկախության հնգամյակի շքերթին, եւ դա է հանրապետության նախագահի՝ բանակի գլխավոր հրամանատարի ամենամեծ ձեռքբերումը՝ ըստ իս, սակայն ես ուզում եմ խոսել մեդալի հակառակ, չերեւացող երեսի մասին: Ամենաառաջին, ամենամեծ հաղթանակը, որ մենք ունեցանք, դա մեր հոգեբանության փոփոխությունն էր, որը քաղաքական երիտասարդ գործիչների այս թիմը, հատկապես՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, կարողացավ կատարել: Մենք լոպազ-սնապարծ, մեծախոս քաղաքականությունից կարողացանք դառնալ իրատես, քայլ առ քայլ մեր խնդիրները իրականացնող ազգ: Մեր նախագահը, երբեք հրապարակավ չխոսելով Հայ դատի մասին, քայլ առ քայլ լուծում է Հայ դատի բոլոր խնդիրները: Եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի օրոք, այսօր եւ վաղը հայ ազգը երբեք այլեւս կոտորած չի տեսնի: Հայ դատի ամենամեծ ջատագովները կորցրին հայրենիքի կեսը, հետո երգեցին թե՝ «Մասիսին բան պատահի՝ ազգովի դառնանք ֆիդայի» (թե Մասիսին է՛լ ինչ էր պատահելու՝ չեմ հասկանում, ինչ որ պատահելու էր՝ պատահել էր): Լեւոն Տեր-Պետրոսյանի օրոք այլեւս նման երգեր չեն երգվի, Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ միասին մենք քայլ առ քայլ մեր ռազմական հաջողությունները կհասցնենք վերջնական հաղթանակների:

«Հայաստանի Հանրապետություն», 19.09.1996թ.:

* * *

Եթե նայենք անցած 6–7 տարիներին, պիտի գնահատենք, որ Լեւոնն Արցախի հարցում հսկայական եւ անուրանալի գործ է արել: Հսկայակա՛ն: Ամենեւին պատահական չէ, որ երբ մեր զինված ուժերը գրավում էին Շուշին, հետո գրավում էին Լաչինը, հետո գրավում էին 7–8 շրջաններ, եւ մենք սարսափով մտածում էինք, թե մեզ թուրքերը կամ կուտեն, կամ ամբողջ աշխարհը մեզ ագրեսոր կճանաչի, ոչ թուրքերը մեզ կերան, ոչ ագրեսոր ճանաչեցին: Դա լուրջ արտաքին քաղաքականության արդյունք էր, շատ լուրջ՝ եւ Ռուսաստանի հետ, եւ ԱՄՆ-ի հետ չափազանց լուրջ ու ծանրակշիռ արտաքին քաղաքականություն է տարվել:

1998թ. հունիս, Ստեփանակերտ: ***«168 ժամ»****, 11.11.2004թ.;* ***«Երկրապահ»****, 5.03.2005թ.:*

* * *

Հարգել, գնահատել եւ հարգում եմ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Իմաստուն եւ բարոյական մարդ ու գործիչ է: Լեւոն Տեր-Պետրոսյանը հեռացավ՝ իր հետ տանելով իր համոզմունքները, թողնելով դաշտը մեզ:

ՀՀԿ 5-րդ համագումարի ելույթից, ***hhk.am****, 30.01.1999թ.:*

* * *

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ (ՀՀ նախագահ),– Իշխանության համար պայքարի թեժ պահին զոհաբերվում են բարոյականության եւ օբյեկտիվության սկզբունքները: Մենք գոյություն ունենք, պայքարում ենք այն բանի շնորհիվ, որ մեր թիկունքին կանգնած է Հայաստանը: Իսկ ընդդիմադիր մամուլը կատարում է ընդամենը իր կուսակցության պատվերը, որը փորձում է քաղաքական շահաբաժիններ կորզել: Եթե հավատանք որոշ լրագրերի, ապա ստացվում է, թե ԼՂՀ հասնող օգնության զգալի մասը առանձին կուսակցությունների վաստակն է: Նրանք չեն անում անգամ հազարերորդ մասն այն բանի, ինչ անում է Հայաստանի պետությունը: Թեեւ ամեն անկյունում ձգտում են ընդգծել իրենց առանձնահատուկ վաստակը: Կարծում ենք, որոշակի օգնություն մեզ ցույց տալիս են նաեւ կուսակցությունները, ընդ որում, նկատենք, ոչ կուսակցական միջոցներից, այլ ժողովրդի նվիրատվություններից:

Հատված Ս. Սարգսյանի՝ Արկադի Ղուկասյանին տված հարցազրույցից. ***«Հայաստանի Հանրապետություն»****. 01.06.1992թ.;* ***«Հորրորդ իշխանություն»****. 19.12.2007թ.:*

* * *

1992 թվականին Հանրապետության ղեկավարությունը, Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, ընդունեց Հայաստանի, առաջին հերթին՝ նրա Զինված ուժերի համար չափազանց կարեւոր եւ հեռատես որոշում. մենք բռնեցինք ո՛չ թե Խորհրդային զորքի սպառազինության բռնի գրավման, այլ՝ այդ սպառազինության՝ Հայաստանի չափաբաժնի կանոնավոր, պայմանագրային հիմունքներով ստացման ուղին: Դրա շնորհիվ էր, որ թեեւ ռազմական տեխնիկան քանակապես քիչ էր՝ համեմատ նրան, ինչը կարող էր ստացվել բռնագրավման պարագայում, սակայն այն սարքին վիճակում էր եւ անցավ ո՛չ թե անհատներին կամ առանձին ջոկատներին, այլ՝ պետությանը:

«Հայաստանի Հանրապետություն»*, 29.01.2002թ.:*

* * *

Անկախության առաջին հինգ տարիներին մեր ժողովուրդը ծանրագույն փորձությունների դիմակայեց: Հաղթանակ կերտեց պարտադրված պատերազմում: Ավերվող տնտեսության փլատակներից ազատական տնտեսության հիմքերը դրեց:

Ստեղծեց անկախ երկրին բնորոշ պետական կառույց, քաղաքական հաստատություններ, ստեղծեց բանակ: Հաճախ բոլոր կողմերից շրջափակված, երբեմն աշխարհից լիովին կտրված, փակ սահմանների ներսում կարողացավ իր զավակների մտքով ու եռանդով առաջ շարժվել: Կարողացավ իրեն ու աշխարհին ապացուցել անկախ ապրելու իր ունակությունը: Ապացուցել քսանմեկերորդ դարում իր գոյության իրավունքը: Պետություն ունենալու իրավունքը: Ապագա ունենալու իրավունքը: Անկախության առաջին տարիները մաքառումի ու պայքարի, ստեղծման ու ձեւավորման տարիներ էին: Հենց այդ տարիներին հայ ժողովուրդը սաղմնավորեց ապագա տասնամյակների ընթացքում մեր կյանքի ու գործունեության հիմնական կողմները:

***president.am**. 15.12.2012թ.:*

* * *

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ (ՀՀ նախագահ),– Արցախի երախտագետ ժողովուրդը երբեք չի մոռանա Ձեր անձնական ներդրումը մեր հերոսական գոյապայքարում: Մենք մեր թիկունքում միշտ զգացել ենք մայր Հայաստանի, Հայաստանի Հանրապետության զորակցությունը:

*ՀՀ Առաջին նախագահի արխիվ, 09.01.1995թ.: Հրատարակված՝ **L. Տեր-Պետրոսյան**. Վերադարձ, Երեւան, 2009, էջ 79:*

* * *

Այսօր ԼՂՀ-ն կայացած հանրապետություն է, որն ունի ինքնուրույն տնտեսություն, մարտունակ բանակ, ներքին կայուն իրավիճակ եւ հարգանք միջազգային հանրության կողմից: Մեզ համար պարզ է, որ այս ամենը դժվար թե լիներ, եթե մեր թիկունքում չլիներ Հայաստանի Հանրապետությունը... Ես կուզեի շեշտել Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն

Տեր-Պետրոսյանի ներդրումը մեր բոլոր հաջողություններում: Առանց նրա հստակ դիրքորոշման, առանց փոխհամաձայնեցված քաղաքական քայլերի, մենք դժվար թե կարողանայինք ունենալ այն, ինչ ունենք: Դա Ղարաբաղում հասկանում են բոլորը, եւ ինձ թվում է, որ Հայաստանում եւ Սփյուռքում՝ նույնպես:

***«Հայաստանի Հանրապետություն»**, 19.09.1996թ., վերահրատարակված՝ **L. Տեր-Պետրոսյան**, Վերադարձ, Երեւան, 2009, էջ 79:*

* * *

ԱՐԹՈՒՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ (ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ),– Անժխտելի է այն փաստը, որ մեր հաջողությունները պայմանավորված են Հայաստանի Հանրապետության վարած ճկուն դիվանագիտությամբ եւ հավասարակշռված քաղաքականությամբ: Եւ ինչ խոսք, որ այդ դժվարին գործում մեծ է նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի դերը:

***«Հայաստանի Հանրապետություն»**, 19.09.1996թ., վերահրատարակված՝ **L. Տեր-Պետրոսյան**, Վերադարձ, Երեւան, 2009, էջ 79:*

* * *

ԼԵՈՆԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ԼՂՀ վարչապետ),– «Եթե այսօր արցախահայությունը մասնակցեր Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրություններին, ապա բացարձակ մեծամասնությամբ իր ձայնը կտար ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանին»:

***«Հայաստանի Հանրապետություն»**, 19.09.1996թ., վերահրատարակված՝ **L. Տեր-Պետրոսյան**, Վերադարձ, Երեւան, 2009, էջ 72:*

* * *

ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆ (ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար),– Մեծարգո Լեւոն Հակոբի, ընդունեցեք իմ ջերմ

շնորհավորանքները Ձեր ծննդյան 60-ամյակի առթիվ: Բարձր եմ գնահատում Ձեր տեսական ավանդը ինչպես արցախյան ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման ու նրա համակողմանի նվաճումների ապահովման ասպարեզում, այնպես էլ՝ Հայաստանի ու Արցախի տարածքներում Հայոց պետականության վերականգնման ու ամրապնդման պատմակշիռ գործում: Կրկին կարեւորելով նորանկախ Հայաստանի առաջին նախագահիդ նշանակալից հոբելյանը՝ որպես էական մի շրջափուլ ոչ միայն Ձեր, այլեւ ընդհանրապես հայրենի հասարակական-քաղաքական կյանքում, ի սրտե մաղթում եմ Ձեզ արցախյան արեւշատություն, անձնական երջանկություն եւ հարաճուն հաջողություններ. Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայան. 2005թ. հունվարի 9:

*ՀՀ Առաջին նախագահի արխիվ, 09.01.2005թ., առաջին անգամ հրատարակված՝ **Լ. Տեր-Պետրոսյան**, Վերադարձ, Երեւան, 2009, էջ 124:*

* * *

ՆՈՐԱՏ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՑ (Գեներալ-լեյտենանտ, ՀՀ ՊՆ գլխավոր շտաբի պետ),– Ես հրավիրվել եմ Հայաստան, ՀՀ զինված ուժեր ձեւավորելու համար, որը երբեք այդքան գիտականորեն չէր եղել ձեւակերպված՝ որպես կանոնավոր զինված ուժեր: Ի դեպ՝ նկատի ունեմ վերջին հարյուրամյակը: Ուստի ինձ հրավիրեցին Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Վազգեն Սարգսյանը, ինչպես նաեւ՝ Վահան Շիրխանյանը...

Ոչ մի անգամ ո՛չ Լեւոն Տեր-Պետրոսյանը, ո՛չ Վազգեն Սարգսյանն ինձ որեւէ վատ խոսք չեն ասել, իսկ ես՝ առավել եւս: Նախ՝ ես իրավունք չունեի, քանի որ իրենք ղեկավար անձինք էին, թեեւ ես երբեք ոչինչ չեմ արհամարհել: Տեր-Պետրոսյանն ու Վազգեն Սարգսյանը չափազանց նրբանկատ, բարձր կազմակերպվածությամբ, ջենտլմենական մոտեցում ունեին, եւ ես խոնարհվում եմ նրանց առջեւ... Հենց Վազգեն Սարգսյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի շնորհիվ մենք ունեցանք բանակ, որը կյանքում առաջին անգամ ազատագրեց մեր հողերը եւ պաշտպանեց հայ ժողովրդի արժանապատվությունը:

«Ժամանակ», 03.09.2013թ.:

* * *

Ընդհանրապես կարծում եմ՝ նրա (Տեր-Պետրոսյանի) պատվին արձան պիտի կանգնեցնեն՝ Վազգեն Սարգսյանի արձանի հետ միասին:

***1in.am**, 21.12.2016թ.:*

* * *

ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՀՀ պաշտպանության փոխնախարար, ԵԿՄ վարչության նախագահ),– Հայաստանի Հանրապետության Առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին. Մեծարգո Լեւոն Հակոբի, իմ եւ Երկրապահ Կամավորականների միության անունից շնորհավորում եմ Ձեզ Երկրապահի, Հաղթանակի եւ խաղաղության օրվա, Շուշիի ազատագրման 13-րդ տարեդարձի եւ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 60-ամյակի կապակցությամբ: Մենք՝ երկրապահներս, գնահատում ենք Ձեր ավանդն ու ներդրումը հայոց պետականության կայացման, հայոց բանակի կազմավորման եւ հզորացման եւ հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում ձեռք բերած հաղթական զինադադարի հարցում: Անգնահատելի է նաեւ Ձեր դերը հանրապետությունում ժողովրդավարության կայացման եւ միջազգային ասպարեզում Հայաստանի Հանրապետության հեղինակության բարձրացման գործում: Մեծարգո Լեւոն Տեր-Պետրոսյան, Հայոց նորօրյա պատմության մեջ Դուք կաք եւ մնում եք որպես հաղթանակի նախագահ: Մենք՝ երկրապահներս, որ մարտնչել ենք Ձեր գերագույն

գլխավոր հրամանատարության ներքո, հպարտանում ենք Ձեզանով, հպարտանում ենք, որ Դուք կրում եք ԵԿՄ առաջին անդամատոմսը Սպարապետ Վազգեն Սարգսյանի ստորագրությամբ եւ վստահ ենք, որ պատմության մեջ Դուք կմնաք որպես Արցախի անկախությունն ապահոված եւ հայկական սահմաններն ընդարձակած նախագահ: Եւս մեկ անգամ շնորհավորում ենք Ձեզ, ցանկանում առողջություն, ընտանեկան երջանկություն եւ խաղաղություն հայոց աշխարհին. ՀՀ պաշտպանության փոխնախարար, ԵԿՄ վարչության նախագահ, գեներալ-լեյտենանտ Մ. Ս. Գրիգորյան:

ՀՀ Առաջին նախագահի արխիվ, 07.05.2005թ.:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ*

2016թ. դեկտեմբերի 17-ի ելույթի կապակցությամբ Լեւոն Տեր-Պետրոսյանին անարգանքի սյունին գամելու հերթական հիստերիկ արշավում փորձ է արվում ուրանալ նաեւ նրա նախագահության շրջանում արձանագրված բոլոր նշանակալից ձեռքբերումները: Ուստի ավելորդ չէ կրկին հիշեցնել, թե ժամանակին այդ շրջանն ինչպես է գնահատել ոչ այլ ոք, քան Տեր-Պետրոսյանի ոխերիմ բարեկամ Ռոբերտ Քոչարյանը.

«Անկախություն ձեռք բերելուց հետո անցած ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունն ունի մի շարք կարեւոր ձեռքբերումներ՝

ա) բազմաթիվ փորձություններ անցած ֆինանսական կայունությունը, հետեւողականորեն իրականացվող կոշտ դրամավարկային քաղաքականությունը, վերահսկվող ու ցածր մակարդակ ունեցող սղաճը եւ բաց տնտեսության արտաքին տնտեսական քաղաքականությունը.

բ) ոչ պետական հատվածի ձեւավորումը՝ շնորհիվ զանգվածային մասնավորեցման, եւ դրա գերակշիռ դերը երկրի համախառն ներքին արդյունքի ձեւավորման գործում.

iLur.am, 20.01.2017թ.:

գ) տեղական ինքնակառավարման համակարգի ներդրումը, դրա զարգացման համար նախադրյալների ստեղծումը.

դ) միջազգային, այդ թվում՝ ֆինանսական կառույցներին անդամակցությունը, այդ կազմակերպություններից արտոնյալ վարկեր ստանալու լայն հնարավորություններն ու այդ կազմակերպություններում Հայաստանի դրական համբավը.

ե) տարբեր պետություններից 1992 թվականից ի վեր ստացվող նշանակալի օգնությունը, որը նույնպես վկայում է Հայաստանին աշխարհում վստահելի գործընկեր ճանաչելու մասին.

զ) էներգետիկ ճգնաժամի հաղթահարումն ու Հայաստանն էներգոդեֆիցիտ երկրից էներգիայի պոտենցիալ արտահանող դարձնելը.

է) 1994 թվականից մինչեւ այժմ շարունակվող, իհարկե ոչ բավարար տնտեսական աճը.

ը) մարտունակ բանակի կայացումը, հաղթանակը Ղարաբաղում եւ 1994 թվականից պահպանվող զինադադարը.

թ) ժողովրդավարական պետության եւ շուկայական տնտեսության համար անհրաժեշտ հիմնական կառույցների առկայությունն ու կանոնակարգված աշխատանքը.

ժ) Սահմանադրության ընդունումը եւ դրանում ամրագրված համակարգերի աստիճանական ձեւավորումը.

ժա) խոսքի եւ մամուլի ազատությունը.

ժբ) այլակարծության վրա խարսխված բազմակուսակցական քաղաքական համակարգը.

ժգ) բոլոր մակարդակների ընտրությունների ավելի ու ավելի ժողովրդավարական բնույթը, պետության կառավարման գործընթացներում բնակչության պատասխանատու մասնակից դարձնելը.

ժդ) Հայաստանը ներգրավված է եւ ակտիվ մասնակցություն է ցուցաբերում միջազգային, եւրոպական, ԱՊՀ եւ տարածաշրջանային կառույցներին: Էական դրական տեղաշարժեր են

արձանագրված երկկողմ եւ բազմակողմ միջպետական հարաբերությունների ոլորտում, որի արդյունքում ձեւավորվել են Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, եւրոպական, Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների, ինչպես նաեւ բազմաթիվ այլ պետությունների հետ բարեկամական փոխշահավետ հարաբերություններ: Հայաստանը կարեւորել է տարածաշրջանային համագործակցության զուգակցումը հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացներին: Մենք հետեւողական ենք մեր հարեւանների հետ խաղաղ, տնտեսական փոխշահավետ միջպետական կապերի ձեւավորման գործում» («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», թ. 30 (96), 6. 12. 1999 թ., էջ 151-152):

Այս գնահատականն արձանագրված է ՀՀ կառավարության 2000թ. ծրագրում՝ վավերացված Ռ. Քոչարյանի եւ ընդունված Ազգային ժողովի կողմից: Այսինքն՝ այն օրենքի ուժ ունի: **Յուրաքանչյուր իշխանություն կերազեր հաջորդ իշխանության կողմից իր գործունեության նման փառահեղ քաղաքական գնահատական ունենալ:** Եւ այդ՝ այն դեպքում, երբ իշխանափոխությունը տեղի էր ունեցել, մեղմ ասած, ոչ այնքան «բարեկամական» ձեւերով ու մեթոդներով: Հետեւաբար՝ այս գնահատականներին հակասող բոլոր կարծիքները, մանավանդ՝ արտահայտված քոչարյանականների կողմից, բացարձակ հերյուրանք են ու դատարկաբանություն, որպես այդպիսին՝ դրանց հեղինակներին բնորոշող խոսուն փաստ:

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՆՈՐԱՏ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՑԻՆ*

Կարդացի գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցի հարցազրույցը՝ Հայ Ազգային Կոնգրեսի համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի առիթով (տե՛ս 1in.am. 21.12.2016):

Հիշենք եւ հիշեցնենք, որ Ն. Տեր-Գրիգորյանցը մեկն է Խորհրդային Միության բանակի այն 1200 սպաներից, որոնք Տեր-Պետրոսյան-Ելցին պայմանավորվածության շնորհիվ՝ 1992-ից սկսած տեղափոխվեցին Հայաստան: Նրանց շնորհիվ էր նաեւ, որ Հայաստանը շատ արագ կարողացավ բանակ ունենալ, ինչը չկարողացավ անել Ադրբեջանը: Ն. Տեր-Գրիգորյանցը այդ գործի առաջին երախտավորներից է: Այդ տարիներին, մասնավորապես, նրան են վստահվել հայկական բանակի ամենաբարձր՝ գլխավոր շտաբի պետի (միաժամանակ՝ Հայաստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալի), 1993թ. Պաշտպանության նախարարի (պաշտոնակատար) պաշտոնները:

Գեներալը որեւէ խնդիր ժամանակին չի ունեցել ո՛չ բանակի ղեկավարության, ո՛չ երկրի քաղաքական ղեկավարության հետ: Ավելի ուշ դրա մասին գրել է.

«Տեր-Պետրոսյանն ու Վազգեն Սարգսյանը չափազանց

---

* *iLur.am, 26.12.2016թ.:*

նրբանկատ, բարձր կազմակերպվածությամբ, ջենտլմենական մոտեցում ունեին, եւ ես խոնարհվում եմ նրանց առջեւ: ...Հենց Վազգեն Սարգսյանի եւ Տեր-Պետրոսյանի շնորհիվ մենք ունեցանք բանակ, որը կյանքում առաջին անգամ ազատագրեց մեր հողերը եւ պաշտպանեց հայ ժողովրդի արժանապատվությունը («Ժամանակ», 3.09.2013):

Եւ հենց այս վերջին հարցազրույցում էլ, չնայած այն մտահղացված եւ ամբողջությամբ կառուցված է ի պաշտպանություն «ոչմիթիզականության», Լեւոն Տեր-Պետրոսյանի մասին, իմիջիայլոց, ասում է նաեւ հետեւյալը.

«Ադրբեջանը պիտի հարձակվեր այդ դիվիզիայով Երեւանի վրա: Սա էր մտադրությունը, ուստի ես անմիջապես ասացի Տեր-Պետրոսյանին ***(ընդհանրապես կարծում եմ՝ նրա պատվին արձան պիտի կանգնեցնեն՝ Վազգեն Սարգսյանի արձանի հետ միասին)՝*** *խնդրում եմ, զանգահարեք Ելցինին, որ չհանեն Լենինականում գտնվող 127-րդ դիվիզիան»:*

Բնականաբար, չպիտի անդրադառնանք հարգարժան գեներալի «ոչմիթիզական» հիմնավորումներին: Դրանցում նոր բան չկա: Սակայն պիտի բերենք մի քաղվածք, որ վերաբերում է պատմական փաստի, այն է՝ 1994 թվականի հրադադարին (կարծես թե՝ առաջին անգամ չէ, որ նա ասում է նույն բանը).

«Հետո մերոնք գնացին ստորագրելու փաստաթուղթ Ադրբեջանի հետ: Ինձ չտարան իրենց հետ. ես մնացի հրամանատարական կետում: Գնացին ստորագրելու սարսափելի, գարշելի փաստաթուղթ, նույնիսկ չմտածեցին, թե ինչպես է այն կոչվում ռուսերենով: Եւ գրեցին համաձայնագիր կրակի դադարեցման մասին: Ի՞նչ է նշանակում՝ «կրակի դադարեցում»: Մենք պատերազմող երկրներ ենք, մեր կողմը հաղթել է, եւ հանկարծ ես գրում եմ՝ եկեք դադարեցնենք կրակը: Դա նույնն է, որ հաղթեին Հիտլերին եւ ասեին՝ ընկե՛ր Հիտլեր, եկեք դադարեցնենք կրակը: Պիտի ասեին՝ կապիտուլյացիա եւ Լեռնային Ղարաբաղի անկախություն: Վե՛րջ: Ցտեսություն: Ես գնացի»:

Ասենք, որ հրադադարը ստորագրել են Վազգեն Սարգսյանը, Սերժ Սարգսյանը եւ Սամվել Բաբայանը: Ստորագրել են ու դրանով իսկ կորցրել Ղարաբաղի անկախության, կապիտուլյացիայի ենթարկված Ադրբեջանին ցանկացած բան թելադրելու հնարավորությունը:

Ի՞նչ է ստացվում:

Եթե գեներալն այսպես է մտածում հիմա, պարզ է չէ՞, որ, առնվազն, այդպես (եթե ոչ ավելի խիստ) պետք է մտածած լիներ նաեւ հրադադարի ստորագրման պահին:

Մեզ մնում է հարցնել գեներալին.

Այն, ինչ Դուք ներկայացնում եք, ըստ էության դավաճանության հավասար մի բան է՝ ունենալ հակառակորդին կապիտուլացիայի ենթարկելու եւ որպես հաղթող կողմ սեփական կամքը թելադրելու հնարավորություն, եւ չանել դա: Որպես բանակի առաջին դեմքերից մեկը, դուք դրա մասին **հրապարակային որեւէ խոսք ասե՞լ եք**: Որեւէ մեկին **զեկուցագիր գրե՞լ եք**: Չե՞ք կարծում, որ նման իրողությունների հանդիման՝ սպան, եթե չի կարողանում այն կանխել, որպես վերջին քայլ **պետք է հրաժարական տար՝** հրապարակավ ներկայացնելով իր քայլի հիմքերը: Գուցե այդ կերպ հնարավոր կլիներ ամեն ինչ ետ շրջել: Ինչպե՞ս է պատահել, որ բանակի ղեկավարության «դավաճանական» այս քայլից հետո էլ դեռ նույն համակարգում եւ բարձր պաշտոնում շարունակել եք մնալ եւ աշխատել:

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԵՐԲ ԿԵՂԾՎՈՒՄ ԵՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՒ ՆԵՆԳԱՓՈԽՎՈՒՄ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Որ տոնակատարությունների ժամանակ արտասանված ճառերը կարող են նաեւ մոտենալ բաժակաճառի ժանրին՝ ներելի է. կարելի է հանդուրժել իրականության եւ իրողությունների ոչ մեծ չափազանցություններ՝ հօգուտ տոնակատարության առարկայի: Բայց անգամ այդ դեպքում չի կարելի խոսել չեղած փաստերի, չարած գործերի մասին, կեղծել ու նենգափոխել իրականությունը, ուրիշի խոսքը, եւ այդ ամենով ապակողմնորոշել լսարանը:

Ստորեւ ՀՅԴ 126-ամյակի առթիվ Հրանտ Մարգարյանի՝ Բեյրութում ունեցած ելույթից (kantsasar.com. 02.02.2017թ.) մի քանի նմանօրինակ դրվագների մասին.

1. «Արտագաղթը չարիք է, արտագաղթը մեր երկիրը վտանգելու աստիճան արդէն մտահոգիչ երեւոյթ է, սակայն արտագաղթի խնդրում աւելի բացասական երեւոյթ է երիտասարդութեան արտագաղթը: Մենք պարտաւոր ենք, մենք ունենք համապատասխան ծրագիր, որ իբրեւ պետութիւն պարտաւոր ենք ամէն տարի զօրացրուող երիտասարդի կողքին կանգնել, որպէսզի նրան ապահովենք արժանավայել աշխատանքով, արժանապատիւ աշխատավարձով եւ օգնենք, որ նա կարողա-

---

* ***iLur.am**, 07.02.2017թ.:*

նայ Հայաստան հողի վրայ իր կեանքը կազմակերպել»:

1999-ից հետո, չհաշված կարճ մի ժամանակամիջոց, Դաշնակցությունը իշխանության մաս է, իշխանություն: Արդ, այսքան երկար ժամանակամիջոցում իշխանություն լինելով՝ որքանո՞վ է նա գործադրել իր այդ «համապատասխան ծրագիրը»: Որեւէ մեկն զգացե՞լ է, որ Դաշնակցության՝ իշխանության մեջ լինելով, այդ հարցում շոշափելի ինչ-որ առաջընթաց է եղել՝ համեմատած նրա՝ իշխանության մեջ չլինելու շրջանի հետ: Կա՞ն այդ բանը ցուցադրող վիճակագրական տվյալներ: Եթե չկա ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, ուրեմն սրանք դատարկ, բայց հասարակությանը շեղող, ապակողմնորոշող խոսքեր են:

2. «Պատերազմը չարիք է, բայց պատերազմը կանխելու համար պէտք է միշտ պատրաստ լինել պատերազմի: Մեր ունեցած միջոցները սակաւաթիւ են, մեր ունեցած հնարաւորութիւնները փոքր են: Մենք պէտք է օգտագործենք այնպիսի կազմակերպական վիճակներ, որ մեզ բերեն առաւելութիւններ: Եւ ազգ-բանակ հասկացողութիւնը կամ համաժողովրդական բանակ հասկացողութիւնը, որի փորձը հայկական իրականութեան մէջ առաջին հերթին եւ միայն ունեցել է Դաշնակցութիւնը»:

Բնականաբար, հակառակորդի հետ համեմատության մեջ է, որ մեր միջոցները՝ «սակավաթիվ», եւ հնարավորությունները «փոքր» են գնահատվում: Հիմա, ենթադրենք, թե դրանով մենք «ազգ-բանակ» ենք ստեղծում՝ այդ «կազմակերպական վիճակով» հակակշռելու ավելի ուժեղ հակառակորդին: Ի՞նչն է խանգարում, որ նույն բանն անի, նույնպիսի «ազգ-բանակ» ստեղծի նաեւ հակառակորդը: Մենք կարող ենք՝ նրանք չե՞ն կարող: Մեզ թույլ կտան՝ նրանց թույլ չե՞ն տա: Այդ դեպքում կփոխվի՞ ուժերի հարաբերակցությունը: Մեր՝ «սակավաթիվ միջոցներով» եւ «փոքր հնարավորություններով» ստեղծած ազգ-բանակը մեզ «առավելություն» կտա՞ հակառակորդի՝ ավելի մեծաթիվ միջոցներով եւ ավելի մեծ հնարավորություններով (ինչպես գնահատում է Հ. Մարգարյանը) ստեղծած «ազգ-բանակի» նկատմամբ:

Եւ հետո. Դաշնակցությունը այդ ե՞րբ է «ազգ-բանակ» ստեղծել, որ ասվում է, թե դրա «փորձը հայկական իրականութեան մէջ առաջին հերթին եւ միայն ունեցել է Դաշնակցութիւնը»: Իր երկուսուկեսամյա իշխանության շրջանո՞ւմ՝ 1918–1920 թվականների՞ն: Դա այն բանա՞կն է, որ անգլիական լիակատար աջակցությամբ լավ սպառազինված, 1920թ. աշնանը մի քանի շաբաթում առանց կռվի հանձնեց Կարսի նման անառիկ ամրոցը, ապա Ալեքսանդրապոլը, իրենց շնորհված Արեւելյան Հայաստանի կեսից ավելին: Դա ընդօրինակելի՞, թե՞ մերժելի, խոտելի «փորձ» է:

Հայ ազգային կոնգրեսի վերջին համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի ընդարձակ մի մասը՝ մանրակրկիտ հիմնավորմամբ, վերաբերում էր հենց հրապարակ նետված «ազգ-բանակ» գաղափարի՝ մեզ համար անիմաստ ու սնանկ լինելուն: Ելույթի այդ մասին համարյա որեւէ անդրադարձ, առավել եւս՝ հիմնավոր անդրադարձ չեղավ: «Ազգ-բանակի» գաղափարն այլ բան չէ, քան ստատուս-քվոյի երկարաձգում, հակամարտության խաղաղ կարգավորումից խուսափում, եւ դա ոչ մեկը չի ժխտում: Բեյրութում դա քարոզելն ավելի հեշտ է, որովհետեւ այնտեղ ապրողները ոչ մի կապ չունե՞ն հայաստանյան եւ ղարաբաղյան իրականության հետ եւ ենթակա չե՞ն այդ հակամարտության չլուծման հետեւանքով կրած տագնապներին, առկա եւ սպասվելիք վտանգներին:

3. «Հայաստանը, հակառակ որոշների կարծիքին, շատ աւելի անվտանգ է, շատ աւելի մեծ հնարաւորութիւններ ունի զարգանալու Արցախի հետ միաւորուած: Եւ այն կարծիքը, թէ Արցախը խանգարում է Հայաստանի զարգացմանը, մահացու սխալ է: Մահացու սխալ է, որովհետեւ երբեք նահանջը, զիջումը չի

կարող բերել զարգացման: Եւ Արցախով միաւորուած Հայաստանն է, որ կարող է զարգացում ապրել»:

Սա արդեն խոսքի, իրականության, խնդրի նենգափոխում է, կեղծիք կամ մանր խորամանկություն՝ քիչ տեղյակ լսարանն ապակողնորոշելու համար: Երբեք ոչ մեկը չի ասել, թե «Արցախը խանգարում է Հայաստանի զարգացմանը»: Որեւէ մեկը կարո՞ղ է գտնել «որոշների» խոսքում նման ձեւակերպում, բացի «որոշ» նենգափոխողներից: Ասվել է՝ **Ղարաբաղյան հակամարտության կարգավորված չլինելն է խանգարում ինչպես Հայաստանի, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի զարգացմանը ու սպառնում երկուսի էլ անվտանգությանը:** Եւ այդ են վկայում երկու երկրների էլ (թեկուզ ուռճացված) պաշտոնական վիճակագրությունները, որ ներկայացրել են երկու երկրների իշխանությունները, որոնց մաս է եղել եւ է՛ Դաշնակցությունը: Այդ է վկայում հենց այն, որ ինքը՝ Հ. Մարգարյանն է արտագաղթը համարում «երկիրը վտանգելու աստիճան մտահոգիչ երեւույթ», իսկ պատերազմի վտանգը՝ «չարիք»:

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԴԱՎԻԹ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ
(Ազատամարտիկ, Մեղրու շրջանի ոստիկանապետ, «Հայանտառ» ՓԲԸ տնօրեն, ԱԺ պատգամավոր, Սյունիքի փոխմարզպետ)

ՍՈՒԼԹԱՆ ՆԱՆԱ*

Հայ ազգային Կոնգրեսի 2-րդ (20-րդ) համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» վերնագրված ելույթի «սխալները» ուղղելու կարիք ամենեւին չկա:

Այն պատասխանատվության, սառը դատողության արդյունք է, առարկայական հաշվարկների վրա հիմնված համարձակ մտածելակերպ, որի արմատավորման դեպքում է հնարավոր հաղթահարել մեր կյանքի համատարած ու անորոշ լճացումը:

Ժողովուրդն արթուն է, եթե նրա մեծամասնությունն առողջ մտածելակերպի բացահայտ կրողն է: Պահն է, որ քիչ թե շատ հայտնի մարդիկ հաշիվ տան՝ կրո՞ղն են իրենք այս մտածելակերպի, թե՝ ոչ: Ոչը արկածախնդրությունն է:

Ես կրողն եմ այս մտածելակերպի ու հետեւաբար.

Ինչպիսի փորձանքի տակ էլ որ գլուխս դնելու լինեմ, ինչ պիտակներ էլ որ կպցնեն, միեւնույն է՝ իմ հնարավորությունները, ունակություններն ու ազդեցությունները գործադրելու եմ հանրության լայն շրջանակներում խաղաղության հաստատման անհրաժեշտությունն իբրեւ համոզմունք ամրապնդելու եւ «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» նշանաբանով ընտրությունների գնացող քաղաքական ուժին լիարժեք աջակցելու համար:

Որպես առաջին քայլ՝ հրապարակում եմ ապրիլյան կար-

* *iLur.am, 22.12.2016թ.:*

ճատեւ պատերազմի շուրջ մտորումներիս ընթացքում վավերական մի հին պատմության հիման վրա թղթին տվածս:

Սուլթան նանա

Քամոտ լեռնանցքը ջրբաժան գծի այն հատվածն է, ուր ջրի կաթիլը բաժանվում է երկու մասի՝ սկիզբ դնելով երկու հոսքի: Կիսված ջրի կաթիլից սկիզբ են առնում երկու փոքրիկ գետակ, հեռանում են իրարից, դառնում երկու ավազանի առանցք, դառնում կյանքի գործոն ու թափվում Մեծ գետը: Եւ ջրբաժան գծի վրա կիսված կաթիլները միմյանց գտնում, ամբողջանում են, երբ Մեծ գետի ջրերը խաղաղ են ու ջինջ...

Կիսված կաթիլից գոյացած գետակներից մեկի ավազանում՝ Մեծ գետի ձախակողմյան վտակի կիրճի ծերպերում, ծվարած է փոքրիկ հայկական մի գյուղ:

Աշխարհի հեռավոր այս ծայրամասում ապրող հնաբնակների համար, սակայն, հենց դա էր Աշխարհի կենտրոնը: Նրանք դրանում համոզված են ճիշտ այնպես, ինչպես Հողե գնդի բազմաթիվ նման ծայրամասերի բոլոր բնակիչներն իրենց բնակավայրի համար:

Յուրօրինակ էին հայկական փոքրիկ այս գյուղի մարդիկ՝ պատվախնդիր, խիստ մաքրասեր, շատ հոգատար՝ միմյանց ու իրենց ապրուստն ապահովող ունեցվածքի նկատմամբ, հանդուրժող ու համակեցությունը հարգող:

Ընտանիքների մեծ մասն զբաղվում էր խաղողագործությամբ ու գինեգործությամբ: Հողագործությամբ զբաղվող յուրաքանչյուր ընտանիք, սակայն, մնացյալ սննդի կարիքները հոգալու համար, խնամում էր նաեւ մի 15-20 գլուխ այծ ու ոչխար: Փոքրամասնությունը զբաղվում էր անասնապահությամբ: Նրանցից յուրաքանչյուրն իր անհատական հոտն էր կազմում՝ պակասը լրացնելով մերձավորների ու մտերիմների մանր եղջերավորներով: Հովվին յուրաքանչյուրը վճարում էր իր ունեցած գլխաքանակի համամասնությամբ: Հովվի ու հոտի հետ կապված բոլոր խնդիրները, ընդհուպ՝ հովվի ընտրությունը, համակարգում էր հիմնական գլխաքանակի սեփականատերը:

Նրանցից մեկը՝ Հակոբ Մելիք-Հովհաննիսյանը, հերթական մի հովվի հետ պայմանավորվելուց հետո, բոլորից թաքուն, հովվի փինած տրեխի (կարկատած չարուխ) կարկատանի թելերի մեջ քարի մի կտոր է խցկում: Մեկ շաբաթ անց, երբ հովիվը հոտն արոտից փարախ է բերում, հանել է տալիս նրա տրեխը, ստուգում, հայտնաբերում իր իսկ խցկած քարի կտորն ու ասում է. «Այս քարի կտորը ես եմ խցկել՝ քեզ ստուգելու համար: Մի շաբաթ շարունակ դու չես ջանացել ազատվել քեզ անհարմարություն պատճառող քարից: Եթե դու չես գնահատում քո իսկ մարմնի արժեքը, հետեւաբար՝ դու չես կարող գնահատել նաեւ իմ հոտի արժեքը: Առավոտյան կհանձնես հոտը, մեկ շաբաթվա աշխատանքիդ դիմաց կստանաս մեկ ամսվա վարձատրություն ու կհեռանաս»:

Հողագործները նույն սկզբունքով էին ձեւավորում իրենց հոտը: Բայց եթե անհատական հոտի հովիվն ընտրվում էր մեկ մարդու ճաշակով, ապա ընդհանուր հոտի հովիվը պետք է կարողանար բավարարել միաժամանակ մի քանի տասնյակ բծախնդիր մարդու ճաշակ:

Հայկական գյուղի հովիվները, որպես կանոն, վարձվում էին ամենամոտ ադրբեջանաբնակ այն գյուղից, որը գտնվում էր Մեծ գետի ձախակողմյան մյուս վտակի ավազանում: Գետակ, որ սկիզբ է առնում Քամոտ լեռնանցքից՝ ջրի նույն կաթիլի երկրորդ կեսից:

Ադրբեջանական այդ գյուղի հին բնակիչները հիմնականում զբաղվում էին ոչխարաբուծությամբ: Նրանք այդ գործի հմուտ մասնագետներ էին: Քչերը հեռավոր անտառում փայտածուխ պատրաստելով ու վաճառելով էին վաստակում: Այդ գյուղի երիտասարդ, բայց փորձառու հովիվներն իրենց նախ-

նական կապիտալը կուտակում էին հենց հարեւան հայկական գյուղում: Այնտեղ նրանց ապահովում էին կացարանով ու սննդով, գլխաքանակի հաշվով վճարում էին փողով ու անասունով: Մի քանի տարի աշխատելուց հետո՝ հոտը հանձնում էին նոր երիտասարդ հովվի, ու տուն էին վերադառնում սեփական ոչխարի նշանակալի գլխաքանակով:

* * *

Երկու գյուղերը միմյանցից բաժանում է կտրտված ռելիեֆով վիթխարի լեռնաշխարհը: Այն դարեր շարունակ եղել է երկու գյուղերի մանր եղջերավոր անասունների հիմնական արոտատեղը:

Հանգամանքների բերումով՝ մանր եղջերավորները հիմա վաղուց արդեն տարածում չունեն այս լեռնաշխարհում: Բայց հստակ նշմարվում է եւ դեռ երկար կնշմարի նրանց կճղակների՝ նախկինում թողած ազդեցությունը ռելիեֆի վրա՝ ամենուր զուգահեռ, նեղլիկ ու երկար ձգված հազարավոր արահետներ: Դրանք առաջացել են, երբ տաք եղանակին, արեւից պատսպարվելու բնազդով, յուրաքանչյուր հաջորդ ոչխար գլուխը թաքցրել է առջեւից՝ խոնավ հողի վրա քայլող ոչխարի դմակի ստվերում: Այսպես պարբերաբար ձեւավորվել է մի քանի տասնյակ ոչխարներից կազմված քայլող շարք, եւ բազմաթիվ կճղակների կանոնավոր ու ինտենսիվ ազդեցությամբ տրոհվել է հողը, գծվել արահետ:

Լեռնազանգվածը հատվածաբար ծածկված է նաեւ անտառներով ու վայրի ժայռերով, շատ հարուստ է եղել կենդանական աշխարհի վայրի տեսակներով՝ խոզ, արջ, պախրա, քարայծ, հովազ, լուսան, գայլ...

Հնուց հայտնի է, որ արոտները բազմաքանակ քարայծներից փրկում էին կայծքարե հրացանի որոտի օգնությամբ: Ավելին, հանուն ոչխարի՝ պայքարել են նույնիսկ հովազի դեմ.

սալ քարերից պատրաստված ծուղակ շինության մեջ տեղադրված մսակտորով գայթակղել, ներքաշել, բանտարկել ու սպանել են հովազին: Այդ շինության ավերակները պահպանվում էին մինչեւ վերջերս:

Երկու գյուղերը միմյանց կապող մի քանի դժվարանցանելի լեռնային արահետներին լիարժեք տիրապետում էին տեղացիներից քչերը՝ հովիվներն ու որսորդները: Որեւէ օտար մարդ, առանց նրանց աջակցության, չէր կարող հաղթահարել այդ լեռնազանգվածը: Նման անհրաժեշտություն հատկապես առաջանում էր, երբ գարնանային վարարումներից Մեծ գետի կիրճով անցնող հիմնական ու համեմատաբար հարմարավետ ճանապարհը մի քանի ամսով ջրասույզ էր լինում:

Եւ այսպես, նույն բնաշխարհից չարչարանքով ապրուստ կորզելով՝ համերաշխ ապրում էին երկու գյուղերի բնակիչները: Նրանք օջախներով, սերնդե-սերունդ, բարեկամական, պարզ ու անկեղծ հարաբերություններ էին պահպանում: Այդ հարաբերությունները չխաթարվեցին անգամ Պետերբուրգից, Թեհրանից ու Ստամբուլից հրահրված, Բաքվում սկիզբ առած՝ 1905–1906թ. հայ-ադրբեջանական լայնատարած արյունալի բախումների հետեւանքով:

* * *

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայկական գյուղի ընդհանուր հոտի հովիվը Նուրուլան էր: Նա մարդամոտ էր, բարի, կոկիկ ու մաքրասեր, իր գործի փայլուն գիտակ: Մեկ առ մեկ գիտեր, թե ում է պատկանում տվյալ կենդանին, ճանաչում էր արտաքնապես ու անունով, որն, ի դեպ, բխում էր նրանց արտաքին առանձնահատկություններից (օրինակ՝ Հակոբի սպիտակ երկարականջը):

Արոտներում չէր վազվզում Նուրուլան, խոսելով էր կառավարում հոտը՝ նրան աջ, ձախ գնալու, ետ դառնալու, նստելու

ու շարժվելու հրահանգներ տալով: Նա ավելի շուտ կենդանիներ վարժեցնող էր, քան հովիվ: Բոլորը գոհ էին նրա աշխատանքից եւ գնահատում էին՝ իբրեւ իրեն հավասարը չունեցողի:

Բացի վարձատրությունից՝ անասնատերերը հովվին կերակրելու պարտավորություն ունեին: Գլխաքանակի հաշվարկով՝ հոտի կառավարչի նախօրոք տեղեկացմամբ, ամեն օր հովվի սննդի հարցը կարգավորում էր որեւէ ընտանիք: Երեկոյան՝ հոտը բերելուց հետո, հովիվը նրանց հետ ընթրում էր իբրեւ տվյալ ընտանիքի անդամ: Ընթրելուց հետո շնորհակալություն էր հայտնում ու բարի գիշեր մաղթում՝ հաջորդ օրվա սննդի կապոցը խուրջինում տեղավորելուց հետո: Հովվին հյուրընկալելու օրվա ընթրիքն առատությամբ ու բազմազանությամբ տարբերվում էր ընտանիքի սովորական ընթրիքից:

Այնքան հոգեհարազատ էր միջավայրը, որ Նուրուլան որոշեց ամուսնանալ եւ կնոջ հետ ապրել հայկական գյուղի իրեն հատկացված կացարանում: Այդպես էլ վարվեց, սակայն երջանիկ կյանքը երկար չտեւեց...

* * *

Պատերազմի ավարտին աշխարհն ու Այսրկովկասյան տարածաշրջանը խառնվեցին իրար: Նոր պետություններ էին ծնվում, ուժեղները թույլերից տարածքներ էին խլում, սահմաններ էին գծում, սահմաններ էին փոխում, ազգամիջյան բախումներ՝ տեղահանություններ, բռնություն, արյուն, կեղծիք, թշվառություն...

Իրենց անվտանգությունը ապահովելու նպատակով, հարեւան հայկական բնակավայրերի նման, սկսեցին նախապատրաստվել նաեւ այս փոքրիկ հայկական գյուղում: Նախ ձեւավորեցին «փրկության խորհուրդ», ապա, զենք ու զինամթերք հայթայթելուն զուգահեռ՝ պաշտպանական ստորաբաժանումներ:

Պաշտպանական նախապատրաստությունների հենց սկզբից ադրբեջանցի հովիվները, գիտակցելով, որ հայկական գյուղի վտանգը գալու է իրենց գյուղի կողմից (ոչ իրենց գյուղից), որոշեցին հաշտ ու խաղաղ, առանց թշնամանքի նախօրոք հեռանալ: Ստացան վերջնական վարձատրությունը, ափսոսանքով հրաժեշտ տվեցին հայկական գյուղին ու խոստացան վերադառնալ խաղաղ ու բարի ժամանակների հետ:

Նուրուլան հապաղեց. մեծ Աշխարհը նրան անծանոթ էր: Նրա Աշխարհը այդ լեռնաշխարհն էր, իր հոտը ու երկու գյուղերի՝ իրեն հավասարապես հոգեհարազատ բնակիչները: Նուրուլան շարունակեց աշխատել...

Մի օր տուն վերադարձավ տխուր ու մոլոր: Կինը փորձեց հասկանալ պատճառը, բայց նա լռում էր: Մի քանի օր լռեց ու չդիմացավ: Պոռթկաց: Վրդովված պատմեց լեռներում հանդիպած իրենց գյուղի հովվից լսածը, որ, նախ՝ ադրբեջանական գյուղում որոշ մարդիկ իրեն դավաճան են համարում, եւ որ հայկական այս գյուղի օրերը հաշված են:

Գյուղացիներից մեկը, որ այդ պահին անցնում էր Նուրուլայի կացարանի կողքով, լսեց վերջին արտահայտությունը՝ «այս հայկական գյուղի օրերը հաշված են»: Լսեց ու լսածը շտապ փոխանցեց «փրկության խորհրդին»: Անմիջապես խորհուրդ հրավիրվեց՝ Նուրուլայի հարցն էր: Գիտեին, որ վտանգը մոտ է ու ահռելի: Գիտեին, որ վտանգ ուղղորդողներն իրենց եւ հարեւան հայկական գյուղերի վերջին օրերն էին հաշվում: Մյուս հովիվների հետ Նուրուլայի չմեկնելը համադրեցին «այս գյուղի օրերը հաշված են» արտահայտության հետ: Քննելու ու վերլուծելու ժամանակ չունենալու արդարացմամբ հապշտապ եզրակացրին, որ Նուրուլան լրտես է: Նա, որ լավագույնն է տիրապետում լեռնային արահետներին, կարող է գիշերով փորձանքը գյուղ ուղեկցել: Ուրեմն Նուրուլան ամենավտանգավոր

լրտեսն է, եւ նրա պատիժը պետք է խիստ լինի՝ մահ: Վճիռը կայացված էր, մնում էր իրագործելը:

Ծրագիր մշակվեց: Հանձնարարվեց երկու երիտասարդ որսորդների՝ Հովսեփին ու Վարդազարին, որոնք էլ, որսի գնալու ճանապարհին, գյուղից հեռու, «պատահաբար» պիտի հանդիպեին նրան եւ ի կատար ածեին վճիռը: Հետո պիտի գային ուրիշ երկու հոգի՝ բահ ու քլունգով, եւ այս ամենը, իբրեւ գաղտնիք՝ խորը թաղեին:

Հովսեփը նախապես տրամաբանական չէր համարում առաջադրանքը, մտատանջվում էր, անգամ մտածում էր հրաժարվել: Ինքն էությամբ ըմբոստ էր՝ բոլորը գիտեին, կարող էր դա անել: Միայն ողջ համայնքին սպառնացող վտանգի լրջության ու ժամանակի սղության պատճառով որոշեց չհակադրվել: Գիշերը չկարողացավ քնել՝ խիղճը տանջում էր, ու անընդհատ թվում էր, թե աջ ցուցամատը չի զգում...

Պայմանավորված ժամին հրացանն ուսն առավ ու դուրս եկավ տնից: Դեռ չէր հասել հանդիպման վայր՝ կրակոցի ձայն լսեց: Վազեց: Շները՝ ոռնոցով ու կլանչոցով, իսկ ոչխարները՝ մայոցով, ողբում էին հովվի մահը: Նստեց սալ քարին՝ ընկերոջ դիմաց, վառեց ծխախոտը ու հարցական հայացքով նայեց նրան:

– Շուտ էի եկել,– ասաց ընկերը,– իրենից շուտ: Եկավ, նայեց աչքերիս մեջ ու հարցրեց.

– Ինչո՞ւ ես այսքան շուտ այստեղ եկել:

– Ընկերոջս եմ սպասում, որսի ենք գնում:

– Հագուստդ որսի գնացողի հագուստ չէ: – Ասաց, մի պահ լռեց ու շարունակեց.

– Ես այս գիշեր հասկացա, որ կամ դուք, կամ իմ հայրենակիցները ինձ սպանելու եք: Նա՝ ով ավելի շուտ կվճռի: Ինձ հաշված օրեր են մնացել ապրելու, գուցե՝ հաշված րոպեներ: Եթե արդեն վճռել եք, եւ եկել ես ինձ սպանելու, խնդրանք

ունեմ՝ թիկունքից մի կրակիր, ուզում եմ տեսնել ինձ սպանողին: Ուզո՞ւմ ես կանգնեմ այն ապառաժի տակ՝ իմ մահարձանի, ու կրակիր ուղիղ սրտիս...

Լռեցին:

Հետո եկան այն երկուսը ու ապառաժի տակ փոս փորեցին: Հովսեփը բարձրաձայն մտածեց. «Նա լրտես չէր»: Ոչ ոք չառարկեց, եւ այդ երկու բառը հնչեց իբրեւ հովվի մահախոսական: Թաղեցին առանց հողաթմբի՝ վայրը քողարկելով տեղանքի նմանությամբ:

Երեկոյան հոտը գյուղ եկավ առանց հովվի... Երկու օրվա որոնումներն արդյունք չտվեցին: Անհետ կորել էր: Հետո հովվի ամբողջական վարձը տվեցին կնոջը, եւս մի ջորի՝ որպես նվեր: Նրանց տնամեջը բարձեցին նվեր ջորու վրա, մի քանի հոգով՝ մի քսանհինգ գլուխ ոչխար էլ առաջներն արած, Մեծ գետի երկայնքով անցնող համեմատաբար հարմար ճանապարհով կնոջն ուղեկցեցին մինչեւ նրանց գյուղի մատույցները, որքան որ անվտանգ էին համարում:

* * *

Հետո եկավ մեծ վտանգը՝ ավելի քան լուրջ, տեղահանելու ու բնաջնջելու սպառնալիքով: Հայկական գյուղերը կարողացան համախմբվել, քաջաբար հետ մղել վտանգն ու կյանքը վերադարձնել բնականոն հուն:

Հետո հաստատվեցին բոլշեւիկյան կարգեր՝ հալածանքներ, ունեզրկում, հարկադիր կոլեկտիվացում, բռնաճնշումներ՝ բանտարկություն, գնդակահարություն, աքսոր...

Շարունակությունը երկրորդ համաշխարհային պատերազմն էր:

Պատերազմի ավարտից մի քանի տարի հազիվ էր անցել: Դեռ բեղավոր բռնակալի դարաշրջանը չէր ավարտվել: Հովսեփն արդեն տարիքն առել էր ու շատ զավակներ ուներ: Որ-

դիներից մեկը զոհվել էր պատերազմում, իսկ հինգը դեռ անչափահաս էին: Օրվա գերխնդիրը երեխաներին քաղցած չթողնելն էր: Հովսեփի հիմնական հենարանն այդ հարցում ավագ Որդին էր: Նա, հանգամանքների բերումով, հենց առաջին օրից աշխատում էր պատերազմի տարիներին գործարկված, Մեծ գետի երկայնքով անցնող երկաթուղում: Բացի այն, որ իբրեւ երկաթուղային՝ հացի նշանակալի չափաբաժին էր ստանում ու աշխատավարձի հետ տուն բերում, հանգստյան օրերին էլ զբաղվում էր որսորդությամբ: Երկաթուղու հարակից սահմանապահ ուղեկալից վստահությամբ մարտական զենք էր վերցնում եւ քարայծի մսով լրացնում մեծ ընտանիքի սննդի պակասը:

Աշուն էր՝ հոկտեմբերի վերջը, քարայծի որսի լավագույն շրջանը: Այդ ժամանակ մեծ արու քարայծներն այնքան գեր են լինում, որ հնարավոր է լինում նրանց մսից ղաուրմա պատրաստել՝ առանց լրացուցիչ յուղ օգտագործելու: Եւ որդին որոշում է ձմռանն ընդառաջ լուծել մեծ ընտանիքի սննդի խնդիրը հենց այդ ճանապարհով: Հոր փորձից գիտեր, որ զգացողությունը թուլացած ծեր քարայծները ամբողջ ցերեկը պատսպարվում են անմատչելի անձավներում եւ դուրս են գալիս արածելու լուսաբացին ու մթնշաղին: Դեռ մութ էր, որ տնից դուրս եկավ՝ միայնակ: Հակառակի պես՝ բոլոր կանխատեսելի վայրերում մեծ քարայծ չտեսավ, իսկ փոքրերին որսալու մտադրություն չուներ: Ինքը նկատել էր, որ պետական սահմանի պաշտպանությունը ամրապնդելու նպատակով Մեծ գետի ձախ ափով փշալարե ցանկապատ կառուցելուց հետո քարայծների գլխաքանակը պակասել էր: Կենսատարածք էր խզվել:

Մեծ քարայծի որոնումներով կտրեց անցավ մի 15 կիլոմետր ու հասավ լեռնազանգվածի հակառակ կողմը: Հովիվների գյուղը ոտքերի տակ էր՝ թեք լանջին: Փոքրիկ տներ՝ հողե հարթ կտուրներով, մեկի կտուրը՝ մյուսի համար բակ: Խոնավ հողի վրա մեծ քարայծի թարմ հետք նկատեց: Փորձեց

հետքով առաջ շարժվել: Տեղ-տեղ հետքը նշմարվում էր, տեղ-տեղ անհետանում, փնտրում էր՝ նորից էր գտնում, ու էլի կորցնում, հետ ու առաջ էր գնում, ցած իջնում ու վեր բարձրանում՝ նորից գտնում: Վերջապես հետքը դեմ առավ հսկա ու վայրի մի ժայռի, որի մեջ մարդուն անհասանելի խորը անձավ էր նշմարվում: Համոզված էր՝ քարայծն այնտեղ էր: Պետք էր սպասել մթնշաղին...

Ժայռի դիմաց հարմար դիրք գտավ, տեղավորվեց՝ դեմքով դեպի անձավը, ջուր խմեց, հաց կերավ ու հաշվարկեց, որ անգամ առանց բեռի հնարավոր չի լինի գիշերով տուն վերադառնալ: Մի պահ մտածեց՝ գուցե դատա՞րկ տուն վերադառնա, բայց հիշեց տան կիսաքաղց անդամներին, ու պատասխանատվությունը հուշեց՝ մնալ:

Ծրագրեց միակ իրագործելի տարբերակը՝ կիջնի ադրբեջանական գյուղ, կգտնի իր գործընկեր ու մտերիմ Իբրահիմին, կգիշերի նրանց տանը, առավոտյան կիջնի երկաթուղու մոտ, կհանդիպի ծանոթ մեքենավարներից որեւէ մեկին, նրա աջակցությամբ կգնա կայարան, իսկ այնտեղից տուն հասնելը խնդիր չէր: Ծնողների անհանգստանալու հանգամանքը մտքովն անցավ, իհարկե, բայց երիտասարդի ինքնավստահությամբ այն համարեց երկրորդական:

Ժայռակատարների ստվերները վաղուց արդեն իջել էին ձորը, բարձրացել ու ձգտում էին հավասարվել հանդիպակաց կատարներին: Քիչ անց ուշադրությունը լարած որսորդը անձավի կողմից չոր շխկոց լսեց՝ պոզերը դիպան անձավի պատերին, դուրս է գալիս, համոզված էր: Կրակոցը դիպուկ էր: Ծեր ու հսկա քարայծը գլորվեց դեպի ձորը: Այսպիսին նա առաջին անգամ էր որսում: Ժամանակ չկորցրեց, քարշ տվեց լանջն ի վար՝ գետակի մոտ, վարժ ու արագ քերթեց, մասերի բաժանելով տեղավորեց ուսապարկի մեջ, լվացվեց, շալակեց ու

արդեն հազիվ տեսանելի անծանոթ արահետով քայլեց առաջ՝ իր քաշի չափ բեռի տակ կքած:

Մութն ու սեւ չադրայով կինը նրան դիմավորեցին գյուղի եզրին: Որսորդը հարգալից բարեւեց կնոջն ու հարցրեց Իբրահիմենց տունը: Կինը երկու փաթիլ (մոտ երեք լիտր տարողությամբ կիսագնդաձեւ պղնձե աման) տարողությամբ կաթով լի սաթլը (դոյլի ու ճագարի կոմբինացված պղնձե տարա) դրեց գետնին, ճրագը պահեց որսորդի ուղղությամբ ու հարցրեց.

– Իսկ դու ի՞նչ կապ ունես Իբրահիմի հետ:

– Իբրահիմն իմ մտերիմ ընկերն է, մենք միասին ենք աշխատում:

– Որտեղի՞ց ես:

– Լեռնաշխարհի հակառակ կողմից՝ կիրճի ծերպերին ծվարած գյուղից եմ:

Կինը նկատելիորեն լարվեց ու կարծես իր կամքին հակառակ հարցրեց.

– Ո՞ւմ որդին ես:

– Հովսեփի, ճանաչո՞ւմ եք:

Կնոջ մարմնով սարսուռ անցավ, ինքնատիրապետումը կորցնում էր, շնչառությունը արագացավ, սիրտը թրթռում էր, ուզում էր պոռթկալ, բայց չէր կարողանում՝ խեղդվում էր: Հետո քիչ-քիչ խաղաղվեց, շունչը տեղը եկավ, ու զուսպ արտաբերեց.

– Ես Իբրահիմի մայրն եմ՝ Սուլթան նանան: Հետեւիր ինձ, Իբրահիմն ուր որ է կգա,– ասաց ու լուսավորելով ճանապարհը՝ հյուրին տուն առաջնորդեց:

Տունը մի քանի քայլի վրա էր: Կնոջ խորհրդով՝ ուսապարկը կախեց կիսաբաց թոնրատան կաղնու սյան ելուստից, հրացանը հենեց պատին:

– Նստիր այդտեղ, չարուխներդ ու գուլպաներդ հանիր, տաք ջուր բերեմ, ոտքերդ լվամ,– ասաց Սուլթան նանան՝ ցույց տալով մուտքի դռան աջ կողմի պատից ելնող սալ քարը:

Բերեց փայտե տաշտը, դրեց հյուրի ոտքերի առաջ, օջախին դրած մեծ պղնձե կաթսայից տաք ջուր բերեց, չոքեց, որ լվա: Հյուրը փորձեց դիմադրել, ապարդյուն, Սուլթան նանան պնդեց՝ ասելով, որ դա ազգային ավանդույթ է, ու լվաց հյուրի ոտքերը: Հետո լաթով մաքրեց, տվեց իր ձեռքով գործած նոր ու ճերմակ բրդե գուլպաներ, ասաց, որ դա նվեր է, եւ պարտադրեց հագնել:

Եկավ Իբրահիմը: Մայրը հանձնարարեց հյուրին պատվելու նպատակով հավ մորթել: Երիտասարդ հյուրը միջամտեց՝ ասելով, թե ամենեւին հավ մորթելու կարիք չկա, քանի որ ուսապարկում այդքան շատ միս կա, եւ որ ինքն այդ մսի մի մասը նվիրելու է նրանց:

Սուլթան նանան առարկեց.

– Քո ուսապարկի միսը հարամ է՝ գնդակով սպանված, մենք այն չենք ուտում:

Մինչ Իբրահիմը կմորթեր հավը, Սուլթան նանան լվացավ հյուրի գուլպաներն ու կախեց օջախի մոտ ձգած թելից:

Ընթրիքն ավարտելուն պես Սուլթան նանան առանձին սենյակում չօգտագործած անկողին բացեց հյուրի համար ու որդուն հանձնարարեց, որ ստուգի, թե արդյոք ամուր է փակել հավաբնի անցքը: Որդին հակաճառելով գնաց: Ինքը հյուրին ուղեկցեց ննջասենյակ, ցույց տվեց անկողինը, բանալին մտցրեց պատի պահարանից կախված կողպեքի մեջ ու ասաց.

– Հրացանդ պահարանի մեջ պահիր ու բանալին մոտդ թող: Գիտեմ, որ հայրդ՝ Հովսեփը, մասնակցել է եղբորս՝ Նուրուլայի սպանությանը, բայց չկարծես, թե կարող եմ վրեժխնդիր լինել: Ես անգամ գիտեմ, որ Վարդազարի արձակած գնդակն է դիպել եղբորս,– ասաց ու դուրս եկավ սենյակից՝ ետեւից ծածկելով դուռը:

Հյուրն անակնկալի եկավ: Առաջին անգամ էր լսում: Մտքերը ցաքուցրիվ էին: Չգիտեր անելիքը: Հետո սթափվեց, գնա-

հատեց, որ այդ պահին մնալն է ճիշտ ու որոշեց այնպես հեռանալ, որ գյուղը մթնով անցնի եւ երկաթգիծ հասնի լույսը բացվելուն պես: Պառկեց գլխատակը բարձր, բաց աչքերով, լիցքավորված հրացանը կողքին:

Գնալու ժամն էր: Հագավ չարուխները, զգուշությամբ հրեց դուռը ու կիսաբաց դռան արանքից ձգեց վիզը: Լամպի աղոտ լույսի տակ, կարպետի վրա ծալպատակ նստած էր Սոլթան նանան:

– Առաջ արի, քեզ համար նախաճաշ եմ պատրաստել,– ասաց ու բարձրացրեց լամպի բոցը:

– Շնորհակալ եմ, այս ժամին նախաճաշելու սովորություն չունեմ, տանը կնախաճաշեմ:

– Չէ, այդպես չի լինի՝ կնեղանամ, գոնե մի բաժակ կաթ պիտի խմես,– ասաց ու փայտե շերեփով կաթ լցրեց բաժակի մեջ: Բաժակը մեկնեց, բայց արագ ձեռքը ետ քաշեց, ցուցադրաբար բաժակի պարունակության կեսը լցրեց ուրիշ բաժակի մեջ, առաջին բաժակը լրացրեց, կիսատ բաժակից մի կում խմեց ու կրկին լիքը բաժակը մեկնեց հյուրին: Խմեցին:

– Հիմա գնանք, ես կուղեկցեմ քեզ մինչեւ երկաթգիծ:

Դուրս եկան: Դեռ մութ էր, սակայն հեռավոր արեւելքում նշմարվում էր ամպի մխացող եզրը: Մինչ լուռ քայլելով կհասնեին գյուղի վերջը, ամպը բոցավառվեց: Հյուրը կանգ առավ ու թախանձեց ընկերոջ խորհրդավոր մորը տուն վերադառնալ:

– Լա՛վ,– համաձայնեց կինը,– ասելիք ունեմ, ասեմ՝ նոր վերադառնամ,– հետո խորը հոգոց հանեց ու շարունակեց: –Չգիտեմ ինչպե՞ս պատահեց, որ ասացի քեզ այդ մասին: Սխալվեցի: Ամբողջ գիշեր ես էլ քեզ նման աչք չեմ փակել՝ խիղճս տանջում էր: Հիմա համոզված եմ՝ էս աշխարհում Մարդու ամենակարեւոր ձեռքբերումը խաղաղությունն է: Քո գալը առիթ դարձավ, որ մտորեմ դրա շուրջ: Ինձ համար այլեւս համոզմունք է, որ խաղաղությունը քո ու իմ որդու ընկերությունն է, եւ այդ գիտակցումը ինձ ազատեց ծանր ատելության բեռից:

Չմոռանաս՝ մեր օջախի դուռը միշտ բաց է քո առաջ: Ապրենք խաղաղությամբ,– ասաց, բարի ճանապարհ մաղթեց ու վերադարձավ:

* * *

Հովսեփն ու կինը ամբողջ գիշեր անկողին չէին մտել: Որդու անկանխատեսելի բացակայությունը մորմոքել էր պատերազմում զոհված որդու կորստյան ցավը:

Մայրը ամբողջ գիշեր մոկտում էր ու ՀՀնջալով խնդրում Աստծուն, որ օգնի որդուն:

Հայրը պատշգամբում ծխելով առաջ ու հետ էր քայլում ու մորը սփոփելու նպատակով իր ու շրջապատի գլխով անցած նմանատիպ դեպքեր էր հիշեցնում, որոնք, իհարկե, բարի վերջաբան էին ունեցել: Հաշվարկներ էր անում, հնարավոր վերադարձի ժամն էր հիշատակում: Իսկ մտքում որոշում էր, թե որ պահից, ում հետ եւ որ ուղղություններով կգնան որդուն որոնելու:

Լույսը նոր էր բացվում: Վերջին ծխախոտը սպառվեց: Սիրտը ծուխ էր ուզում՝ առատ ծուխ: Պահած թութուն ուներ: Պարտադիր բաժանորդագրված «Կոլխոզնիկ» թերթից պատռած թղթի կտորով երկար ու անշնորհք գլանակ փաթաթեց: Վառեց, ծանր ծուխը կլանելուն պես մտքովն անցավ. «Հանկարծ ու այրվող տառերից ձեւակերպված բոլշեւիկյան կեղծ լոզունգները թութունի ծխի հետ չներծծվե՞ն հոգու մեջ»: Այդ մտքից սթափվեց ու հազալով ծուխը դուրս փչեց հնարավորինս հեռու: Ծուխը չէր կարող խեղդել, ինքը ծխին սովոր էր: Ծուխ դարձած լոզունգներն էին խեղդողը՝ «Այսքան ուրախ կյանքը մեր՝ ընկեր Ստալինն է տվել», «Նորից եկավ ազատաբեր մեր սիրելի Հոկտեմբեր»...

Այսպես՝ ինքն իրեն շեղում էր, փորձելով վանել սիրտ սողոսկող չարագուշակ մտքերը, մեկ էլ դանդաղ բացվեց ծանր փայտե դարպասը: Որդին էր՝ բեռի տակ կքած:

Նա նախ գրկեց արդեն ուրախությունից արտասվող մորը, հետո ողջագուրվեց հոր հետ՝ հայացքով հասկացնելով առանձին խոսելու անհրաժեշտության մասին:

Հայրը մորը պատվիրեց նախաճաշ պատրաստել:

Լսեց որդուն: Ծուխը ներս քաշեց, արագ դուրս փչեց, գլանակը դեն նետեց: Այնուամենայնիվ, զզվելի էր ծխի հետ ներս թափանցող այրված խաբեությունը:

– Ինչ ասել է այդ կինը՝ ճշմարտություն է: Ինչպե՞ս պատմեի, որդիս, հպարտանալո՞ւ բան էր արածներս, Թալեաթի՞ն էինք սպանել, Հիտլերի՞ն էինք սպանել, անզեն ու անպաշտպան հովիվ էինք սպանել: Ամաչում էի պատմել: Ների՛ր, որդիս, ների՛ր, որ իմ պատճառով կարող էիր փորձանքի մեջ ընկնել...

* * *

Մեծ գետով ու նույն կետից սկիզբ առնող այն երկու վտակներով պարփակված լեռնաշխարհի առանցքով՝ իշխող ջրբաժան գծով, այժմ անցնում է պետական սահմանը: Սահմանագծի երկայնքով՝ բարձունքների վրա, հաջորդաբար հայկական ու ադրբեջանական ռազմական հենակետեր են: Նրանցում՝ միմյանց փոխադարձաբար նշանառության տակ պահող սովորական ընտանիքների զավակ զինվորներ՝ դեռ կյանք չճաշակած երիտասարդներ: Նրանց հարեւանությամբ՝ լեռնաշխարհի խոր անձավների փակ դատարկության մեջ ականջ փնտրելով՝ դեռ պտտվում է Սուլթան նանայի՝ իբրեւ պատգամ ասված խոսքի արձագանքը.

«Ապրենք խաղաղությամբ»...

ՎԵՐՋԱԲԱՆ*

Լեւոն Տեր-Պետրոսյանի «Խաղաղություն, հաշտություն, բարիդրացիություն» վերնագրով 2016թ. դեկտեմբերի 17-ի ելույթը Հայաստանի քաղաքական կյանքում որպես թիվ 1 օրակարգ սահմանեց պատերազմի եւ խաղաղության հարցը: Ավելի ճիշտ՝ հիշեցրեց այդ իրողության մասին: Այնպես չէ, որ այդ օրակարգը որպես առաջնային չկար: Կար ամենուր՝ բոլորի մտքում, մտածումներում, կենցաղում, ամեն րոպե «շփման գծից» հրադադարի խախտման, դրա ցավալի հետեւանքների մասին սրտատրոփ պաշտոնական հաղորդագրությունների սպասող՝ զինվորների ծնողներից ու մերձավորներից սկսած, մինչեւ Հայաստանում ներդրում անել-չանելու՝ ներսի ու դրսի գործարարների ծրագրերում: Ուղղակի թե միջնորդավորված՝ հակամարտության կարգավորման հիմնախնդրից են կախված եղել ու կախված մնում բոլոր՝ Հայաստանի եւ Ղարաբաղի անվտանգության ապահովումից սկսած, մինչեւ վերջին գյուղի վերջին սոցիալական խնդիրները: Պարզապես, քաղաքական հարթության վրա դրանից խոսել հնարավորինս խուսափել ու խուսափում են բոլորը, խուսափում են ոչ միայն ասպարեզում

* *Սույն վերջաբանի հիմքում դրա հեղինակի՝ «Ղարաբաղյան կարգավորման հարցը լակմուսի թուղթ է» վերնագրով հոդվածն է (iLur.am, 23.01.2017թ.)՝ որոշ փոփոխությամբ եւ էական լրացումներով:*

երեւացող ուժերն ու գործիչները, խուսափում է նույնիսկ իշխանությունը: Քանզի դա պետական մտածողություն, քաղաքական պատասխանատվության ունակություն եւ քաղաքական համարձակություն է պահանջում: Մինչդեռ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի համար չկա ավելի վտանգավոր բան, քան, ժողովրդական խոսքով ասած՝ այս «ջայլամային քաղաքականությունը»:

Անցել է շուրջ երկու ամիս, եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի հասարակական ամենալայն քննարկման արդյունքներն, այս պահի դրությամբ, կարելի է ամփոփել: Նման մի ամփոփում իմաստավորելու, հիմնավոր ու ակնառու դարձնելու համար, սակայն, անհրաժեշտ է հարցի պատմության հետ կապված որոշակի փաստերի եւ իրողությունների համադիր մի ֆոն՝ նկատի ունենալով հատկապես այն հանգամանքը, որ 90-ական թվականների պատմությունը հետեւողականորեն աղավաղվել ու նենգափոխվել է:

Պատմական իրողությունների ֆոնը

Իր պաշտոնավարման ամբողջ ընթացքում՝ 1990 թվականից ի վեր, Հայաստանի Հանրապետության հիմնադիր նախագահի առաջնային խնդիրն էր՝ հասնել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության՝ ինքնորոշման իրավունքի, իր բնօրրանում խաղաղ ու անվտանգ ապրելու ու ազատ զարգանալու հնարավորության իրականացման հարցի լուծմանը: Վերջին հաշվով՝ դա էր 1988 թվականից ծայր առած Ղարաբաղյան շարժման հետապնդած խնդիրը:

Հակամարտության վերջնական կարգավորումը ենթադրում էր երկու պարագայի համատեղում.

առաջին՝ տեղավորվել միջազգային իրավունքի համապատասխան նորմերի շրջանակներում,

երկրորդ՝ ստիպել Ադրբեջանին ճանաչելու այդ լուծումը:

Դեռ որպես Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ երկրի ղեկն ստանձնելուց մեկ ամիս անց, 1990 թվականի սեպտեմբերի 3-ին, Լեւոն Տեր-Պետրոսյանը օրենսդիր մարմնում հանդես եկավ **«առճակատման ստրատեգիայից փոխզիջումների ստրատեգիայի» անցնելու միջոցով խնդրի խաղաղ** կարգավորման մասին ծրագրային ելույթով (Տե՛ս Լեւոն Տեր-Պետրոսյան, «Ընտրանի», էջ 113-122): **Հենց այդ պահից էլ դա է եղել նրա եւ Հայաստանի արտաքին քաղաքականության առանցքային ուղեգիծը մինչեւ 1998 թվականը:** Դրան հասնելու համար գործադրվեցին հնարավոր բոլոր միջոցները՝ ամենաբազմազան բանակցություններից սկսած, մինչեւ պարտադրված պատերազմում ռազմական հաղթանակների ապահովումը:

Շահեկան պայմաններում, հաղթողի դիրքերից կնքված զինադադարը եւ հարցի միջազգայնացումը (Մինսկի խումբ) տալիս էին նման կարգավորման հնարավորությունը: Պատերազմին հաջորդած շրջանում առաջացած այլազան խոչընդոտների հընթացս հաղթահարումից հետո, 1997 թվականին առաջին լուրջ հնարավորությունն էր խնդրի կարգավորման, խաղաղության հաստատման համար: Արտաքին խոչընդոտները հաղթահարված կամ հաղթահարելի էին: Ներսում հասարակական հակազդեցության խանգարիչ հանգամանք գոյություն չուներ (նման բան նվազագույն չափով անգամ չարտահայտվեց): Ժամանակի ընդդիմությունը որեւէ հրապարակային ակցիա չարեց, նրա հնարավոր դիմադրությունը նույնպես հաղթահարելի էր: Հաղթահարելի էր նաեւ ցանկացած հասարակության մեջ առկա՝ «փեշակով հայրենասերների» եւ քաղաքական չիմացության կամ հիվանդագին ամբիցիաների հիմքով տառապող մի քանի տասնյակ մարդկանց բարձրացրած կեղծ հայրենասիրական «ղալմաղալը»:

Բնականաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում Հայաստանի նախագահի հարյուրավոր ելույթ-

ներից ու հարցազրույցներից բոլորը գիտեին փոխզիջումների հիման վրա խնդրի խաղաղ կարգավորման նրա քաղաքական ուղեգծի մասին: Հասարակությունը գիտեր, իսկ իշխանության մաս կազմող պաշտոնյաներն, ամեն մեկն իր տեղում, նաեւ այդ ուղեգծի գործադրման իրականացման դերակատարներ էին:

Սակայն տեղի ունեցավ անակնկալ. կարգավորման ծրագրին ընդդիմացան դրան ի սկզբանե քաջատեղյակ ու երբեւէ նման լուծումը երազանք համարող մարդիկ:

Հօգուտ ստատուս-քվոյի պահպանման հանդես եկան Նախագահի քաղաքական թիմից առանցքային պաշտոնյաներ. ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյան, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյան, ՆԳ եւ ԱԱ նախարար Սերժ Սարգսյան, Լեռնային Ղարաբաղի ղեկավարներ: Այդ պայմաններում ծրագրի իրականացումն անհնար էր: Առաջացած ներիշխանական ճգնաժամի հաղթահարման համար Հանրապետության նախագահը, որպես պետական գործիչ, բացառեց Նախագահի սահմանադրական լիազորությունների կիրառումը (համապատասխան մարդկանց պաշտոնանկ անելը)՝ իրավացիորեն համարելով, որ տվյալ իրավիճակում դա հղի է երկրի ապակայունացման լուրջ վտանգով (տե՛ս «Հայաստանի Հանրապետության Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի հայտարարությունը,– «Ընտրանի», Երեւան, 2006, էջ 661): Դրանից հետո կար երկու տարբերակ. կա՛մ համաձայնել իր գործընկերների՝ ստատուս-քվոն պահելու ուղեգծին՝ մի կողմ դնելով սեփական համոզմունքները, կա՛մ՝ հրաժարական տալ: Լեւոն Տեր-Պետրոսյանը, անսովոր առաջինին, արեց պետական գործչին վայել երկրորդ քայլը. 1998 թ. փետրվարի 3-ին նա հրաժարական տվեց:

Հրաժարական տվեց՝ մինչ այդ արձանագրելով կամ հայտարարելով երկու բան.

ա) Իր համար ոչ մի խանգարիչ հանգամանք չկար պահել ստատուս-քվոն եւ պաշտոնավարել մինչեւ նախագահական ժամկետի ավարտը: Ավելին՝ ընդունելով իր թիմակից ընդդիմախոսների առաջարկած ուղեգիծը, անձնապես կարող էր շահել առավելագույնը.

«Կարծում եք՝ դժվա՞ր բան է ժամանակ շահելը, կարծում եք՝ ես չեմ կարող 3-4 տարի, մինչեւ իմ պաշտոնավարման ժամկետի ավարտը, պահպանել ղարաբաղյան ստատուս-քվոն: Բայց ի՞նչ է լինելու դրանից հետո, ի՞նչ անելանելի վիճակի մեջ է հայտնվելու հաջորդ Նախագահը» (Տե՛ս «Ընտրանի», էջ 660):

«Մի՞թե ես չգիտեմ հերոս ձեւանալու, ազգային բոլոր իղձերի իրականացնողը ներկայանալու, ժողովրդին ամեն գնով դուր գալու էժան հնարքները: Մի՞թե ես չէի կարող գիշեր-ցերեկ հայհոյել թուրքերին, ՄԱԿ-ի առջեւ բարձրացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, չեղյալ հայտարարել Կարսի պայմանագիրը, Թուրքիայից պահանջել Սեւրի դաշնագրով գծված սահմանները, վերջնագիր ներկայացնել Ադրբեջանին, ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, հայտարարել, որ ոչ մի թիզ հող չենք զիջի եւ այլն:

Այդ բոլոր հնարքները ես վարպետորեն կարող էի օգտագործել, համենայն դեպս ոչ ավելի վատ, քան Կինոյի տանը հավաքվածներից որեւէ մեկը. ինչ է, կրթությո՞ւնս չի ներում, խե՞լքս չի կտրում: Ես հեշտությամբ կարող էի քաջի ու մեծ հայրենասերի համբավ ձեռք բերել, դառնալ ազգի կուռքը, Հայաստանի ու Սփյուռքի միասնության խորհրդանիշը» (Տե՛ս «Ընտրանի», էջ 631-632):

Կարող է թվալ, թե հաջորդ նախագահը (Ռ. Քոչարյան), պահպանելով «ստատուս-քվոն», ամենեւին էլ անելանելի դրության մեջ չհայտնվեց: Հայտնվեց: Հայտնվեց ու դրանից «ելք գտավ» Ադրբեջանի տարածքային ամբողջականության թեզը ներառող Ստամբուլի խարտիան ստորագրելով, Մեղրին աճուր-

դի հանելով, Լեռնային Ղարաբաղին հակամարտության կողմի մանդատից զրկելով, Թուրքիայից հողային պահանջներ չունենալու մասին Հայաստանի անունից հայտարարություն անելով, «Պատմաբանների հանձնաժողովի» եւ Ցեղասպանության ուրացման ճամփան հարթելով, Հայաստանի միջազգային վարկը խաթարելով, անկախ պետականության կարեւոր ատրիբուտներ զոհաբերելով...

Լեւոն Տեր-Պետրոսյանը չէր կարող նման բաներ անել, եւ չէր էլ ուզում իրենից հետո որեւէ մեկին եւ երկիրը դնել նման խնդիրների առջեւ:

բ) Նա մեկ առ մեկ հերքեց այն փաստարկները, որ բերում էին ստատուս-քվոն պահելու կողմնակիցները եւ արեց այն ցավալի հետեւանքների կանխատեսումները, որ կարող են լինել դրա արդյունքում:

Ի՞նչ էին ասում ընդդիմախոսները.

– **Ասում էին՝** շրջափակումները չեն ազդում Հայաստանի տնտեսական զարգացման վրա, այդ պայմաններում էլ հնարավոր է ունենալ Ադրբեջանի համեմատ զարգացման ու հզորացման ավելի բարձր տեմպեր: **Լեւոն Տեր-Պետրոսյանը** ընդարձակ տնտեսական ու քաղաքական հիմնավորմամբ պնդում էր դրա անհնարինությունը: Ու այդպես էլ եղավ. շրջափակումը շարունակեց մնալ տնտեսության զարգացման կաշկանդիչ հանգամանք, Հայաստանը դուրս մնաց տարածաշրջանային կարեւորագույն ծրագրերից, ուժերի հարաբերակցությունը բոլոր պարամետրերով հետեւողականորեն փոխվել ու փոխվում է հօգուտ Ադրբեջանի: Հայաստանը, Ադրբեջանի հետ համեմատության մեջ, երբեւէ ավելի ուժեղ չեղավ, քան էր 1997-98 թվականներին:

– **Ասում էին՝** կառավարության աշխատանքի ավելի ճիշտ կազմակերպումով հնարավոր է ապահովել երկրի անհրաժեշտ զարգացումն ու հզորացումը երաշխավորող արդյունքներ՝ փոխհատուցելով շրջափակման հետեւանքները: **Լեւոն Տեր-Պետրոսյանը** պնդում էր, որ կան տնտեսության զարգացման «ֆիզիկական լիմիտներ», որոնցից այն կողմ պարզապես անհնար է անցնել ամենաճիշտ աշխատանքով անգամ: Իսկ թե կառավարությունը որքան ավելի «ճիշտ» աշխատեց հաջորդ տարիներին եւ առ այսօր, արդյունքներին բոլորս ենք ականատես արդեն շուրջ քսան տարի:

– **Ասում էին՝** հակամարտության լուծված չլինելու պայմաններում էլ, «ակտիվ ու լայնամասշտաբ մարկետինգային քաղաքականության» եւ «ինտերնետի հնարավորությունների մաքսիմալ օգտագործումով»՝ հնարավոր է ապահովել արտասահմանյան ներդրումների մեծ հոսք: **Լեւոն Տեր-Պետրոսյանը**, կարեւոր համարելով հանդերձ նման աշխատանքը, վստահ էր, որ՝ «դրա արդյունքն, այնուամենայնիվ, չնչին է լինելու»: Որեւէ մեկը կարո՞ղ է պնդել, որ այդպես չի եղել:

– **Ասում էին՝** ժամանակի հետ միջազգային հանրությունը Ղարաբաղի հարցում ստիպված կլինի համակերպվել ստատուս-քվոյի հետ: **Լեւոն Տեր-Պետրոսյանը** դրա համար հիմքեր չէր տեսնում: Անցել է 20 տարի, եւ միջազգային հանրությունը ոչ մի կերպ չի համակերպվում ստատուս-քվոյի պահպանման հետ՝ կողմերին շարունակելով առաջարկել կամ պարտադրել կարգավորման միմիայն փոխզիջումային տարբերակ:

– **Ասում էին՝** Ռուսաստանում իշխանության կգան իսկական ազգայնական ուժեր, որոնք Հայաստանը դարձնելով Կովկասի Իսրայել, Ղարաբաղի հարցը մեր օգտին կլուծեն: **Լեւոն Տեր-Պետրոսյանը**, անհեթեթ համարելով նման պնդումները, սրան հակադարձում էր. «Ինչպիսի իշխանություն էլ լինի Ռուսաստանում, միեւնույն է՝ նա չի կարող ճանաչել Ղարաբաղի անկախությունը, որովհետեւ իր կազմում ունի քսան Ղարաբաղ»: Եւ քսան տարի անց էլ ոչ մի նշան չկա, թե Ռուսաստանը կարող է ճանաչել Ղարաբաղի անկախությունը:

– **Ասում էին՝** հնարավոր չէ Հայաստանը լրիվ մեկուսացնել, մեզ կօգնեն Ռուսաստանը եւ Իրանը: **Լեւոն Տեր-Պետրոսյանը,** վերլուծելով աշխարհաքաղաքական զարգացումները, պնդում էր, որ «Ռուսաստանն առաջիկայում լուրջ ջանքեր է գործադրելու Ադրբեջանի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, եւ այդ դեպքում Հայաստանը կորցնելու է Անդրկովկասում Ռուսաստանի միակ դաշնակիցը կամ ստրատեգիական գործընկերը լինելու առավելությունը»: Այն, ինչի ականատեսն ենք բոլորս:

– **Ասում էին՝** եթե ինչ-ինչ պատճառներով Ռուսաստանը դադարեցնի զենքի մատակարարումը, ապա մենք զենք կստանանք Իրանից: **Լեւոն Տեր-Պետրոսյանը** մի ամբողջ շարք փաստարկներով դա անհնար էր համարում: Եւ իրոք, առ այսօր Իրանից զենք ստանալու մասին ոչ մի փաստ չկա արձանագրված:

– **Ասում էին՝** Իսրայելի օրինակով կարելի է զարգանալ նաեւ մեկուսացման պայմաններում: **Լեւոն Տեր-Պետրոսյանը** պնդում էր, որ համեմատելի չեն Հայաստանը եւ Իսրայելը. որ վերջինս ունի 100 կիլոմետրանոց ծովափ, հզոր նավահանգիստներ եւ չի կարող խոսք լինել նրա տնտեսական մեկուսացվածության մասին: Որ՝ Իսրայելի բյուջեն հրեական սփյուռքից որպես նվեր ամեն տարի ստանում է շուրջ 4 միլիարդ դոլար եւ մի այդքան էլ, դարձյալ որպես նվեր, ԱՄՆ-ից: Որ՝ հրեաները հզոր ներկայություն ունեն աշխարհի գերտերությունների քաղաքական կառույցներում, համաշխարհային ֆինանսական համակարգերում, զանգվածային լրատվության միջոցներում եւ այլն: Հայաստանը եւ հայերը նման բաներ չունեն եւ չեն կարող ունենալ: Ինչպես տեսնում ենք, քսան տարվա մեջ ո՛չ Հայաստանը Իսրայել դարձավ, ո՛չ էլ հայկական սփյուռքը՝ հրեական սփյուռք:

– **Ասում էին՝** Հայոց ցեղասպանության հարցի միջազգայնացմամբ եւ այլ քայլերով Սփյուռքին սիրաշահելով նրանից

կարելի է ստանալ տարեկան կես միլիարդ դոլար: **Լեւոն Տեր-Պետրոսյանը**, մատնանշելով հայկական սփյուռքի կարողությունները, ավանդական հետաքրքրությունները եւ այլ յուրահատկությունները, Սփյուռքից ակնկալիքը լավագույն դեպքում գնահատում էր տարեկան ոչ ավելի, քան այդ թվի 4-5 %-ը: Ցեղասպանության միջազգայնացումը բերեց դրա ուրացմանը՝ ի դեմս տխրահռչակ «պատմաբանների հանձնաժողովի», իսկ Սփյուռքից «Հայաստան» հիմնադրամին նվիրաբերած միջոցները դարձան ավելի խղճուկ:

– **Ասում էին՝** արտագաղթն այլեւս չի սպառնում Հայաստանին, եւ ընդհակառակը՝ արդեն դիտվում են ներգաղթի միտումներ: Եւ որպես ապացույց մատնանշում էին նախորդ տարվա համեմատությամբ դպրոցներում առաջին դասարանցիների թվի կտրուկ ավելացման փաստը: Ճիշտ էին ասում՝ զինադադարի հաստատումից հետո մարդկանց մոտ հույս ու վստահություն առաջացավ ապագայի նկատմամբ, երկրից գնացողների եւ վերադարձողների հաշվեկշիռը հետպատերազմյան տարիներին դարձավ դրական: **Լեւոն Տեր-Պետրոսյանը** պնդում էր, որ շրջափակման ու հակամարտության չկարգավորման պայմաններում, անխուսափելիորեն բախվելով սոցիալական եւ այլ խնդիրների, արտագաղթը նորից ահագնանալու է: Եւ այդպես էլ եղավ. 2010 թվականին աշակերտության հրապարակված թիվը մոտ կրկնակի պակաս էր 1999 թվականի համեմատությամբ:

– **Ասում էին՝** Ղարաբաղի հարցում հիմա կարիք չունենք փոխզիջման գնալու: Կզիջենք այն ժամանակ, երբ հարկադրված կլինենք: Լեւոն Տեր-Պետրոսյանը հակադարձում էր. «Հարկադրված լուծում նշանակում է կապիտուլյացիա... Փոխզիջման պետք է գնալ այն պահին, երբ ուժեղ ես: Հայաստանը վաղն ավելի ուժեղ չի լինելու, քան այսօր: Հետեւաբար, վաղվա ցանկացած լուծում ավելի վատն է լինելու, քան այսօրվանը»:

Որքան էլ ցավալի, սակայն այս կանխատեսումները լիակատար իրականացան: Ամբողջ 20 տարի Լեւոն Տեր-Պետրոսյանի ոչ մի քննադատ չի ասել եւ չի կարող ասել, թե դրանցից որեւէ մեկում նա սխալվել է:

Հրաժարականի իր հայտարարության մեջ Նախագահը նաեւ զգուշացրեց, որ Ղարաբաղի հարցը պատրվակ է իշխանական ճգնաժամում, եւ իշխանության են գալիս ուժեր, որոնք բոլորովին այլ պատկերացումներ ունեն պետության եւ իշխանության մասին: Եթե սա էլ համարենք կանխատեսում, ապա դրա «ամենաշքեղ» մարմնացումն էլ Հայաստանի վզին փաթաթված ավազակապետական այն ռեժիմն է, որին ականատես ենք, եւ որի պայմաններում ապրում ենք, որի «բարիքները» վայելում ենք բոլորս:

Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ 2017 թվականի դեկտեմբերի 17-ի «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» վերնագրով ելույթի արձագանքները կոշտ բաժանմամբ դասդասենք դրականի եւ բացասականի:

Դրական արձագանքները

Դրական արձագանքների հիմքում երկու հանգամանք է.

Առաջին. հեղինակների՝ քաղաքական մտածողության կարողությունը: Ընդ որում, խոսքը չի վերաբերում միայն գործնական քաղաքականությամբ զբաղվող եւ խնդրի նրբություններին բավարար չափով տիրապետող՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի այսօրվա քաղաքական թիմակիցներին: 1997–1998 թվականներին էլ նրա ղեկավարած քաղաքական ուժի մեծագույն մասն այդ համոզմունքին էր, ինչի վառ վկայությունը բարձր պաշտոններ զբաղեցնող շուրջ չորս տասնյակ մարդկանց հրաժարականն էր Նախագահի հետ միասին: Խոսքը վերաբերում է հիվանդագին հավակնություններով չտառապող, առողջ մտածողություն ունեցող, եւ իրենց կարծիքը հրապարակավ անկաշկանդ ասելու քաջություն ունեցող բազմաթիվ մարդկանց՝ հասարակության ամենատարբեր շերտերից: **Սա առաջին կարեւորագույն որակական նորությունն էր:**

Երկրորդ. շուրջ երկու տասնամյակի ընթացքում «ստատուս-քվոյի» պահպանման քաղաքական կուրսի առարկայացած հետեւանքները:

1997 թվականի համեմատությամբ տրամագծորեն այլ էին 2016 թվականի դեկտեմբերի 17-ին Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի հանգամանքները: Նա հիմա ոչ թե իշխանության առաջին դեմքն էր ու հարցը լուծողը, այլ միայն ամենաճանաչված ընդդիմադիր ուժի առաջնորդ: Իսկ նոր առաջացած ամենակարեւոր հանգամանքը հետեւյալն է: Եթե 1997–98-ին ստատուս-քվոյին կառչելու աղետալի հետեւանքների նրա մատնանշումները, որքան էլ փաստարկված ու տրամաբանական, բայց ենթադրություններ եւ կանխատեսումներ էին, այժմ արդեն առարկայացված իրողություններ են՝ շոշափելի ու տեսանելի բոլորին.

Դա ժողովրդագրական աղետն է՝ արտագաղթի պատճառով բնակչության ավելի քան մեկ երրորդի կորուստը:

Դա շրջափակման հետեւանքով տնտեսության անկումն ու Ադրբեջանի նկատմամբ ուժերի հարաբերակցության փոփոխությունն է:

Դա հակամարտության կարգավորման հարցում միջազգային հանրության վերաբերմունքի տեղաշարժն է հօգուտ Ադրբեջանի՝ ի դեմս կարեւոր երկրների ղեկավարների հայտարարությունների ու միջազգային կառույցների ընդունած բազմաթիվ փաստաթղթերի:

Դա չզարգացող տնտեսության հետեւանքով աղքատության ու թշվառության մատնված հասարակական շերտերի մեծացումն է:

Դա կարգավորման բանակցային փաստաթղթերում մեզ համար ոչ բարենպաստ փոփոխությունների միտումն է:

Եւ վերջապես՝ դա ստատուս-քվոյի տեւողության շրջանում արդեն հազարից ավելի եւ Ապրիլյան պատերազմի 160 զոհերն են, ամեն շաբաթ շփման գծից եկող զինվորների մահվան լուրերը:

Պետք չէ քաղաքագետ, քաղաքական գործիչ կամ հարցի փորձագետ լինել այս ամենը տեսնելու համար: Ահա թե ինչու, այս հիմքի վրա, ի տարբերություն 1997-ի, աննախադեպ լայն էր Լեւոն Տեր-Պետրոսյանի վերջին ելույթի դրական արձագանքների հասարակական հիմքը: Այլ էր նաեւ արձագանքների բնույթը: Դրանք ոչ միայն բազմաթիվ են, այլեւ ինքնաբուխ: Արձագանքները ոչ միայն ֆունդամենտալ հոդվածներ ու հարցազրույցներ են, այլեւ սոցիալական ցանցերում հարյուրավոր գրառումներ: Դրանց հեղինակների մեջ կան նաեւ մարդիկ, որոնք, իրենց խոստովանությամբ, «ժամանակին դեմ են եղել», «երբեք նրա երկրպագուն չեն եղել», «հիմա էլ այլ հարցերում համաձայն չեն» Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, բայց այս հարցում լիակատար կիսում են նրա պատկերացումները՝ պատրաստ պայքարելու Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգությանն սպառնացող եւ զարգացումը խոչընդոտող խնդիրը լուծման համար:

Եւ պատահական չէ, որ այս հիմքի վրա, գեթ սոցիալական ցանցերում, էլեկտրոնային ու այլ լրատվամիջոցներում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի, նրա առաջ քաշած «Խաղաղություն, հաշտություն, բարիդրացիություն» կարգախոսի դրական արձագանքներն իրենց ծավալով նկատելիորեն գերակշռեցին բացասականին: **Սա երկրորդ որակական նորությունն էր:**

Բացասական արձագանքների հիմքերը

Ի տարբերություն դրականի, այլ են ու բազմազան բացասական արձագանքների հիմքերը եւ շարժառիթները: Թող տարօրինակ չթվա, սակայն 1997 թվականի համեմատությամբ

այս ընթացքում առաջացել են նաեւ նոր շարժառիթներ: Ընդհանուր առմամբ դրանք հետեւյալն են:

ա) Լեւոն Տեր-Պետրոսյանի ավանդական հակառակորդներ, որոնք միեւնույն է՝ պիտի հակադրվեին, անկախ նրանից, թե նա ինչի մասին է խոսում:

բ) Անձնական-շահադիտական. օրինակ՝ փոխզիջումների շրջանակներում վերադարձվելիք հողերում ոմանք խիստ եկամտաբեր բիզնես են հիմնել եւ չեն ուզում այն կորցնել:

գ) Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանության օրոք «տուժած», իրենց կատարած հանցանքների համար պատժված ու դրա համար մշտապես վրեժխնդիր մարդիկ:

դ) Ոմանք ենթագիտակցորեն զգում, կամ գիտակցված հասկանում են, որ վերջնական խաղաղության հաստատումից հետո կարող է լինել բոլորովին այլ համակարգ, որում չեն կարող պահպանել այս ընթացքում իրենց ձեռքբերած դիրքը եւ ունեցած հնարավորությունները:

ե) Մարդիկ, ովքեր երբեք ճակատում չեն եղել ու չեն լինի, բայց նրանց անձնական ամբիցիաների եւ ձեռքբերած համարման հիմքում «հայդատական համոզմունքն» է եւ «հայրենասիրական» պոռոտախոսությունը. մեր հողերն են, ազատագրել ենք, էլի պիտի ազատագրենք, եւ թքած աշխարհի էլ, միջազգային հանրության էլ, նրա օրենքների վրա էլ:

զ) Ուժեր եւ անհատներ, որոնք չկարգավորված հակամարտության շահարկմամբ կարողացել են մի անգամ իշխանության հասնել, եւ եթե այդ հարցը լուծվի, վերջնականապես զրկվում են իշխանության գալու որեւէ հեռանկարից:

է) Ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած, իրենց «ընդդիմադիր» հռչակած քաղաքական ուժեր եւ անհատներ, որոնք երկրի թիվ մեկ օրակարգային հարցի մասին կա՛մ գաղափար չունեն, կա՛մ քաջություն չունեն այդ մասին խոսել. ոչ թե կարգախոսային բնույթի մի նախադասություն ասեն,

այլ ընդարձակ ներկայացնեն խնդրի լուծման իրենց պատկերացումներն ու ծրագիրը: Եւ ահա, Լեւոն Տեր-Պետրոսյանի այս ելույթից հետո նրանք կա՛մ դա պետք է անեն, կա՛մ ցուցադրեն իրենց քաղաքական սնանկությունը:

ը) Եւ վերջապես մարդիկ, որոնք անկեղծ են, պարզապես՝ կա՛մ բավարար տեղյակ չեն խնդրի նրբություններին ու դրա լուծման միջազգային իրավական դաշտին, կա՛մ տեղյակ են, սակայն ավանդական պատկերացումների կարծրատիպերը եւ ազգային հուզական ամբիցիաները գերակայում են, խեղդում բանականության ձայնը:

Բացասական արձագանքների հիմքերի բազմազանությունն էլ պայմանավորել է դրանց «ժանրային» բազմազանությունը. անզոր հայհոյանքից մինչեւ ողորմելի հոխորտանքներ, անճար վերագրումներից մինչեւ արտաքուստ բանական բանավեճի, այլընտրանքի մատնանշման փորձեր: Բացասական այս արձագանքների հիմքը, եթե կարելի է այս բառն օգտագործել, **քաղաքական իմաստով՝** պահանջատիրությունն է: Ամենահամեստը՝ «ոչ մի թիզն հողն է», միջինը՝ Բաքուն գրավելը, առավելագույնը՝ թուրքերին Փոքր Ասիայից Միջին Ասիա քշելը եւ Հայաստանի սահմանները Միջերկրական ծովից մինչեւ Կասպից ծով հասցնելը:

Եթե այդ ամենից մանրակրկիտ հաշվառմամբ դուրս ենք հանում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի դեմ հնչած շատ թե քիչ առարկայական հակափաստարկները, ապա **դրանք ճշգրիտ նույնանում են 1998 թվականի նրա ընդդիմախոսների՝ վերեւում 12 կետով բերված, սնանկ դուրս եկած փաստարկներին**. կրկին՝ «ավելի լավ աշխատանք», «ավելի շատ ներդրումներ», «ազգային համախմբում», Սփյուռքի փողեր, Իսրայելի օրինակ եւ այլն:

Միակ նոր բանը, որ ասվում է, հետեւյալն է. «Սրանք վատն էին՝ չկարողացան, մենք լավն ենք, կգանք եւ կկարողանանք»:

Խնդրո առարկա ելույթի ու դրա բացասական արձագանքների ամենադիպուկ գնահատականը տվել է ոչ այլ ոք, քան Տեր-Պետրոսյանի ընդդիմախոսներից մեկը՝ ԱԺ պատգամավոր Թեւան Պողոսյանը.

«ՀԱԿ 2-րդ համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը դիտեցի ծայրից ծայր: Անկախ իմ վերաբերմունքից այդ կուսակցության քայլերի եւ առաջին նախագահի առանձին դիրքորոշումների հանդեպ՝ ազնվորեն գրում եմ զգացածս. ի դեմս նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի Հայաստանն ունի խորքային պետական գործիչ, որպիսիք շատ չեն մեր երկրում, իսկ ավելի անկեղծ՝ շատ եւ շատ քիչ են» (www.facebook.com/tevan.poghosyan/posts/10155647075768378. 17.12.2016թ.): «Սովորել պե՞տք է, թե ինչպես է փաստարկում իր խոսքը Լեւոն Տեր-Պետրոսյանը: Չեմ կիսում հենց Արցախյան հիմնախնդրի լուծման իրենց պատկերացումը, ԵՏՄ-ական կողմնորոշումը եւ շատ այլ հարցեր: Վերջակետ: – Պե՞տք է հասկանալ, թե ինչպես մարդ կարող է մի ելույթով քաղաքականացնել եւ մանիպուլյացնել ամայացած ամբողջ դաշտը: Այո՛: Վերջակետ: – Խառնե՞ց բոլորիդ: Այո՛: Վերջակետ: – Բա այդքան անիմաստ եք համարում ու այդքան էներգիա ծախսեցիք պիտակավորելու, հայհոյելու, դատավորի պես վերջնական վճիռը հայտարարելու համար... Այդքան էներգիա ու ջա՞նք տարավ անիմաստությունը ձեզանից: Այո՛: Իսկ ասածս պարզ մի բան էր: Հրապարակային խոսք մշակել ու հրամցնել իմացող մարդ մեր երկրում շատ քիչ կա: Շատ շատ քիչ, ես միայն 2-3-ին գիտեմ, Լեւոն Տեր-Պետրոսյանը հաստատ մեկն է նրանցից: Այս ելույթին էլ հարկավոր է առնվազն նույն մակարդակի, կամ մի բան էլ ավել մակարդակի, խոսք հակադրել, որ ամեն ինչ տեղն ընկնի: Առայժմ տեսնում եմ միայն հակադարձ աղմուկ եւ ոչ մի հիմնարար խոսք...» (www.facebook.com/tevan.poghosyan/posts/10155650314988378. 18.12.2016թ.):

«Նույն մակարդակի» խոսք Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթին այդպես էլ չհակադրվեց: Եւ դրա պատճառը ոչ թե սուբյեկտիվ է՝ ընդդիմախոսների գիտելիքներն ու ունակությունները, այլ օբյեկտիվ՝ ԽՈՍՔԻ հիմքում դրվելիք իրողությունների, փաստերի եւ փաստարկների բացակայությունը:

Լուռ մեծամասնությունը

Արձագանք կարող է լինել նաեւ լռությունը, երբեմն՝ ավելի կարեւոր եւ վճռորոշ:

1997–98-ին Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ հակամարտության կարգավորման ռազմավարությանը եւ խաղաղության հաստատման ծրագրին ընդդիմացածները հրապարակ նետեցին «պարտվողական քաղաքականություն» պիտակը ու դրան հակադրեցին իրենց «հաղթողական» կարգախոսները եւ ծրագրերը, «ստատուս-քվոն» պահելու՝ «արյունով գրված հողերը» հետ չտալու ռազմավարությունը: Դա էլ իր հերթին առիթ դարձավ մի քանի տասնյակ մարդկանց հայդատական, էժան հայրենասիրական հիստերիայի՝ անհնար դարձնելով բանական, առարկայական որեւէ բանավեճ ու քննարկում:

Ճիշտ է՝ այդ ընդդիմացումն ու հիստերիան հասարակական արձագանք չգտավ, եւ զանգվածներ դուրս չեկան փողոց այն պաշտպանելու: Զանգվածներ դուրս չեկան փողոց նաեւ պաշտպանելու Նախագահի խաղաղության ծրագիրը եւ թույլ չտալու նրա հրաժարականը: **Ավելին ունենալու գայթակղությունը** խնդրի քաղաքական նրբություններին քիչ տեղյակ նույն հասարակությանը դարձրեց մի տեսակ **լուռ-չեզոք-զգուշավոր «հաղթողական»** դիտորդ:

Հիմա հասարակության մեծագույն մասը կրկին լուռ է: Սակայն շուրջ երկու տասնամյակ ձախողումների ականատես, **ստատուս-քվոյի պահպանման, «հաղթողական» քաղաքականության սնանկությունը, դրա ողբալի հետեւանքների առարկայացումը տեսած** եւ իր կաշվի վրա զգացող հասարակության լռությունն այլեւս բոլորովին այլ որակ եւ ուղղվածություն ունի: **Այն ակնհայտորեն ընդդեմ արկածախնդրության շարունակման եւ հօգուտ խաղաղության է:**

* * *

Դժվար է պատկերացնել, թե մեկ անգամ արդեն մի ճանապարհով գնալով անդառնալի կորուստներ կրած ամբողջ մի ժողովուրդ երկրոդ անգամ կգնա նույն ճանապարհով: Գեթ կործանման եզրին՝ պետք է որ արթնանա ազգի ինքնապահպանման իմաստուն բնազդը: Հայաստանի հիմնադիր-նախագահի ելույթի՝ սույն հատորում ամփոփված արձագանքների փունջը հուշում է, որ այն, իրոք, գոյություն ունի: Այդ բնազդը վերջապես պետք է մերժի ամեն տեսակ արկածախնդրություն եւ դառնա գիտակցումն այն բանի, որ՝

Հայաստանում կա մեկ հարց, մայր հարց, բանալի հարց՝ Խաղաղության, Հաշտության, Բարիդրացիության հաստատման հարցը: Մնացած բոլոր հարցերը, այդ թվում, առաջին հերթին, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովումը ածանցյալ են դրանից:

Եւ այսպես՝ ղարաբաղյան կարգավորման հարցը լակմուսի թուղթ է՝ առաջնային օրակարգ դարձված ճիշտ ժամանակին՝ ոչ միայն խնդրի լուծման պատեհության, այլ նաեւ նախընտրական շրջան լինելու առումով:

Բոլոր այն ուժերը, որոնք պատրաստվում են մասնակցել ընտրություններին եւ հստակ տեսակետ ու ծրագիր չեն ներկայացնում հայաստանյան քաղաքական օրակարգի թիվ մեկ հարցի մասին, ոչ մի կապ չունեն քաղաքականության հետ, քաղաքական շառլատաններ են եւ բոլորովին այլ նպատակներ են հետապնդում:

Բոլոր նրանք, ովքեր շրջանցում են այս հարցը կամ դա «լուծում են» բարձրագոչ փուչ կարգախոսներով, իրենց

վրա են վերցնում Ապրիլյան պատերազմում, դրանից առաջ եւ հետո սահմաններում զոհվածների արյունը եւ մտնում նրա՛նց արյան տակ, ովքեր հարցի չկարգավորման զոհ կդառնան այսուհետեւ:

Աշոտ Սարգսյան
Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ*

Ա

ԱԲԱՋՅԱՆ ՌՈԲԵՐՏ, 225
ԱԲՈՎՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ, 56
ԱԴԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ, 209
ԱԴԱՄՅԱՆ ՆԱՐԵԿ, 61
ԱԹԱՆԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ, 53, 84, 202, 209
ԱԹԵՆՔ, 122
ԱԼԱՇԿԵՐՏ, 133
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ (տե՛ս նաեւ ԳՅՈՒՄՐԻ, ԼԵՆԻՆԱԿԱՆ), 133, 297
ԱԼԻԵՒ ԻԼՀԱՄ, 27, 34, 56–59, 113, 182, 193, 196, 197, 220, 272
ԱԼԻԵՒ ՀԵՅԴԱՐ, 27
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ, 210
ԱՂԴԱՄ, 202
ԱՃԵՄՅԱՆ ՏԱՐՈՆ, 28
ԱՄՆ, 62, 93, 94, 107, 122, 157, 177, 183, 211, 212, 215, 256, 266, 280, 289, 322
ԱՅՍՐԿՈՎԿԱՍ (տե՛ս նաեւ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ), 304
ԱՅՎԱԶՅԱՆ ՋԱՎԱՀԻՐ, 211
ԱՅՎԱԶՈՎՍԿԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 65
ԱՆԱՏՈԼԻԱ, 9
ԱՆԴՐԿՈՎԿԱՍ (տե՛ս նաեւ ԱՅՍՐԿՈՎԿԱՍ), 322
ԱՆԻ (քաղաք), 256
ԱՍԼԱՆՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ, 211
ԱՍԼԱՆՅԱՆ ՄԱՐՏԻՆ, 211
ԱՎԱԳՅԱՆ ԱՎԵՏԻՍ, 4
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ, 24
ԱՎՍՏՐԻԱ, 10
ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 55
ԱՐԱՔՍ, 19, 54, 201
ԱՐԵՒԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, 297
ԱՐԵՒԵԼՔ, 43
ԱՐԵՒՄՈՒՏՔ, 23, 33, 34, 43, 106, 107, 192
ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, 15, 71, 72, 131
ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ, 25
ԱՐԾՎԱՇԵՆ, 97

*Ավելորդ ծանրաբեռնումից խուսափելու նկատառումով՝ ցանկում ընդգրկված չեն հաճախակի, գրեթե յուրաքանչյուր էջում հանդիպող **Ադրբեջան**, **Արցախ**, **Հայաստան**, **Ղարաբաղ** եւ **Տեր-Պետրոսյան** հատուկ անունները:*

Լ'ԱՔՎԻԼԱ, 122
ԱՖՂԱՆՍՏԱՆ, 22, 28
ԱՖՐԻԿԱ, 14, 190

Բ

ԲԱԲԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ, 283, 284, 293
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ, 212
ԲԱԴԱՍՅԱՆ ՎԱՀԱՆ, 222
ԲԱԹՈՒՄԻ, 133
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ, 205
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ, 255
ԲԱՅԱԶԵՏ, 133, 192
ԲԱՐԱՔ ԵՀՈՒԴ, 12
ԲԱՔՈՒ, 15, 47, 54, 66, 82–84, 96, 97, 113, 153, 181, 182, 195, 204, 216, 219, 233, 234, 247, 278, 303, 328
ԲԵԳԻՆ ՄԵՆԱՀԻՄ, 12
ԲԵԳԼԱՐՅԱՆ ԱՐՏԱԿ, 180, 181
ԲԵՅՐՈՒԹ, 295, 297
ԲԵՐԻԱ ԼԱՎՐԵՆՏԻ, 56
ԲԻՍՄԱՐԿ ՕՏՏՈ , 218
ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿ, 133
ԲՐՅՈՒՍՈՎ ՎԱԼԵՐԻ, 213

Գ

ԳԵՂԱՄՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ, 205
ԳԵՐՄԱՆԻԱ, 10, 39, 40, 62, 232
ԳՅՈՒՄՐԻ (տե՛ս նաեւ ԱԼԵՔՍԱՆԴՐՊՈԼ, ԼԵՆԻՆԱԿԱՆ), 19
ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ ԴԱՎԻԹ, 213
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ, 157
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՆՎԵԼ, 285, 286

Դ

ԴԵՄԻՐՃՅԱՆ ԿԱՐԵՆ, 205
ԴԵՄԻՐՃՅԱՆ ՍՏԵՓԱՆ, 205, 257
ԴԻԼԻՋԱՆ, 19

Ե

ԵԳԻՊՏՈՍ, 11, 16, 17, 21, 163
ԵԼՑԻՆ ԲՈՐԻՍ, 291, 292
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ, 214
ԵՄԵՆ, 28
ԵՐԵՒԱՆ, 3, 5, 7, 26, 58, 72, 97, 112, 113, 130, 159, 164, 233, 282–284, 292, 318
ԵՒՐՈՊԱ, 10, 93, 107, 177, 224
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, 93

Զ

ԶԱԽԱՐՈՎԱ ՄԱՐԻԱ, 261
ԶԱՆԳԵԶՈՒՐ, 72, 113

Է

ԷԴՈՒԼՈՒ (տե՛ս նաեւ ՈՒԽՏԱՁՈՐ), 227
ԷԼՈՅԱՆ ՕԼԻՄՊԻԱ , 216

Թ

ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱ (Մեհմեդ), 314
ԹԵՀՐԱՆ, 303
ԹԵՄՈՒՐ/ԹԵՅՄՈՒՐ (Հարությունյան), 227, 228
ԹԵՅՄՈՒՐԱԶՅԱՆ ԲՈՒՍՄԱՆ ՌԱԴԱ, 217
ԹՈՎՄԱՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ, 283
ԹՈՒՐՔԻԱ, 16–19, 23, 31, 75, 102, 131, 132, 135, 162, 192, 241, 256, 319, 320
ԹՈՔՄԱՋՅԱՆ ՎԱՀՐԱՄ, 65
ԹՐԱՄՓ ԴՈՆԱԼԴ, 179

Ի

ԻԲՐԱՀԻՄ, 309–311
ԻԳԴԻՐ, 192
ԻՍՐԱՅԵԼ, 9, 11–13, 15–18, 20, 21, 24, 163, 176, 177, 321, 322, 328

ԻՏԱԼԻԱ, 66
ԻՐԱՆ, 16, 55, 162, 177, 214, 322
ԻՐԱՔ, 17, 22, 28

Լ

ԼԱՉԻՆ (տե՛ս նաեւ ՔԱՇԱԹԱՂ), 31, 97, 115, 177, 178, 196, 215, 280
ԼԱՎՐՈՎ ՍԵՐԳԵՅ, 49, 177
ԼԵՀԱՍՏԱՆ, 9
ԼԵՆԻՆԱԿԱՆ (տե՛ս նաեւ ԱԼԵՔՍԱՆԴՐՊՈԼ, ԳՅՈՒՄՐԻ), 292
ԼԵՆԿ ԹԵՄՈՒՐ, 227
ԼԵՈ (Առաքել Բաբախանյան), 135
ԼԻԲԱՆԱՆ, 17, 22, 164
ԼԻԲԻԱ, 28, 141
ԼԻՀԱՅ, 157
ԼԻՊԱՐԻՏՅԱՆ ԺԻՐԱՅՐ, 175
ԼԻՍԱԲՈՆ, 122, 123, 126

Խ

ԽԱՆՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ, 217
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱԳԻԿ, 222
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀԱԳՆ, 223
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (տե՛ս նաեւ ԽՍՀՄ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ), 40, 97, 281, 291
ԽՍՀՄ (տե՛ս նաեւ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ), 67

Ծ

ԾԱՏՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ, 223

Կ

ԿԱԶԱՆ, 106, 110, 114
ԿԱՆԱԴԱ, 214, 216
ԿԱՍՊԻՑ ԾՈՎ, 54, 173, 328
ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ, 224
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ, 225
ԿԱՐՍ, 56, 235, 256, 297, 319
ԿԻԼԻԿԻԱ, 219
ԿԻՍԵԼՅՈՎ ԴՄԻՏՐԻ, 217
ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 270
ԿՈՎԿԱՍ, 321
ԿՈՒԲԻԼԱՅ ԽԱՆ, 10
ԿՈՒՐ (տե՛ս նաեւ ՔՈՒՌ), 54
ԿՏՐԻՃ ԴԱՎՈ, 239

Հ

ՀԱԴՐՈՒԹ, 227
ՀԱԿՈԲՅԱՆ ԹԱԹՈՒԼ, 185, 189
ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐԴԱՆ, 71
ՀԱՅՐԻԿՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ, 218
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍՈՒԴԱՆ, 28
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԵԹԻԱ, 161
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ, 257
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՏԱԿ, 226
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ, 184
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ, 77
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԵՐՍԵՍ, 226
ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, 82
ՀԻՏԼԵՐ ԱԴՈԼՖ, 292, 314
ՀՆԴԿԱՍՏԱՆ, 43, 93
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՆԱՐԵԿ, 227
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ, 25
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՄԱՅԱԿ, 229–231
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ, 229
ՀՈՎՍԵՓ, 306–308, 310, 311, 313
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՂՎԱՆ, 79
ՀՈՎՍԵՓՅԱՆ ՅՈՒՐԱ, 229
ՀՈՐԴԱՆԱՆ, 11, 16, 17, 163
ՀՈՒՍԵՅՆ ՍԱԴԴԱՄ, 21
ՀՌՈՄ, 225

Ղ

ՂԱԶԱԽ, 237
ՂԱԶԱԽՍՏԱՆ, 173, 214
ՂԱՐԻԲՅԱՆ ԱՇՈՏ, 231

ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ, 281

Ճ

ՃԱՂԱՐՅԱՆ ԼԻԶԱ, 81

Մ

ՄԱԴՐԻԴ, 34, 110, 114, 122, 124, 250, 257
ՄԱԶՄԱՆՈՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 235
ՄԱԹԵՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ, 299
ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄՅԱՍՆԻԿ, 232
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԱՄ, 53
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՎԱՉԳԵՆ, 205
ՄԱՍԻՍ (սար), 224, 279
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՂԱՍԻ, 87
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՐԱՆՏ, 248, 249, 295, 297, 298
ՄԱՐԿԵԴՈՆՈՎ ՍԵՐԳԵՅ, 260
ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ, 232
ՄԱՐՏԱԿԵՐՏ (շրջան), 97
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ, 169, 233
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ, 73, 74
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ, 71, 72, 158
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՊՈՂՈՍ, 263
ՄԵԼԻՔ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱԿՈԲ, 301
ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՄԱՆ, 214–216, 243
ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՄԵՆ, 235
ՄԵՂՐԻ, 215, 299, 319
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ, 74
ՄԵՐԿԵԼ ԱՆԳԵԼԱ, 62
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՒԵԼՔ, 33, 93, 289
ՄԻԼՍ ՌԻՉԱՐԴ, 211, 212
ՄԻՆՍԿ, 31, 34, 89, 107, 115, 125, 149, 214, 220, 257, 261, 262, 317
ՄԻՉԻԳԱՆ, 175
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ, 328
ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ, 289
ՄԻՋԻՆ ԱՍԻԱ, 328
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԱՍՈՒՆ, 258
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ, 239
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ, 30, 224
ՄՅՈՒՆԽԵՆ, 261
ՄՈՆՂՈԼԻԱ, 9
ՄՈՍԿՎԱ, 62, 107, 189, 224, 272
ՄՈՒՇԵՂՅԱՆ ՖԵԼԻՔՍ, 240
ՄՈՒՍԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ, 4, 91, 241

Յ

ՅԱՐԱԼՅԱՆ ԿԱՐԻՆԵ, 244

Ն

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԷԴՎԱՐԴ, 122, 250
ՆԱԽԻՋԵՒԱՆ, 83, 133
ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՇՈՏ, 191, 193
ՆՅՈՒ ՅՈՐՔ, 183
ՆՇԱՆՅԱՆ ՄԱՐԿ, 101
ՆՈՒՐՈՒԼԱ, 303, 304, 305, 311

Շ

ՇԱՄԻՐ ԻՑԽԱԿ, 12
ՇԱՐՈՆ ԱՐԻԵԼ, 12
ՇԵՊԻՏԿՈ ԼԱՐԻՍԱ, 81, 85
ՇԻՐԽԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ, 284
ՇՈՒՇԻ, 97, 280, 285
ՇՎԵՅՑԱՐԻԱ, 9, 10, 15

Ո

ՈՍԿԵՐՉՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ, 143
ՈՒԱՅՆՀԱՈՒՋ ԷՄԻ, 63
ՈՒԼՈՅԱՆ ՀԱՐՈՒԹ, 105, 244
ՈՒԽՏԱՁՈՐ (տե՛ս նաեւ ԷԴՈՒԼՈՒ), 227
ՈՒԿՐԱԻՆԱ, 22

Չ

ՉԱԼԱԲՅԱՆ ԱՎԵՏԻՔ, 91, 97, 99
ՉԱՐԵՆՑ ԵՂԻՇԵ, 209
ՉԵՐՉԻԼ ՈՒԻՆՍԹՈՆ, 223

ՉԻՆԱՍՏԱՆ, 18, 43, 65, 93
ՉԻՆԳԻԶԽԱՆ, 9

Պ

ՊԱՂԵՍՏԻՆ, 11, 12, 16, 21
ՊԱՊՅԱՆ ԱՐԱ, 53, 158, 214–216, 243
ՊԱՍԿԵՒԻՉՅԱՆ ՏԻԳՐԱՆ, 45, 199, 251
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 303
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՈՆԱՐԴ, 283
ՊՈՂՈՍՅԱՆ ԹԵՒԱՆ, 253, 329
ՊՈՂՈՍՅԱՆ ՊԵՏՐՈՍ, 262, 263
ՊՈՂՊԱՏՅԱՆ ՏԱԹԵՒԻԿ, 255
ՊՈՒՏԻՆ ՎԼԱԴԻՄԻՐ, 260

Ջ

ՋԱՎԱԽՔ, 256

Ռ

ՌԱԲԻՆ ԻՑԽԱԿ, 12, 21
ՌԴ (տե՛ս նաեւ ՌՈՒՍԱՍՏԱՆ), 112
ՌՈՒԱՆԴԱ, 161
ՌՈՒՄԻՆԻԱ, 214
ՌՈՒՍԱՍՏԱՆ (տե՛ս նաեւ ՌԴ), 22, 31, 33, 34, 49, 62, 65, 93, 94, 97, 98, 102, 103, 106, 107, 112, 122, 162, 177, 183, 192, 193, 224, 240, 261, 262, 280, 289, 321, 322
ՌՈՒՍՏԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ, 53, 54, 249

Ս

ՍԱԴԱԹ ԱՆՎԱՐ, 21
ՍԱՀԱԿՅԱՆ ԱԴԱՄ, 225
ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ, 265
ՍԱՍՈՒՆ, 24, 117, 201, 236, 272
ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ, 236
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ, 4, 6, 129, 256, 293, 298, 332
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ, 257
ՍԱՐԳՍՅԱՆ ՆԱՐԵԿ, 141, 258
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐԺ, 23, 25, 26, 66, 67, 89, 99, 106, 110, 111, 113–115, 117–119, 145, 159, 170–173, 179, 183, 186, 189–191, 203–205, 217, 222, 235–237, 280, 281, 293, 318
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԻՄՈՆ, 145
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՉԳԵՆ, 14, 74, 172, 201, 204, 278, 284–286, 291–293, 318
ՍԱՐԿՈՋԻ ՆԻԿՈԼԱ, 141
ՍԵՄԻՐՋՅԱՆ ԱՌԱՔԵԼ, 81
ՍԵՒԱԿ ԱՐԱՄԱԶԴ, 39
ՍԵՒԱՆ, 47, 113
ՍԵՒՐ, 131, 133–136, 192, 319
ՍԻՄՈՆՅԱՆ ԳՈՀԱՐ, 259
ՍԻՆԱՅԻ ԹԵՐԱԿՂԶԻ, 21
ՍԻՐԱԴԵՂՅԱՆ ՎԱՆՈ, 171, 204
ՍԻՐԻԱ, 17, 22, 164
ՍԼՈՅԱՆ ՔՅԱՐԱՄ, 225
ՍՅՈՒՆԻՔ, 55, 299
ՍՈՄԱԼԻ, 28
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (տե՛ս նաեւ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ԽՍՀՄ), 279
ՍՈՒԴԱՆ, 22, 28
ՍՈՒԼԹԱՆ ՆԱՆԱ, 299, 300, 310–312, 314
ՍՏԱԼԻՆ ԻՈՍԻՖ, 313
ՍՏԱՄԲՈՒԼ, 19, 66, 153, 219, 303, 319
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 53, 112, 164, 201, 209, 235, 280
ՍՓՅՈՒՌՔ, 13, 14, 81, 92, 135, 171, 182, 183, 201, 244, 283, 319, 322, 323, 328

Վ

ՎԱՉԱՇԵՆ, 251
ՎԱՐԴԱԶԱՐ, 306, 311

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ, 190
ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ՎԱՀԱՆ, 49, 259
ՎԻԵՆՆԱ, 58
ՎԻԼՍՈՆ ՎՈՒԴՐՈ, 192
ՎՐԱՍՏԱՆ, 16, 17, 22, 173, 236, 256

Տ

ՏԱՎՈՒՇ, 56
ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՑ ՆՈՐԱՏ, 158, 181, 284, 291
ՏՈՆՈՅԱՆ ԿԱՐԵՆ, 262
ՏՈՆՈՅԱՆ ՍԵՐԳՈ, 149

Փ

ՓԱՇԻՆՅԱՆ ՆԻԿՈԼ, 258
ՓԱՇՈՅԱՆ ԿԱՐՊԻՍ, 263
ՓԱՐԻԶ, 132, 270
ՓՈՔՐ ԱՍԻԱ, 328

Ք

ՔԱԴԱՖԻ ՄՈՒՀԱՄԱՐ, 141
ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ԱՇՈՏ, 266
ՔԱՄԱԼՅԱՆ ԳԱԳԻԿ, 266, 270
ՔԱՇԱԹԱՂ (տե՛ս նաեւ ԼԱՉԻՆ), 226
ՔԱՋԱԶՆՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 129, 132–135, 137, 138
ՔԵԼԲԱՋԱՐ, 17, 31, 195
ՔԵՄԱԼ ՄՈՒՍՏԱՖԱ, 193
ՔԵՄՓ-ԴԵՎԻԴ, 11, 20
ՔԵՆԵԴԻ ՋՈՆ, 240
ՔԵՐԻ ՋՈՆ, 62
ՔԻ-ՎԵՍՏ, 215
ՔՈՉԱՐՅԱՆ ՇԱՎԱՐՇ, 101
ՔՈՉԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ, 66, 99, 110, 111, 119, 124, 159, 172, 173, 182, 183, 190, 204, 222, 246, 282, 287, 289, 318, 319
ՔՈՒՌ (տե՛ս նաեւ ԿՈՒՐ), 19, 54, 201
ՔՈՒՎԵՅԹ, 21

Օ

ՕԲԱՄԱ ԲԱՐԱՔ, 107
ՕՋԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ, 77
ՕՀԱՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ, 111, 112, 181–183, 256
ՕՍԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ, 124
ՕՔՍՖՈՐԴ, 210

Ֆ

ՖՈՍԵԹ ԲԻԼ, 243
ՖՐԱՆՍԻԱ, 10, 122, 141

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից 5
Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը Հայ Ազգային Կոնգրեսի 2-րդ Համագումարում 7
Լեւոն Տեր-Պետրոսյանի լրացուցիչ պարզաբանումներն իր ելույթի արձագանքների վերաբերյալ 30
ՀՈԴՎԱԾՆԵՐ 37–166
Սեւակ Արամազդ, Յաղթանակ եւ պարտութիւն 39
Տիգրան Պասկեւիչյան, Երկընտրանք. դեգերումներ եւ որոնումներ 45
Վահան Վարդապետյան, Խաղաղություն՝ այսօր, խաղաղություն՝ ամենուր 49
Վահրամ Աթանեսյան, Աբսուրդ չէ՞ 53
Նարեկ Ադամյան, Հակընդդեմ արգումենտ այդպես էլ չբերվեց 61
Վահրամ Թոքմաջյան, Պաթոլոգիկ հիստերիա 65
Վարդան Հակոբյան, Հայկ Մարտիրոսյան – մտագա՞ր, թե՞ խուճապարար-դավաճան 71
Հասմիկ Հարությունյան, Ազգ-բանա՞կ, թե՞ օրինակելի բանակ 77

Լիզա Ճաղարյան, Իսկ ես վախենում եմ.....81
Աղասի Մարգարյան, «Ոչ մի թիզ հողից» դեպի քաղաքական հայեցակարգ 87
Արման Մուսինյան, Եւս մեկ ասք անպատասխանատվության մասին 91
Մարկ Նշանյան, Խաղաղ կարգավորումը՝ «պատերազմի օրենքի» հիման վրա 101
Հարութ Ուլոյան, Տեր-Պետրոսյանը միանշանակորեն մնում է հայաստանյան քաղաքական դաշտի ամենաազդեցիկ գործիչը 105
Աշոտ Սարգսյան, Պատմական նմանություններ եւ խոսուն տարբերություններ. 1920 եւ 1997-2017 թթ. 129
Նարեկ Սարգսյան, Նախագահները եւ զազրախոսները 141
Սիմոն Սարգսյան, Լեւոն Տեր-Պետրոսյանը ձգել է քաղաքական վոլեյբոլի ցանցը.....145
Սերգո Տոնոյան, Ինչո՞ւ է դժվար կայանում «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն» բանավեճը 149
Արման Գրիգորյան, Լուրջ երեւալու փորձեր, կամ ինչու չպետք է վախենալ խաղաղությունից.....157
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ 167–206
Արմեն Մարտիրոսյան, «Չի» զրուցակիցն է «Անտարես» մեդիա հոլդինգի նախագահ Արմեն Մարտիրոսյանը.....169
Ժիրայր Լիպարիտյան, Յուրաքանչյուր պետական գործչի համար կգա պատասխանատվություն վերցնելու պահը.....175
Թաթուլ Հակոբյան, 20 կամ 200 տարի հետո ի՞նչ կգրվի պատմության դասագրքերում՝ ճի՞շտ էր Լեւոն Տեր-Պետրոսյանը, թե՞ ոչ 185

Աշոտ Ներսիսյան, Տեր-Պետրոսյանը բացեց բոլոր խաղաքարտերը. նույն խնդիրը հիմա դրված է Սերժ Սարգսյանի առջեւ 191
Տիգրան Պասկեւիչյան, Հայաստանն ունի մեկ խնդիր՝ Արցախը 199
ՀԱԿԻՐՃ ԿԱՐԾԻՔՆԵՐ..... 207–274
Գագիկ Ադամյան 209
Վահրամ Աթանեսյան..... 209
Արման Աղաջանյան 210
Ջավահիր Այվազյան 211
Մարտին Եւ Արամայիս Ասլանյաններ..... 211
Հասմիկ Բաբաջանյան 212
Դավիթ Գյուրջինյան.....213
Արթուր Եղիազարյան 214
Օլիմպիա Էլոյան.....216
Ռադա Թեյմուրազյան Բուսման 217
Քրիստինե Խանումյան.....217
Գագիկ Խաչատրյան 222
Վահագն Խաչատրյան 223
Մարիամ Ծատրյան 223
Սմբատ Կարախանյան 224
Հակոբ Կարապետյան 225
Արտակ Հարությունյան 226
Ներսես Հարությունյան..... 226
Նարեկ Հովակիմյան 227
Նարինե Հովհաննիսյան..... 229

Յուրա Հովսեփյան 229
Աշոտ Ղարիբյան 231
Մյասնիկ Մալխասյան 232
Վարդան Մարկոսյան 232
Արմեն Մարտիրոսյան 233
Արմեն Մելիքյան 235
Սարգիս Միքայելյան 239
Ֆելիքս Մուշեղյան 240
Արման Մուսինյան 241
Կարինե Յարալյան 244
Հարութ Ուլոյան 244
Տիգրան Պասկեւիչյան 251
Թեւան Պողոսյան 253
Տաթեւիկ Պողպատյան 255
Աշոտ Սարգսյան 256
Արամ Սարգսյան 257
Նարեկ Սարգսյան 258
Գոհար Սիմոնյան 259
Վահան Վարդապետյան 259
Կարեն Տոնոյան 262
Կարպիս Փաշոյան 263
Աշոտ Քալանթարյան 266
Գագիկ Քամալյան 266
ՀԱՎԵԼՎԱԾ 275–314

Արցախի ազատագրման, բանակի կայացման, ղարաբաղյան հաղթանակների գործում Լեւոն Տեր-Պետրոսյանի ավանդի գնահատականներ իր զինակիցների կողմից 277
Ռոբերտ Քոչարյանի գնահատականը Լեւոն Տեր-Պետրոսյանի նախագահության շրջանի մասին 287
Աշոտ Սարգսյան, Մի քանի հարց Գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցին 291
Աշոտ Սարգսյան, Երբ կեղծվում են փաստերը եւ նենգափոխվում իրողությունները 295
Դավիթ Մաթեւոսյան, Սուլթան նանա 299
ՎԵՐՋԱԲԱՆ 315–332
ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 333–338

Ամնտարես

«Անտարես» հրատարակչատուն

Երեւան 0009, Մաշտոցի 50ա/1

Հեռ.՝ + (374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ. / Ֆաքս՝ + (374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am